

Հայ-ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքագիտության
ինստիտուտ

Արամ Ժորիկի Այվազյան

Բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների
որակման առանձնահատկությունները (իրավահամեմատական
վերլուծություն)

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

Հայ - ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքագիտության
ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ստեփան Շանթի Ծաղիկյան

ԵՐԵՎԱՆ-2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն----- 3

Գլուխ – 1 Կոռուպցիոն հանցագործությունների բնութագիրը և հիմնական հատկանիշները.

- §1. Բլանկետային դիսպոզիցիայի հասկացությունը և առանձնահատկությունները -----12
- §2. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների հասկացությունը, տեսակները և իրավակիրառման պրակտիկայի հիմնախնդիրները----- 29
- §3. Բլանկետային դիսպոզիցիային վկայակոչվող իրավական ակտերի հետադարձ ուժը կոռուպցիոն հանցագործությունները որակելիս ----- 38

Գլուխ – 2 Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման խնդիրները.

- §1. Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները ----- 50
- §2. Սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները ----- 69
- §3. Շրջական միջավայրի անվտանգության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները ----- 92
- §4. Արդարադատության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները ----- 99

Գլուխ – 3 Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման արդիական խնդիրները:

- §1. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում ----- 126
- §2. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման խնդրում միջազգային համագործակցության դերը և նշանակությունը ----- 163

Եզրակացություն ----- 176

Օգտագործված գրականության ցանկ ----- 179

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է գլխավորապես նրանով, որ դրա լուծված չլինելու հիմնական բացասական հետևանքներից մեկը իրավունքի սոցիալական արժեքի կորուստն է: Այդպիսի իրադրությունում իրավական համակարգն ի զորու չի լինում պաշտպանել մարդու և քաղաքացու օրինական շահերը. այն սկսում է ծառայել որպես գործիք առանձին անձանց պահանջմունքների բավարարման համար, ինչը հանգեցնում է իրավունքի բարոյական արժեզրկմանը: Որպես սոցիալական երևույթ՝ կոռուպցիան պայմաններ է ստեղծում սեփական վերարտադրության համար, այն բացասաբար է ազդում ապագա սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների համակարգի վրա: Կոռուպցիայի դեմ պայքարը պետական կառավարման արդյունավետության ապահովման ու բարձրացման կարևորագույն նախապայման է: Այդ գիտակցմամբ կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համաձայն ազգային անվտանգության ներքին սպառնալիքներից է պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը, դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը:

Հաստատութենական (ինստիտուցիոնալ) բարեփոխումները միտված են ժողովրդավարական պետության զորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովմանը, տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացմանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, կոռուպցիայի, մասնավորապես՝ կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը¹:

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիրը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին:

Միննույն ժամանակ, կոռուպցիայի դեմ պայքարի ակտիվացման անվան տակ երբեք էլ չի կարելի հասկանալ, ասենք, քրեական գործերի քննության ընթացքում արհեստական, անհիմն մեղադրական կանխորոշումներով արտահայտված դրսևորումները: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել այն, որ կոռումպացված մարդիկ երբեք չեն առանձնացել երևակայության պակասով և նրանք միշտ կարող են ճանապարհ գտնել արգելքները շրջանցելու համար:

Կոռուպցիոն հանցագործությունների առանձին դրսևորումներ են բլանկետային դիսպոզիցիաներ բովանդակող քրեաիրավական նորմերով նախատեսվածները: Մինչդեռ, հայրենական քրեական իրավունքի գիտության մեջ բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների համալիր և ամբողջական հետազոտություն չի իրականացվել: Այդ պատճառով բաց են մնում այնպիսի հարցեր, ինչպիսիք են բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների առանձնահատկությունները կոռուպցիոն հանցագործությունների կառուցվածքում, դրանց որակմանն առնչվող մի շարք վիճահարույց հարցերը, այդ հանցագործությունների օրենսդրական կարգավորման տեխնիկայի կանոնները, բլանկետային նորմերով վկայակոչվող նորմատիվ-իրավական ակտերի հետադարձ ուժի խնդիրը և այլն: Այդ հանգամանքներով էլ մասնավորապես պայմանավորված է հետազոտության թեմայի արդիականությունը:

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ: Հայրենական իրավագիտության մեջ ուսումնասիրության առարկա են դարձել կոռուպցիոն հանցագործությունների տարբեր ասպեկտներ: Մասնավորապես, կարելի է առանձնացնել Ս.Շ.Ծաղիկյանի «Հակակոռուպցիոն ռազմավարությունը քրեակատարողական համակարգում» աշխատությունը, ուր ներկայացվել է քրեակատարողական համակարգում կոռուպցիայի դրսևորումների պատճառների ուսումնասիրությունը և ուրվագծված է դրա դեմ պայքարի հասարակական մոնիթորինգի անհրաժեշտությունը: Մ.Հ.Մուրադյանի «Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները» աշխատությունում լուսաբանված են կոռուպցիայի սոցիալ-իրավական

հիմնախնդիրները: Գ.Մ.Սարգսյանի «Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը» աշխատությամբ ներկայացվել են կոռուպցիայի եզրույթի տեսաիրավական նշանակությունը, համաշխարհային փորձն ու ներպետական օրենսդրությունը և այլն: Կոռուպցիոն հանցագործությունների և բլանկետային դիսպոզիցիաների հիմնահարցերին արտերկրների գիտնականներից անդրադարձ են կատարել Բ.Վ.Վոլժենկինը, Ս.Վ.Մաքսիմովը, Ն.Ֆ.Կուզնեցովան, Ա.Վ.Նատումովը, Ն.Ն.Պիկուրովը, Գ.Ա.Ագաևը, Ե.Ա.Զորինան, Ն.Ե.Կրիլովան, Ն.Դ.Դուրմանովը, Մ.Ա.Իբրագիմովը, Կ.Վ.Օբրաժիևը, Ա.Վ.Դենիսովան, Յու.Ա. Յանիցկինը, Ա.Ի.Դուգովան, Վ.Վ.Լունենը, Մ. Դժոնտստոնը, Լ.Վ.Միխայիլովը, Վ.Վ.Սկոսարևը, Ա.Ի.Ռարոզը, Լ.Դ.Գաուխմանը, Ե.Վ.Իլյուկը, Ա.Ի.Կորոբեևը, Վ.Դ.Սորոկինը, Օ.Ի.Բաժանովը, Վ.Կ.Գրիշչուկը, Ս.Ս.Սուլակշինը, Մ.Ա.Կրասովը, Է.Վ.Տալապինան, Յու. Ա. Տիխամիրովը, Կ.Ի.Գոլովչինսկին, Վ.Ն.Յուլիանովը, Է.Շիլսը և այլոք:

Չնայած կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագրին առնչվող հարցերին նվիրված գիտական աշխատանքների մեծ քանակին, սակայն հատկապես բլանկետային դիսպոզիցիայով նկարագրվող հանցանքների օրենսդրական կարգավորմանն ու որակմանը վերաբերող շատ հարցեր մնում են չհետազոտված:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Սույն հետազոտության նպատակն է՝ համակարգային և ամբողջական ուսումնասիրության ենթարկել բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը, որակման և կանխարգելման առանձնահատկությունները և ներկայացնել առաջարկություններ բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական կարգավորման և կանխարգելման վերաբերյալ:

Այդ նպատակին համապատասխան՝ առաջ են քաշվել հետազոտության հետևյալ խնդիրները՝

- սահմանել բլանկետային դիսպոզիցիայի հասկացությունը և առանձնահատկությունները,

- տալ բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների հասկացությունը, դրանց տեսակները, մատնանշել իրավակիրառման պրակտիկայի հիմնախնդիրները,

- ի հայտ բերել տարբեր օբյեկտների դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

- կատարել բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների իրավահամեմատական վերլուծություն,

- ձևակերպել բլանկետային դիսպոզիցիաներին վկայակոչվող իրավական ակտերին հետադարձ ուժ տալու կանոնները և առանձնահատկությունները կոռուպցիոն հանցագործությունները որակելիս,

- քննարկել բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման արդիական խնդիրները,

- ներկայացնել առաջարկություններ բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական կարգավորման և կանխարգելման վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական կարգավորման, որակման և կանխարգելման գործընթացներում:

Հետազոտության առարկան են հանդիսանում կոռուպցիոն հանցագործությունները նախատեսող ազգային և միջազգային օրենսդրության համապատասխան նորմերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել ձևական-տրամաբանական, համակարգակառուցվածքային, պատմական և համեմատական-իրավական մեթոդները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ուսումնական դասագրքերը, դոկտորական և թեկնածուականատենախոսությունները, գիտական հոդվածները, ատենախոսությունների սեղմագրերը

և գիտական այլ աշխատություններ: Դրանցից կարելի է հատկապես առանձնացնել Ս.Շ.Ծաղիկյանի, Մ.Հ.Մուրադյանի, Ա.Ա.Քառյանի, Գ.Մ.Սարգսյանի, Գ.Բ.Դանիելյանի, Գ.Ս.Խաչիկյանի, Ա.Հ.Գաբուզյանի, Կ.Մ.Շահբազյանի, Ա.Գ.Միրզոյանի, Բ.Վ.Վոլժենկինի, Ս.Վ.Մաքսիմովի, Ն.Ֆ.Կուզնեցովայի, Ա.Վ.Նաումովի, Ն.Ն.Պիկուրովի, Գ.Ա.Ազակի, Ե.Ա.Զորինայի, Ն.Ե.Կրիլովայի, Ն.Դ.Դուրմանովի, Ա.Վ.Դենիսովանի, Յու. Ա. Յանիցկինի, Ա.Ի.Դուզովի, Վ.Վ.Լունենի, Մ.Ու.Դժոնտստոնի, Լ.Վ.Միխայիլովի, Վ.Վ.Սկոսարևի, Ա.Ի.Ռարոգանի և այլոց աշխատությունները: Հետազոտության մեջ օգտագործվել են նաև փիլիսոփայության և լեզվաբանության առանձին դրույթներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԵՎ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ (ԷՄՊԻՐԻԿ) ՀԻՄՔԵՐԸ:

Հետազոտության նորմատիվ հիմքն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք երկրների (Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, ինչպես նաև Ղազախստանի, Ղրղզստանի, Էստոնիայի և այլն) քրեական օրենսգրքերը, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, հետազոտության թեմային առնչվող՝ ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների կողմից ընդունված բազմաթիվ այլ իրավական ակտեր: Աշխատանքում օգտագործվել են նաև քննարկվող հիմնախնդիրներին վերաբերող բազմաթիվ միջազգային և եվրոպական իրավական ակտեր, այդ թվում՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան, Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» Կոնվենցիան, Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհրդի՝ «Մարդու իրավունքների ինտեգրումը հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն ու կարողությունները» աշխատությունը և այլն:

Հետազոտության փորձառական հիմք են հանդիսացել կոռուպցիոն հանցագործությունների որակման տարբեր ասպեկտներին առնչվող՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների և ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ գիտական նյութերի և օրենսդրության հիման վրա իրականացվել է բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագրի, որակման և կանխարգելման առանձնահատկությունների համակարգային և ամբողջական հետազոտություն: Ուսումնասիրվել են հայրենական գրականության մեջ գրեթե չհետազոտված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ բլանկետային նորմերի հետադարձ ուժի առանձնահատկությունները և իրավակիրառ բնույթի այլ հիմնախնդիրները, առանձին հանցանքների որակյալ տեսակների օրենսդրական կարգավորման ու որակման հիմնահարցերը՝ կապված կրկնակի դատապարտման արգելքի հետ և այլն:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝

1. ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի առկայությունը և կիրառումն օրինական դարձնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի 1-ին գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանցանքը որակելիս քրեական օրենսգրքի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառվում են բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը»: Այս առաջարկի իրագործումը կարող է հիմք դառնալ քրեական իրավունքի ձևական աղբյուրների մասին ձևավորված ավանդական մոտեցման վերանայման համար:

2. Բլանկետային քրեաիրավական նորմերով նկարագրվող հանցագործությունները որակելիս իրավակիրառողի աշխատանքը հեշտացնելու նպատակով առաջարկում ենք, որպեսզի բլանկետային քրեաիրավական նորմերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն, հնարավորության սահմաններում հստակ հղումներ պարունակեն այն կոնկրետ օրենքներին, որոնք անհրաժեշտ է կիրառել հանցակազմի այս կամ այն հատկանիշը պարզելու համար:

3. Իրավագիտակցության մեջ ձևավորվել է համատարած կարծիք առ այն, որ բլանկետային դիսպոզիցիայով նախատեսված պաշտոնեական հանցանքներից մեկը՝ ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելն, ավարտված

պետք է համարվի անձին մեղադրանք առաջադրելու պահից: Սակայն, հաշվի առնելով, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացմամբ, այսինքն դեռևս մինչև նրան մեղադրանք առաջադրելը, արդեն իսկ անձի նկատմամբ սկսվում են կիրառվել ոչ բարենպաստ հետևանքներ առաջացնող սահմանափակումներ, ուստի կարծում ենք, որ տվյալ հանցանքը պետք է ավարտված համարել ոչ թե մեղադրանք առաջադրելու, այլ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացվելու պահից:

4. ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայից հանել «խոստանալը կամ առաջարկելը», իսկ նույն հոդվածի 3-րդ մասից՝ «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառերը: Հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, ինչպես նաև այն պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը, եթե այդ ամենը բացահայտվել է տվյալ փուլում, ապա պետք է դիտել որպես ինքնուրույն ավարտված հանցագործություն՝ այն նախատեսելով ՀՀ քր.օր.-ի 200.1 հոդվածով՝ դրա համար նախատեսելով ավելի մեղմ պատիժ հետևյալ ձևակերպմամբ.

«Հոդված 200.1

Առևտրային կաշառք խոստանալը կամ առաջարկելը, առևտրային կաշառք պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը

1. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

2. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից կաշառք, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով»:

Նշվածը վերաբերվում է նաև ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածին, այն է՝ քր. օր.-ը լրացնել 201.1 հոդվածով՝ նախատեսելով ավելի մեղմ պատիժ:

5. Հաշվի առնելով որ, հանցանքները պաշտոնեական դիրքի օգտագործմամբ կատարվելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) կամ 309-րդ հոդվածի (պաշտոնեական լիազորությունները անցնելը) կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ առաջանում է հանցավոր արարքն այդ հոդվածներով ևս համակցության կարգով որակելու խնդիր, ուստի առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածներից վերացնել «անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը» ծանրացնող հանգամանքը: Այդ պարագայում անձի արարքը հանցագործությունների համակցությամբ որակելը չի հակասի նույն արարքի համար երկու անգամ դատապարտելու Սահմանադրական արգելքին:

6. Քրեաիրավական ոլորտում այլ իրավական ակտերի հետադարձ ուժի հետ կապված հարցերը օրենսդրորեն հստակ կարգավորելու նպատակով առաջարկում ենք քրեական օրենսգրքի 2-րդ գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական

ակտերը, որոնք բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը, քրեական օրենսդրության ոլորտում ունեն հետադարձ ուժ»:

7. Պետական հակակոռուպցիոն ծրագրի իրագործման կազմակերպչական կարևորագույն միջոցներից է Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով կառուցվածքային հատուկ ստորաբաժանում, որպես առանձին պետական մարմին, ստեղծելու գաղափարի իրագործումը: Չնայած այդպիսի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը բազմիցս հիմնավորվել է գրականության մեջ, այնուամենայնիվ մինչ օրս այդպիսի մարմնի բացակայությունը վկայում է խնդրի արդիականության և լուծված չլինելու մասին: Այդ իմաստով նորաստեղծ Հատուկ քննչական ծառայության հիմքի վրա անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի, այսպես կոչված, ունիվերսալ մարմին, այդ կառույցին՝ Հատուկ քննչական ծառայությանն, օրենսդրորեն վերապահել այն լիազորություններն ու գործառույթները, որոնք առաջարկվում են մեր կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական բնութագրի հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ օրենսդրության կատարելագործման, գիտական և ուսումնական գրականության նախապատրաստման նպատակներով, «ՀՀ քրեական իրավունք» ուսումնական դասընթացի դասավանդման ընթացքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում: Դրանք արտացոլված են նաև հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ: Ատենախոսությունը պատրաստված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան և բաղկացած է

ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ինը պարագրաֆ, եզրակացությունից
և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

§1. Բլանկետային դիսպոզիցիայի հասկացությունը և առանձնահատկությունները

Իրավունքի ընդհանուր տեսության մեջ ընդունված է առանձնացնել իրավունքի նորմի երեք տարր. հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա: Սակայն քրեաիրավական ոչ մի նորմ բոլոր երեք տարրերի տերմինաբանական նկարագիր չի բովանդակում (քրեաիրավական ոչ մի նորմ չունի այդպիսի եռանդամ կառուցվածք): Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) ընդհանուր մասի հոդվածներում չկան սանկցիաներ և հաճախ՝ նաև հիպոթեզ: Հատուկ մասի հոդվածները հիպոթեզի հարցը «լռության են մատնել»²: Ուստի քրեական իրավունքում ընդունված է երկանդամ դասակարգումը՝ դիսպոզիցիա և սանկցիա, թեև այդ կարծիքն էլ անվիճելի չէ: Որոշ հեղինակներ վիճարկում են քրեաիրավական նորմի երկանդամ կառուցվածքի մասին դրույթը: Տվյալ պարագայում նպատակահարմար չենք գտնում անդրադառնալ այդ շատ բարդ հարցին ու հարկ ենք համարում անցնել քրեաիրավական նորմի կառուցվածքի պարզաբանմանը՝ ավանդական դիրքորոշումներից:

Դիսպոզիցիան մատնացույց է անում այն արարքները, որոնք հանցագործություն են ճանաչվում և որոնք կատարելու համար պատիժ է սահմանվում: Այլ կերպ ասած. դիսպոզիցիան քրեաիրավական նորմի այն մասն է, որում նկարագրվում են կոնկրետ հանցագործության հատկանիշները: Իսկ սանկցիան քրեաիրավական նորմի և քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի այն մասն է, որտեղ դիսպոզիցիայում նկարագրված հանցագործության համար սահմանվում են պատժի տեսակն ու չափը:

Դուրս չգալով սույն աշխատության հետազոտման շրջանակներից՝ միանգամից նշենք, որ տարբերվում են դիսպոզիցիայի չորս տեսակներ, դրանք են՝ հասարակ

² Տե՛ս Մ.Գրիգորյան «Քրեական իրավունք ընդհանուր մաս» Երևան 2003թ. էջ 43:

դիսպոզիցիա, նկարագրական դիսպոզիցիա, հենվող (վկայակոչող) դիսպոզիցիա և բլանկետային դիսպոզիցիա³:

Բլանկետային դիսպոզիցիայում նկարագրված հանցագործության հատկանիշներն ամբողջությամբ բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել իրավունքի այլ ճյուղերի (քաղաքացիական, վարչական, հարկային և այլն) նորմերին, այլ օրենքների կամ ենթօրենսդրական ակտերի: Այլ կերպ՝ բլանկետային է կոչվում այն դիսպոզիցիան, որն անմիջականորեն քրեական օրենքում չի սահմանում հանցավոր արարքի հատկանիշները, այլ հղում է կատարում այլ օրենքներին կամ իրավունքի ուրիշ ճյուղի այլ նորմատիվ ակտերին⁴: Բլանկետային դիսպոզիցիան կիրառվում է այն դեպքում, երբ հանցագործությունը կապված է հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետ: Օրինակ, երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնները խախտելու հանցակազմը առկա է, եթե այդ արարքը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացրել է խոշոր վնաս: Տվյալ հանցագործության էությունը ճիշտ ընկալելու և որակելու համար անհրաժեշտ է պարզել, թե հիշատակված կանոնները իրականում խախտվել են, թե ոչ: Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է բացահայտել այն կանոնները, որոնք սահմանված են ենթօրենսդրական ակտերով: Բացի այդ, բլանկետային պետք է համարել ՀՀ քր. օր.-ի ընդհանուր և հատուկ մասերի այն նորմերը, որոնք կապված չեն հանցակազմի հատկանիշների սահմանման հետ ու որոնց բովանդակությունը բացվում է այլ՝ ոչ քրեական օրենքներում և (կամ) նորմատիվ իրավական ակտերում: Այդպիսի նորմեր են պարունակվում օրինակ ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 2-րդ մասում և 97-րդ հոդվածի 3-րդ մասում:

Այդ նորմատիվ ակտերը կարող են հրատարակվել մինչև բլանկետային դիսպոզիցիա պարունակող քրեական օրենքի ուժի մեջ մտնելը, դրա հետ միաժամանակ և դրանից հետո: Նրանք կարող են փոփոխվել, իսկ բլանկետային դիսպոզիցիան փոփոխությունների չի ենթարկվում: Այդ պատճառով նշված

³ Քրեական օրենսգրքում հանդիպում են նաև դիսպոզիցիայի խառը տեսակներ:

⁴ Ст'ю Г. А. Агаев, Е. А. Зорина Научные взгляды о структуре уголовно-правовой нормы // Вестник Санкт-Петербургского университета Государственной противопожарной службы МЧС России, № 2 2012, էջ 110:

հանցակազմը սահմանելու համար յուրաքանչյուր անգամ անհրաժեշտ է դիմել համապատասխան նորմատիվ ակտերին: Սակայն բլանկետային դիսպոզիցիաները չեն սահմանափակում քրեաիրավական արգելքը միայն իրավունքի այս կամ այն ճյուղի նորմի խախտման համար քրեաիրավական սանկցիայով:

Որպես կանոն, բլանկետային դիսպոզիցիաներում քրեական պատասխանատվության պայման է հանդիսանում քրեական օրենքում նշված համապատասխան հետևանքների առաջացումը: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածում որպես պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմի պարտադիր հատկանիշ, նախատեսված է էական վնասի պատճառումը անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին:

Լ.Դ.Գաուխմանի կարծիքով քրեական իրավունքի նորմերի և նրանց դիսպոզիցիաների բլանկետայնությունը նրանցում կոնկրետ բովանդակության բացակայությունն է և այդ բովանդակությունը պարունակող օբյեկտիվային ճյուղերի նորմերի և (կամ) այլ նորմատիվ ակտերին հղման առկայությունը: Համապատասխանաբար, քրեաիրավական նորմերում նախատեսված հատկանիշների բլանկետայնությունը հանդիսանում է վերջիններում այդ հատկանիշների կոնկրետացման բացակայությունը օբյեկտիվային նորմերում և (կամ) այլ նորմատիվ իրավական ակտերում դրանց առկայությունը⁵:

Քրեական օրենսգրքի «բլանկետիզացիայի» գործընթացը գնալով ավելի է ծավալվում: Դա պայմանավորված է գիտատեխնիկական և սոցիալական առաջընթացի «բացասական» կողմերով, օբյեկտիվային համակարգի զարգացումով և քրեական օբյեկտիվային ինտերնացիոնալացմամբ: Քրեաիրավական շատ նորմերի բլանկետացումը, ռուս հայտնի գիտնական իրավագետ պրոֆեսոր Ն.Ֆ.Կուզնեցովայի կարծիքով, իրենից ներկայացնում է օբյեկտիվ ընթացք, որը պայմանավորված է տեխնիկական ընթացքի բացասական կողմերով, բարձր վտանգի աղբյուրների բազմապատկմամբ, շրջակա բնական միջավայրի աղտոտմամբ և այլն⁶: Համարվում է,

⁵ St'u Уголовное право России: Общая часть / под ред. Л.Д. Гаухман, С.С. Максимов. 2-е изд., стер. М.: Омега-Л, 2010. էջ 25:

⁶ St'u Кузнецова Н.Ф. Избранные труды. М.: Изд-во «Юридический центр Пресс» 2003, էջ 174:

որ բլանկետային դիսպոզիցիաները իրենցից ներկայացնում են քրեաիրավական դրույթների ձևակերպման հատուկ միջոց: Նրանք վկայում են քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի փոխհարաբերության մասին:

Այդ գործընթացը օրենսդրական ճյուղերի միջև գոյություն ունեցող սահմանների ողողման (վերացման), իրավական նորմերի հակասության որոշակի սպառնալիք է պարունակում: Սակայն այդպիսի սպառնալիքը կարելի է նվազեցնել, եթե քրեական օրենսգրքի յուրաքանչյուր հոդվածում մատնանշվեն բուն հանցաձևավորող հատկանիշները: Դրանց թվին են դասվում ամենից առաջ հանրորեն վտանգավոր հետևանքները, շարժառիթները և նպատակները, հանցագործությունների կատարման եղանակների բռնի բնույթը, խաբեությունը, մի խումբ անձանց կողմից կատարվելը: ՀՀ քր. օր.-ը (սակավ բացառություններով հանդերձ) հանցակազմերի հատկանիշների մեջ է ընդգրկել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը: Այն նորմերում, որտեղ դա չի արվել, կարելի է հիմնավոր կերպով կանխատեսել դրանց անկիրառելիությունը պրակտիկայում կամ կիրառման ազատ ընտրանքային բնույթը: Օրինակ, ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 1-ին մասում պաշտոնեական լիազորությունների չարաշահումը հանցավոր է համարվում, եթե էական վնաս է պատճառվել անձի, հասարակության կամ պետության օրինական շահերին: Իսկ բնակարանի անձեռնամխելիությունը խախտելու հանցակազմը (ՀՀ քր. օր.-ի 147-րդ հոդված) ձևավորված է 1961թ.-ի քրեական օրենսգրքի օրինակով, այսինքն, առանց հանցաձևավորող հատկանիշների. «Մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելը...»: Ապօրինության բլանկետային բնույթն առանց այդ արարքի հանրային վտանգավորությունն արտահայտող հատկանիշների հանցագործությունը վերածում է վարչական զանցանքի: Հանցաձևավորող հատկանիշներ իրավացիորեն ճանաչվել են ՀՀ քր. օր.-ի 147-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում. բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով, կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով:

ՀՀ քր. օր.-ի հոդվածներում հատկապես հանցաձևավորվող հատկանիշների առկայությունն է բացառում քրեական և այլ ոչ քրեական հակաօրինականության (հակաիրավականության) շփոթումը:

Գործող ՀՀ քր. օր.-ի վերլուծությունը թույլ է տալիս հաստատել, որ չկա իրավունքի այնպիսի ճյուղ, որի առանձին նորմերը օրգանապես չմտնեն քրեաիրավական նորմերի մեջ: Եվ այդ դեպքերում հանրության համար վտանգավոր արարքների համար պատասխանատվության պայմանները պարունակվում են ոչ միայն քրեական իրավունքի նորմերի մեջ, այլ նաև այլ ճյուղերի: Չնայած այդ երևույթի ողջ տարօրինակությանը՝ քրեաիրավական արքելքի ինքնուրույնությանը հակասող ոչինչ դրանում չկա: Իրավունքի այլ ճյուղերի նորմերը օրենսդիրը ներառում է քրեական իրավունքի հոդվածի դիսպոզիցիայի մեջ և համապատասխան հանցակազմը կազմվում է այդ դեպքերում քրեական իրավունքի «մատերիայի» կողմից նշված նորմերի կլանման միջոցով: Այդ կապակցությամբ, ոչ քրեաիրավական նորմերը դառնում են քրեաիրավական «մատերիայի» «բջիջներ»⁷: Այդ դեպքում իրավունքի այլ ճյուղերի նորմերին հղումը տրվում է սովորաբար ընդհանրական ձևով՝ հաճախակիորեն համապատասխան նորմատիվ ակտերը և կանոնները նշելու միջոցով: Դա առաջին հերթին արվում է քրեական օրենսգիրքը իրավունքի այլ ճյուղերի նորմատիվ ակտերով չձանրաբեռնելու համար, 2-րդը՝ քրեական օրենքի կայունության ապահովման համար, որպեսզի նրա բովանդակությունը ուղիղ կախման մեջ չլինի իրավունքի այլ ճյուղերի նորմատիվ ակտերի փոփոխություններից:

Բլանկետային դիսպոզիցիաների հիմնական թերությունը այն է, որ նորմատիվ ակտերի շրջանակը, որոնց հղում են կատարում այդ դիսպոզիցիաները, երբեմն շատ ավելի լայն են: Քրեաիրավական դիսպոզիցիաների բլանկետայնության մեծ քանակը միշտ էապես դժվարեցնում է հանցագործությունների որակմանն ուղղված դատավորի, քննիչի, դատախազի կամ հետաքննության տեսուչի գործողությունները: Դա կապված է իրավունքի ամենա տարբեր ճյուղերի նորմատիվ ակտերին դիմելու անհրաժեշտության հետ, որոնք, ի տարբերություն քրեական օրենսգրքի, հրատարակվում են ամենատարբեր մարմինների կողմից և հսկայական քանակությամբ: Այդ պատճառով նման հանցագործությունների որակման ժամանակ միշտ չի հաջողվում ճիշտ որոշում գտնել⁸:

⁷ Տե՛ս Գ. Ա. Агаев, Е. А. Зорина Նշվ. աշխ., էջ 111:

⁸ Տե՛ս Артемьев А.Б. Динамика нормативного регулирования борьбы с коррупцией в РФ // Право и государство: теория и практика, 2011, № 7, էջ՝ 113 – 116:

ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի նորմերի գրեթե 2/3-ը բլանկետային է: Առավել հաճախ բլանկետային են հանդիսանում հանցագործությունների առարկաների և գործողությունների հատկանիշները: Առկա են ամբողջապես բլանկետային գլուխներ, օրինակ 24-րդ գլուխը՝ «Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները», 32-րդ գլուխը՝ «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները», 33-րդ գլուխը՝ «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները»: Արարքների բլանկետայնության մասին խոսում են արարքները բնութագրող տերմինները՝ «ապօրինի», «առանց թույլտվության», «կանոնները խախտելը»: Ապօրինությունը նշանակում է համապատասխան արարքների արգելում քաղաքացիական, վարչական, հարկային, բյուջետային, պետական և իրավունքի այլ ճյուղերի կողմից:

«Տնտեսական» բլանկետայնությունը բացահայտվում է քաղաքացիական իրավունքի նորմերում (օրինակ, այնպիսի հասկացությունների վերաբերմամբ, ինչպիսիք են «ձեռնարկատիրությունը», «բանկային գործունեությունը», «արգելված գործունեություն», «գործարքներ» և այլն): Բլանկետային նորմերի բովանդակությունը պետք է փնտրել ամենից առաջ քաղաքացիական, մաքսային, ջրային, հողային, անտառային, ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում, ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում և այլ իրավական ակտերում: Օրինակ, պետական գաղտնիք հրապարակելու (ՀՀ քր. օր.-ի 306-րդ հոդված) և պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ վարվելու կանոնները խախտելու (ՀՀ քր. օր.-ի 307-րդ հոդված) հանցակազմերում պետական գաղտնիքի հասկացությունը բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին (03.12.1996թ.):

Այս կամ այն նորմի բլանկետայնության մասին խոսում է դրանում առկա ոչ քրեաիրավական տերմինաբանությունը, որը վերցրած է օրենքի այլ ճյուղերից՝ գործարք, ձեռնարկատիրություն, լիցենզիա, ընտրական բլոկ, ծառայության նշան, էմիսիա, կրոնական ծիսակատարություններ, մրցույթ, պետական դրոշմանիշ, աֆֆինաժ և այլն: Բազային նորմերի փոփոխությունների բոլոր դեպքերում օրենսդիրը պետք է անհապաղ արձագանքի քրեական օրենսգրքում ուղղումներ կատարելով: Ճյուղային և բլանկետային քրեական օրենսդրության ուժի մեջ մտնելը պետք է

միաժամանակ լինի: Եթե դա չկատարվի, ապա որոկման մեջ սխալները անխուսափելի կլինեն:

Բլանկետային նորմերով նախատեսված հանցակազմերի որակման առանձնահատկությունը նաև այն է, որ պարտադիր կարգով պետք է հղում կատարել այն կոնկրետ իրավական ակտերի վրա, որոնք վկայակոչում են այդ նորմերը: Այսպես, այս կամ այն տեղեկությունների հրապարակումը պետական գաղտնիք հրապարակելու հանցակազմ (ՀՀ քր. օր.-ի 306-րդ հոդված) առաջացնելու պարագան վճռելիս դատարանը հստակ պետք է նշի իրավական ակտի այն կոնկրետ կետը, ըստ որի տվյալ տեղեկությունը հանդիսանում է պետական գաղտնիք (խոսքը վերաբերվում է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին): Բլանկետային դիսպոզիցիայի հետ կապված պետք է նշել նաև, որ քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում է նաև խառը կամ կոմբինացված դիսպոզիցիայի տեսակը: Այսպես են կոչվում դիսպոզիցիայի այն տեսակները, որոնք օժտված են բլանկետային կամ հենվող դիսպոզիցիայի և որևէ այլ դիսպոզիցիայի հատկանիշներով:

Օտարերկրյա իրավական համակարգում մեծամասնությամբ քրեական իրավունքը բաժանվում է երկու տեսակի՝ ամրագրված և ոչ ամրագրված (կոդիֆիկացված և ոչ կոդիֆիկացված): Առաջինը ներկայացված է քրեական օրենսգրքերում, իսկ երկրորդը՝ լրացուցիչ, ոչ ամրագրված օրենսդրությունում: Օրինակ, Գերմանիայի ֆեդերատիվ Հանրապետությունում, Strafrecht (քրեական իրավունքը) բաժանվում է Stafgesetzbuch (քրեական օրենսգրքի) և Nebengesetzen (լրացուցիչ օրենքների): Ոչ ամրագրված քրեական իրավունքը պարզապես ներառում է բլանկետային քրեաիրավական նորմեր: Դրանք գտնվում են ոչ թե համակարգված օրենքում, այլ բազմաթիվ օրենքներում՝ հողի մասին, միջուկային էներգետիկայի և այլն: Քրեական իրավունքի նման համակարգը չի համապատասխանում «Nullum crimen sine lege» և «Nullum crimen sine culpa» սկզբունքին:

Մեծ Բրիտանիայում ընդհանրապես բացակայում է քրեական օրենսգիրքը, ինչպես նաև Սահմանադրությունը: Ֆրանսիայում քրեական օրենքները թողարկում են գործադիր իշխանության մարմինները (օրդոնանսները): Դատական նախադեպերի անգլոսաքսոնական համակարգը շարունակում է գործել ԱՄՆ-ում և Կանադայում

բավականին զարգացած ամրագրված օրենսդրության առկայության պայմաններում: Գերմանիայի գործընկերների հետ քննարկումների ընթացքում պարզվել է, որ նրանք սկզբունքորեն թույլ չեն տալիս քրեական օրենսդրության լիարժեք ամրագրումը նրա լայնածավալ բլանկետայնության պատճառով⁹: Եվ զարմանում են, թե ինչպես է հաջողվել, օրինակ, Ռուսաստանի և Հայաստանի քրեական իրավունքին հետևել լիարժեք ամրագրման կանոնին: Ընդ որում, խնդիրն այդքան էլ բարդ չէ: Որպեսզի բլանկետավորման գործընթացը չխառնի հանցագործությունների և զանցանքների սահմանները, անհրաժեշտ է քրեական օրենսգրքի նորմերի դիսպոզիցիաներում կոնկրետ ֆիքսել հանցանք կազմող հատկանիշները:

Քր. օր.-ի բլանկետային նորմերի մեկնաբանման ժամանակ, դրանցով ճիշտ որակման համար, բլանկետային հատկանիշները գնահատվում են ոչ թե մեկուսացված, այլ հանցանքը կազմող հատկանիշների հետ փոխկապակցված և առաջին հերթին հաշվի առնելով նրանց հանրորեն վտանգավորության աստիճանը:

Ինչպես գիտենք, հանցագործության հանրորեն վտանգավորության բնույթը սահմանվում է օբյեկտով, վնասի չափով, մեղքի ձևով և այնպիսի գործողություններով (անգործությամբ), ինչպիսիք են բռնությունը, խաբեությունը, մի խումբ անձանց կողմից կատարելը, պաշտոնական դիրքը օգտագործելը: Եթե այս կամ այն բլանկետային հատկանիշը այլ ճյուղային իրավունքի մեկնաբանությամբ չի ընդգրկվում արարքի հանրորեն վտանգավորության բնույթի մեջ, ապա այն չպետք է հաշվի առնվի հանցագործության որակման ժամանակ: Հակասությունը կվերանա, եթե քրեական օրենսգրքը, այլ կերպ օգտագործելով իրավունքի այլ ճյուղերի հասկացությունները, այդ մասին նշում կատարի հողվածի հավելվածում կամ նորմի դիսպոզիցիայում հանցակազմը նկարագրելիս: Օրինակ, ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի (գողություն) թիվ 3 հավելվածում տրված է «բնակարան» հասկացությունը, որը տարբերվում է ՌԴ բնակարանային օրենսգրքում սահմանված «բնակարան» հասկացությունից:

Քրեական օրենսգրքի բլանկետային հողվածներով որակման ժամանակ իրավունքի այլ ճյուղերի դրույթների պարտադիրության աստիճանը սահմանելու հարցը

⁹Տե՛ս Крылова Н.Е., Серебренникова А.В. Уголовное право зарубежных стран (Англии, США, Франции, Германии). Изд. 2-е, перераб. и доп. Учебное пособие. — М.: Издательство "Зерцало", 1998, էջ 43:

տարբեր դոկտրինալ մեկնաբանողների կողմից որոշվում է տարբեր կերպ: Ոմանք կարծում են, որ հակասությունների դեպքում առաջնությունը պետք է տրվի քրեական օրենսգրքին, մյուսները դրանք համարժեք են համարում: Այսպես, Լ.Վ.Ինոգամովա-Խեգայը գրում է, որ երբ արարքը միաժամանակ խախտում է և քրեական և վարչական իրավունքի նորմերը, տեղի է ունենում «զուգահեռ իրավախախտում»¹⁰: Ն.Ն.Պիկուրովը նման դեպքերում խոսում էր «խառը իրավախախտման» մասին¹¹: Ա.Վ.Նաումովը համարում է, որ. «քրեաիրավական արգելքի փոփոխությունը կարող է տեղի ունենալ առանց որպես այդպիսին՝ քրեական օրենքի փոփոխության, այլ իրավունքի այլ ճյուղերի նորմատիվ ակտերի փոփոխությունների հետևանքով»¹²: Կարծում են, որ քրեական օրենսգրքի նորմի ոչ մի «զուգահեռ» կամ «խառը» իրավախախտում, որոնցով միայն իրականացվում է հանցագործությունների որակումը, գոյություն չունի:

Ինչ վերաբերվում է բլանկետային նորմերում քրեաիրավական արգելքի փոփոխություններին, ապա փոփոխվում է նրա այն մասը, որը հղում է կատարում օրեսդրության այլ նորմերին, մասնավորապես առարկային (զենք, հոգեմետ նյութեր) կամ անվտանգության կանոններին հղում կատարելիս: Առանձին դեպքերում նրանք, իրականում, կարող են հանգեցնել ապաքրեականացմանը: Օրինակ, եթե այս կամ այն զենքը համապատասխան օրենսդրությամբ դադարել է համարվել արգելված, ուրեմն ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի այդ մասը կապաքրեականացվի: Նման իրավիճակ է տեղի ունենում նաև հանցակազմի բլանկետային հատկանիշի քրեականացման դեպքում՝ հաշվի առնելով քրեական օրենքի հետադարձ ուժի մասին քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթները:

Բլանկետայնության ձևակերպման հիմնական օրենսդրական հնարքը դիսպոզիցիաներում այս կամ այն գործողությունների (անգործությունների) «անօրինականության» «հանցավորության» մասին նշումն է: Այն մեկնաբանվում է որպես օրինական, օրինաչափ գործողությունների առկայություն և, հետևաբար, պետք է այդ մասին նորմատիվ դրույթ գտնել և որակման ժամանակ հղում կատարել նրան:

¹⁰Տե՛ս Иногамова-Хегай Л.В. Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых и иных норм права // Уголовное право: стратегия развития в XXI веке. М., 2004. էջ 128:

¹¹Տե՛ս Пикуров Н.Н. Квалификация преступлений со смешанной противоправностью. Волгоград, 1987, էջ 48:

¹²Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право: Курс лекций. Общая часть. М., 2004. Т. 1, էջ 249:

Օրինակ, ՀՀ քր. օր.-ի 327-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում: Ինչպես գիտենք, այդ հիմքերը բավականին փոփոխական են: Այստեղից հետևություն, որ ՀՀ քր. օր.-ի 327-րդ հոդվածի որակումը կախված է խուսափելու ժամանակ զինծառայությունից ազատվելու օրինական հիմքերից: Ընդ որում, խուսափելու սկզբից մինչև տևող հանցագործության ավարտը չի կարելի մոռանալ օրենքի հետադարձ ուժի մասին: Այն տարածվում է ընդհուպ մինչև դատվածության մարվելը կամ վերացվելը: ՀՀ քր. օր.-ի 327-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը և տևող է և շարունակվող, ուստի այդ հանցանքի տևող լինելը չի բացառում դրա շարունակվող լինելուն:

Քրեական օրենսգրքի հետագա բարելավման համար ցանկալի է օրենսգրքի բոլոր բլանկետային հոդվածներին տալ միասնական ձևակերպում՝ «ապօրինի» տերմինը: Դա թույլ կտա որակման համար ընտրել միայն օրենքները, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտերը:

Օրենսդրին չէր խանգարի առավել հստակ նշել բլանկետային քրեափրավական նորմերի շրջանակը և համապատասխան հատկանիշների բլանկետավորման աստիճանը: Օրինակ, նորմի փոփոխումը ամբողջովին բլանկետայինից կիսաբլանկետայինի: Կիսաբլանկետային դառնալուց առավելագույնս նվազեցնել բլանկետայնությունը, երբ բլանկետայնության հիմնական հատկանիշները պարզաբանվում են քրեական օրենսգրքում, իսկ ավելի կոնկրետացվում են իրավունքի այլ ճյուղերի նորմերում: Դա հաջողությամբ կատարված է 2003թ.-ի քրեական օրենսգրքում, օրինակ, առողջությանը պատճառված վնասը սահմանելու ժամանակ, տարանջատելով առողջությանը վնաս պատճառելը ծեծից և խոշտանգումներից: 1961թ.-ի ՀԽՍՀ քրեական օրենսգրքում առողջության ծանր, միջին և թեթև վնասի մասին նորմերն ամբողջովին բլանկետային էին, հղում էին դատաբժշկական ենթաօրենսդրական ակտերին: Այժմ, առողջության վնասի հիմնական հատկանիշները նշված են քրեական օրենսգրքի հոդվածներում: Այդպես, ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածը առողջության ծանր վնաս է համարում վնասը, որը վտանգավոր է կյանքի համար կամ

առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում:

Նշված դիսպոզիցիայում այլընտրանքորեն ներկայացված են կոնկրետ հատկանիշներ, դրանք են՝ հղիության ընդհատում, տեսողության կորուստ, թմրամոլություն և այլն, գնահատվող՝ դեմքի անջնջելի այլանդակում և կիսաբլանկետային՝ ընդհանուր աշխատունակության կորուստ ոչ պակաս քան մեկ երրորդով: Վերջին հատկանիշը, ինչպես նաև առողջությանը հասցված վնասի ծանրության աստիճանը որոշելու ցանկացած դեպքում նշանակվում է դատաբժշկական փորձաքննություն (ՀՀ քր. դատ. օր.-ի 108-րդ հոդված):

Քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներից մեկը հանդիսանում է նշված իրավական ճյուղի իրական ամբողջական փոխհարաբերության լրիվ ապահովումը այլ ճյուղային պատկանելիության նորմատիվ նյութի հետ: Գործող քրեական օրենսդրության ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական իրավունքի միջճյուղային հարաբերությունները իրականացվում են նրա կառուցվածքի տարբեր մակարդակների վրա: Մասնավորապես, ակնհայտ են դրանցից հետևյալները.

1. Քրեական իրավունքի նորմատիվ դրույթը կապված է իրավունքի այլ ճյուղի նորմատիվ դրույթի հետ (որպես օրինակ կարելի է բերել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում զինծառայողին վիրավորելու համար, որի կիրառումը պարտադիր հղում է պահանջում «Զինվորական ծառայության անցնելու մասին» 2002թ.-ի ՀՀ օրենքին):

2. Քրեական իրավունքի դրույթը կապված է այլ ճյուղային պատկանելիության ինստիտուտի կամ ենթաինստիտուտի հետ (նման իրավիճակ տեղ է գտնում ՀՀ քր. օր.-ի 156-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է նախատեսում հղի կնոջը կամ

մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելու կամ աշխատանքից անհիմն ազատելու համար: Այստեղ քրեական իրավունքի դրույթի կապ է հայտնաբերվում մի ամբողջ ենթահինստիտուտի հետ, որը կարգավորում է հղի և երեխա ունեցող կանանց աշխատանքի առանձնահատկությունները):

3. Քրեական իրավունքի ենթահինստիտուտը կամ ինստիտուտը կապված է իրավունքի այլ ճյուղի դրույթի հետ (այստեղ օրինակ կարող է ծառայել ՀՀ քր. օր.-ի 21-րդ գլխում սահմանված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության նորմերի ինստիտուտը, որի դրույթները սեղմ փոխկապակցված են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի նորմատիվ դրույթների հետ, մասնավորապես նշված օրենսգրքի 53-րդ հոդվածի հետ, որը սահմանում է մանր չափերով հափշտակությունը կամ ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու վերաբերյալ դրույթները):

4. Քրեական իրավունքի ենթահինստիտուտը կամ ինստիտուտը կապված է իրավունքի այլ ճյուղի ենթահինստիտուտի կամ ինստիտուտի հետ (իրավիճակը կարող են ներկայացնել ՀՀ քր. օր.-ի 169-րդ հոդվածի դրույթները, այն է՝ որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը, որոնք կազմում են երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված պատասխանատվության մասին նորմերի ենթահինստիտուտը, որը փոխկապակցված է ընտանեկան իրավունքի որդեգրման ինստիտուտը կազմող դրույթների հետ):

Առհասարակ, բլանկետայնությունը բավականին բարդ հասկացություն է: Սույն աշխատության շրջանակներում հայտնենք մեր համաձայնությունն այն հետազոտողների հետ, ովքեր՝

ա/ ընդունում են բլանկետայնությունը որպես քրեական օրենքի հոդվածի դիսպոզիցիայի բնութագրում, այլ ոչ թե նորմի դիսպոզիցիայի, ընդհանուր նորմի կամ հանցակազմի,

բ/ տարբերակում են օրենքում բլանկետայնության դրսևորման 2 հիմնական տարբերակ՝ բլանկետային հատկանիշ (օրենքում այլ ճյուղերի հասկացությունների

օգտագործումը) և բլանկետային դիսպոզիցիա (նորմի ձևավորումը անձի կողմից այս կամ այն այլճյուղային կանոնները խախտելուն հղում կատարելու միջոցով)¹³:

Այստեղ կարևոր է նշել բլանկետային դրսևորման ձևի կապը միջճյուղային կապերի բովանդակության հետ: Ակնհայտ է, որ ինքնին բլանկետային դիսպոզիցիան բնորոշ է միայն քրեական օրենքի Հատուկ մասի նորմերին, այն ժամանակ, երբ բլանկետային հատկանիշը կարող է բնորոշ լինել ինչպես քրեական օրենքի Հատուկ, այնպես էլ Ընդհանուր մասին: Ի դեպ, նշենք, որ մեր համոզմամբ բլանկետայնությունը հանդիսանում է քրեական իրավունքի հենց միջճյուղային կապերի արտացոլում: Պետք է քննադատորեն գնահատել գիտության մեջ արտահայտած միտքը այսպես կոչված «ներճյուղային բլանկետայնության» գոյության մասին: Նշված հասկացությունն առաջարկած Կ.Վ.Օբրաժիևը դրա տակ հասկանում է մի իրավիճակ, երբ հանցակազմի հատկանիշների բովանդակությունը օրենքի ուղղակի ցուցումով համալրվում է ենթաօրենսդրական քրեաիրավական ակտերի դրույթներով¹⁴ (օրինակ, ՀՀ քր. օր.-ի 269-րդ հոդվածում նախատեսված հանցագործություններում): Տվյալ դեպքում, մեր կարծիքով, տեղ է գտնում քրեական իրավունքի արգելքի կոնկրետացումը ճյուղային ենթաօրենսդրական ակտում: Համապատասխան քրեաիրավական ինստիտուտը կազմվում է այստեղ օրենքի հիմնական դրույթով և նրա հետ հարաբերակցող ենթաօրենսդրական դրույթներով: Սակայն տվյալ իրավիճակը բլանկետայնությանը չի վերաբերվում: Այն արտացոլում է ոչ այնքան իրավունքի համակարգային հատկանիշներ, որքան քրեաիրավական կարգավորման տարբեր մակարդակներ, քրեական իրավունքի աղբյուրների ընդհանուր բնույթը:

Բլանկետայնությունը միջճյուղային կապերի արտացոլման տեսանելի, առավել զարգացած, տեխնիկապես կատարելագործված ձևն է: Այն ընդունելով որպես միակ հնարավոր տեսակ, հարկ է վիճարկել մասնագետների կարծիքները, որոնք քրեական իրավունքի նորմերի և ինստիտուտների միջճյուղային կապերի առկայություն են

¹³ Տե՛ս Дурманов Н.Д. Советский уголовный закон. М., 1967, էջ 46; Пикуров Н.И. Квалификация преступлений при бланкетной форме диспозиции уголовного закона (с конкретизацией запрета в административном праве): Дис. ... канд. юрид. наук. М., 1982. էջ 37; Наумов А.В. Нормы иных отраслей права как источник уголовного права // Законность. 2002. N 7, էջեր 38-39; Ибрагимов М.А., Ображиев К.В. Нормативные акты иных отраслей права как источники уголовного права. Ставрополь, 2005. էջեր 16-22:

¹⁴ Տե՛ս Ображиев К.В. Формальные (юридические) источники российского уголовного права. М., 2010. էջ 49:

ընկալում այն դեպքում, երբ բլանկետայնությունը բացակայում է: Մասնավորապես, Ա.Վ.Դենիսովան քրեական իրավունքի միջնուղային կապերի առկայություն է տեսնում, երբ առանձին քրեաիրավական դրույթները պարունակվում են այլ ճյուղային պատկանելիության նորմատիվ ակտերում: Նա փորձում է այդ կապերը դասակարգել որպես ածանցյալ, երբ իրավունքի այլ ճյուղերում կոնկրետացվում կամ վերարտադրվում են ՌԴ քր. օր-ում պարունակվող քրեաիրավական արգելքները և դրույթները, և ոչ ածանցյալներ, երբ իրավունքի այլ ճյուղերում պարունակվում են ՌԴ քր. օր-ում բացակայող քրեաիրավական դրույթներ¹⁵: Համոզված ենք, որ այլ ճյուղային պատկանելիության օրենքներում (ենթաօրենսդրական ակտերում) քրեաիրավական բնույթի դրույթների առկայությունը վկայում է ոչ թե կապերի, այլ նորմատիվ նյութի անհամապատասխանության, իրավական կարգավորման առարկայի սահմանման անճշտության մասին: Քրեական իրավունքի նորմերի և ինստիտուտների միջնուղային կապերի սահմանումով ենթադրում են, որ վերջինները կապված են հենց այլ ճյուղային պատկանելիության դրույթների հետ: Բլանկետայնությունը տվյալ դեպքում ամրապնդում և օրինականացնում է այդ կապը:

Բլանկետային հատկանիշները և բլանկետային դիսպոզիցիաները առկա են քրեական իրավունքի նորմերի և ինստիտուտների զգալի մասում: Այդ հանգամանքը հետազոտողների առջև օրինաչափ հարց է դնում. հանդիսանում է արդյոք քրեական օրենքի կառուցման բլանկետային ձևը քրեական իրավունքում միջնուղային նորմատիվ կազմավորումների առկայության արտացոլում: Ն.Ի.Պիկուրովն այդ հարցին դրական է պատասխանում և գրում է. «Բլանկետային դիսպոզիցիայից առաջացած նորմատիվ կազմավորումը, որն իր մեջ տարբեր ճյուղերի նորմեր է պարունակում, իրենից ներկայացնում է համեմատաբար ինքնուրույն իրավական կազմվածք, որը դուրս է գալիս իրավական այն ճյուղերի շրջանակներից, որոնք ներկայացնում են հարաբերակցվող նորմերից յուրաքանչյուրը... Նմանատիպ նորմատիվ կազմավորումը

¹⁵ St'u Денисова А.В. Выявление и преодоление рассогласований положений УК РФ и предписаний уголовно-правового характера, содержащихся в федеральных законах иной отраслевой принадлежности: Дис....канд. юрид. наук. Самара, 2004. էջեր 129-140:

բացառապես չի պատկանում քրեական իրավունքին¹⁶»: Նշված մեջբերումը բառացի մեկնաբանումով նշանակում է, որ քրեական իրավունքի ցանկացած ինստիտուտ, որն օգտագործում է քրեաիրավական նորմերի բլանկետային հատկանիշներ և դիսպոզիցիաներ, դառնում է միջճյուղային, իսկ իրավունքի այլ ճյուղերի նորմատիվ ակտերը, որոնցում գտնվում են այդ հատկանիշները՝ դառնում են քրեական իրավունքի աղբյուրներ: Դա ուղղակիորեն նշում է Ա.Վ.Նատուովը, երբ պնդում է, որ քրեաիրավական ակտերը և կանոնները պարունակվելով քրեաիրավական նորմի դիսպոզիցիայում դառնում են քրեաիրավական «օրգանիզմի բջիջներ¹⁷»:

Ենթադրում ենք, որ նմանատիպ կարծիքները տանում են դեպի քրեական իրավունքի համակարգի սահմանների աղավաղումը՝ քրեական իրավունքի որևէ ինստիտուտ համարելով միջճյուղային, իսկ որևէ նորմատիվ ակտ համարելով քրեաիրավական ճյուղի աղբյուր: Այն փաստը, որ իրավունքի նորմերը և ինստիտուտները իրավունքի միասնական համակարգի շրջանակներում սեղմ փոխկապակցված են, դեռ հիմք չէ այդ նորմերը և ինստիտուտները խառնելու և չտարանջատելու համար:

Բլանկետային դիսպոզիցիայում նկարագրված իրավական փաստը ունի միջճյուղային բնույթ՝ իրենից ներկայացնելով ինչ-որ կանոնների խախտում, որոնք նախատեսված են կարգավորող պոզիտիվ օրենսդրությամբ և որոնք իրենց հերթին տանում են դեպի քրեական օրենքի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրած հասարակության համար վտանգավոր հետևանքները: Պրակտիկայում կատարված արարքում միաժամանակ վարչական իրավախախտման և հանցագործության հատկանիշներ հաստատելու, հանցագործության և սխալի տարանջատման, տարբեր ճյուղերի նորմերի հնարավոր մրցակցությունը վերացնելու բավականին բարդ խնդիր է առաջացնում: Ռուսական հայրենական գիտության մեջ նշված խնդիրների լուծման համար մշակված է «միջճյուղային որակման տեսությունը¹⁸»:

¹⁶ Ст'у Пикуров Н.И. К вопросу о границах системы уголовного права // Системность в уголовном праве: Материалы II Российского конгресса уголовного права, состоявшегося 31 мая - 1 июня 2007г. М., 2007. էջ 318:

¹⁷ Ст'у Наумов А.В. Нормы других отраслей права как источник уголовного права // Законность. 2002. N7. էջ 38:

¹⁸ Ст'у Яницкий Ю.А. Соотношение преступлений и административных правонарушений, посягающих на общественную безопасность и общественный порядок: теория, законодательство, практика: Автореф.

Սակայն, իրավական փաստը, որպես սահմանված դեպք, որի հետ քրեաիրավական նորմը (շեշտենք, որ հենց քրեաիրավական նորմը, այլ ոչ այլճյուղային նորմերի խումբը) միավորում է իրավահարաբերությունների առաջացումը, գտնվում է քրեաիրավական նորմի շրջանակներից դուրս: Իրավական կարգավորումը (իրավահարաբերությունների սուբյեկտներին փոխկապակցված իրավունքներ և պարտականություններ արտոնելը) իրականացվում է հենց քրեաիրավական նորմով, այլ նորմերը օրենքի բլանկետային դիսպոզիցիայի դեպքում չեն մասնակցում այդ ընթացքին, քրեաիրավական հարաբերություններ չեն կարգավորում: Եվ իրավական կարգավորման առարկան և մեթոդը տվյալ դեպքում պահպանում են իրենց քրեաիրավական ինքնությունը:

Այսպիսով, բլանկետային դիսպոզիցիան չի առաջացնում տարբեր ճյուղերի իրավական նյութերի միավորում, այլ հակառակը, նրանց միջև պարզ սահման է անցկացնում թույլ չտալով քրեաիրավական նորմերի և ինստիտուտների սահմանների վերացումը: Պատահական չէ, երևի, որ հեղինակները, որոնք հանդես են գալիս բլանկետային դրույթները քրեաիրավական նորմերի և ինստիտուտների կազմի մեջ միացնելու համար, այդ ժամանակ առաջացող ֆենոմենը նկարագրելուց չեն օգտագործում իրավունքի ընդհանուր տեսության տերմիններ: Նրանք խոսում են քրեաիրավական նորմում այճյուղային նյութի «արմատավորման» մասին, տարբեր ճյուղերի դրույթները կապող «պորտալարի» մասին, քրեաիրավական օրգանիզմի «բջիջի» մասին: Դրանք բոլորը հետաքրքիր և պատկերային համեմատություններ են, սակայն նրանք միանշանակ պատասխան չեն տալիս այն հարցին, թե քրեական օրենքի կազմավորման բլանկետային տեխնիկայի օգտագործման ժամանակ արդյոք առաջանում են միջճյուղային իրավական կազմավորումներ թե ոչ:

Հեղինակները կարծես թե խուսափում են այդ հարցից, գիտակցելով, որ մանրակրկիտ տրամաբանական քննարկման ժամանակ ստիպված են լինելու ընդունել, որ քրեական իրավունքը ընդհանրապես հանդիսանում է միջճյուղային ֆենոմեն:

Հավասարապես, վերոնշյալը վերաբերվում է բլանկետային հատկանիշներին: Դրանց օգտագործումը քրեական օրենսդրության մեջ ենթարկվում է բարձրագույն

դատական ատյանի պրակտիկայով բազմիցս հիմնավորված խիստ կանոնին՝ քրեական իրավունքում այլճյուղային բովանդակության հատկանիշների պահպանմանը: Վերջին հաշվով, այլճյուղային օրենսդրությունը բլանկետային հատկանիշների և բլանկետային դիսպոզիցիայի ժամանակ հանդես է գալիս որպես քրեական օրենքի մեկնաբանման պաշտոնական աղբյուր: Եվ այն չի խառնվում քրեաիրավական նյութի հետ և չի առաջացնում միջճյուղային կազմավորումներ իրավունքի ուսումնասիրվող ճյուղում: Եթե պատկերաշարք օգտագործենք, ապա բլանկետային հատկանիշները և բլանկետային դիսպոզիցիան անօրգանական բնույթի երևույթներ են, դա, ավելի շուտ, կապող միջոց է, որն ապահովում է տարբեր ճյուղերի իրավական նյութերի միավորումը: Դա հենց կապ է և դրանից ոչ ավել: Քրեական օրենքի բլանկետային հատկանիշները և բլանկետային դիսպոզիցիան չեն առաջացնում քրեաիրավական և իրավունքի այլ ճյուղի նյութերի խառնուրդ: Նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր ինքնուրույն նշանակությունը, որի շնորհիվ այլճյուղային նյութը չի ներթափանցում քրեաիրավական նորմերի և ինստիտուտների բովանդակության մեջ, իսկ իրավունքի այլ ճյուղերի նորմերը, համապատասխանաբար, չեն կարող հանդիսանալ քրեաիրավական ճյուղի աղբյուրներ:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարևոր է ընդգծել, որ բլանկետային նորմերի օրինական կարգավիճակը ապահովելու նպատակով, դրանց հիմնավորումը միայն օրենքներով, այլ ոչ այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև նախաքննության և դատական պրակտիկայում դրանց կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է՝ նախ ՀՀ քր. օր.-ում նախատեսել, որ այն հիմնվում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության վրա, այլ նաև ՀՀ ուրիշ օրենքների վրա, որոնց վրա հղումներ են կատարվում սույն քրեական օրենսգրքում, երկրորդը՝ ՀՀ քր. օր.-ում ամրապնդել դրույթ, որի համաձայն սույն քրեական օրենսգրքի բլանկետային նորմերում թույլատրվում է հղումներ կատարել միայն օրենքների վրա, այլ ոչ թե այլ նորմատիվ իրավական ակտերի վրա, երրորդը՝ կոնկրետացնել, որ ՀՀ քր. օր.-ը հիմնվում է ոչ թե միջազգային իրավունքի յուրաքանչյուր ընդունված սկզբունքի և նորմի վրա, այլ միայն նրանց, որոնք նախատեսված են ՀՀ միջազգային պայմանագրերով, և, չորրորդ՝ անհրաժեշտ է

սահմանել դրույթ, ըստ որի օրենքների տեքստերը, որոնց վրա հղում է կատարվում ՀՀ քր. օր.-ի բլանկետային նորմերում, կամ նրանցից անհրաժեշտ հատվածները համարվում են սույն Օրենսգրքի պարտադիր հավելվածներ և այդ հավելվածներում օրենքների փոփոխությունների և լրացումների ժամանակ կատարվում են համապատասխան ուղղումներ (ճշտումներ):

§ 2. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների հասկացությունը, տեսակները և իրավակիրառման պրակտիկայի հիմնախնդիրները

Կոռուպցիա բառի ծագումնաբանությունը ներկայացվում է հետևյալ կերպ. այն առաջացել է հուներեն «cor» կամ «com» կամ «c» «միասին», «մեկտեղ», «միջոցով» նախաձանցը ավելանալով բազմաթիվ նշանակություններ ունեցող «rumpere» բային, որը նշանակում է «ջարդել», «քանդել» այս պարագայում ձեռք է բերում նոր մեկնաբանություն՝ «խախտել խաղաղությունը, պայմանագիրը, օրենքը», «բարոյագրկել երիտասարդներին», «կեղծել արդյունքները»: Այս բառի իմաստներից մեկն էլ եղել է կաշառել որևէ մեկին դրամով կամ առատաձեռն նվերներ մատուցելով: «Cor» նախաձանցը ընդհանուր առմամբ սահմանում է, որ կոռուպցիան երևույթ է, որը ունի գործողության համամասնակից¹⁹:

Ա.Ի.Դոլգովան սահմանում է կոռուպցիան, որպես «սոցիալական երևույթի, որը բնութագրվում է պետական և այլ ծառայողների կաշառվածությամբ և ծախվածությամբ, որի հիմքում ընկած է նրանց կողմից պաշտոնեական ծառայողական պարտականությունների շահադիտական օգտագործում՝ ի բարօրություն անձնական կամ նեղ սոցիալական կամ կորպորատիվ խմբի շահերի, որը կապված է զբաղեցրած

¹⁹ Կոռուպցիայի բնութագրի և էության մասին առավել մանրամասն տե՛ս Александров С.Г. Развитие уголовного законодательства о коррупции // Российский следователь, 2007, № 20; Алексеев Г.В. К вопросу об уточнении понятия, коррупция в российском законодательстве / Г.В. Алексеев, Г.Н. Морозов // Власть. - 2011. - №5. - էջեր՝ 134 – 136; Андрианов В.Д. Коррупция как глобальная проблема: История и современность: Монография. – Москва: Экономика, 2011. էջ 301. Библиография: էջ՝ 293 – 297; Барсукова С.Ю. Коррупция: научные дебаты и российская действительность // Общественные науки и современность. – 2008. – № 5. – էջ 36 – 47; Ванцев В.А. Коррупционная преступность: Монография / Под ред. В.Е. Эминова. – Москва, 2002. – էջ 67:

պաշտոնեական դիրքի հեղինակության և հնարավորությունների հետ»²⁰: Կոռուպցիայի էությունը մեկ անձի կողմից մյուսին կաշառելու երևույթով է պայմանավորում մեկ այլ հայտնի քրեաբան Վ.Ֆ. Կուզնեցովան²¹:

Սակայն գոյություն ունի և առավել ճիշտ է կոռուպցիայի ավելի լայն հասկացությունը որպես սոցիալական երևույթի, որը չի ամփոփվում կաշառելու և ընդհանուր կաշառակերության եզրույթներում:

Կոռուպցիայի կարճ և բովանդակ սահմանում ամրագրված է Միացյալ ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ միջազգային պայքարի մասին» տեղեկատվական փաստաթղթում՝ ըստ որի՝ «Կոռուպցիան, դա պետական իշխանության չարաշահումն է՝ անձնական նպատակով շահ ստանալու համար»²²:

Այսպիսով, կոռուպցիան՝ դա սոցիալ-իրավական, քաղաքական, տնտեսական և բարոյական երևույթ է, որն արտահայտվում է պետական ծառայողի կամ առևտրային և այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց պաշտոնական դիրքից բխող ծառայողական լիազորությունները և հնարավորությունները օգտագործման մեջ, անձնական, խմբային և կորպորատիվ շահերի համար կամ այդ անձանց այդպիսի բարիքների տրամադրումը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից²³: Տրված սահմանումն ունի երկու՝ հայկական իրականության համար էական նշանակություն ունեցող առավելություն: Առաջին հերթին, վերջնականապես մերժվում է քրեական հանցագործության հետ կոռուպցիայի նույնականացման չափազանց վնասաբեր փորձը: Երկրորդը՝ կոռուպցիան տեղ չունի ոչ միայն պետական իշխանության և կառավարման մարմինների համակարգում, այլ նաև ոչ պետական ամբողջ համակարգում՝ հասարակական, քաղաքական և այլ կազմակերպություններում: Քիչ կարևոր հանգամանք չի համարվում կոռուպցիոն իրավախախտումների սուբյեկտների գործողությունների շարժիչ դրդապատճառների հստակ չափանիշների սահմանումը, որը բացի անձնական նյութական հետաքրքրվածության, ներառում է խմբային և

²⁰ Տե՛ս Криминология: Учебник для юридических вузов / Под общей ред. А.И.Долговой. М., 1997. էջ 501:

²¹ Տե՛ս Кузнецова Н.Ф. Коррупция в системе уголовных преступлений // Вестник Московского университета. Серия 11. Право. 1993. № 1. էջ 21:

²² Տե՛ս Цит. по: Лунеев В. В. Коррупция, учтенная и фактическая // Государство и право. 1996. № 8. էջ 81:

²³ Տե՛ս Ա.Շ.Ծաղիկյան «Հակակոռուպցիոն ռազմավարությունը քրեակատարողական համակարգում» Երևան 2012թ. էջեր 33-34:

կորպորատիվ շահի հասկացումը, ընդ որում որոնք պայմանավորված չեն զուտ նյութական պարգևատրմամբ: Այսպիսով, փաստվում է, որ կառավարման լիազորություններով օժտված ծառայողների ցանկացած շահադիտական գործողություններ, ծառայության շահերին հակառակ, ունեն կոռուպցիոն բովանդակություն:

Ներկայիս միջազգային պրակտիկայում ձևավորված տեսական հիմքը կոռուպցիան բնորոշում է որպես վստահված իշխանության չարաշահում կամ հանրային իշխանության չարաշահում՝ հոգուտ մասնավոր շահի: Ընդ որում, մասնավոր շահի դրսևորումներ են դիտվում անհատ անձանց, հասարակության առանձին սոցիումների, խավերի, խմբերի, կուսակցությունների և այլ միավորների շահերը: Կոռուպցիայի էությունը չի սահմանափակվում պետական, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կաշառվածությամբ. այն ենթադրում է նաև հանրային ծառայությունների կողմից ծառայողական դիրքի օգտագործումը տվյալ ծառայության շահերին հակառակ²⁴: Միևնույն ժամանակ, ավանդաբար, կոռուպցիան դիտվում է որակապես առավել վտանգավոր երևույթ պետական և մունիցիպալ իշխանության համակարգում:

Կոռուպցիայի հիմնախնդրի հայտնի ամերիկացի հետազոտող Մ.Ջոնսոնը կոռուպցիան բնորոշում է որպես պաշտոնատար անձի այնպիսի վարքագիծ, որը շեղվում է սահմանված կանոններից և պայմանավորված է իր կամ այլ անձանց համար նյութական կամ այլ օգուտներ ստանալու նպատակով²⁵: Արևմուտքի այլ հետազոտողները ևս կողմնակից են կոռուպցիայի լայն բնորոշմանը՝ «Կոռուպցիան քաղաքական գործիչների, պետական ծառայողների և գործարարների կողմից իրենց պարտականությունների և գործառույթների կատարումից շեղվելն է՝ անձնական,

²⁴ Մասնավոր ոլորտում կոռուպցիայի հիմնական դրսևորումների մասին առավել մանրամասն տե՛ս Алакшина И.С. Гражданско-правовые аспекты противодействия коррупции // Безопасность бизнеса, 2009, № 2; Астанин В.В. Комиссии по соблюдению требований к служебному поведению государственных гражданских служащих и урегулированию конфликта интересов анализ и оценка предмета деятельности и коррупциогенных рисков участия экспертов в их работе // Российская юстиция, 2009, № 2; Винницкий А.В. Противодействие коррупции в сфере управления публичной собственностью // Законность, 2009, № 6; Еделев А.Л. Коррупция как системная угроза стабильности и экономической безопасности Российской Федерации // Миграционное право, 2009, № 2; Клейнер В. Антикоррупционная стратегия бизнеса в России // Вопросы экономики. – 2011. № 4, էջեր 32–46.:

²⁵ St’u Джонстон М. Поиск определений: качество политической жизни и проблема коррупции // Междунар. журн. социальных наук. – Париж, М., 1997. – № 16, էջ 24:

ընտանեական կամ խմբային շահերից ելնելով և սեփական սոցիալական կարգավիճակը բարելավելու նպատակով»²⁶:

Ինչպես իրավացիորեն նշում է Վ.Վ.Լուները՝ կոռուպցիան չի կարող հանգեցվել միայն ապօրինի գործարքներին և կաշառակերությանը: Այն ընդգրկում է պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների ցանկացած չարաշահում, որը կատարվում է շահադիտական դրդումներով²⁷: Ա.Հ.Գաբուլյանն ընդգծում է, որ «*corruptio*» տերմինի թարգմանությունը չի սահմանափակվում միայն ծախվածությամբ: Այն նշանակում է նաև փչացում, վնասում: Ցանկացած դիտավորյալ պաշտոնեական հանցագործություն, որը կատարվում է անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով, հանգեցնում է պետական ապարատի գործառնության խափանմանը, սպառնում է գործող սոցիալական կապերի ողջ համակարգին, խարխլում է պետական իշխանության հեղինակությունը: Բացի այդ, անցումային ժամանակաշրջանում քաղաքական անկայունության, տնտեսության անկման, սոցիալական և իրավական վերահսկողության համակարգի քայքայման, շահադիտական հանցավորության աճի, անպատժելիության մթնոլորտի պայմաններում պաշտոնատար անձանց ցանկացած հակաիրավական և հակաբարոյական վարքագիծ ունի ոչ միայն չափազանց մեծ հանրային վտանգավորություն, այլև կոռուպցիոն հիմք²⁸:

Այսպիսով, ելնելով լայն իմաստով կոռուպցիայի բնորոշումից, կարելի է տալ *բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող կոռուպցիոն հանցագործությունների* հետևյալ բնորոշումը՝ «Քրեական օրենսգրքով նախատեսված, հանրային կամ մասնավոր ոլորտում կառավարչական գործառույթներով օժտված անձանց կողմից իրենց լիազորությունների օգտագործմամբ, գույքային, անձնական կամ խմբային շահերից ելնելով կատարվող այն հանրորեն վտանգավոր արարքներն են, որոնց հատկանիշները բացահայտելու համար քր. օր.-ը հղում է կատարում այլ նորմատիվ իրավական ակտերին:

²⁶ Տե՛ս Михайлов Л.В. Борьба с коррупцией в США (80-е годы). // Вопросы истории. - 1994. - № 5, էջ 149:

²⁷ Տե՛ս Политическая коррупция в России (материалы круглого стола) // Государство и право. 2003. №3, էջ 105:

²⁸ Տե՛ս Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջեր 142-143:

Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով:

Առհասարակ, բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող հանցագործությունների օրենսդրական կարգավորմանն առնչվող խնդիրները հանգում են հետևյալին:

1. ՀՀ քր. օր.-ում բացակայում է նորմը, որը կարգավորում է բլանկետային նորմերի թույլատրելիությունը և, համապատասխանաբար, քրեական պատասխանատվության հարցի լուծումը այլ՝ ոչ քրեական օրենքների և /կամ/ նորմատիվ իրավական ակտերի խախտումներով: Այդ մասին պարզ վկայում է նորմերի առկայությունը, որոնք պարունակվում են ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 1-ին մասում և 3-րդ հոդվածում: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված է նորմ, որի համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը բաղկացած է սույն օրենսգրքից: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում», իսկ 3-րդ հոդվածում սահմանված է «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: Այս նորմը քրեական պատասխանատվության հետ կապված սահմանափակում է մտցնում, քանի որ, համաձայն այդ նորմի բովանդակության, քրեական պատասխանատվության հարցը կարող է առաջանալ միայն այն արարքների կատարմամբ, որոնց հանցակազմի հատկանիշները նախատեսված են բացառապես ՀՀ քրեական օրենսգրքով, բայց ոչ այլ, ոչ քրեական օրենքներում և /կամ/ նորմատիվ իրավական ակտերում: Վերոնշյալից հետևում է, որ ՀՀ քր. օր.-ում բլանկետային նորմերի առկայությունը և կիրառումը անօրինական է: Այդ նորմերը օրինական համարելու համար անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ում ավելացնել նշված նորմին համապատասխան դրույթ:

2. Բլանկետային դիսպոզիցիաներով մի շարք նորմերում հղումներ են կատարվում ոչ թե կոնկրետ օրենքներին և (կամ) այլ նորմատիվ իրավական ակտերին, այլ երբեմն չկոնկրետացված, հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտներ կարգավորող մի ամբողջ իրավական ինստիտուտներին, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է նորմերի համակցությունից, որոնք սահմանվում են տարբեր օրենքներում

և (կամ) այլ նորմատիվ իրավական ակտերում: Ի դեպ, այս կամ այն ինստիտուտը ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածների դիսպոզիցիաներում նկարագրվում է տարբեր ձևերով, այսինքն երկիմաստ տերմինաբանության օգտագործմամբ: Օրինակ 187-րդ հոդվածում (Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը) նշվում է, մասնավորապես, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելը կամ դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը....և այլն: Նման դրույթը քրեաիրավական նորմեր կիրառող պրակտիկ աշխատակցի վրա դնում է լրացուցիչ պարտականություններ: Այսպես, ա) առանց բացառության իմանալ հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ինստիտուտը կազմող բոլոր նորմերը: Բ) վերլուծել այդ նորմերը ինչպես առանձին, այնպես էլ դրանց համակցության մեջ: Գ) այդ վերլուծության հիման վրա կարողանալ գտնել կոնկրետ այն նորմերը, որոնց խախտումը հանցագործության հատկանիշներ է պարունակում: Դ) պարզել, թե այդ նորմերի խախտումը հասարակական վտանգավորության տեսանկյունից ներկայացնում են արդյոք իրենցից նվազ կարևորություն, թե ոչ և արդյոք նրա վրա չի տարածվում ՀՀ քր. օր.-ի 18-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը (հանցագործության հասկացությունը):

3. Օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածների բլանկետային դիսպոզիցիաներում, բավականին անկայուն են, քանի որ նրանցում օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները հաճախ են փոփոխություններ և լրացումներ կատարում: Նշված օրենքների և ակտերի անկայունությունը օրենքը կիրառողի վրա ևս երկու պարտականություն է դնում: Առաջին պարտականությունն այն է, որ անհրաժեշտ է իմանալ բոլոր կատարված փոփոխություններն ու լրացումները, իսկ երկրորդ պարտականությունը, որը ծագում է ՀՀ քր. օր.-ի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության մասին և քրեական օրենքի հետադարձ ուժի մասին դրույթներից, կայանում է նրանում, որ հարկավոր է պարզել, թե ոչ քրեական օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի կոնկրետ նորմն ինչ ժամանակագրական հրատարակչությամբ է գործել արարքի

կատարման ժամանակ, տարածվում են արդյոք այդ նորմի վրա, մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հետադարձ ուժի մասին դրույթները, թե ոչ:

4. Նշվող ոչ քրեական օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը ցրված են տարբեր աղբյուրներում: Դա իր հերթին առաջացնում է լրացուցիչ կազմակերպչական, երբեմն անհաղթահարելի դժվարություններ, որոնք պահանջում են ժամանակի մեծ ծախսեր, որոնք կապված են նշված աղբյուրները գտնելու հետ: Հայտնի է, որ այդպիսի աղբյուրներ կան ոչ բոլոր իրավապահ մարմիններում և նույնիսկ նրանց կողմից սպասարկվող տարածքների գրադարաններում: Կարծիք կա, որ ողջ օրենսդրական և նորմատիվ իրավական բազան արձանագրված է էլեկտրոնային կրիչի վրա: Սակայն վերջինիս օգտագործման համար անհրաժեշտ է, որ բոլոր իրավապահ մարմիններն ապահովված լինեն թե համակազմիչներով և թե դրանցում առկա տեղեկատվությունն արտատպելու միջոցներով, քանի որ առանց դրա պրակտիկորեն բացառվում է նշված բազայի ուսումնասիրումը, վերլուծումը և տարբեր օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում պարունակվող նորմերի համեմատությունը: Սա, մասնավորապես, արդի ժամանակաշրջանում լուրջ խնդիր է հանդիսանում ՀՀ ոստիկանության աշխատակիցների համար, քանի որ պետությունը բավարար չափով չի տրամադրում անհրաժեշտ պարագաներ, ուստի կատարվող աշխատանքի անհրաժեշտությունից ելնելով ոստիկանության ծառայողները մեծամասամբ ստիպված են լինում իրենց իսկ սուղ միջոցներով ձեռք բերել այդ տեխնիկական սարքերը և կապ հաստատել համացանցի հետ՝ կրկին իրենց միջոցներով կատարելով ամսեկան վճարումներ: Այսպիսով, պրակտիկ աշխատակիցների համար երբեմն ուղղակի անհնարին է ծանոթանալ հիշատակված օրենքների և ակտերի հետ, որն ակամա չկիրառման պատճառներից մեկն է հանդիսանում կամ լուրջ խոչընդոտ է դառնում ՀՀ քր. օր.-ի բլանկետային դիսպոզիցիաներով համապատասխան նորմերի կիրառումն ապահովելու համար:

Այսպիսով, որպեսզի քրեական օրենսգրքի բլանկետայնության բազմազանությունը և քանակը չհանգեցնի որակման սխալների, անհրաժեշտ է, որ օրենք կիրառող մարմինները ապահովված լինեն իրավական տեղեկատվության էլեկտրոնային համակարգի ազատ օգտագործման հնարավորությամբ, որովհետև, ինչպես հայտնի է, հետաքննիչը, քննիչը կամ դատավորը իրավունք չունեն մասնագետների և

փորձագետների առջև հարց դնել այն մասին, թե համապատասխան ճյուղի որ նորմն է խախտվել, քանի որ դրանք հատուկ գիտելիքներ չեն: Նրանք պետք է այդ նորմը գտնեն ինքնուրույն և պարտադիր ձևով հղում կատարեն այն մեղադրական եզրակացության և դատավճռի մեջ:

5. ՀՀ քր. օր.-ի բլանկետային նորմերում կան հղումներ ոչ միայն օրենքներին, այլ նաև այլ նորմատիվ իրավական ակտերին, իսկ այդ օրենքներից մի շարքի նորմերն էլ նույնիսկ կոնկրետացվում, մանրամասնվում, բացատրվում և երբեմն ուղղվում են այլ նորմատիվ իրավական ակտերով: Այդպիսի իրավիճակը գործադիր իշխանությանը հնարավորություն է տալիս անմիջականորեն ազդել քրեական պատասխանատվության ոլորտի փոփոխման, այն է՝ ընդլայնման կամ սահմանափակման վրա, այն ժամանակ, երբ դա հանդիսանում է օրենսդիր իշխանության բացառիկ արտոնությունը և դրանով իրավական պետության կառուցման ընթացքի մեջ առաջանում են այսպես կոչված «ոստիկանական պետության» տարրեր: Իսկ իրավական պետության բնույթը պահանջում է, որ քրեական պատասխանատվության ոլորտը սահմանվի, կարգավորվի և փոփոխվի միայն օրենսդրի կողմից և ոչ մի դեպքում գործադիր իշխանության մարմինների կողմից:

6. 2003թ.-ին ընդունված ՀՀ քր. օր.-ում բլանկետային նորմերի քանակը զգալիորեն մեծացել է՝ համեմատած 1961թ.-ին ընդունված ՀԽՍՀ քրեական օրենսգրքում առկա այդպիսի նորմերի քանակի հետ: Դա, բնականաբար, իրավաբանների կրթության ողջ համակարգի էական բարեփոխման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն է առաջացնում, մասնավորապես, որակավորման բարձրացման առումով:

Սակայն քննչական և դատական պրակտիկայում առկա է հակառակ պատկերը, որում կան 3 հիմնական կետեր: Առաջինը կայանում է նրանում, որ ֆորմալ իրավաբանական կրթությունը չի համապատասխանում գիտելիքների փաստացի ծավալին, որին պետք է տիրապետի իրավաբանը: Երկրորդը՝ նույնիսկ ամենաբարձր որակավորման իրավաբանը չի կարող իմանալ բոլոր օրենքները և նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա հղումներ են կատարված ՀՀ քր. օր.-ի բլանկետային նորմերում: Միաժամանակ չի կարող ամբողջությամբ իմանալ այդ օրենքներում և ակտերում կատարված բոլոր փոփոխությունները, հիշել, թե երբ և որ

Ժամանակահատվածում է գործել այս կամ այն օրենքը կամ ակտը և կոնկրետ որ հրատարակչությամբ: Երրորդը՝ դա իրավապահ մարմինների աշխատակիցների որակավորման մակարդակի ընդհանուր նվազեցման միտումն է, որի պատճառ է հանդիսանում միջինում մասնագիտությամբ աշխատելու փոքր փորձը, ոչ բավարար ունակությունները, մասնագիտական հմտությունների մակարդակը ինքնուրույն բարձրացնելու ցանկությունը, գիտելիքների մեջ ինքնավստահությունը, առավել որակով և ընդունակ աշխատակիցների արտահոսքը առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններ և այլն: Ի դեպ, նշված երրորդ տարրն արդի ժամանակահատվածում հատկապես ակնհայտ նկատվում է ՀՀ ոստիկանության մարմիններում, ինչի պատճառ է առավելապես հանդիսանում աշխատակիցների սոցիալ-տնտեսական անապահով կենսամակարդակը:

7. ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 2-րդ մասում պարունակվող նորմը, որի համաձայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանդրության և միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա», իր բնույթով հանդիսանում է բլանկետային և, բացի այդ, ոչ կոնկրետ ու դեկլարատիվ, քանի որ ՀՀ քր. օր.-ը հիմնվում է նշված ոչ բոլոր և ոչ յուրաքանչյուր սկզբունքների և նորմերի վրա, այլ միայն նրանց, որոնք ամրապնդված են ՀՀ միջազգային պայմանագրերով:

Ամփոփելով բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների իրավակիրառման պրակտիկայի հիմնախնդիրները, առաջարկվում է՝

1. ՀՀ քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի առկայությունը և կիրառումն օրինական դարձնելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի 1-ին գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանցանքը որակելիս քրեական օրենսգրքի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառվում են բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը»:

2. Բլանկետային քրեաիրավական նորմերով նկարագրվող հանցագործությունները որակելիս իրավակիրառողի աշխատանքը հեշտացնելու նպատակով առաջարկվում ենք, որպեսզի բլանկետային քրեաիրավական նորմերը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն, հնարավորության սահմաններում հստակ հղումներ

պարունակեն այն կոնկրետ օրենքներին, որոնք անհրաժեշտ է կիրառել հանցակազմի այս կամ այն հատկանիշը պարզելու համար:

3. Քրեական պատասխանատվության ոլորտի փոփոխման տեսանկյունից՝ ընդլայնման կամ սահմանափակման իմաստով, գործադիր իշխանության կողմից անմիջականորեն ազդեցությունը բացառելու նպատակով նպատակահարմար ենք համարում ուժը կորցրած ճանաչել ՀՀ քր. օր.-ի բլանկետային նորմերով վկայակոչված ենթաօրենսդրական ակտերը և դրանք ընդունել օրենքի տեսքով:

4. ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն և այն ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա»:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող հանցագործությունների օրենսդրական կարգավորմանն առնչվող խնդիրները բնորոշ են նաև կոռուպցիոն հանցագործությունները սահմանող բլանկետային դիսպոզիցիաներին, ուստի մեր վերոշարադրյալ դիտարկումները և առաջարկվող լուծումները ամբողջությամբ վերաբերելի են նաև կոռուպցիոն հանցագործություններին:

§3. Բլանկետային դիսպոզիցիաներին վկայակոչվող իրավական ակտերի հետադարձ ուժը կոռուպցիոն հանցագործությունները որակելիս

Կատարված հանցագործությանն ըստ արարքը կատարելու պահին գործող օրենքի գնահատական տալը հանդիսանում է ժամանակակից քաղաքակիրթ պետությունների քրեական իրավունքում հաստատված սկզբունք:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի նախագծի 1.3 կետում նշվում է, որ քրեական օրենսգրքի գործողության ժամանակահատվածում մոտ 100 փոփոխություն

ու լրացում է կատարվել²⁹: Անընդհատ փոփոխվող օրենսդրության պարագայում խիստ կարևոր նշանակություն է ստանում նոր օրենքների հետադարձ ուժի հարցը:

Օրենքը կարող է հետադարձ ուժ ստանալ օրենսդրի ուղղակի կարգադրությամբ, որը կարող է արտահայտված լինել հենց օրենքում կամ այն գործողության մեջ դնելու մասին հատուկ ակտում, ինչպես օրինակ 1981թ. մայիսի 8-ի «Կաշառակերության մասին դեկրետում»: Վերջինիս 6-րդ հոդվածում ամրագրված է, որ «Ներկայիս դեկրետը հետադարձ ուժ ունի նրանով, որ կաշառք տալու համար, որը տեղի է ունեցել մինչև սույն դեկրետը հրապարակվելը, հետապնդումից ազատվում են այն անձինք, ովքեր այս դեկրետի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում կհայտնեն դատական իշխանություններին նրանց կողմից կաշառք տալու մասին»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածն ամրագրում է. «Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»: Այսինքն անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Այս կարգը համապատասխանում է ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքներին: Միաժամանակ, քր. օր.-ի 13-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»: ՀՀ քր. օր.-ի վերոշարադրյալ դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենքի հետադարձության կանոնը կիրառվում է այն դեպքում, երբ անձի կողմից հանցավոր արարքը կատարվել է նախքան արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ուժի մեջ մտնելը³⁰: Կարծում

²⁹Տե՛ս <http://www.moj.am/legal/view/article/703>: (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ.):

³⁰Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը LԴ/0286/01/09 գործի վերաբերյալ, 14-րդ կետ:

ենք, որ արդարացի և հիմնավորված է այն մոտեցումը, որ հետադարձ ուժ պետք է տալ միջանկյալ քրեական օրենքին: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ արարքի կատարման պահին գործել է մի օրենք, դրանից հետո ընդունվել է անձի վիճակը բարելավող օրենք, որից հետո ընդունվել է երրորդ օրենքը, որը վատթարացրել է անձի վիճակը, և անձի հանցանքը բացահայտվել է հենց երրորդ օրենքի գործողության ժամանակ: Տվյալ դեպքում անձի նկատմամբ պետք է կիրառվի միջանկյալ, անձի վիճակը բարելավող օրենքը:

Քր. օր.-ի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Հետադարձ ուժ կամ ռետրոակտիվություն ասելով հասկացվում է նոր քրեական օրենքի գործողության տարածումը (ներգործությունը) այն հանցագործությունների վրա, որոնք կատարվել են մինչև դրա ուժի մեջ մտնելը, այսինքն՝ հին օրենքի գործողության ժամանակ: Փաստորեն, սա բացառություն է քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնից (արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով):

ՀՀ գործող քրեական օրենսգրքում պարունակվում է կարևոր դրույթ, ինչը բացակայում էր նախորդ օրենսգրքում, որի համաձայն հետադարձ ուժ է տրվում հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին: Ո՞ր օրենքն է համարվում հանցանք կատարած անձի վիճակը բարելավող: Դա այն օրենքն է, որը չի վերացնում արարքի հանցավորությունը, չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված, առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար³¹: Նման իրավիճակները տարբեր են և կարող են վերաբերել քրեական իրավունքի ընդհանուր մասի տարբեր

³¹Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը ԵԷԴ/0008/15/13 գործի վերաբերյալ, 19-րդ կետ:

ինստիտուտներին, որոնցում կատարված փոփոխությունները հանցավորի համար առավել նպաստավոր են: Մասնավորապես, կարող են վերաբերել քրեական պատժի կրման կարգին, պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելուն, վաղեմության ժամկետներին և այլն: Օրինակ, եթե նոր օրենքը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ավելի կարճ ժամկետ է նախատեսում, ապա այդ օրենքը պետք է համարել հանցանք կատարած անձի վիճակը բարելավող և դրան հետադարձ ուժ տալ:

Տարբերվում են օրենքի հետադարձ ուժի երկու տարատեսակներ. *հասարակ և վերստուգիչ*³²: Հասարակ հետադարձ ուժը նոր, ավելի մեղմ քրեական օրենքի տարածումն է այն հանցագործությունների վրա, որոնցով դատավճիռը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ: Եթե այդ ընթացքում արարքն ապաքրեականացվում է, ապա հարուցված քրեական գործերը ենթակա են կարճման: Եթե մեղմացվում է պատիժը (այլ կերպ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը), ապա նախաքննության մարմինները և դատարանը կատարվածին իրավաբանական գնահատական են տալիս նոր, ավելի մարդասիրական օրենքին համապատասխան: Այսպիսով, և՛ մեղադրանք առաջադրելը, և՛ դատարանի դատավճիռը կայացնելը, և՛ պատիժ նշանակելը իրականացվում են նոր քրեական օրենքին համապատասխան:

Վերստուգիչ (ռեիզիոն) հետադարձ ուժը նոր՝ ավելի մեղմ քրեական օրենքի գործողության տարածումն է այն հանցագործությունների նկատմամբ, որոնցով դատավճիռն արդեն մտել է օրինական ուժի մեջ: Ավելին, տվյալ դատավճիռն արդեն կարող է ի կատար ածված լինել, և անձը կրելիս կամ կրած լինի պատիժը, բայց ունենա չմարված կամ չհանված դատվածություն: Այս դեպքում քրեական գործերը ենթակա են վերանայման: Իսկ կայացված դատավճիռները՝ «վերստուգման», «վերաքննման»: Արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող նոր օրենքն ուժի մեջ մտնելիս պատիժը կրող անձինք ազատվում են դրանից և դատվածություն չունեցողներ են համարվում այդ օրենքը ուժի մեջ մտնելու պահից: Եթե նոր օրենքը մեղմացնում է պատիժը, ապա այն պետք է կրճատվի պատիժը կրող անձնանց նկատմամբ՝ այն շրջանակներում, որոնք սահմանված են տվյալ օրենքով:

³²St'u Уголовное право России: Общая часть / под ред. А.Н. Игнатова, Ю.А. Красикова. М.: Издательство НОРМА, БЕК, 1999, էջ 127:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,
3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով³³:

Քր. օր.-ի 13-րդ հոդվածի 2-րդ մասում ձևակերպված է միջազգային իրավունքի սկզբունքներից և նորմերից, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությունից բխող մի կարևոր դրույթ, որի համաձայն «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Ամփոփելով վերոգրյալը, հանգեցինք հետևության, որ քրեական օրենքի հետադարձ ուժը համապատասխանում է և՛ մարդասիրության, և՛ արդարության սկզբունքներին: Ուստի յուրաքանչյուր անգամ քրեական օրենքին հետադարձ ուժ տալու ընթացքում անձի իրավունքների հնարավոր խախտումները բացառելու համար

³³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը ԳԴԴ/0013/01/11 գործի վերաբերյալ, 17-րդ կետ:

անհրաժեշտ է անշեղորեն պահպանել քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնները, որոնք բովանդակվում են ոչ միայն սահմանադրաիրավական կարգավորումներում, «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեական օրենսգրքում, այլև՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներում:

Քր. օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների գոյությունը պայմանավորված է մի շարք դրական հանգամանքներով, որոնց մասին արդեն իսկ նշվել է սույն աշխատության 1-ին գլխում: Սակայն քրեականացվող արարքն օրենքում նկարագրելիս բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումն ունի նաև «մեղալի հակառակ կողմը»: Քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի գոյությունը և դրանց կիրառումը առաջացնում է իրավաստեղծ, իրավակիրառ և կազմակերպչական բնույթի մի շարք խնդիրներ: Իսկ նման խնդիրների առկայությունը բացասաբար է ազդում նշված նորմերի կիրառման վրա³⁴: Մասնավորապես բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների որակման հետ կապված վկայակոչվող իրավական ակտերի հետադարձ ուժը քննարկելիս հարկ է արձանագրել, որ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա հղում է կատարվում ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածների բլանկետային դիսպոզիցիաներում, բավականին անկայուն են, քանի որ նրանցում օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները հաճախ են փոփոխություններ և լրացումներ կատարում: Նշված օրենքների և ակտերի անկայունությունը օրենքը կիրառողի վրա ևս երկու պարտականություն է դնում: Առաջին պարտականությունն այն է, որ անհրաժեշտ է իմանալ բոլոր կատարված փոփոխություններն ու լրացումները, իսկ երկրորդ պարտականությունը, որը ծագում է ՀՀ քր. օր.-ի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության մասին և քրեական օրենքի հետադարձ ուժի մասին դրույթներից, կայանում է նրանում, որ հարկավոր է պարզել, թե ոչ քրեական օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի կոնկրետ նորմը ինչ ժամանակագրական հրատարակչությամբ է գործել արարքի կատարման ժամանակ, տարածվում են արդյոք այդ նորմի վրա մասնավորապես ՀՀ քր. օր.-ի հետադարձ ուժի մասին դրույթները, թե ոչ: Համապատասխան իրավական ակտերի՝ հանցակազմի բլանկետային հատկանիշները բացահայտող դրույթների փոփոխման պարագայում հանցանքը

³⁴ St' u Gayxman Л.Д. Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2003, էջ 241:

նախատեսող քրեաիրավական նորմը, պահպանելով իր ձևը, փոխում է փաստացի բովանդակությունը. ընդլայնվում կամ նեղացվում է հանցավոր համարվող արարքների շրջանակը: Քր. օր.-ի 3-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական պատասխանատվության միակ հիմքը քր.օր.-ով նախատեսված հանցակազմի հատկանիշները պարունակող արարքի կատարումն է, իսկ 5-րդ հոդվածը հռչակում է, որ արարքի հանցավորությունը սահմանվում է միայն քրեական օրենքով: Այնինչ, բլանկետային դիսպոզիցիաների օգտագործման պարագայում քրեաիրավական արգելքի փաստացի սահմանները վերջին հաշվով որոշվում են ոչ թե քր.օր.-ով, այլ այն օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնց վրա հղում են կատարում բլանկետային դիսպոզիցիաները: Քրեաիրավական նորմերում ենթաօրենսդրական ակտերի վրա հղում կատարելը գործադիր իշխանությանը հնարավորություն է տալիս անմիջականորեն ազդել քրեական պատասխանատվության կիրառման ոլորտի ընդլայնման կամ նեղացման վրա, այն դեպքում, երբ դա օրենսդիր իշխանության բացառիկ իրավունքն է:

Հանցագործության բլանկետային հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը կարող են ունենալ քրեաիրավական նշանակություն ունեցող կիրառման մեկ այլ ոլորտ: Ենթադրենք, կատարված արարքը որակվել է բլանկետային քրեաիրավական նորմ նախատեսող հոդվածով, քանի որ որակումը կատարելու պահին դրա հատկանիշները համապատասխանել են կոնկրետ նորմատիվ իրավական ակտի դրույթներին: Այնուհետև քրեական գործի քննության ընթացքում տեղի է ունենում այդ նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթի այնպիսի փոփոխություն, որի արդյունքում տվյալ արարքը դադարում է պարունակել այն բլանկետային հատկանիշը, որի շնորհիվ ընդգրկվում էր համապատասխան հանցակազմի շրջանակներում: Բերենք տեսական մի օրինակ: Ենթադրենք, քննիչը, չունենալով դատարանի թույլտվությունը, կատարել է բնակարանի խուզարկություն, ինչը հիմնավորել է նրանով, որ դա անհետաձգելի դեպք էր, և խուզարկության հապաղումը կհանգեցներ ապացույցների կորստի: Քննիչի կողմից իր պաշտոնեական լիազորությունները անցնելու փաստի առթիվ հարուցվում է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 309 հոդվածով: Գործի քննության ընթացքում, մինչև դատավճիռ կայացնելը լրացում է կատարվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որով թույլատրվում է

անհետաձգելի դեպքերում բնակարանի խուզարկությունը կատարել առանց դատարանի թույլտվության:

Ստացվում է, որ նորմատիվ իրավական ակտի փոփոխության արդյունքում կատարված կոնկրետ արարքի հանցավորությունը վերացվում է: Բացի ՀՀ Սահմանադրությամբ և քր. օր.-ում ամրագրված համապատասխան դրույթներից, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը նույնպես սահմանում է՝ «Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»: Հետևաբար, հանցագործության բլանկետային հատկանիշը բացահայտող այն իրավական ակտը, որը բարելավում է հանցանք կատարած անձի դրությունը, պետք է տարածվի մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա: Ամբողջ խնդիրը նրանում է, որ այս դեպքում անձի դրությունը բարելավվում է ոչ թե քրեական օրենքով (դրա բլանկետային նորմը մնացել է անփոփոխ), այլ բլանկետային հատկանիշը բացահայտող իրավական ակտի փոփոխությունը նախատեսող նորմով:

Այսպիսով, բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող հանցագործությունների որակման ընթացքում քր. օր.-ից բացի կիրառվում են նաև այլ համապատասխան իրավական ակտերը: Քր. օր.-ի 1-ին հոդվածի 1-ին մասը, սահմանելով հասարակական հարաբերությունների քրեաիրավական կարգավորման իրավական հիմքը, ամրագրում է, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է քրեական օրենսգրքից: Իսկ քր.օր.-ի բլանկետային նորմերով նախատեսված հանցագործությունների հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը քր. օր.-ի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառելու հնարավորության մասին հոդվածում ոչինչ չի նշվում: Համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Ուստի քր. օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների գոյությունը «օրինականացնելու», կոնկրետ արարքների հանցավորությունը փաստացիորեն

վերացնող նորմատիվ իրավական ակտերին հետադարձ ուժ տալու քրեաիրավական հիմք ստեղծելու նպատակով առաջարկում ենք՝

ա) քր. օր.-ի 1-ին գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանցանքը որակելիս քրեական օրենսգրքի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառվում են բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը:»,

բ) քր. օր.-ի 2-րդ գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը, որոնք բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը, քրեական օրենսդրության ոլորտում ունեն հետադարձ ուժ:»:

Ամեն դեպքում այլ նորմատիվ իրավական ակտերը ոչ մի պարագայում չեն կարող ինքնուրույն կերպով սահմանել քր. օր.-ում նախատեսված որևէ հանցակազմով չընդգրկվող արարքների հանցավորությունը կամ ամբողջությամբ վերացնել որևէ հանցակազմով ընդգրկվող արարքի հանցավորությունը: Նորմատիվ իրավական ակտերի դրույթները կարող են սահմանել կամ վերացնել քր. օր.-ով նախատեսված արարքների միայն մասնավոր, կոնկրետ դրսևորումների հանցավորությունը:

Այնուամենայնիվ, որոշ արարքներ քրեականացնելիս բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումն անխուսափելի է: Այս առումով քննարկման է արժանի այն հարցը, թե ինչպե՞ս պետք է շարադրվեն այդ դիսպոզիցիաները, և արարքը որակելիս ինչպե՞ս կարելի է խուսափել դրանց կիրառման դժվարություններից:

Բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման ընդհանուր կանոնը նախատեսված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 37-ի 7-րդ մասում՝ «Իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները: Եթե հնարավոր կամ նպատակահարմար չէ այդ հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները կարգավորել տվյալ իրավական ակտով, ապա դրանում հղումների ձևով կամ առանձին մասերով պետք է սահմանվեն այն իրավական ակտերի տեսակները, որոնցով կարգավորվելու են չկարգավորված հարաբերությունները, կամ նշվեն այն իրավաստեղծ մարմինները, որոնք պետք է կարգավորեն դրանք»: Այսպես, քր. օր.-ի 311.1 հոդվածը,

հանդիսանալով որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն սահմանող հոդված, քրեական պատասխանատվություն նախատեսելով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար, 5-րդ մասում հղում է կատարում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, որի հիման վրա իրավակիրառողը պետք է լուծի կոնկրետ սուբյեկտի՝ հանրային ծառայող հանդիսանալու հարցը: Պետք է նշել, սակայն, որ քր. օր.-ի այլ բլանկետային դիսպոզիցիաներում կոնկրետ իրավական ակտերին հղումներ չեն կատարվում. օրենսդիրը բավարարվում է «ապօրինի», «կանոնները խախտելով» ձևակերպումներով, ինչը արարքը որակելիս կարող է բարդություններ առաջացնել իրավակիրառողի համար: Հետևաբար, բլանկետային քրեաիրավական նորմերում հնարավորության դեպքում պետք է նշվեն այն կոնկրետ իրավական ակտերը, որոնք կիրառվելու են արարքը որակելիս: Կարծում ենք, որ քր. օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման ներկայիս մոտեցման պարագայում իրավակիրառողի աշխատանքը հեշտացնելու արդյունավետ միջոց կարող է լինել բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերի համակարգումն ու այդ ակտերի կամ դրանց համապատասխան քաղվածքների ժողովածուների կազմումը:

Խոսելով բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման մասին՝ Ե.Իլյուկը գրում է, որ դիսպոզիցիաներում բլանկետային հատկանիշների առկայությունը պետք է հավասարակշռվի հանցակազմի մյուս հատկանիշների կոնկրետացմամբ, ինչը կբացառի այն իրավիճակը, որի դեպքում հանցագործության հատկանիշները համընկնում են այլ իրավախախտման հատկանիշների հետ³⁵:

Ա.Ի.Կորոբեկը առաջ է քաշում բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման հետևյալ կանոնը՝ արարքը բլանկետային հատկանիշով նախատեսելու դեպքում նկարագրել կոնկրետ հանրորեն վտանգավոր հետևանքները, իսկ ձևական հանցակազմ կառուցելիս՝ նշել մեղքի ձևը³⁶: Կարծում ենք, որ բացի հետևանքներից և մեղքի ձևից, բլանկետային դիսպոզիցիաներում, կախված նրանից, թե որ հատկանիշն է բլան-

³⁵St'ya Ильюк Е.В. Законодательная техника построения диспозиции статьи уголовного закона. Автореф. дис. канд. юр. наук, 1989, էջ 16:

³⁶St'ya Коробеев А.И. Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, էջ 116:

կետային, կարող են կոնկրետացվել նաև հանցագործության եղանակը (օրինակ, բռնության գործադրումը), հանցագործության շարժառիթն ու նպատակը:

Լ.Դ.Գաուխմանն առաջարկում է քր. օր.-ում սահմանել դրույթ, համաձայն որի՝ Հատուկ մասի բլանկետային դիսպոզիցիաներում թույլատրվում է հղումներ կատարել միայն օրենքներին, ինչը կբացառի այլ նորմատիվ իրավական ակտերին նման հղումների հնարավորությունը: Դրա շնորհիվ քրեական պատասխանատվության ոլորտը կսահմանվի և կփոփոխվի բացառապես օրենսդրի և ոչ մի դեպքում՝ գործադիր իշխանության մարմինների կողմից³⁷: Հեղինակի առաջարկած գաղափարի իրագործումը տեսականորեն թույլ կտա ապահովել օրենսդրի՝ արարքների քրեականացման և ապաքրեականացման իրավունքի բացառիկությունը: Սակայն ելենելով քր. օր.-ում առկա մի շարք բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպումից՝ կարելի է ասել, որ գործնականում այդ գաղափարի ամբողջական իրագործումը հնարավոր չէ: Նշենք միայն պաշտոնական լիազորությունները չարաշահելու և անցնելու հանցակազմերը նախատեսող նորմերը, երբ արարքը որակելիս դրանց հետ համատեղ անհրաժեշտություն է առաջանում կիրառել պաշտոնատար անձանց կոնկրետ իրավունքներն ու պարտականությունները սահմանող բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերը:

Այսպիսով, ամփոփելով բլանկետային դիսպոզիցիաներին վկայակոչվող իրավական ակտերի հետադարձ ուժը՝ կոռուպցիոն հանցագործությունները որակելու տեսանկյունից, առաջարկվում է՝

ա) քր. օր.-ի 1-ին գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հանցանքը որակելիս քրեական օրենսգրքի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառվում են բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը:»,

բ) քր. օր.-ի 2-րդ գլխում ընդգրկել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը, որոնք բարելավվում են հանցանք կատարած անձի վիճակը, քրեական օրենսդրության ոլորտում ունեն հետադարձ ուժ:»,

³⁷St'u Гаухман Л.Д. Нужна правовая экспертиза по уголовным делам//Законность, 2000, N 4, էջեր 21-22:

գ) քր. օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման ներկայիս մոտեցման պարագայում իրավակիրառողի աշխատանքը հեշտացնելու արդյունավետ միջոց դարձնելու նպատակով բլանկետային քրեահրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերը համակարգել ու կազմել այդ ակտերի կամ դրանց համապատասխան քաղվածքների ժողովածուներ:

Հույսով ենք, որ սույն գլխում արված օրենսդրական առաջարկությունները կարող են մեկնակետ հանդիսանալ քրեական իրավունքի ձևական աղբյուրների մասին տեսության մեջ ձևավորված ավանդական պատկերացումների վերանայման համար, իսկ այդ ուղղությամբ կատարված հետազոտություններն արդիական և կարևոր, տեսական ու գործնական նշանակություն կունենան:

ԳԼՈՒԽ 2. ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ԴԻՍՊՈԶԻՑԻԱՅԻՆ ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§1. Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները

Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով: Մեր կարծիքով, կոռուպցիոն բնույթի հանցագործություններ են համարվում նաև ՀՀ քր. օր.-ի 19-րդ գլխում նախատեսված, սակայն նշված ցանկում չընդգրկված մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հետևյալ հանցագործությունները.

1. Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը (148-րդ հոդված),

2. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը (152-րդ հոդվածի 2-րդ մաս):

Թերևս անհրաժեշտ է ևս մեկ անգամ լրամշակել կոռուպցիոն հանցագործությունների ցանկը՝ դրանում ընդգրկելով նաև վերոհիշյալ հանցագործությունները:

Այժմ քննարկենք մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված որոշ հանցագործությունների որակման առանձնահատկությունները և դիտարկենք դրանց վերաբերյալ առկա մոտեցումներն արտասահմանյան երկրների օրենսդրության տեսանկյունից՝ կատարելով իրավահամեմատական վերլուծություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու համար, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով: Հանրորեն վտանգավոր այս արարքը ոտնձգում է սահմանադրական

սկզբունքներից մեկի՝ իրավահավասարության դեմ: Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին, հանդիսանում է հանցավոր արարք³⁸: Նշված հանցավոր արարքի կատարման համար քր. օր.-ը, որպես ծանրացուցիչ հանգամանք, միայն մեկ եղանակ է առանձնացնում, այն է՝ պաշտոնեական դիրքն օգտագործելը: Այն կարող է արտահայտվել, օրինակ, անօրինական հավելավճարների տրամադրման, պարգևատրումների հանձնման մեջ:

Ծանրացուցիչ հանգամանքներում քաղաքացիների իրավահավասարության խախտման սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն պաշտոնատար անձինք: Իբրև այդպիսիք հասկացվում են՝

ա. Մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք,

բ. Պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

ՌԴ քր.օր.-ի 136-րդ հոդվածն առանց որևէ ծանրացուցիչ հանգամանք նախատեսելու պատասխանատվություն է սահմանում նշված հանցանքը բացառապես ծառայողական դիրքն օգտագործելու եղանակով կատարելու համար³⁹, սակայն, այդուհանդերձ, ՌԴ քր. օր.-ի թերությունն էլ մեր կարծիքով կայանում է նրանում, որ բաց է մնում այն հարցը, թե ինչ որակում պետք է տալ ծառայողական

³⁸Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս», ԵՊՀ հրատարակչություն, Երևան - 2012, էջ 249:

³⁹ Տե՛ս <http://base.garant.ru/10108000/> (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ.):

լիազորություններ չունեցող անձի կողմից մարդու կամ քաղաքացու իրավահավասարության խախտման դեպքում⁴⁰: Օրինակ անձը մեկ այլ անձի հրաժարվում է իր իսկ բնակարանը տրամադրել վարձակալական հիմունքներով, քանի որ վերջինս աղանդավորական է: Նման պարագայում նպատակահարմար չէ այս հանցանքը բացառապես կապել ծառայողական լիազորությունների հետ ու սուբյեկտը դարձնել հատուկ:

Ուկրաինայի քրեական օրենսդրությունը մարդու կամ քաղաքացու իրավահավասարության խախտումը և ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը ներկայացված է քր. օր.-ի մեկ ընդհանուր՝ 161-րդ հոդվածի դիսպոզիցիայում՝ որպես օբյեկտիվ կողմի երկրնտրելի դրսևորումներ⁴¹: Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով տրված իրավական կարգավորումն ավելի ռացիոնալ է, քանի որ մարդու կամ քաղաքացու իրավահավասարության խախտումն ուղղված է սահմանադրական իրավունքների դեմ, իսկ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելն առավելապես սպառնալիք է հասարակական անվտանգության համար, ուստի այս երկու հանցանքների միավորումը մեկ հանցակազմի շրջանակներում օրենսդրական տեխնիկայի առումով նպատակահարմար չէ:

Նշենք, որ Ուկրաինայի քր. օր.-ի 161-րդ հոդվածի 2-րդ մասն, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, նախատեսել է նշված հանցանքը պաշտոնատար անձի կողմից կատարելու հանգամանքը: Սակայն տվյալ դեպքում այդ ծանրացուցիչ հանգամանքը ճիշտ կլիներ ձևակերպել առավել բովանդակալից, մասնավորապես՝ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունները չարաշահելու եղանակով: Քանզի եթե պաշտոնատար անձը մարդու կամ քաղաքացու իրավահավասարության խախտման ժամանակ ի չարս չի օգտագործել իր այս կամ այն լիազորությունը կամ անօրինական ձևով ձեռնպահ չի մնացել իր լիազորությունը կատարելուց, ապա նրա կողմից մարդու կամ քաղաքացու իրավահավասարության խախտումը ծանրացուցիչ հանգամանք չի կարելի դիտել՝ անկախ նրա պաշտոնատար անձ լինելու փաստից:

⁴⁰ Տե՛ս Астанин В.В. Борьба с коррупцией в контексте принципа равенства граждан перед законом // Российский юридический журнал. – 2008. №2. – էջեր 155 – 156:

⁴¹ Տե՛ս <http://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/> (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ.):

Բելառուսի քր. օր.-ի 190-րդ հոդվածը, սահմանելով պատասխանատվություն քաղաքացիների իրավահավասարության խախտման համար, որևէ նշում չի կատարում ծառայողական կամ պաշտոնեական դիրքի չարաշահման վերաբերյալ⁴²:

Քննարկվող հանցագործության շրջանակներում նշված ծանրացուցիչ հանգամանքի գոյության առումով մենք ներկայացնում ենք մեր տարակուսանքը: Այսպես, գործող քրեական օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր այն դեպքում, երբ քննարկվող հանցագործությունը կատարվում է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, ապա այդ արարքը որակվում է համակցության կանոններով՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (քր. օր.-ի 308-րդ հոդված) կամ պաշտոնեական լիազորություններն անցնելու (քր. օր.-ի 309-րդ հոդված) հատկանիշներով, քանի որ ընդունված է, որ քննարկվող հանցագործության ծանրացուցիչ հանգամանքը չի կարող առկա լինել ինքնուրույն՝ առանց նշված երկու հանցակազմերից որևէ մեկի առկայության: Ահա հենց այստեղ էլ առաջանում է խնդիր, որը կապված է քրեական օրենսդրության արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի հետ, որի համաձայն արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար:

Ինչպես գիտենք, հանցագործության անմիջական օբյեկտն այն կոնկրետ հասարակական հարաբերությունն է, որը վնասվում է տվյալ տեսակի հանցակազմի հատկանիշները պարունակող կոնկրետ հանցագործությունից: Գոյություն ունեն նաև երկօբյեկտ (երկու անմիջական օբյեկտ ունեցող) հանցագործություններ, որոնցում առանձնացվում են հիմնական անմիջական օբյեկտը, որին վնաս հասցնելը տվյալ հանցագործության էությունն է, և լրացուցիչ անմիջական օբյեկտը՝ այն հասարակական հարաբերությունը, որը հանցագործության տվյալ տեսակի դեպքում հիմնական անմիջական օբյեկտի հետ մեկտեղ վնասվում է կամ կարող է վնասվել⁴³: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտը պետական ապարատի (կառավարման հանրային ապարատի) նորմալ գործունեությունն է: Բացի հիմնական օբյեկտից, նշված հանցագործությունները, կոնկրետ հանգամանքներից կախված,

⁴²Տե՛ս http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1_ (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ.):

⁴³Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս», ԵՊՀ հրատարակչություն, Երևան - 2011, էջ 122:

կարող են ունենալ նաև լրացուցիչ օբյեկտ և վնաս հասցնել մարդկանց կյանքին, առողջությանը, սեփականությանը, խախտել մարդկանց սահմանադրական և մյուս իրավունքներն ու ազատությունները:

Գործող օրենսդրական կարգավորման պարագայում ստացվում է, որ եթե պաշտոնատար անձն իր պաշտոնական լիազորությունները չարաշահելով խախտում է քաղաքացիների իրավահավասարությունը, ապա նա վնաս է պատճառում և՛ քաղաքացիների իրավահավասարությունն ապահովող հասարակական հարաբերություններն, և՛ պետական ծառայության շահերին: Եվ տրամաբանական է, որ այդ դեպքում պատասխանատվությունն ավելի խիստ պետք է լինի, քան մասնավոր անձի կողմից քաղաքացիների իրավահավասարությունը խախտելու դեպքում: Սակայն եթե պաշտոնատար անձի արարքը որակվում է քր. օր.-ի 143-րդ հոդվածի 2-րդ մասի և 308-րդ հոդվածի համակցությամբ, ապա ստացվում է, որ պաշտոնական լիազորությունների չարաշահման համար նա պատասխանատվության է ենթարկվում երկու անգամ՝ նախ, խստանում է քր. օր.-ի 143-րդ հոդվածով նախատեսված պատիժը՝ հոդվածի առաջին մասին վերաժվելով երկրորդ մասի, և երկրորդ՝ 308-րդ հոդվածի շրջանակներում: Իսկ 143-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու դեպքում պաշտոնատար անձը իր լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվության կենթարկվի մեկ անգամ՝ 308-րդ հոդվածի շրջանակներում: Այսինքն, քաղաքացիների իրավահավասարությունը խախտելու համար պաշտոնատար անձը պատասխանատվության կենթարկվի 143-րդ հոդվածի առաջին մասով, իսկ պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար՝ 308-րդ հոդվածով:

Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգում⁴⁴: Մասնավորապես հայեցակարգում գործող քրեական օրենսգրքի արդի թերի վիճակը բնորոշելիս, որպես հակասություն, թիվ 1.5. (2) կետում նշված է, որ գործող քրեական օրենսգրքում հիմնախնդիր է հանցակազմի ծանրացնող հանգամանքների հարցը: Շատ դեպքերում դրանք անհիմն են նախատեսվում և հակասությունների պատճառ են դառնում: Օրինակ, շատ լավ գիտենք, թե ինչ վեճերի տեղիք է տալիս այն իրադրությունը, երբ հանցակազմում, որպես ծանրացնող

⁴⁴Տե՛ս http://www.moj.am/storage/files/legal_act/legal_act_0871859725811_..._.pdf: (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ.):

հանգամանք, նախատեսված է այլ հանցագործության հետ զուգորդված լինելու հանգամանքը: Դա շատ լավ երևում է սպանության ծանրացնող հանգամանքների հետ կապված: Միշտ վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Եթե համակցությամբ ենք որակում, ապա ստացվում է, որ անձը նույն հանցագործության համար կրկնակի է պատժվում: Իսկ եթե բավարարվում ենք միայն որպես ծանրացնող հանգամանքներով սպանություն որակելով, ապա կարծես թե անձը մեկ հանցագործության համար է պատասխանատվության ենթարկվում: Հարցի լուծումը նման կարգի ծանրացնող հանգամանքներ նախատեսելուց ձեռնպահ մնալն է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այլ ծանրացնող հանգամանքները (օրինակ՝ այլ հանցանքի կատարումը թաքցնելու կամ հեշտացնելու նպատակով, շահադիտական դրդումներով, անձի կամ նրա մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ և այլն) փակում են հարցը:

Ավելին, հայեցակարգում 1.5. կետով ամրագրված է, որ քրեական օրենսգրքի հատուկ մասն, ի թիվս այլ սկզբունքների, պետք է հիմնված լինի նաև հետևյալ սկզբունքային դրույթի վրա: Այսպես, անընդունելի է քրեական գործող օրենսգրքում առկա այն վիճակը, երբ որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված մեկ այլ հանցանքի կատարումը (օրինակ՝ սպանությունը, որը զուգորդված է մարդուն առևանգելով կամ ավազակությամբ և այլն): Նման դեպքերում ոչ միայն առաջանում են արարքի որակման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, այլև խախտվում է նույն արարքի համար կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքը: Հետևաբար նման ծանրացնող հանգամանքներ նախատեսելը ճիշտ չէ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 143-րդ հոդվածի 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու մեր առաջարկը կարելի է ներկայացնել ոչ միայն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների պարագայում, այլև, ընդհանրապես, Հատուկ մասի հոդվածներից վերացնել «անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը» ծանրացնող հանգամանքը: Այդ պարագայում անձի արարքը հանցագործությունների համակցությամբ որակելը չի հակասի նույն արարքի համար երկրորդ անգամ դատապարտելու արգելքին:

ՀՀ քր. օր.-ի 147-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու համար, որի օբյեկտիվ կողմը դրսևորվում է մարդու կամքին հակառակ նրա բնակարանն ապօրինի մուտք գործելով: Բնակարան է համարվում ցանկացած կացարան, որը նախատեսված է մարդու ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր բնակության համար: Օրինակ բազմահարկ շենքի բնակարանը, առանձնատունը, հյուրանոցային համարը, հանրակացարանի սենյակը և այլն: Այն դեպքում, երբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտումը պայմանավորված է ծայրահեղ անհրաժեշտությամբ (օրինակ հրդեհը կամ տեղի ունեցող հանցագործությունը կանխելու համար), ապա արարքը չի կարող քրեորեն պատժելի համարվել: Մուտք գործել ասելով տվյալ դեպքում հասկացվում է ինչպես որոշակի տարածքում (բնակարան) հայտնվելը, այնպես էլ այնտեղ գտնվելը, իսկ այն ապօրինի կհամարվի, եթե տեղի է ունեցել ՀՀ գործող օրենսդրության խախտմամբ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է քննարկել պաշտոնատար անձի կողմից մարդու բնակարանի անձեռնմխելիության խախտման հետ կապված իր պաշտոնական լիազորություններից բխող գործողությունների կատարման կարգը՝ մանավանդ, որ քր. օր.-ի 147-րդ հոդվածի 3-րդ մասը որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսում է նույն արարքի կատարումը պաշտոնական դիրքի օգտագործմամբ: Այսպես, ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածում ամրագրված է, որ բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ: Սահմանադրական այդ նորմին համապատասխան ՀՀ քր. դատ. օր.-ի 225-րդ հոդվածի 3-րդ մասը ևս իմպերատիվ ձևով պահանջ է ներկայացնում, որպեսզի բնակարանի խուզարկությունը կատարվի միայն դատարանի որոշմամբ: Նման պարագայում, քննիչի կողմից առանց դատարանի թույլտվության՝ որոշման, անձի բնակարան մուտք գործելն ու խուզարկություն կատարելը ոչ միայն ապացուցողական տեսանկյունից կարժեզրկի տվյալ քննչական գործողությամբ ձեռք բերված արդյունքը, այլև կհանգեցնի քննիչի կողմից տվյալ անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմանը, ինչը, փաստորեն, կհամարվի քրեորեն պատժելի արարք, քանի որ քննիչն ի սկզբանե իրավունք չի ունեցել առանց դատարանի թույլտվության մուտք գործել անձի բնակարան և նրա կամքին հակառակ կատարել խուզարկություն և այդ ամենն արվել է ապօրինի: Կոնկրետանալով

քննչական գործողություններից մեկի՝ խուզարկության, իսկ առավելապես բնակարանի խուզարկության վրա, կարծում ենք, որ այդ առիթով անհրաժեշտ է վերանայել ունեցած իրավական հիմքերն ու մոտեցումները՝ սկսած սահմանադրական դրույթներից, վերջացրած օրենսդիր մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության մեջ այդ քննչական գործողության ընթացակարգի ձևափոխմամբ: Ինդիքը նրանում է, որ գործնական աշխատանքում երբեմն անհրաժեշտություն է առաջանում այսպես ասած «րոպե առաջ» կատարել բնակարանի խուզարկություն: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, օրինակ, քննիչի կողմից ձերբակալված կասկածյալին գիշերային ժամին անհապաղ հարցաքննելուց հետո, իսկ դրա հապաղումը կարող է հանգեցնել ապացույցների ոչնչացմանը կամ թաքցնելուն, ձևափոխելուն: Գործնականում ՀՀ-ում դատարանները գիշերային ժամերին չեն աշխատում ու քննիչը, ստիպված, լավագույն դեպքում պետք է սպասի աշխատանքային ժամի սկսվելուն, որպեսզի բնակարանի խուզարկության թույլտվություն ստանալու համար միջնորդություն ներկայացնի դատարան, անցնի դրա հետ կապված դատավարական որոշակի ընթացակարգ ու նոր միայն ստանալով այդ թույլտվությունը՝ ձեռնամուխ լինի այդ անհապաղ կատարման ենթակա բնակարանի խուզարկության իրականացմանը: Այստեղ արդարացիորեն հարց է առաջանում. իսկ ինչ անել այն դեպքում, երբ այն բնակարանում, որտեղ ենթադրվում է, որ պետք է լինեն գործի համար ապացուցողական նշանակություն ունեցող իրեր և արժեքներ, գտնվում են կասկածյալի ընտանիքի անդամները, որոնք հեշտորեն կարող են վերացնել այդ ամենը, սակայն քննիչը, ամեն դեպքում, այդ բնակարան մուտք գործելու և անհրաժեշտ իրերի խուզարկման ու հայտնաբերման համար պետք է «սպասի» այնքան ժամանակ, քանի դեռ չի ստացել դատարանի թույլտվությունը: Հարկ է նկատել, որ օրենսդրական կարգավորման նման մոտեցումը հաճախ պատճառ է դառնում կատարվող քննության մշակված մարտավարության վնասման համար: Գտնում ենք, որ Սահմանադրությունը, հետևաբար նաև քրեադատավարական օրենսդրությունը պետք է թույլ տան անհապաղ կատարում պահանջող խուզարկության դեպքում այն իրագործել առանց դատարանի թույլտվության: Բնականաբար այս գաղափարի հակադարձողներն առաջ կքաշեն իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից իրենց լիազորությունների անհարկի չարաշահման հանգմանքի վտանգը, սակայն գտնում ենք, որ այդ հնարավոր

չարաշահումները կանխելու համար հուսալիորեն կարող են լինել համապատասխան իրավական մեխանիզմներ ու արգելքներ: Այսպես, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունները լսելու համար Սահմանադրությունը կրկին իմպերատիվ կերպով պահանջում է դատարանի թույլտվությունը, ինչը նույն ձևով ամրագրված է քր. դատ. օր.-ի 239-րդ և 241-րդ հոդվածներում: Այնինչ, այդ նույն քր. դատ. օր.-ի 284-րդ հոդվածը, սահմանելով դատարանում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման վերաբերյալ միջնորդությունների քննարկման կարգը, նշված հոդվածի 8-րդ մասում նախատեսում է «ժամանակավոր» բացառություն, այն է՝ «Այն դեպքերում, երբ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հապաղումը կարող է հանգեցնել տեղորիստական ակտի կատարմանը, կամ հնարավոր են Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների իրականացումը՝ 48 ժամվա ընթացքում այդ մասին ծանուցելով դատարանին՝ նրան ներկայացնելով սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված փաստաթղթերը: Այն դեպքերում, երբ դատարանը բավարար չի համարում սույն հոդվածով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման հիմքերը, դրա իրականացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա իրականացման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը ենթակա են անհապաղ ոչնչացման: Հակառակ դեպքում՝ դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու մասին՝ սույն հոդվածով սահմանված կարգով»: Այս «արտոնյալ» ընթացակարգը ամրագրված է նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՕՀԳ-ի մասին օրենք) 32-րդ հոդվածում: Թեպետ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն, ի վերջո, 48 ժամվա ընթացքում դատարանին ներկայացնում է արդեն իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ ի սկզբանե եղած անհրաժեշտությունն ու դրա հիմնավորումները, ինչպես նաև տվյալ պահին արդեն իսկ ձեռք բերած արդյունքը, սակայն չէ՞ որ Սահմանադրությունն այդ

հարցի շուրջ ամրագրել է հստակ ու իմպերատիվ պահանջ և չի նախատեսում նման բացառություններ: Մենք ամենևին էլ դեմ չենք այդ բացառությանը, պարզապես գտնում ենք, որ այդ բացառությունը, ինչպես նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու դեպքում, այնպես էլ քրեական գործի քննության անհրաժեշտությունից ելնելով անհապաղ կատարում պահանջող բնակարանի խուզարկության պարագայում պետք է նախատեսել ու ամրագրել նաև իրավական մտածողության և համապատասխան ակտերում դրանց ամրագրման կոնտեքստում:

Այլ կերպ ասած, առաջարկում ենք անհապաղ կատարում պահանջող բնակարանի խուզարկության դեպքում կատարել այն՝ առանց նախապես դատարանի թույլտվությունը ստանալով, բայց միաժամանակ քր. դատ. օր.-ի 31-րդ գլխում ամրագրված դրույթների խիստ պահպանմամբ՝ մասնավորապես 227-րդ հոդվածով նախատեսված անձանց ներկայությամբ (ընթերականեր, անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայություն, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ, անհրաժեշտության դեպքում թարգմանիչ, մասնագետ և այլն) և դրանից հետո միայն անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, այդ մասին ծանուցել դատարանին՝ նրան ներկայացնելով կատարված խուզարկության անհրաժեշտությունը վկայող նյութերն ու փաստաթղթերը: Եվ եթե դատարանն անհիմն կհամարի այդ խուզարկությունը, ապա այդ քննչական գործողությամբ ձեռք բերված արդյունքը կկորցնի իր ապացուցողական նշանակությունը:

Նման ընթացակարգով, ըստ էության, կսահմանափակվեն ու կբացառվեն հնարավոր չարաշահումները և միաժամանակ չի վնասվի գործի քննության ողջամիտ օպերատիվությունը:

Հարկավոր է արձանագրել, որ պաշտոնատար անձի կողմից բնակարանի անձեռնմխելիության խախտման հետ կապված կա ևս մեկ հիմնահարց: Քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածում «բնակարան» հասկացության մեջ ընդգրկված է նաև մասնավոր կամ ծառայողական անձնական ավտոմեքենան: Հետևաբար, ավտոմեքենայի խուզարկությունը ևս պետք է կատարվի դատարանի թույլտվությամբ: Այնինչ գործնականում ոչ միայն գրեթե ընդհանրապես ավտոմեքենայի խուզարկությունը չի

կատարվում դատարանի թույլտվությամբ, այլև, զարմանալի է, բայց այդ նույն դատարանը նման խախտումով կատարված ավտոմեքենայի խուզարկությամբ ստացված փաստական տվյալները չի համարում անօրինական ճանապարհով ձեռք բերված տվյալներ: Այս պարագայում, օրինականության խախտում թույլ չտալու և կատարվող քննության համար ընթացակարգային առումով ավելորդ ու անհարկի ձևով բարդություններ չստեղծելու համար առաջարկում ենք պարզապես քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածով սահմանված «բնակարան» հասկացության բովանդակությունից հանել «ավտոմեքենա» բառը, իսկ ավտոմեքենայի խուզարկությունը կատարել պարզապես այն վարողի կամ դրա տիրոջ և կամ էլ այլ՝ գործով չշահագրգռված երրորդ անձի ու ընթերականների պարտադիր մասնակցությամբ:

ՌԴ քր. օր.-ի 139-րդ հոդվածի 3-րդ մասը ևս պատասխանատվություն է նախատեսում ծառայողական լիազորություններն իրականացնող անձի կողմից բնակարանի անձեռնմխելիության խախտման համար: Հատկանշական է, որ ՌԴ քր. օր.-ի 139-րդ հոդվածը ծանոթության կարգով պարզաբանում է «բնակարան» հասկացությունը թե՛ տվյալ հոդվածում և թե՛ ընդհանրապես ՌԴ քր. օր.-ում, որը տառացի համահունչ է ՌԴ քր. դատ. օր.-ի 5-րդ հոդվածի 10-րդ կետում տրված «բնակարան» հասկացության հետ: Ընդ որում, բնակարան հասկացության մեջ ընդգրկված չէ մասնավոր կամ ծառայողական անձնական ավտոմեքենան: Կարծում ենք, որ ՌԴ օրենսդիր մարմինն առավել ճիշտ է վարվել «բնակարան» հասկացությունը նաև քր. օր.-ում սահմանելով, քանի որ ՀՀ քր. օր.-ում ոչ միայն չկա այդ հասկացության պարզաբանումը, այլև դրա պարզաբանման հետ կապված, որպես հիմք, որևէ հղում չի կատարվում քր. դատ. օր.-ում եղած նշված պարզաբանմանը:

Բնակարանի անձեռնմխելիության խախտման վերաբերյալ Ուկրաինայի քր. օր.-ի 162-րդ հոդվածի դիսպոզիցիան ավելի ընդգրկուն է ներկայացված ու կարծես թե այդ հանցագործությունը բացառապես վերաբերվում է պաշտոնատար անձանց կողմից իրենց ծառայողական լիազորությունները չարաշահելուն, թեպետ հոդվածի 2-րդ մասը որպես ծանրացուցիչ հանգամանք է նախատեսում հանցանքը պաշտոնատար անձի կողմից կատարելը:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումը երկընտրելի է, մասնավորապես այն դրսևորվում է՝ 1. անձի բնակարան կամ այլ գույք ապօրինի մուտք գործելով, 2. այն

ապօրինի զննելով կամ խուզարկելով 3. անօրինական վտարումով կամ այլ գործողություններով, որոնք կխախտեն քաղաքացու բնակարանի անձեռնմխելիությունը: Թերևս ակնհայտ է, որ դիսպոզիցիայի դրսևորման առաջին տարբերակում նշված է «անձ» հասկացությունը, իսկ երրորդում՝ «քաղաքացի» հասկացությունը: Կարծում ենք, որ օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցողների առումով հարցականներ չառաջացնելու համար ավելի տեղին կլիներ կրկին «անձ» հասկացության օգտագործումը:

Քննարկվող հանցագործությունը ձևակերպված է նաև Բելառուսի քր. օր.-ի 202-րդ հոդվածում, որի 2-րդ մասը որպես ծանրացուցիչ հանգամանք է նախատեսում հանցանքը պաշտոնատար անձի կողմից կատարելը՝ իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ:

Շվեյցարիայի քր. օր.-ի 186-րդ հոդվածը նույնպես քրեորեն պատժելի է համարում բնակարանի անձեռնմխելիության խախտումը: Հանցանքն օբյեկտիվ կողմի դրսևորման առումով երկընտրելի է, սակայն որևէ ծանրացուցիչ հանգամանք չունի և չի նշվում պաշտոնատար անձի կողմից այն կատարվելու մասին որևէ դրույթ:

ԳԴՀ քր. օր.-ը նշված հանցագործությանն անդրադարձել է երկու հոդվածներով՝ բնակարանի անձեռնմխելիության խախտումը (123-րդ հոդված) և բնակարանի անձեռնմխելիության կոպիտ խախտումը (124-րդ հոդված): 123-րդ հոդվածի դիսպոզիցիայից հետևում է, որ քրեորեն պատժելի է ոչ միայն բնակարան, այլև հասարակական ծառայությունների և տրանսպորտային միջոցների գտնվելու վայր ապօրինի մուտք գործելը: 124-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ամբոխի կողմից հրապարակայնորեն հավաքվելու և բռնի ուժի կիրառմամբ նշված անձեռնմխելիությունը խախտելու համար: Երկու դեպքերում էլ պաշտոնատար անձի կողմից այն կատարելու մասին որևէ դրույթ նշված չէ:

ՀՀ քր. օր.-ի 149-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի

լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Իսկ 30-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիները (բացառությամբ դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների) ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք⁴⁵: Ընտրական ընդհանուր իրավունքն առավել հանգամանորեն ամրագրված է նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածում⁴⁶:

Խոչընդոտել նշված բոլոր դեպքերում նշանակում է ցանկացած եղանակով որոշակի արգելքներ, խոչընդոտներ ստեղծելը: Հանցակազմը ձևական է ու հանցանքն ավարտված է համարվում նշված իրավունքների իրականացմանը ցանկացած եղանակով խոչընդոտելու պահից:

Քր. օր.-ի 149-րդ հոդվածի 2-րդ մասում, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, նախատեսված է նաև հանցանքի կատարումը պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակով: Այդ եղանակով տվյալ հանցանքի կատարումն առկա է, օրինակ, երբ դպրոցի տնօրենը, որտեղ գործելու է ընտրական հանձնաժողովը, ստեղծում է արհեստական խոչընդոտներ ընտրությունների թեկնածուի այս կամ այն

⁴⁵Ընտրական կոռուպցիոն իրավախախտումների օրյեկտի մասին առավել մանրամասն տե՛ս Авакьян С.А. Выборы и коррупция // Российские выборы в контексте международных избирательных стандартов: Материалы международной конференции / Под ред. А.В. Иванченко, А.Е. Любарева. – Аспект Пресс М, 2006:

⁴⁶Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդված: Ընդունվել է 25.05.2016թ., ուժի մեջ է մտել 01.06.2016թ.:

վատահաված անձի գործունեության համար: Կամ, ընտրատեղամասում իր ծառայությունն իրականացնող ոստիկանության աշխատակցի կողմից դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելով:

Քննարկվող հանցակազմի հետ կապված ՌԴ քր. օր.-ի 141-րդ հոդվածի դիսպոզիցիան որոշակիորեն այլ ձևակերպում ունի: Այդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում քաղաքացիների ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն, քվեարկության գաղտնիության խախտման, ընտրական հանձնաժողովի, հանրաքվեի հանձնաժողովի, ինչպես նաև այդ հանձնաժողովների անդամների լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Հոդվածի 2-րդ մասը որպես ծանրացնող հանգամանք է նախատեսում հանցանքի կատարումը ծառայողական դիրքի օգտագործմամբ:

Բացի այդ ծանրացուցիչ հանգամանքը նշելուց, ՌԴ քր. օր.-ի նույն՝ 141-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է մեկ այլ՝ ինքնուրույն հանցակազմ, որտեղ հատուկ և ընդգծված շեշտադրմամբ ամրագրված է զուտ պաշտոնեական և ծառայողական դիրքը օգտագործելու գործոնը և պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնեական կամ ծառայողական դիրքը օգտագործելով ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի՝ օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացմանը միջամտելուն՝ նպատակ ունենալով ազդել դրանց որոշումների վրա, մասնավորապես պաշտոնատար անձի պահանջով կամ հրամանով թեկնածուների գրանցման հարցերի, թեկնածուների ցուցակների, ընտրողների ձայների հաշվարկման և այլ հարցերի հետ կապված, որոնք բացառապես հանդիսանում են ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի իրավասությունը:

Ինչպես նկատում ենք, Ռուսական օրենսդրությունն առավել ընդարձակ մոտեցմամբ է ամրագրել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ հնարավորինս դետալիզացնելով պաշտոնեական և ծառայողական դիրքի օգտագործման դրսևորումները: Սակայն կարծում ենք, որ, այնուամենայնիվ, ՌԴ քր. օր.-ի 141-րդ հոդվածի 3-րդ մասն, ըստ էության, օբյեկտիվ կողմի առումով կրկնվում է, քանի որ այդ հոդվածի 3-րդ մասում օբյեկտիվ կողմի նշված դրսևորումները կարող են

արտահայտվել նաև հենց նույն հոդվածի 1-ին մասով սահմանված օբյեկտիվ կողմի շրջանակներում ու պարփակվել դրա բովանդակության մեջ: Տպավորությունն այնպիսին է, որ ռուսական մոդելում պարզապես այդ օբյեկտիվ կողմի դրսևորման մի քանի տարբերակներ առանձնացվել ու առանձին մասով են ամրագրվել, ինչն ավելորդ է:

Ուկրաինայի քրեական օրենսգիրքը տարանջատում է ընտրական իրավունքի և հանրաքվեի իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար պատասխանատվությունը և նախատեսում այն առանձին, համապատասխանաբար՝ 157-րդ և 160-րդ հոդվածներում: Մասնավորապես 157-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում բռնությամբ, խաբեությամբ, սպառնալիքով, կաշառելով կամ այլ կերպ քաղաքացու ընտրելու կամ ընտրվելու ազատ իրավունքին խոչընդոտելու համար: Այդ հոդվածի երկրորդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսում է տվյալ հանցանքի կատարումը ոչ միայն պարզապես պաշտոնատար անձի կողմից իր ունեցած իշխանության կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ կատարելը, այլ նաև հանցանքը ընտրական հանձնաժողովի անդամի կողմից կատարելը: Այսինքն, որպես ծանրացուցիչ հանգամանք, հատուկ և առանձին նշվում է նաև ընտրական հանձնաժողովի անդամի կողմից այդ հանցանքը կատարելու տարբերակը: Գրեթե նույն օրենսդրական մոտեցումն է ցուցադրված նաև հանրաքվեի վերաբերյալ 160-րդ հոդվածում:

Նշված հանցակազմի օբյեկտիվ կողմն անհամեմատ այլընտրանքային բնույթ է կրում Բելառուսի քր. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում, որն իր մեջ ընդգրկում է թե ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված եղանակները և թե այլ եղանակներ, իսկ հոդվածի 2-րդ մասը ծանրացուցիչ հանգամանք է դիտում այդ հանցանքը պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների չարաշահմամբ կատարելու դեպքը:

Շվեյցարիայի քր. օր.-ն առանձին հոդվածներով է անդրադառնում նշված հանցագործության օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումներին: Այսպես, 14-րդ բաժնի 279-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ընտրական հանձնաժողովի աշխատանքին խոչընդոտելու, իսկ 280-րդ հոդվածը՝ քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու

համար: Սակայն Շվեյցարիայի քր. օր.-ը քրեական պատասխանատվության ամրագրման իմաստով որևէ նորմ չի նախատեսում ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի կամ նրա վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար: Միաժամանակ հատկանշական է, որ Շվեյցարիայի քր. օր.-ի 14-րդ բաժինը պատասխանատվություն նախատեսելով «Ազգի կամքին ընդդեմ հանցագործությունների համար», միայն ընտրությունների արդյունքների կեղծման համար պատասխանատվություն սահմանող 282-րդ հոդվածի շրջանակներում է որպես ծանրացնող հանգամանք նախատեսել հանցավորի ծառայողական դիրքն օգտագործելու հանգամանքը:

Քննարկվող հանցագործությանն են անդրադարձել նաև ԳԴՀ-ի քր. օր.-ի 107-րդ, 108-րդ և 108ա հոդվածները, որոնցում նույնպես, որպես ծանրացուցիչ հանգամանք, չի նախատեսվում հանցանքը ծառայողական դիրքն օգտագործելու կամ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եղանակով կատարելու դեպքերը:

ՀՀ քր. օր.-ի 152-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու համար սահմանված կարգը խախտելու, դրանք չտրամադրելու կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելու համար: Սույն հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է ոչ միայն ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու և սահմանված կարգով դրանք հրապարակելու վերաբերյալ սահմանված կարգի պարզաբանման, այլև՝ «պատասխանատու պաշտոնատար անձ» հասկացության բացահայտման առումով: Քննարկվող հոդվածի բլանկետային դիսպոզիցիան պարզաբանվում և բացահայտվում է ՀՀ ընտրական օրենսգրքի միջոցով: Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ գլուխն ամբողջությամբ վերաբերվում է ընտրողների ցուցակներին, դրանց կազմելուն և հրապարակելուն, իսկ այդ գլխի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի

Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (լիազոր մարմինը): Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զինվորական մասերի հրամանատարները:

Քր. օր.-ի 152-րդ հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու համար: Ընտրացուցակներում կեղծիքներ կատարելը դրսևորվում է գիտակցաբար դրանցում իրականությանը չհամապատասխանող (կեղծ) տվյալներ մուտքագրելով, այդ ցուցակների իրական պատկերն այլ կերպ աղավաղելով: Օրինակ, երբ ընտրական իրավունք ունեցող միևնույն քաղաքացին ընդգրկվում է միաժամանակ ընտրողների երկու կամ ավելի ցուցակներում, կամ երբ այդ ցուցակներում գիտակցաբար ընդգրկվում են մահացած կամ տվյալ տարածքում չգրանցված քաղաքացիներ և այլն: Ընդ որում, համապատասխան պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական լիազորությունները չարաշահելը, որը դրսևորվում է միայն ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելու միջոցով, ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության ուժով որակվում է միայն քր. օր.-ի 152-րդ հոդվածով:

ՌԴ քրեական օրենսդրությունը պատասխանատվություն չի նախատեսում ընտրական ցուցակները քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կարգը խախտելու, դրանք չտրամադրելու կամ սահմանված կարգով դրանք չհրապարակելու համար, իսկ ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքների կատարումն ընդգրկված է «քվեարկության արդյունքները կեղծելու» համար պատասխանատվություն նախատեսող 142.1 հոդվածով: Այդ հոդվածում ամրագրված հանցակազմի երկընտրելի օբյեկտիվ կողմն, ի

թիվս այլ դրսևորումների, արտահայտվում է նաև ընտրողների ցուցակը դիտավորյալ ոչ ճիշտ կազմելով՝ դրանում ընտրական իրավունք չունեցող կամ մտացածին անձանց տվյալներ ընդգրկելով: Սակայն այդ հողվածում կոնկրետ սուբյեկտի մասին ոչինչ չի նշվում:

Ուկրաինայի քր. օր.-ը նույնպես առանձին հողված չի նախատեսել այս հանցակազմի համար և միայն 158-րդ հողվածի 2-րդ մասում այլ կեղծիքների շարքում ամրագրված է նաև ընտրական փաստաթղթերում դիտավորյալ կեղծ տվյալներ մտցնելը, իսկ 3-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսում է այդ արարքի կատարումը ընտրական հանձնաժողովի կամ այլ պաշտոնատար անձի կողմից: Բելարուսի քր. օր.-ի 192-րդ հողվածում այլ դրսևորումների հետ մեկտեղ նշված է նաև պետական մարմնի պաշտոնատար անձի կողմից ընտրական փաստաթղթերում կեղծիքներ կատարելու հանգամանքը՝ առանց կոնկրետացնելու, թե կոնկրետ որ ընտրական փաստաթղթերի մասին է խոսքը: Կարծում ենք, որ այդ փաստաթղթերին վերաբերվում են նաև հենց ընտրողների ցուցակները:

ԳԴՀ քր. օր.-ի 107բ հողվածի 2-րդ մասը չնայած, որ քրեորեն պատժելի է համարում ընտրողների ցուցակում այնպիսի անձի ընդգրկելը, որն իրավունք չունի մասնակցելու այդ ընտրությանը, սակայն որևէ ծանրացուցիչ հանգամանք, այդ թվում պաշտոնատար անձի կողմից այն կատարելը, չի նախատեսում:

Այսպիսով, ամփոփելով մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունները և դրանց որակման առանձնահատկությունները, առաջարկվում է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով կոռուպցիոն հանցագործությունների հաստատված ցանկն անհրաժեշտ է ևս մեկ անգամ լրամշակել՝ դրանում ընդգրկելով նաև ՀՀ քր. օր.-ի 148-րդ հողվածով և 152-րդ հողվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները:

2. Եթե նշված հանցանքները կատարվում են պաշտոնեական դիրքի օգտագործմամբ, ապա յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է քննարկել նաև ՀՀ քր. օր.-ի 308-րդ հողվածի (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) կամ 309-րդ հողվածի (պաշտոնեական լիազորությունները անցնելը) կիրառման

անհրաժեշտությունը, այլ կերպ ասած՝ առաջանում է հանցավոր արարքն այդ հողվածներով ևս համակցության կարգով որակելու խնդիր: Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների գլխից և, ընդհանրապես, ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի հողվածներից վերացնել «անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը» ծանրացնող հանգամանքը: Այդ պարագայում անձի արարքը հանցագործությունների համակցությամբ որակելը չի հակասի նույն արարքի համար երկրորդ անգամ դատապարտելու արգելքին:

3. Ավտոմեքենայի խուզարկության օրինականության խախտումներ թույլ չտալու և կատարվող քննության համար ընթացակարգային առումով ավելորդ ու անհարկի ձևով բարդություններ չստեղծելու համար առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հողվածով սահմանված «բնակարան» հասկացության բովանդակությունից հանել «ավտոմեքենա» բառը, իսկ ավտոմեքենայի խուզարկությունը կատարել պարզապես այն վարողի կամ դրա տիրոջ և կամ էլ այլ՝ գործով չշահագրգռված երրորդ անձի ու պարտադիր ընթերականների մասնակցությամբ:

4. Կատարվող բնակարանի խուզարկության մարտավարական իմաստն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք անհապաղ կատարում պահանջող բնակարանի խուզարկության դեպքում կատարել այն՝ առանց նախապես դատարանի թույլտվությունը ստանալով, բայց միաժամանակ քր. դատ. օր.-ի 31-րդ գլխում ամրագրված դրույթների խիստ պահպանմամբ՝ մասնավորապես 227-րդ հողվածով նախատեսված անձանց ներկայությամբ (ընթերականներ, անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայություն, բնակարանային շահագործման կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ, անհրաժեշտության դեպքում թարգմանիչ, մասնագետ և այլն) և դրանից հետո միայն անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, այդ մասին ծանուցել դատարանին՝ նրան ներկայացնելով կատարված խուզարկության անհրաժեշտությունը վկայող նյութերն ու փաստաթղթերը: Եվ եթե դատարանն անհիմն կհամարի այդ խուզարկությունը, ապա այդ քննչական գործողությամբ ձեռք բերված արդյունքը կկորցնի իր ապացուցողական նշանակությունը:

§2. Սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները

Սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունները նշված են ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017թ.-ի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:

Այժմ քննարկենք այդ ցանկում նշված սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն որոշ հանցագործությունների որակման առանձնահատկությունները և դիտարկենք դրանց վերաբերյալ առկա մոտեցումներն արտասահմանյան երկրների օրենսդրության տեսանկյունից՝ կատարելով իրավահամեմատական վերլուծություն:

ՀՀ քր. օր.-ի 187-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու համար և ամրագրված է հետևյալ ձևակերպմամբ. Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը, առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպության գրանցումը կամ վերագրանցումն ակնհայտ անհիմն մերժելը կամ դրա գրանցումից կամ վերագրանցումից չարամտորեն խուսափելը, որոշակի գործունեություն իրականացնելու համար հատուկ թույլտվությունը (լիցենզիան) տալն ակնհայտ անհիմն մերժելը կամ դա տալուց չարամտորեն խուսափելը, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի իրավունքներն ու շահերն ակնհայտ ապօրինի սահմանափակելը, ինչպես նաև այլ ակնհայտ ապօրինի միջամտությունը դրա գործունեությանը, որը կատարել է պաշտոնատար անձն՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Քննարկվող հանցագործությունը բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործության տիպիկ օրինակ է:

Տվյալ հանցագործության սուբյեկտը հատուկ է. այդպիսին է համարվում այն պաշտոնատար անձը, ով լիազորված է գրանցել ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներին, տալ լիցենզիա, ինչպես նաև հսկողություն իրականացնել ՀՀ-ում

ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կամ այլ կերպ ազդել ձեռնարկատիրական գործունեության վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ պաշտոնատար անձի հասկացության սահմանման հետ կապված առկա են որոշակի խնդիրներ: Բանն այն է, որ այստեղ կիրառելի չէ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում տրված պաշտոնատար անձի հասկացությունը, քանզի այդ հոդվածում իմպերատիվ կերպով նշված է, որ սահմանված պաշտոնատար անձի հասկացությունը վերաբերվում է միայն 29-րդ գլխին (պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ), և, քանի որ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է, ապա բաց է մնում այն հարցը, թե ո՞ւմ պետք է համարել պաշտոնատար անձ այս հոդվածի իմաստով: Կարծում ենք, որ տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է լրացնել նշված օրենսդրական բացը: Մասնավորապես, կրկնություն չստացվելու համար առաջարկվում է պարզապես քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում 29-րդ գլխից բացի ավելացնել նաև 187-րդ հոդվածը:

ՀՀ քր. օր.-ի 187-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող մեկ այլ՝ առանձին հանցակազմ, այն է՝ պաշտոնատար անձի կողմից ապօրինի ստուգումներ նշանակելը կամ ապօրինի ստուգումներ անցկացնելը, որը խոշոր չափի վնաս է պատճառել:

Այստեղ թերևս պետք է համաձայնվենք ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված «Քրեական իրավունք. հատուկ մաս 2012թ.» դասագրքի հեղինակների այն դիրքորոշման հետ, որ քննարկվող այս առանձին հանցակազմն, ըստ էության, իրենից ներկայացնում է ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հատուկ տեսակ: Նույն դասագրքի հեղինակներն անընդունելի և անհասկանալի են համարում այն հանգամանքը, որ այս նորմն ավելի է թեթևացնում պաշտոնատար անձի պատասխանատվությունն այն դեպքում, երբ քննարկվող այս հանցակազմի հատկանիշ է ավելի մեծ չափի վնաս պատճառելը: Այսպես, քր. օր.-ի 308-րդ հոդվածի 1-ին մասը, որպես հետևանք, նախատեսում է էական վնասը, որը գույքային լինելու պարագայում համարվում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը: Այնինչ,

քննարկվող 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ խոշոր չափ է համարվում երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Այս հանցակազմի համար, որպես պարտադիր հատկանիշ նախատեսված է խոշոր չափի վնաս պատճառելը: Թեպետ հոդվածում չի նշվում, թե այդ վնասն ում է հասցվում և այն նյութական է, թե կարող է արտահայտվել նաև այլ ձևերով, սակայն հանցագործության ձևակերպումից ենթադրվում է, որ վնասը հասցվում է տնտեսվարող սուբյեկտին և դրսևորվում է նյութական վնասի ձևով (սա բխում է 187-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից, որտեղ տրված է խոշոր չափի վնասի հասկացությունը):

Նշված հոդվածի երրորդ մասն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում, եթե օրինական տնտեսական գործունեությանը խոչընդոտելը, ապօրինի ստուգումներ նշանակելը կամ ապօրինի ստուգումներ անցկացնելն առանձնապես խոշոր չափի վնաս է պատճառել, որն էլ ըստ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն համարվում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը գերազանցող գումարը: ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված «Քրեական իրավունք. հատուկ մաս 2012թ.» դասագրքի հեղինակներն իրենց տարակուսանքն են հայտնում այն առումով, որ քր. օր.-ի 187-րդ հոդվածի 1-ին մասի հանցակազմը ձևական է, նույն արարքի կատարման համար խոշոր չափի վնաս հասցնելը որպես որակյալ տեսակ նախատեսված չէ և միանգամից այդ հոդվածի 3-րդ մասում առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը չի բխում քրեական օրենքի հատուկ մասի կառուցման տրամաբանությունից:

ՌԴ. քր. օր.-ի 169-րդ հոդվածի 1-ին մասը նույն բովանդակությունն ունի, հոդվածի 2-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսում է նույն արարքի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի խախտմամբ կամ խոշոր չափի վնաս պատճառելով: ՌԴ քրեական օրենսդրությունն ինչպես 169-րդ հոդվածում, այնպես էլ առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն չի ամրագրում պաշտոնատար անձի կողմից ապօրինի ստուգումներ նշանակելու կամ ապօրինի ստուգումներ անցկացնելու համար: Ըստ էության, այդ գործողությունները կարող են դիտվել որպես 169-րդ հոդվածում ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումներից մեկի՝ անհատ ձեռնարկատիրոջ կամ

իրավաբանական անձի գործունեությանն այլ անօրինական միջամտություն ցուցաբերելու արտահայտման ձև⁴⁷, ինչը մեր կարծիքով ավելի ճիշտ մոտեցում է, քանի որ օրինական ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելու կոնկրետ այս կամ այն տարբերակի առանձնացումը նպատակահարմար չէ: Բելառուսի քր. օր.-ի 232-րդ հոդվածը նույնպես ունի նույն բովանդակությունը, սակայն հետևյալ երկու վերապահումներով, դրանք են՝ եթե պատճառվել է խոշոր չափի վնաս և բացակայում են առավել ծանր պաշտոնական հանցագործության հատկանիշները: Այստեղ կրկին առանձին չի ամրագրվում քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձի կողմից ապօրինի ստուգումներ նշանակելու կամ ապօրինի ստուգումներ անցկացնելու համար: Էստոնիայի, Լատվիայի և Մոլդովիայի քրեական օրենսգրքերում բացակայում են քննարկվող հանցագործության վերաբերյալ համապատասխան հոդվածները, իսկ Ուկրաինայի քր. օր.-ի 206-րդ հոդվածի 3-րդ մասը մասամբ է վերաբերվում սույն հանցագործությանը:

«Քր. օր.-ի 190-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) համար, այսպես. հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում): Նշենք, որ «փողերի լվացում» եզրույթի կիրառումը կապված է 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների

⁴⁷St'u Талан М.В. Преступления в сфере экономической деятельности, совершаемые должностными лицами, как проявление коррупции // Законы России: опыт, анализ, практика, 2009, № 12:

օրինականացման առավել տարածված եղանակների հետ⁴⁸: Բանն այն է, որ նշված ժամանակաշրջանում հանցավոր եկամուտները հիմնականում ներդրվում էին վլացքատների և ավտոլվացման կայանների կառուցման գործում:

Վերոհիշյալ իրավանորմով ամրագրված քրեաիրավական արգելքի էությունն այն է, որ ՀՀ տնտեսական համակարգը պաշտպանվի չվերահսկվող մեծ քանակի դրամական միջոցների և այլ գույքի ներդրումից, և կանխվի այնպիսի հանցավոր գործունեությունը, որը, որպես կանոն, իրականացվում է կազմակերպված հանցավոր խմբերի կողմից՝ ապօրինի ճանապարհով եկամուտ ստանալու նպատակով:

Քննարկվող հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ նաև պաշտոնատար անձն՝ իր պաշտոնական դիրքն օգտագործելով, որը համարվում է որպես առանձնապես ծանրացնող հանգամանք և նախատեսված է քր. օր.-ի 190-րդ հոդվածի 3-րդ մասով: Նկատենք, որ ինչպես քր. օր.-ի 187-րդ հոդվածի դեպքում, այստեղ ևս որոշակի խնդիր կա պաշտոնատար անձի հասկացության սահմանման հետ կապված: Մասնավորապես այն առումով, որ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում իմպերատիվ կերպով նշված է, որ սահմանված պաշտոնատար անձի հասկացությունը վերաբերվում է միայն 29-րդ գլխին (պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ), և, քանի որ քրեական օրենքը անալոգիայով կիրառելն արգելվում է, ապա կրկին բաց է մնում այն հարցը, թե ու՞մ պետք է համարել պաշտոնատար անձ նաև այս հոդվածի իմաստով:

Եթե հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն օրինականացնում է առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողը, որի հասկացությունը տրված է քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում, արարքը չի կարող որակվել քննարկվող ծանրացնող հանգամանքով:

ՌԴ օրենսդիր մարմինը քննարկվող սույն հանցագործությունը քր. օր.-ում ամրագրելիս այն տարանջատել ու առանձին հոդվածային կարգով է սահմանել՝ տարանջատման հիմքում դնելով հանցագործության առարկայի ձեռք բերման

⁴⁸ St' u Kondrat E.H. Основные способы легализации (отмыкания) преступных доходов, полученных в результате совершения преступлений // Вестник Академии экономической безопасности МВД России. – 2010. №10. էջեր 64 – 69; Лебедев И.А. Актуальные вопросы противодействия коррупции в деятельности хозяйствующего субъекта // Безопасность бизнеса, 2009, №1; Пименов Н.А. Коррупция и легализация – звенья одной цепи // Безопасность бизнеса, 2009, № 1:

աղբյուրը: Այսպես, ՌԴ քր. օր.-ի 174-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում անձի՝ իր իսկ կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար, իսկ 174-րդ պրիմ 1 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այլ անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու համար: Մնացած առումներով այդ երկու հոդվածների թե դիսպոզիցիաները և թե ծանրացուցիչ հանգամանքները նույնն են, մասնավորապես նշված հոդվածների 3-րդ մասերի 2-րդ կետերը որպես ծանրացուցիչ հանգամանք են դիտում հանցանքը ծառայողական դիրքի օգտագործմամբ կատարելը: Մոլդովայի քր. օր.-ի 243-րդ հոդվածը բավականին ընդարձակ և հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման այլընտրանքային տարբերակներով է ամրագրում այս հանցագործությունը, իսկ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում որպես ծանրացուցիչ հանգամանք է սահմանվում հանցանքը ծառայողական դիրքի օգտագործմամբ կատարելը: Նշված հանցանքը պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական լիազորություններն օգտագործելու եղանակով կատարելը որպես ծանրացուցիչ հանգամանք է համարվում նաև Բելառուսի քր. օր.-ի 235-րդ հոդվածի 2-րդ մասում: Լատվիայի քր. օր.-ի 195-րդ հոդվածը և Ուկրաինայի քր. օր.-ի 209-րդ հոդվածը հանցանքի ծանրացուցիչ հանգամանքների շարքում չի նախատեսում պաշտոնատար անձի կողմից այն կատարված լինելու դեպքը, իսկ Էստոնիայի քր. օր.-ի 148 պրիմ 15 հոդվածը թեև հանցանքի ծանրացուցիչ հանգամանքների շարքում չի նախատեսում պաշտոնատար անձի կողմից այն կատարված լինելու դեպքը, սակայն 148 պրիմ 8 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում վարկային և ֆինանսական հաստատությունների աշխատակիցների և այդ հաստատությունների ղեկավարների կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում այդ մասին պատկան մարմիններին չտեղեկացնելու և այդ հանցագործությունը կանխելու շուրջ պետական միջոցառումներին չմասնակցելու համար:

«Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածը վերաբերվում է առևտրային կաշառքին և շարադրված է հետևյալ բովանդակությամբ. առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին,

աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար:

Նշված հանցագործության անմիջական օբյեկտը առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են⁴⁹: Հանցագործության առարկա կարող է լինել ինչպես գույքը (թե շրջանառության մեջ գտնվող և թե շրջանառությունից հանված), այնպես էլ գույքային իրավունքը, գույքային բնույթի ծառայությունները, որևէ այլ առավելությունը: 200-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ինչպես առևտրային կաշառք տալու (1-ին և 2-րդ մասեր), այնպես էլ ստանալու (3-րդ և 4-րդ մասեր) համար: Նշված հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ գործողություններով. առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին՝ այդ թվում օտարերկրյա պետության արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար: Ընդ որում, արարքի որակման համար նշանակություն չունի, թե կաշառքը երբ է տրվել՝ համապատասխան գործողություն (անգործություն) կատարելուց առաջ, թե հետո: Սակայն վերջին դեպքում անհրաժեշտ է, որ այդպիսի գործողություն (անգործություն) կատարելուն նախորդի կաշառքի վերաբերյալ կաշառատուի և կաշառք ստացողի նախնական պայմանավորվածությունը: Արարքի որակման համար նշանակություն չունի նաև, թե

⁴⁹Առևտրային կաշառքի քրեաիրավական բնութագրի մասին առավել մանրամասն տե՛ս Ананьева А.В. Основные экономико-правовые методы защиты от коррупции в целях укрепления экономической безопасности России // “Черные дыры” в российском законодательстве. 2008. №6. էջեր 85–88; Гончаренко Г.С. Коррупционный подкуп в системе государственно-служебных отношений // Юрист-правовед. 2007. №1. էջեր 12–19:

կաշառքը տրվել է անմիջականորեն, թե նրանց գիտությամբ և համաձայնությամբ՝ մեկ այլ անձի: Առևտրային կաշառք տրամադրելն ավարտված է համարվում կաշառքի առարկան համապատասխան ծառայողի, արբիտրի, աուդիտորի, փաստաբանի կամ նրանց գիտությամբ ու համաձայնությամբ այլ անձի կողմից ընդունելու պահից: Ինչ վերաբերվում է առևտրային կաշառք խոստանալուն կամ առաջարկելուն, ապա այս դեպքերում հանցագործությունն ավարտված է համարվում խոստանալու կամ առաջարկելու պահից՝ անկախ նրանից, թե դրա մասին համաձայնություն կայացվել է, թե ոչ: Մենք գտնում ենք, որ առևտրային կաշառքի զուտ խոստանալու կամ առաջարկելու պահից հանցագործությունն ավարտված համարելը չի բխում քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահանջներին: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 10-րդ հոդվածն այդ սկզբունքն ամրագրելով սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Տվյալ պարագայում, սույն հանցագործության առարկան արդեն իսկ «հասցեատիրոջը» փոխանցված լինելն ու զուտ դրա խոստանալը կամ առաջարկելը քրեական պատասխանատվության առումով նույն հարթությունում դիտելը, մեղմ ասած, արդար չէ՝ առավել ևս մի խումբ քրեագետների կողմից մատնանշված հանգամանքում, այն է՝ անկախ նրանից, թե դրա մասին համաձայնություն կողմերի միջև, ի վերջո, կայացվել է, թե ոչ: Կարծում ենք, որ հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, եթե այն բացահայտվել է տվյալ փուլում, ապա այդ արարքն, ըստ էության, իրենից ներկայացնում է կաշառք տրամադրելու նախապատրաստություն և պետք է հանգեցնի ավելի մեղմ պատժի, քան կաշառքի բուն տրամադրումը: Սակայն հաշվի առնելով, որ առևտրային կաշառք տալը դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքում, ապա դրա նախապատրաստությունը քրեորեն պատժելի չէ: Բացի այդ, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի 1999թ.-ի կոնվենցիան⁵⁰ և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ 2003թ.-ի

⁵⁰Տե՛ս Եվրոպայի Խորհրդի 1999թ. հունվարի 27-ի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի»

կոնվենցիան⁵¹ նախատեսում են, որ կաշառք խոստանալն ու առաջարկելը, որպես ինքնուրույն կոռուպցիոն հանցագործություն, պետք է առանձին քրեականացվեն, այլ ոչ թե հանդիսանան կաշառք տրամադրելու նախապատրաստություն: Ուստի ելնելով վերոգրյալից՝ կարծում և առաջարկում ենք, որ հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, եթե այն բացահայտվել է տվյալ փուլում, պետք է նախատեսվի որպես առանձին հանցագործություն՝ ՀՀ քր. օր.-ի 200.1 հոդվածով, ավելի մեղմ պատիժ սահմանելով: Այսպիսի մոտեցումը մի կողմից չի հակասի կոնվենցիոնալ դրույթներին, մյուս կողմից թույլ կտա օրենսդրական մակարդակում կենսագործել արդարության սկզբունքի պահանջները: Այս դեպքում միայն պատիժ կիրառելիս կապահովվի նաև ՀՀ քր. օր.-ի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակներից մեկի՝ սոցիալական արդարության վերականգնման իրագործումը: ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասից «առևտրային կաշառք խոստանալու և առաջարկելու» հանցակազմերի տեղափոխումն առանձին հոդվածի տեսքով հիմնավորվում է նախ և առաջ նրանով, որ իրենց հանրային վտանգավորության աստիճանով այդ արարքները նվազ վտանգավոր են, քան առևտրային կաշառք տալը, ուստի այդ արարքների համար նույն սանկցիայի նախատեսումը (թեկուզ երկընտրելի սանկցիայի) հավասարության նշան է դնում հանրային վտանգավորության տարբեր աստիճաններ ունեցող արարքների միջև: Պատիժ նշանակելիս արդարության սկզբունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով առաջարկում ենք «առևտրային կաշառք խոստանալու և առաջարկելու» համար որպես պատիժ նախատեսել միայն տուգանք կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակները:

ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի առաջին մասում նախատեսված արարքի հակառակ վիճակի համար: Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի հասկացությունը սահմանված է քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում: Նշված հոդվածի այդ նույն՝ 5-րդ մասը

Կոնվենցիայի 7-րդ և 8-րդ հոդվածները ՀՀ ՊՏ 2004.06.30/34 (333):

⁵¹Տե՛ս ՄԱԿ-ի 2003թ. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 21-րդ հոդվածը, ՀՀ ՊՏ 2006.11.15/58 (513):

միաժամանակ նախատեսում է նաև այն պայմանները, որոնց առկայության դեպքում առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Մասնավորապես առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Գտնում ենք, որ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար նման ժամկետ սահմանելն այդքան էլ ճիշտ և ռացիոնալ չէ, քանզի գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձն ուղղակի առաջացած ֆիզիկական կամ տեխնիկական խնդիրներով պայմանավորված չկարողանա սահմանված ժամկետում հասցնել և կատարվածի մասին հայտնել քրեական հետապնդման մարմիններին: Բացի այդ, հնարավոր են նաև դեպքեր, երբ հանցագործության մասին իրենք՝ քրեական հետապնդման մարմնի աշխատակիցները տեղեկացվեն և վարույթ իրականացնեն դեպքից բավականին ուշ ժամանակահատվածում: Տվյալ դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը ոչ մի տվյալ և ապացույց չունի հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին հայտնաբերելու համար, ապա որքանով ճիշտ ու արդարացի կլինի կաշառք տվող անձին քրեական պատասխանատվության ենթարկելն ու նրա նկատմամբ այս խրախուսական նորմը չկիրառելը, եթե նա հենց այդ ժամանակաընթացքում որոշի ներկայանալ և տեղի ունեցածի վերաբերյալ հայտնել քրեական հետապնդման մարմիններին: «Քրեական հետապնդման մարմինների» մասով ևս հայտնենք մեր մտահոգությունը: Կարծում ենք, որ նման խոստովանությունը բավարար պետք է համարվի ոչ միայն քրեական հետապնդման մարմիններին հայտնելու դեպքում, այլև ցանկացած այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելով (օրինակ՝ գյուղական համայնքի ղեկավարին հայտնելով), միայն թե անձը գործի գիտակցված, որ նա դա անում է հանցագործության մասին ուղղակի հայտնելու և այն բացահայտված լինելու նպատակով, այլ ոչ թե միամտաբար: Կարծում ենք, որ օրենսդիրը խրախուսական նորմ սահմանելով հանդերձ միաժամանակ չափազանց խիստ ու շատ պահանջներ է դնում այն առումով, որ նշված խրախուսական նորմը կաշառք տված անձի նկատմամբ կիրառելու համար

անհրաժեշտ է, որ միանգամից ու միաժամանակ առկա լինեն այդ նորմով ամրագրված մի շարք պարտադիր պայմաններ: Այստեղ տեղին հարց է առաջանում. ինչպես վարվել այն դեպքում, երբ օրինակ կաշառք տված անձը համապատասխան պահանջված ժամկետում կամովին հայտնել է այդ մասին քրեական հետապնդման մարմիններին՝ մինչև նրանց կողմից այդ դեպքի մասին տեղեկանալը, այնուհետև աջակցել է հանցագործության բացահայտմանը, սակայն, այդուհանդերձ, կաշառքի շորթում տեղի չի ունեցել: Կարծում ենք, որ նշված հանցագործությունների բացահայտման շահերից ելնելով օրենսդիրը որոշ չափով պետք է վերանայի ու մեղմի իր պահանջած պայմանները: Նման օրենսդրական կարգավորումը, մեղմ ասած, չի բխում կոռուպցիայի կանխարգելման խնդիրներից: Այսպես, եթե առևտրային ծառայողը չի շորթել կաշառքը և կաշառք տվողն ինքն է իր նախաձեռնությամբ տվել կամ առաջարկել, ապա առևտրային ծառայողը կարող է «հանգիստ խղճով» վերցնել կաշառքը՝ լավ հասկանալով, որ կաշառք տվողը չունի քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն, ուստի և այդ մասին չի հայտնի իրավասու մարմիններին:

Քննարկվող հանցագործության առումով ՌԴ օրենսդիր մարմինն այլ կառուցվածքային մոտեցում է ցուցաբերել: ՌԴ քր. օր.-ում առկա է առանձին՝ թիվ 23-րդ գլուխը, որը վերաբերվում է առևտրային և այլ կազմակերպությունների ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններին: ՌԴ քր. օր.-ում առևտրային կաշառքը, ի տարբերություն մեր հայրենական օրենսդրության, ընդգրկված է ոչ թե տնտեսական գործունեության, այլ հենց նշված շահերի դեմ ուղղված հանցագործությունների շարքում (հոդված 204)⁵²: Դիսպոզիցիայի առումով ռուսական տարբերակը գրեթե նույնն է, սակայն այստեղ, որպես օբյեկտիվ կողմի դրսևորման տարբերակներ, բացակայում են հանցագործության առարկան խոստանալու կամ առաջարկելու հանգամանքները, ինչը մեր կարծիքով արդար մոտեցում է: Տարբերություն կա նաև խրախուսական նորմի առումով: Նշված հոդվածը ամրագրում է, որ առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ակտիվորեն նպաստել է հանցագործության բացահայտմանը և (կամ) դրա քննությանը կամ իր նկատմամբ տեղի է ունեցել

⁵² Տե՛ս <http://base.garant.ru/10108000/> (վերջին այցելություն 12.02.2018թ.):

կաշառքի շորթում, կամ այդ անձն ինքնակամ կաշառքի մասին հայտնել է քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին: Ինչպես տեսնում ենք, ՌԴ քր. օր.-ը չի պահանջում, որպեսզի միանգամից ու միաժամանակ առկա լինեն այդ խրախուսական նորմով ամրագրված բոլոր պայմանները: Բացի այդ, նախատեսված չէ նաև եռօրյա կամ այլ որևէ ժամկետ: Սակայն այստեղ էլ տարակուսանք կարելի է հայտնել այն առումով, որ ոչ բոլորը, եթե ոչ մեծամասնությունը, կարող են տեղեկացված լինեն, թե պետական այդ որ մարմինն է իրավասու առևտրային կաշառքի վերաբերյալ հարուցել քրեական գործ:

Լատվիայի քր. օր.-ի 199-րդ հոդվածը⁵³ և Բելառուսի քր. օր.-ի 252-րդ հոդվածը⁵⁴ քննարկվող հանցագործության հետ կապված որևէ խրախուսական նորմ չեն նախատեսում, ինչն, ինքնին, չի նպաստում կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության իրագործմանը:

«Քր. օր.-ի 201-րդ հոդվածը վերաբերվում է արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելուն և շարադրված է հետևյալ բովանդակությամբ. մարզիկներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին կամ արհեստավարժ մարզամրցումների մյուս մասնակիցներին ու կազմակերպիչներին, ինչպես նաև հանդիսավոր առևտրային մրցույթների կազմակերպիչներին ու մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամներին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ որևէ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ այդ մրցումների կամ մրցույթների արդյունքների վրա ազդելու նպատակով: Տվյալ հանցագործությունը առևտրային կաշառքի հատուկ տարատեսակ է, իրավամբ կարելի է ասել, որ այն համարվում է առևտրային կաշառքի դրսևորման ձևերից մեկը, ուստի, մեր կարծիքով, աննպատակահարմար է «առավելություն տալ» և առանձին հոդվածային կարգով անդրադառնալ առևտրային կաշառքի այս կամ այն կոնկրետ դրսևորման ձևին, քանի որ այդ նույն կերպ ու

⁵³ Տե՛ս <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1243424>(վերջին այցելություն 12.02.2018թ.):

⁵⁴Տե՛ս http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1 (վերջին այցելություն 12.02.2018թ.):

տրամաբանությամբ կարելի է քր. օր-ի տարբեր հոդվածներում ամրագրված մի շարք այլ հանցագործություններ ևս տրոհել դրանց առանձին դրսևորման տարբերակներով ու այդպես քր. օր.-ը ծանրաբեռնել նմանատիպ «երկրորդական, ածանցյալ» հոդվածներով՝ թերևս դրանց ինքնուրույնությունն ընդգծելու նպատակով դիսպոզիցիայում առանձին ինչ-որ հատկանիշ ներառելով: Ինչևէ, ամեն դեպքում օրենսդիր մարմինը քր. օր.-ի 201-րդ հոդվածում նախատեսել է այն, որի հետ կապված մեր կողմից արված մի շարք դիտարկումները նույնն են, ինչ առևտրային կաշառքի դեպքում: Նման հանցակազմերի գոյությունը, մեր կարծիքով, քր. օր.-ում ստեղծում է քրեաիրավական նորմերի արհեստական մրցակցություն և հարուցում արարքի որակման քրեաիրավական խնդիրներ:

Հանցագործության անմիջական օբյեկտը արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների (գեղեցկության մրցույթների, կինոյի կամ երգի փառատոնների և այլն) անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Մրցումները հանդիսանում են արհեստավարժ (պրոֆեսիոնալ) միայն այն դեպքում, երբ դրանք սահմանված կարգով անցկացվում են համապատասխան սպորտային կազմակերպությունների կողմից և նախապես հայտարարվում են որպես այդպիսիք: Սպորտը համարվում է արհեստավարժ, եթե դրանով զբաղվողի համար այն աշխատանքային գործունեություն է և համարվում է եկամուտների հիմնական աղբյուր: Առևտրային են համարվում հանդիսադիր այն մրցույթները, որոնք կազմակերպվում և անցկացվում են որոշակի եկամուտներ ստանալու համար: Սույն հանցագործության առարկան նյութական արժեքները, գույքային բնույթի ծառայություններն են կամ որևէ այլ առավելությունը:

Հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է մարզիկներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին, կազմակերպիչներին և արհեստավարժ մարզամրցումների մյուս մասնակիցներին, ինչպես նաև հանդիսավոր առևտրային մրցույթների կազմակերպիչներին և մրցանակաբախշային հանձնաժողովի անդամներին կաշառելով (կաշառք տալով), այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալով, առաջարկելով կամ տրամադրելով, որը կատարվում է այդ մրցումների կամ մրցույթների արդյունքների

վրա ազդելու նպատակով: Հատկանշական է, որ սույն հոդվածի վերնագրում օրենսդիրը նշել է «հանդիսադիր առևտրային մրցույթներ», իսկ հոդվածի դիսպոզիցիայում՝ «հանդիսավոր առևտրային մրցույթներ» բառերը: Կարծում ենք, որ անհամապատասխանությունը պետք է շտկվի: Ընդ որում, մեր կարծիքով վերնագրում նշված «հանդիսադիր» բառը պետք է փոխարինվի «հանդիսավոր» բառով, քանի որ հանդիսադիր նշանակում է հանդեսի կազմակերպիչ, հանդեսը կառավարող, իսկ հանդիսավոր նշանակում է հանդեսով կատարվող, հանդեսին հատուկ, նշանավոր, մեծաշուք⁵⁵, ուստի քերականական, իմաստային և տրամաբանական տեսանկյուններից պետք է արձանագրել, որ այստեղ ճիշտ տարբերակը հենց «հանդիսավոր» բառն է:

Նշված հանցագործությունն ավարտված է համարվում նշված սուբյեկտներին կաշառք խոստանալու, առաջարկելու կամ տրամադրելու պահից: Ընդ որում, արարքի որակման համար նշանակություն չունի, թե կաշառքը տրվել է նախապես, թե որոշակի պայմանավորվածությունը կատարելուց հետո: Կարևորն այն է, որ այն տրվել է դիսպոզիցիայում նշված նպատակով: Բայց այս դեպքում ևս կաշառք խոստանալու կամ առաջարկելու մասով հանցանքն ավարտված համարվելու վերաբերյալ մենք ունենք նույն մտահոգությունը, ինչ բուն առևտրային կաշառքի դեպքում:

Մի խումբ քրեագետներ կարծիք են հայտնում, որ այն դեպքում, երբ մարզիկը, մրցավարը, մարզիչը, թիմի ղեկավարը, արհեստավարժ մարզամրցումների կազմակերպիչը, մյուս մասնակիցները կամ հանդիսավոր առևտրային մրցույթի կազմակերպիչը կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամը հրաժարվում են ընդունել տրված կաշառքը կամ համաձայնության չեն գալիս, ապա կաշառատուի արարքը պետք է որակվի որպես հանցափորձ: Այս առումով մեր մտահոգությունը պետք է հայտնենք հետևյալ տեսանկյունից. քր. օր-ի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում, որպես ձևական հանցակազմ, օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումների մեջ շատ պարզ ու իմպերատիվ կերպով նշված է նաև կաշառքի առարկան խոստանալը կամ առաջարկելը՝ առանց որևէ արդյունք կամ հետևանք մատնանշելու: Դա նշանակում է, որ կաշառքի առարկան խոստանալու կամ

⁵⁵ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երեւան, 1974թ. հատոր 3, էջ 293:

առաջարկելու պահից հանցանքն արդեն իսկ ավարտված է համարվում և այստեղ այլևս էական չէ կողմերի համաձայնության գալը կամ չգալը: Իրավամբ քր. օր.-ի 200-րդ և 201-րդ հոդվածների իմաստով համաձայնության չգալու պարագայում խոստանալու կամ առաջարկելու դեպքերը արդարացիորեն իրոք պետք է համարել որպես տվյալ հանցագործությունների փորձ, սակայն, ինչպես ասում են, ունենք այն, ինչ ունենք և որպեսզի, ի վերջո, օրինական համարվի մեր առաջարկած տեսակետը, անհրաժեշտ է նախ համապատասխան օրենսդրական ձևափոխում մտցնել ՀՀ քր. օր.-ի 200-րդ և 201-րդ հոդվածների դիսպոզիցիաներում՝ օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորման տարբերակներից հանելով «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները և դրանք, ինչպես արդեն նշվեց, նախատեսել առանձին հանցակազմի տեսքով՝ սահմանելով ավելի մեղմ պատիժ:

Համապատասխան վարձատրություններ խոստանալը կամ դրանք տալը քրեորեն հետապնդելի չի համարվում, եթե դա արվում է հիշյալ անձանց լավ աշխատանքը պարզապես օբյեկտիվորեն, առանց որևէ խարդավանքի, բնականոն ձևով խթանելու և խրախուսելու նպատակով: ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի առաջին մասում նախատեսված արարքի հակառակ վիճակի համար, որտեղ կրկին մեր նույն դիտարկումներն ենք ներկայացնում:

Եվ քանի որ այս հանցագործությունը համարվում է առևտրային կաշառքի յուրօրինակ դրսևորում, ապա զարմանալի է, որ օրենսդիրն այստեղ չի ամրագրում խրախուսական նորմ այն անձանց համար, ովքեր կամովին կհայտնեն վերոհիշյալ սուբյեկտներին կաշառք տալու մասին:

ՌԴ քր. օր.-ի 184-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում, ինչպես որ մենք ենք բարձրաձայնում, հանցակազմի օբյեկտիվ կողմում չկան «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները: Հոդվածի 3-րդ մասը, որպես հանցագործության հակառակ վիճակ, առանձին կարգով է ամրագրում մարզիկների կողմից կաշառք ստանալը, իսկ հոդվածի 4-րդ մասում նշված են մյուս հատուկ սուբյեկտները: Հատուկ սուբյեկտների դեպքում ևս բացակայում են «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները: Ի տարբերություն հայրենական օրենսդրության, ՌԴ քր. օր.-ի 184-րդ հոդվածի 4-րդ մասում կաշառք տվող անձի համար խրախուսական նորմը նախատեսված է:

Քննարկվող հանցագործության առումով բավականին «համեստ» մոտեցում է ցուցաբերված Բելառուսի քր. օր-ում: Մասնավորապես 253-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն վերոհիշյալ հատուկ սուբյեկտների կողմից կաշառք ստանալու համար, իսկ 2-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսում է միայն հանցանքը կրկին անգամ կատարելը: Այսինքն խոսք չկա ոչ հատուկ սուբյեկտներին կաշառք տալու և ոչ էլ խրախուսական նորմի մասին: Հատկանշական է, որ այստեղ ևս բացակայում են «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները:

Կարծում ենք, որ ներկայացված առաջարկությունների կենսագործումը կապահովի արդարության սկզբունքի իրացումը, կպարզեցնի նշված արարքների որակման գործընթացը և, վերջին հաշվով, կնպաստի մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման իրավական հիմքերի կատարելագործմանը:

ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածը վերաբերվում է հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելուն և շարադրված է հետևյալ բովանդակությամբ. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով:

Կարծում ենք, որ հոդվածի դիսպոզիցիայում ավելի ճիշտ կլիներ ձևակերպել ոչ թե «կատարվել է խոշոր չափերով», այլ՝ «որով պետությանը պատճառվել է խոշոր չափի վնաս», քանի որ արարքն ինքնին խոշոր չափ չի կարող լինել, նման հասկացողություն չկա, դա վերացական ձևակերպում է: Այլ բան է, որ կատարված այդ արարքի հետևանքը կարող է լինել խոշոր չափի:

Հանցագործության անմիջական օբյեկտը պետության ֆինանսական և հարկային համակարգերի բնականոն գործունեությունն ապահովող հասարակական հարաբերություններն են: Հանցագործության առարկա կարող են լինել բոլոր տեսակի հարկերը, տուրքերը և օրենքով նախատեսված այլ պարտադիր վճարումները:

Հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ այն անձինք, ովքեր նորմատիվ իրավական ակտերի համապատասխան պարտավոր են ապահովել

հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը, այդ թվում անձինք, ովքեր պարտավոր են հաստատել այդ փաստաթղթերը, ինչպես նաև այն ֆիզիկական անձինք, որոնք նորմատիվ ակտերին համապատասխան պարտավոր են հարկ վճարել:

Այն դեպքում, երբ հարկեր, տուրքեր կամ այլ պարտադիր վճարումներ կատարելուց խուսափելը կատարվել է պաշտոնատար անձի աջակցությամբ, վերջինիս արարքը պետք է որակվի որպես քննարկվող հանցագործության օժանդակություն (քր. օր.-ի 38-205 հոդվածներով), իսկ համապատասխան հատկանիշների առկայության դեպքում՝ նաև պաշտոնեական լիազորությունների չարաշահման (քր. օր.-ի 308-րդ հոդված) կամ պաշտոնեական լիազորություններն անցնելու (քր. օր.-ի 309-րդ հոդված) համար պատասխանատվություն սահմանող նորմերով:

Քննարկվող հանցագործությունը ՌԴ քր. օր.-ում ներկայացված է չորս առանձին հոդվածների տեսքով: Այսպես, 194-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից մաքսատուրքերի վճարումից խուսափելու համար, որի 3-րդ մասի 1-ին կետը որպես ծանրացուցիչ հանգամանք է նախատեսում հանցանքը պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական դիրքն օգտագործելով կատարելը: 198-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ֆիզիկական անձանց կողմից հարկերը և (կամ) այլ վճարները վճարելուց խուսափելու համար, իսկ 199-րդ հոդվածն այդ նույն արարքի համար պատասխանատվություն է նախատեսում կազմակերպությունների դեպքում, իսկ 199.1-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հարկային գործակալի կողմից պարտականությունները չկատարելու համար: Հատկանշական է, որ ՌԴ քր. օր.-ի վերոհիշյալ 198-րդ, 199-րդ և 199.1-րդ հոդվածներում օրենսդիրն ամրագրել է խրախուսական նորմ, համաձայն որի՝ նշված հանցագործություններն առաջին անգամ կատարած անձը կամ համապատասխան կազմակերպության ներկայացուցիչն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա ամբողջությամբ վճարել է պարտքը և համապատասխան տույժերը, ինչպես նաև ՌԴ հարկային օրենսգրքով սահմանված տուգանքները: Նույնատիպ խրախուսական նորմ է նախատեսված նաև նշված հանցագործությանը վերաբերվող Ուկրաինայի քր. օր.-ի 212-րդ հոդվածում: Կարծում ենք, որ խրախուսական այդ նորմի նախատեսումը տեղին

է, այն կիսթանի չվճարված հարկերի, տուրքերի և այլ վճարումների վերականգնմանը, ուստի այս առումով անհրաժեշտ է հայրենական օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություն: Մոլդովայի քր. օր.-ի 244-րդ հոդվածը հարկերը վճարելուց խուսափելու համար պատասխանատվություն է նախատեսում հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների, իսկ 244 պրիմ 1 հոդվածը՝ նույն արարքի համար ֆիզիկական անձանց դեպքում: 249-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մաքսատուրքերը չվճարելու համար: Լատվիայի 218-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հարկերը կամ դրանց համարժեք վճարումները վճարելուց խուսափելու համար: Ընդ որում, նշված հոդվածի 1-ին մասը վերաբերվում է հարկերը կամ դրանց համարժեք վճարումները վճարելուց խուսափելուն, ինչպես նաև եկամուտները, շահույթները կամ հարկման ենթակա այլ օբյեկտները թաքցնելուն (նվազեցնելուն), որը կատարվել է մեկ տարվա ընթացքում կրկին անգամ: Հոդվածի 2-րդ մասը վերաբերվում է այդ նույն եղանակով պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմիններին խոշոր չափի վնաս պատճառելուն: Բելառուսի քր. օր.-ի 231-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մաքսատուրքերը վճարելուց խուսափելու, իսկ 243-րդ հոդվածը՝ հարկերը և տուրքերը վճարելուց խուսափելու համար:

ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու համար և ունի հետևյալ բովանդակությունը. առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ և իր կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու կամ առավելություններ ձեռք բերելու կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը, եթե անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս է պատճառվել:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է, այն է՝ առևտրային կամ այլ կազմակերպություններում գործունեություն իրականացնող ծառայողը, որի հասկացությունը սահմանված է քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում: Հետևաբար, տվյալ հանցագործության սուբյեկտներ կարող են լինել միայն օրենքով սահմանված

կարգով գրանցված առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողները: Հակառակ պարագայում չի կարելի խոսել կազմակերպությունում ծառայության օրինական շահերի մասին:

Քննարկվող հանցագործությունը տարբերվում է քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունից (պաշտոնեական լիազորությունները չարաշահելուց) հենց սուբյեկտների շրջանակով:

Ծառայողի կողմից իր լիազորությունների իրականացում ասելով պետք է հասկանալ այնպիսի գործողություն (անգործություն) կատարելը, որն օրենքով կամ այլ նորմատիվ ակտով սահմանված իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողը:

Քրեական պատասխանատվություն է առաջացնում այդ լիազորությունները տվյալ կազմակերպության շահերին հակառակ օգտագործելը: Գործնականում նշված լիազորությունների չարաշահումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, օրինակ՝ անվճարունակ անձանց կամ կազմակերպություններին վարկեր տրամադրելով:

Սույն հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է նաև, որ համապատասխան ծառայողի կողմից իր լիազորությունները չարաշահելու հետևանքով անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառվի: Օրենսդիրը էական վնասի վերաբերյալ, մասնավորապես դրա բնույթի, չափի և այլ հատկանիշների վերաբերյալ որևէ ձևակերպում չի տալիս, ուստի քննարկվող հանցագործության առումով էական վնասը արժեքավորվող հասկացություն է: Տվյալ հետևանքի, որպես հանցակազմի հատկանիշի, հարցը լուծվում է իրավակիրառողի կողմից՝ ելնելով կատարված արարքի կոնկրետ հանգամանքներից՝ պատճառված վնասի չափից և բնույթից, տուժողների թվից և առանձնահատկություններից, վնասը վերականգնելու համար պահանջված միջոցների ծավալից և այլն: Այն կարող է լինել ինչպես գույքային (նյութական վնաս, բաց թողնված օգուտ), այնպես էլ այլ (բարոյական, ֆիզիկական, կազմակերպական) բնույթի: Նշված վնասը կարող է պատճառվել ինչպես անձանց և կազմակերպությունների իրավունքներին, այնպես էլ հասարակության և պետության շահերին, հետևաբար տվյալ հանցակազմը նյութական է: Կարծում ենք, որ առանց այդ էլ իրավակիրառողի կողմից յուրաքանչյուր արժեքավորվող հասկացություն խիստ

հարաբերական բնույթ է կրում, որը հղի է տարաբնույթ ռիսկերով՝ այդ թվում նաև կոռուպցիոն, ուստի առաջարկում ենք գոնե նյութական վնասի պատճառման մասով սահմանել այդ վնասի նվազագույն և առավելագույն չափերը:

ՌԴ քր. օր.-ում քննարկվող հանցագործությունը ներառված է ոչ թե տնտեսական հանցագործությունների, այլև թիվ 23-րդ գլխում ամրագրված առևտրային և այլ կազմակերպությունների ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններին շարքում՝ «Լիազորությունների չարաշահում» վերտառությունն ունեցող թիվ 201-րդ հոդվածի ներքո: Հոդվածում դիսպոզիցիան ունի նույն ձևակերպումը, ինչ հայրենականը: Տարբերությունը կայանում է միայն նրանում, որ որպես հանցագործության հետևանք համարվող էական վնասի պատճառման «հասցեատեր» նախատեսված է նաև օրենքով պաշտպանվող հասարակական շահը, որի բացակայությունը մեր հայրենական օրենսդրական տարբերակում, մեր կարծիքով, էական բացթողում չէ ու այն կարող է փոխարինվել, պարփակվել անձանց, կազմակերպությունների և պետության շահեր հասկացություններով: Հատկանշական է, որ նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն, եթե նշված հանցանքով վնասը բացառապես պատճառվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների առևտրային կազմակերպություններ չհանդիսացող կազմակերպությունների շահերին, ապա այդ դեպքերում քրեական հետապնդումն իրականացվում է տվյալ կազմակերպության համաձայնությամբ կամ նրա հաղորդման հիման վրա: Մնացած դեպքերում այն իրականացվում է ընդհանուր սկզբունքներով: Պետք է նշել, որ քրեական հետապնդում իրականացնելու նման կարգ սահմանելը, այսինքն մասնավոր կամ հանրային մեղադրանք դիտարկելը չի համարվում որպես նյութական նորմ և վերաբերվում է քրեական դատավարությանը, ուստի այն քրեական օրենսգրքում ամրագրելը նպատակահարմար ու տեղին չէ: Բայց և այնպես մասնավոր առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի մասով սույն հանցագործությունը մասնավոր մեղադրանքի գործ դիտելն ու այն ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում նույնպես նախատեսելը ճիշտ կլինի, քանի որ քննարկվող հանցագործությամբ պատճառված վնասը օրենսդիրը բավարարվել է զուտ «էական» ձևակերպում տալով, իսկ յուրաքանչյուր դեպքում մասնավոր առևտրային կազմակերպությունն ինքն է իր կրած վնասը էական համարելու կամ չհամարելու,

ուստի նման դեպքերում քրեական հետապնդում իրականացնելը այդ մասնավոր առևտրային կազմակերպության ցանկության հետ պայմանավորելը ճիշտ տարբերակ է: Նման պարագայում, քանի որ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիան ունի ընդհանուր ձևակերպում ու որպեսզի իրավական խառնաշփոթ չառաջանա քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում, ուստի առաջարկում ենք քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիայից առանձնացնել մասնավոր սեկտորի վերաբերյալ մասն ու այն նույն հոդվածում ամրագրել առանձին մասով:

Այսպիսով, ամփոփելով սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունները և դրանց որակման առանձնահատկությունները, առաջարկվում է՝

1. ՀՀ քր. օր.-ի 187-րդ և 190-րդ հոդվածներում կիրառելի չեն քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում տրված պաշտոնատար անձի հասկացությունը, քանզի այդ հոդվածում իմպերատիվ կերպով նշված է, որ սահմանված պաշտոնատար անձի հասկացությունը վերաբերվում է միայն 29-րդ գլխին (պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ), և քանի որ քրեական օրենքը անալոգիայով կիրառելն արգելվում է, ուստի առաջարկվում է տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով լրացնել նշված օրենսդրական բացը և քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում 29-րդ գլխից բացի ավելացնել նաև 187-րդ և 190-րդ հոդվածները:

2. ՀՀ քր. օր.-ի 187-րդ հոդվածի 2-րդ մասը (պաշտոնատար անձի կողմից ապօրինի ստուգումներ նշանակելը կամ ապօրինի ստուգումներ անցկացնելը, որը խոշոր չափի վնաս է պատճառել) վերացնել, քանի որ այն իրենից ներկայացնում է ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածով նախատեսված պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հատուկ տեսակ, ուստի առանձին դրսևորման մի կոնկրետ տեսակ օրենսդրորեն ամրագրելն ավելորդ է ու աննպատակահարմար:

3. ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայից հանել «խոստանալը կամ առաջարկելը», իսկ նույն հոդվածի 3-րդ մասից՝ «կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» բառերը: Հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, ինչպես նաև այն պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը, եթե այդ ամենը բացահայտվել է տվյալ փուլում,

ապա պետք է դիտել որպես ինքնուրույն ավարտված հանցագործություն՝ այն նախատեսելով ՀՀ քր.օր.-ի 200.1 հոդվածով՝ դրա համար նախատեսելով ավելի մեղմ պատիժ հետևյալ ձևակերպմամբ.

«Հոդված 200.1

Առևտրային կաշառք խոստանալը կամ առաջարկելը, առևտրային կաշառք պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը

1. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

2. Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից կաշառք, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով»:

Նշվածը վերաբերվում է նաև ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածին, այն է՝ քր. օր.-ը լրացնել 201.1 հոդվածով՝ նախատեսելով ավելի մեղմ պատիժ:

4. ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմում վերացնել «բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում» բառերը, իսկ «քրեական հետապնդման մարմիններին» բառերը փոխարինել «ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին» բառերով: Նույն խրախուսական նորմում վերանայել օրենսդրի կողմից նախանշված պարտադիր ու միաժամանակյա պահանջվող պայմանները՝ հետևյալ ձևակերպմամբ.

«5. Առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, այդ մասին կամովին հայտնել է ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ աջակցել է հանցագործությունը բացահայտելուն կամ տեղի է ունեցել կաշառքի շորթում:»:

5. ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածի վերնագրում «հանդիսադիր» բառը պետք է փոխարինվի «հանդիսավոր» բառով: Նշված հոդվածով նախատեսված հանցագործության օրենսդրական ձևակերպումը, որպես առևտրային կաշառքի հատուկ տարատեսակ, լրացնել 200-րդ հոդվածում ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ նույնատիպ խրախուսական նորմով:

6. Առաջարկվում է առևտրային կաշառքի հատուկ տարատեսակ համարվող քր. օր.-ի 201-րդ հոդվածն ընդհանրապես վերացնել և նման դեպքերում արարքը որակել որպես առևտրային կաշառք՝ զերծ մնալով առևտրային կաշառքի մյուս տարատեսակներից այն տարանջատելուց:

7. ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայում «կատարվել է խոշոր չափերով» բառերը փոխարինել «որով պետությանը պատճառվել է խոշոր չափի վնաս» բառերով, իսկ դիսպոզիցիայում թվարկված եղանակների վերջում ավելացնել «կամ այլ եղանակով» բառերը: Նշված հոդվածում ամրագրել խրախուսական նորմ, համաձայն որի՝ նշված հանցագործությունն առաջին անգամ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա ամբողջությամբ վճարել է պարտքը և

համապատասխան տույժերը, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված տուգանքները:

8. ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիայում նյութական վնասի պատճառման մասով սահմանել այդ վնասի նվազագույն և առավելագույն չափերը: Մասնավոր առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի մասով 214-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը մասնավոր հետապնդման գործ դիտելն ու այն ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում նույնպես նախատեսելը ճիշտ կլինի, քանի որ քննարկվող հանցագործությամբ պատճառված վնասը օրենսդիրը բավարարվել է զուտ «էական» ձևակերպում տալով, իսկ յուրաքանչյուր դեպքում մասնավոր առևտրային կազմակերպությունն ինքն է իր կրած վնասը էական համարելու կամ չհամարելու, ուստի նման դեպքերում քրեական հետապնդում իրականացնելը այդ մասնավոր առևտրային կազմակերպության ցանկության հետ պայմանավորելը ճիշտ տարբերակ է: Նման պարագայում, քանի որ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիան ունի ընդհանուր ձևակերպում ու որպեսզի իրավական խառնաշփոթ չառաջանա քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում, ուստի առաջարկում ենք քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիայից առանձնացնել մասնավոր սեկտորի վերաբերյալ մասն ու այն նույն հոդվածում ամրագրել առանձին մասով, որից հետո միայն այդ առանձնացված մասն ամրագրել քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում թվարկված հոդվածների շարքում:

9. Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում ներկայացված փաստարկների հիման վրա առաջարկում ենք վերացնել ՀՀ քր. օր.-ի 8-րդ բաժնի հոդվածներով նախատեսված ծանրացնող հանգամանքը՝ անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը:

**§3. Շրջական միջավայրի անվտանգության դեմ ուղղված բլանկետային
դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման
առանձնահատկությունները**

ՀՀ քր. օր.-ում շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին նվիրված են թվով 18 հոդվածներ: Նշված հոդվածներից երեքը համարվում են բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն

հանցագործություններ, որոնք նաև ընդգրկված են ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017թ.-ի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, դրանք են.

1. քր. օր.-ի 292-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ (Ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով),

2. քր. օր.-ի 294-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ (ապօրինի որսը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով),

3. քր. օր.-ի 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ (ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով):

Այժմ քննարկենք վերը նշված երեք հանցագործություններից յուրաքանչյուրի որակման առանձնահատկությունները և դիտարկենք դրանց վերաբերյալ առկա մոտեցումներն արտասահմանյան երկրների օրենսդրության տեսանկյունից՝ կատարելով իրավահամեմատական վերլուծություն:

ՀՀ քր. օր.-ի 292-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելու համար:

Հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ ձկների, ջրային այլ կենդանիների կամ արդյունագործական ջրային բույսերի արդյունահանումը կրի ապօրինի բնույթ: Ապօրինի է համարվում նշված կենդանիների կամ բույսերի արդյունահանումը առանց համապատասխան թույլտվության (երբ դրա առկայությունն անհրաժեշտ է) կամ դրա պայմանների (որսասեզոնի ժամկետների, որսատարածքների, որսագործիքների, որսի ենթակա ձկան տեսակների, քանակների) խախտումով, ինչպես նաև այն ջրային կենդանիների որսը, որոնց արդյունահանումն ընդհանրապես արգելված է:

Կատարված արդյունահանման ապօրինի լինելու կամ չլինելու հարցի պարզաբանումը ենթադրում է այնպիսի նորմատիվ իրավական ակտերի վերլուծությունը, ինչպիսիք են «Բնության պահպանության մասին» ՀՀ օրենսդրության հիմունքները, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը և այլն:

Խոշոր վնասի հասկացությունը տրված է ՀՀ քր. օր.-ի 292-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված

նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը): Նշենք, որ դեռևս 01.08.2003թ.-ին ուժի մեջ մտած ՀՀ քր. օր.-ի 292-րդ հոդվածում ընդհանրապես պարզաբանված չի եղել, թե որն է խոշոր վնասի հասկացությունը և միայն 09.06.2004թ.-ին ՀՀ քր. օր.-ում կատարվեց լրացում, որով 292-րդ հոդվածի 3-րդ մասում բացահայտվեց «խոշոր վնաս» հասկացության բովանդակությունը:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում ներկայացված փաստարկների հիման վրա առաջարկում ենք վերացնել ՀՀ քր. օր.-ի 292-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված ծանրացնող հանգամանքը՝ անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը: Միաժամանակ նշենք, որ առկա օրենսդրական ձևակերպման պայմաններում ՀՀ քր. օր.-ի 292-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պարագայում գործ ունենք բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործության հետ:

Միաժամանակ առաջարկվում է նաև փոփոխություն մտցնել դիսպոզիցիայի մասով: Այսպես, քննարկվող հանցագործությանը համանման արարքի համար, որպես զանցանք, վարչական պատասխանատվություն է նախատեսված նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, մասնավորապես 88-րդ հոդվածում (Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս տեսակների իրականացման կանոնները խախտելը), ուստի մեր կողմից առաջարկվում է որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ դարձնել անձի կողմից այդ արարքի համար վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը: Վարչական պրեյուդիցիայի նախատեսումը հիմնավորվում է նրանով, որ այն թույլ կտա կենսագործել քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքը: Մասնավորապես, այդ սկզբունքը պահանջում է, որ ներգործության քրեաիրավական միջոցները կիրառվեն այն դեպքում, երբ այլ միջոցները արդյունավետ չեն: Տվյալ պարագայում, վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում տվյալ վարչական իրավախախտումը կատարած լինելու հանգամանքը վկայում է այն մասին, որ վարչաիրավական միջոցները արդյունավետ չեն եղել և հարկավոր է գործի դնել քրեաիրավական գործիքակազմը:

Առաջարկում ենք նաև Բելառուսի քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի օրինակով ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում նախատեսել վարչական և կարգապահական պրեյուդիցիան:

Քննարկվող հանցագործությունն այլ վերտառությամբ է ներկայացված ՌԴ քր. օր.-ի 256-րդ հոդվածում, այն է՝ ջրային կենսաբանական պաշարների արդյունահանումը: Տարբերություն կա նաև օբյեկտիվ կողմի դրսևորման տարբերակների առումով, մասնավորապես թվարկված են զանգվածային ոչնչացման օգտագործվող եղանակների որոշ տեսակներ՝ լողացող ինքնագնաց տրանսպորտային միջոցների, պայթուցիկ, քիմիական կամ էլեկտրական միջոցների կիրառմամբ: Հոդվածի 3-րդ մասում, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է անձի կողմից իր ծառայողական դիրքի օգտագործումը: Բելառուսի քր. օր.-ի 281-րդ հոդվածը նշված հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվություն է նախատեսում այն պայմանով, որ անձը վերջին մեկ տարվա ընթացքում պետք է նույն արարքի համար ենթարկված լինի վարչական տուգանքի: Նույն հոդվածի 3-րդ մասում որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսված է տվյալ հանցանքի կատարումը այնպիսի միջնոցներով, որոնք աշխատանքի սկզբունքները հիմնված են էլեկտրամագնիսական դաշտի, ուլտրաձայնի օգտագործման վրա կամ պայթյունի միջոցով, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից՝ իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ:

Նշված հանցագործության հետ կապված Ուկրաինայի քր. օր.-ի 249-րդ հոդվածը, ինչպես նաև Լատվիայի քր. օր.-ի 110-րդ հոդվածը պաշտոնատար անձի վերաբերյալ ծանրացուցիչ հանգամանքներ չեն նախատեսում: Ընդ որում, Լատվիայի օրենսդիր մարմինն այդ հանցատեսակի համար պատասխանատվություն է նախատեսում այն տարվա մեջ կրկին անգամ կատարելու դեպքում: Էստոնիայի քր. օր.-ի 157-րդ հոդվածը «հավաքական» պատասխանատվություն է նախատեսում ապօրինի ձկնորսության, որսի և բույսերի հատման համար, սակայն պաշտոնատար անձի վերաբերյալ կրկին ծանրացուցիչ հանգամանք չի նախատեսում:

ՀՀ քր. օր.-ի 294-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ապօրինի որս կատարելու համար:

Քր. օր.-ի 294-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առկայության համար անհրաժեշտ է, որ որսը կրի ապօրինի բնույթ: Ապօրինի է համարվում վայրի կենդանիների կամ թռչունների որսը այն անձի կողմից, ով ընդհանրապես որսի իրավունք չունի (օրինակ չի հասել համապատասխան տարիքի, որսորդ միության անդամ չի հանդիսանում կամ դատարանի դատավճռով որոշակի ժամկետով զրկված է որսի իրավունքից և այլն) կամ որսը կատարել է առանց համապատասխան թույլտվության կամ որսի պայմանների (որսասեզոնի ժամկետների, որսատարածքների, որսագործիքների, որսի ենթակա կենդանիների, թռչունների տեսակների քանակների) խախտումով, ինչպես նաև այն կենդանիների նկատմամբ, որոնց որսը ընդհանրապես արգելված է:

Որսի ապօրինի լինելու կամ չլինելու հարցի պարզաբանումը ենթադրում է այնպիսի նորմատիվ իրավական ակտերի վերլուծություն, ինչպիսին է, օրինակ, «Կենդանական աշխարհի մասին» 2000թ.-ին ընդունված ՀՀ օրենքը, ինչը վկայում է նշված հանցագործության դիսպոզիցիայի բլանկետային լինելու մասին:

Ինչպես ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելու, այնպես էլ ապօրինի որսի դեպքում մենք նույն հիմնավորումներով մեր տարակուսանքն ենք հայտնում անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելը որպես ծանրացուցիչ հանգամանք դիտելու առումով: Եվ, բացի այդ, հաշվի առնելով, որ քննարկվող հանցագործությանը համանման արարքի համար, որպես զանցանք, վարչական պատասխանատվություն է նախատեսված նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, մասնավորապես 52-րդ հոդվածում (Կենդանական աշխարհի պետական սեփականության իրավունքի խախտումը), ուստի կրկին առաջարկում ենք հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ դարձնել անձի կողմից այդ արարքի համար վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը:

Քննարկվող հանցագործության վերաբերյալ գրեթե նույն օրենսդրական ձևակերպումն է տրված նաև ՌԴ. քր. օր.-ի 258-րդ հոդվածում, որի 2-րդ մասում, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է անձի կողմից իր ծառայողական դիրքի օգտագործումը:

Բելառուսի քր. օր.-ի 282-րդ հոդվածը նշված հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվություն է նախատեսում այն պայմանով, որ անձը վերջին մեկ տարվա ընթացքում պետք է նույն արարքի համար ենթարկված լինի վարչական տուգանքի: Նույն հոդվածի 3-րդ մասում, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է տվյալ հանցանքի կատարումը պաշտոնատար անձի կողմից՝ իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ:

Լատվիայի քր. օր.-ի 112-րդ հոդվածը քննարկվող հանցանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելով թեպետ ծանրացուցիչ հանգամանքների շարքում չի դասում պաշտոնեական դիրքի օգտագործումը, սակայն կրկին որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ նշված է անձի կողմից այդ արարքը տարվա ընթացքում երկրորդ անգամ կատարված լինելու հանգամանքը:

Նշված հանցագործության համար քրեական պատասխանատվություն է նախատեսում նաև Ուկրաինայի քր. օր.-ի 248-րդ հոդվածը, որի 2-րդ մասում, որպես որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է տվյալ հանցանքի կատարումը պաշտոնատար անձի կողմից՝ իր ծառայողական լիազորությունների օգտագործմամբ:

ՀՀ քր. օր.-ի 296-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատում կատարելու համար:

Որոշելու համար, թե անտառահատումն ապօրինի է, թե ոչ, անհրաժեշտ է դիմել այնպիսի նորմատիվ իրավական ակտերի վերլուծությանը, ինչպիսիք են՝ «Բնության պահպանության մասին» ՀՀ օրենսդրության հիմունքները, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ անտառային օրենսգիրքը և այլն:

Այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, ապա արարքը պետք է որակվի սույն հոդվածի 2-րդ մասով՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում կատարված: Տվյալ դեպքում արդեն խոսքը գնում է բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործության մասին:

Ինչպես ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելու կամ ապօրինի որսի, այնպես էլ ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատման դեպքում մենք նույն հիմնավորումներով մեր տարակուսանքն ենք հայտնում անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելը որպես ծանրացուցիչ հանգամանք դիտելու առումով: Եվ, բացի այդ, ևս մեկ անգամ առաջարկում ենք հանցակազմի օբյեկտիվ

կողմի պարտադիր հատկանիշ դարձնել անձի կողմից այդ արարքի համար վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը:

Քննարկվող հանցագործության վերաբերյալ գրեթե նույն օրենսդրակա ձևակերպումն է տրված նաև ՌԴ. քր. օր.-ի 260-րդ հոդվածում, սակայն որպես հանցագործության առարկա նախատեսված չէ պետական կամ մասնավոր սեփականություն համարվող բուսածածկը: Հոդվածի 2-րդ մասում, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է անձի կողմից իր ծառայողական դիրքի օգտագործումը: Հոդվածում, ի տարբերություն մեր հայրենական օրենսդրության, նախատեսված են նաև հանցանքի կատարումը խմբի կողմից, խմբի կողմից նախնական համաձայնությամբ և կազմակերպված խմբի կողմից: Սակայն, միևնույն ժամանակ, փոխարենը բացակայում են այնպիսի ծանրացուցիչ հանգամանքներ, ինչպիսիք են հանցանքը բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ Կարմիր գրքում գրանցված ծառատեսակների կամ բուսածածկի նկատմամբ կատարելու դեպքերը:

Հատկանշական է, որ Բելառուսի օրենսդիր մարմինը ինչպես ջրային կենդանիներ և բույսեր ապօրինի արդյունահանելու, այնպես էլ ապօրինի որսի դեպքում հանցակազմերի առկայության համար ամրագրված պարտադիր պայմանը, այն է՝ անձը վերջին մեկ տարվա ընթացքում պետք է նույն արարքի համար ենթարկված լինի վարչական տուգանքի, չի նախատեսում քննարկվող հանցագործության պարագայում (քր. օր.-ի 277-րդ հոդված): Բացի այդ, որպես ծանրացուցիչ հանգամանք չի նախատեսվում նաև պաշտոնեական դիրքի չարաշահումը:

Նշված հանցագործության վերաբերյալ Ուկրաինայի քր. օր.-ի 246-րդ հոդվածը, ինչպես նաև Լատվիայի քր. օր.-ի 109-րդ հոդվածը, որպես ծանրացուցիչ հանգամանք չեն նախատեսում պաշտոնեական դիրքի չարաշահումը:

Այսպիսով, ամփոփելով շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների ուսումնասիրության արդյունքները և դրանց որակման առանձնահատկությունները, առաջարկվում է՝

1. Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործություններում փոփոխություն մտցնել դիսպոզիցիայի մասով: Առաջարկվում է որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ դարձնել անձի կողմից այդ արարքի համար վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև Բելառուսի քրեական օրենսգրքի 32 հոդվածի օրինակով վարչական և կարգապահական պրեյուդիցիան ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում:

2. Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում ներկայացված փաստարկների հիման վրա առաջարկում ենք վերացնել ՀՀ քր. օր.-ի 10-րդ բաժնի հոդվածներով նախատեսված ծանրացնող հանգամանքը՝ անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը:

§4. Արդարադատության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների որակման առանձնահատկությունները

Արդարադատության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործությունները նշված են ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2017թ.-ի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:

Այժմ քննարկենք նշված ցանկում առկա որոշ հանցագործությունների որակման առանձնահատկությունները և դիտարկենք դրանց վերաբերյալ առկա մոտեցումները արտասահմանյան երկրների օրենսդրության տեսանկյունից՝ կատարելով իրավահամեմատական վերլուծություն:

ՀՀ քր. օր.-ի 332-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում արդարադատության իրականացմանը եւ քննությանը խոչընդոտելու համար: Հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված են երկու տարբեր, ինքնուրույն հանցագործություններ: Այսպես, հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար, իսկ 2-րդ մասը՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ

քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Իրավաբանական գրականության մեջ մի խումբ քրեագետներ նշում են, որ արդարադատության իրականացման խոչընդոտում է համարվում նաև ցույցեր, հավաքներ, միտինգներ կազմակերպելը՝ զուգորդված դատարանին կամ նախաքննություն իրականացնող մարմնին կոնկրետ գործի քննության կապակցությամբ ներկայացվող հրապարակային պահանջներով⁵⁶: Սակայն, մեր կարծիքով, մարդկանց նմանօրինակ գործողությունները չի կարելի դիտել և որակել որպես այս հանցագործության արտահայտման մի տարատեսակ, առավել ևս, որ այդ հեղինակներն իրենք ևս միաժամանակ նշում են, որ քննարկվող հանցագործությունն առկա չէ այն դեպքում, երբ տեղի է ունենում դատարանի կամ իրավապահ մարմինների գործունեության քննադատություն, նրանց կողմից կայացրած որոշումներին բացասական գնահատական տալը: Այս համասեռ իրավիճակներին տարբեր մեկնաբանություններ տալը կարող է միայն ավելորդ խնդիրներ առաջացնել արարքը որակելիս: Այսպես, այդ նույն ցույցերի կամ հավաքների ժամանակ մարդիկ քննադատելով և բացասական գնահատելով կոնկրետ գործի վերաբերյալ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված դատավճիռը, կարող են հանրային կարծիք և պահանջ ներկայացնել Վերաքննիչ քրեական դատարանին՝ արարքին իրենց պատկերացրած օբյեկտիվ գնահատականը տալու առումով: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք...»: Ուստի գտնում ենք, որ ցույցերի ժամանակ կամ դատարանի մոտ հավաքված մարդկանց կողմից իրենց կարծիքն արտահայտելը և դատարանից իրենց կարծիքին համապատասխան գործի այդօրինակ ելքով արդյունք ակնկալելն արդարադատության խոչընդոտում որակելը միանշանակ կոդիցիտի որպես Սահմանադրությամբ երաշխավորված անձի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի կոպիտ ոտնահարում, ինչն ուղղակի անթույլատրելի է: Միաժամանակ այս տեսանկյունից պետք է արձանագրել, որ մեր օրերում

⁵⁶Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս», էջ 877:

Հայաստանյան դատարանների մոտ հաճախակի են գործով կոնկրետ պահանջներ ներկայացնող մարդկանց հավաքներ լինում, բայց այդպես էլ այդ արարքին քրեաիրավական որևէ գնահատական, արձագանք չի տրվում:

Դատարանի կամ վերոհիշյալ պաշտոնատար անձանց գործունեության միջամտությունը կարող է առկա լինել ինչպես աշխատանքային, այնպես էլ ոչ աշխատանքային իրավիճակներում⁵⁷: Միջամտությունը պետք է կապված լինի քննվող կոնկրետ գործի հետ:

Դատավարության կողմերին ճանաչող անձանց, պատգամավորների կամ քրեակատարողական մարմինների կոչը կամ դիմումը գործը քննող դատարանին՝ կապված գործի հանգամանքները, ամբաստանյալի, տուժողի կամ դատավարության այլ մասնակցի անձը հաշվի առնելու խնդրանքի հետ, չեն կարող դիտվել որպես դատարանի կողմից իրականացվող արդարադատությանը խոչընդոտ հանդիսացող միջամտություն: Միջամտությունները, որոնք ուղղված են ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի հանցատեսակների վերաբերյալ քրեական հետապնդման խստացմանը կամ մեղմացմանը, այսինքն չեն վերաբերվի քննվող կոնկրետ գործին, նույնպես չեն պարունակում տվյալ հանցագործության հատկանիշներ:

Քննարկվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ներկայացված հիշյալ տարբեր հանցագործությունների համար միայն մեկ ծանրացուցիչ հանգամանք է նախատեսված, այն է՝ նշված արարքները, որոնք կատարվել են անձի կողմից իր պաշտոնական դիրքն օգտագործելով:

Պետք է համաձայնվել այն քրեագետների հետ, որոնք գտնում են, որ այս ծանրացուցիչ հանգամանքը տվյալ պարագայում վերաբերվում է ոչ միայն պաշտոնատար անձանց, այլև պետական կամ մունիցիպալ այլ ծառայողներին, ինչպես նաև ոչ պետական հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ծառայողներին⁵⁸: Այս հանցագործության սուբյեկտ կարող են լինել այն անձինք, ում

⁵⁷Այս մասին առավել մանրամասն տե՛ս Абрамовская О.Р. Противодействие коррупционной преступности в органах государственной власти и местного самоуправления (криминологический аспект): Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук: Спец 12.00.08 / Челябинский юридический институт МВД России. – Челябинск, 2011. էջ 26, Скутин А.Ф. Судебная реформа и проблемы коррупции в судах // Российское правосудие. 2008. №10, էջեր 79–85:

⁵⁸Տե՛ս Скосарев В.В. Комментарий к уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики. Москва, 2004. էջ 758:

լիազորությունները կամ պաշտոնից բխող հեղինակությունը թույլ են տալիս իրական ազդեցություն ունենալ գործի քննության ընթացքի վրա: Պաշտոնեական դիրքի օգտագործումը կարող է արտահայտվել տարբեր ձևաչափերով, մասնավորապես.

ա) Մի դեպքում տվյալ անձը կարող է հանդիսանալ հետաքննություն կատարող անձի, քննիչի կամ դատախազի վերադասը,

բ) մեկ այլ դեպքում, երբ բացակայում են անմիջական ենթակայության հարաբերությունները, անձը կարող է իր ծառայողական դիրքով օգնել կամ խանգարել գործի վարույթն իրականացնող անձի կարիերային (օրինակ՝ որակավորման հանձնաժողովի անդամ լինելու պարագայում):

գ) մեկ ուրիշ դեպքում տվյալ անձի համապատասխան որոշումից կարող է կախված լինել կոնկրետ գործով վարույթն իրականացնող մարմնի ֆինանսական և տեխնիկական միջոցների ապահովման հարցի լուծումը և այլն:

Քննարկվող հանցագործությունը տառացիորեն նույն բովանդակությամբ է ձևակերպված ՌԴ քր. օր.-ի 294-րդ հոդվածում, Տաջիկստանի քր. օր.-ի 345-րդ հոդվածում, Ղազախստանի քր. օր.-ի 339-րդ հոդվածում և Ադրբեջանի քր. օր.-ի 286-րդ հոդվածում: Ուզբեկստանի քր. օր.-ի 236-րդ հոդվածը մեկ միասնական՝ 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսում ինչպես դատարանի, այնպես էլ դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործունեության միջամտությանը: Այդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է միակ ծանրացուցիչ հանգամանքը՝ նույն արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից: Ղրղզստանի քր. օր.-ը տարանջատել և առանձին երկու՝ 317-րդ և 318-րդ հոդվածներով է պատասխանատվություն նախատեսում՝ համապատասխանաբար դատարանի և դատախազի կամ քննիչի գործունեությանը միջամտելու համար: Սակայն այդ հոդվածներում նշված չէ հետաքննություն կատարող անձի գործունեությանը միջամտելու վերաբերյալ պատասխանատվությունը: Ուկրաինայի քր. օր.-ի 376-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում դատարանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար՝ նպատակ ունենալով խոչընդոտել դրանց ծառայողական պարտականությունների կատարմանը կամ հասնել անարդար որոշման կայացմանը: Կարծում ենք, որ մեր հայրենական ձևակերպումն առավել հաջող է ու հարկավոր չէ նպատակի կոնկրետ տարատեսակներ նշելը, քանի

որ, ի վերջո, դրանք բոլորն էլ հանգեցնում են արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն: Հոդվածի 2-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք, ամրագրում է նույն արարքի կատարումը, որը խոչընդոտում է հանցագործության կանխարգելմանը կամ այն կատարած անձի ձերբակալմանը կամ անձի կողմից իր ծառայողական դիրքի օգտագործմամբ այն կատարելը: Թե նշված 376-րդ հոդվածում և թե ընդհանրապես արդարադատության դեմ ուղղված հանցագործություններն ամրագրող Ուկրաինայի քր. օր.-ի 18-րդ բաժնում չկա կոնկրետ որևէ հոդված, որը հայրենական օրենսդրության օրինակով քրեական պատասխանատվություն նախատեսի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությանը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի գործունեությանը միջամտելու համար: Բելառուսի քր. օր.-ի 390-րդ հոդվածում քննարկվող հանցագործության սուբյեկտը հատուկ է, որը հանդիսանում է հենց պաշտոնատար անձը՝ օգտագործելով իր ծառայողական լիազորությունները: Հոդվածը վերաբերվում է ինչպես դատարանի, այնպես էլ դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործունեության միջամտությանը: Էստոնիայի քր. օր.-ում չկա քննարկվող հանցագործության համար պատասխանատվություն սահմանող հոդված:

ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Տվյալ հանցագործության հասարակական վտանգավորությունը կայանում է նրանում, որ խախտվում են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և քաղաքացու իրավունքները, վնաս է պատճառվում արդարադատության շահերին, դրա հեղինակությանն ու վարկանիշին: Այդ գործողությունները մարդկանց մոտ առաջացնում են սոցիալական և իրավական անպաշտպանվածության զգացում, խամրում են արդարության և օրինականության շղարշները:

Անձին քրեական պատասխանատվության ենթարկելը իրականացվում է քրեադատավարական երկու փուլերով՝ գործողություններով՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելով և նրան մեղադրանք առաջադրելով: Գործնականում դատավարական այս երկու գործողությունները կարող են իրականացվել ոչ միաժամանակ: Անձին կարող է մեղադրանք առաջադրվել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելուց հետո 48 ժամվա

ընթացքում, կամ, նրա բացակայության դեպքում այն չի առաջադրվում դեռ այնքան ժամանակ, մինչև նա կհայտնաբերվի: Գրականության մեջ կա կարծիք, որ քննարկվող հանցագործությունն ավարտված պետք է համարել անձին մեղադրանք առաջադրելու պահից՝ պատճառաբանելով, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կարող է վերացվել դատախազի կողմից⁵⁹: Սակայն կարծում ենք, որ տվյալ պարագայում հանցագործությունն ավարտված պետք է համարել ոչ թե անձին մեղադրանք առաջադրելու, այլ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելու պահից, քանի որ մինչև դեռևս մեղադրանք առաջադրելը, մասնավորապես անձի գտնվելու վայրը հայտնի չլինելու դեպքում, նշված որոշման կայացմամբ արդեն իսկ անձի նկատմամբ սկսվում են կիրառվել ոչ բարենպաստ հետևանքներ ծնող միջոցներ, գործողություններ: Մասնավորապես հայտարարվում է հետախուզում, ընտրվում է խափանման միջոց, գույքի վրա դրվում է կալանք, վերահսկվում են տվյալ անձի նամակագրությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները և այլն: Այսինքն, այլ կերպ ասած, անձի վերաբերյալ որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելով նա արդեն իսկ պոտենցիալ սկսում է կրել պետության կողմից սահմանած քրեաիրավական ներգործության մի շարք միջոցների «բեռն ու անհարմարությունը», ուստի նման պարագայում հանցանքի ավարտվելու պահը «երկարաձգելն» ու այն մինչև անձին մեղադրանք առաջադրելու փուլին հասցնելն օբյեկտիվորեն ճիշտ չէ: Իսկ ինչ վերաբերվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատախազի կողմից վերացվելուն, ապա տվյալ պարագայում, եթե այդ որոշումը կայացրած պաշտոնատար անձի համար ակնհայտ է եղել քրեական պատասխանատվության ենթարկվող անձի անմեղության փաստը և դա կանխվել է դատախազի կողմից այդ անհիմն ու անօրինական որոշումը վերացնելով, ապա գործ ունենք չավարտված հանցագործության, այն է՝ հանցափորձի հետ: Մեր տեսակետը հիմնավորող լրացուցիչ փաստարկ է նաև այն, որ ՀՀ սահմանադրության էությունից բխում է, որ դատախազի լիազորության բուն էությունը ոչ թե անձին մեղադրանք առաջադրելն է, այլ քրեական հետապնդման հարուցումը:

Նշված հանցագործությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ անձն ընդհանրապես որևէ հանցագործություն չի կատարել, այլև այն դեպքում, երբ նրան

⁵⁹Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. հատուկ մաս», էջ 889:

մեղսագրվում է ոչ թե իր կողմից իրականում կատարված, այլ մեկ ուրիշ՝ ավելի ծանր հանցագործություն: Մասնավորապես մի խումբ հեղինակներ նշում են, որ եթե անձը մեղադրյալ է ներգրավվել ավելի ծանր հոդվածով, քան այն, ինչ ինքը կատարել է, ապա քննարկվող հանցագործությունն առկա չէ, քանի որ, ի վերջո, անձը հանցանք է կատարել: Բացի այդ, արարքի իրավաբանական վերջնական գնահատականը տալիս է դատարանը, ուստի անձն այդ առումով ունի բավարար երաշխիքներ⁶⁰:

Չհամաձայնվելով այդ հեղինակների հետ՝ մենք կարծում ենք, որ տվյալ դեպքում ևս առկա է քննարկվող հանցագործությունը, քանի որ այս հանցագործության առկայությունը փաստելու համար ամեն անգամ անհրաժեշտ է արարքը վերլուծել կոնկրետ և առարկայական: Եթե օրինակ քննիչն ուղղակի դիտավորությամբ անձին մեղադրանք է առաջադրում ոչ թե իրականում նրա կողմից կատարված կողոպուտի, այլ ավելի ծանր հանցագործության՝ ավազակության համար, ապա նման պարագայում չի կարելի ասել, որ քննարկվող հանցագործությունն առկա չէ, քանի որ այդ անձը, այնուամենայնիվ, հանցանք է կատարել: Փաստ է, որ քննիչը պարզ և հստակ գիտակցել է, որ տվյալ անձն ավազակություն կատարելու համար ակնհայտորեն անմեղ է եղել, վերջինիս արարքում չկան կոնկրետ այդ հանցագործության հատկանիշները և, ուրեմն, նա մեղադրյալ է ներգրավել ավազակություն կատարելու մասով ակնհայտ անմեղ անձի ու նա գիտակցել է դրա մասին, այլ կերպ ասած, դրսևորել է ուղղակի դիտավորություն: Նման իրավիճակում արդեն պետք չէ «հույսը կապել» հետագայում գործը քննող դատարանի աջալրջության հետ ու ակնկալել դատարանի երաշխիքներին: Մինչև դատարանի կողմից անձի արարքին ճիշտ իրավաբանական գնահատական տալն այդ անձը նախաքննության ընթացքում արդեն իսկ տևական ժամանակ կրած է լինում ոչ օբյեկտիվ որակման քրեաիրավական հետևանքներն ու զրկանքները: Նման մոտեցմամբ ու տրամաբանությամբ, ըստ էության, ամեն անգամ կարելի է ասել, որ նշված հանցագործությունն առկա չէ, քանի որ, ի վերջո, միշտ էլ կարելի է ապավինել դատարանի կողմից իրականացված վերջնական արդարադատությանը: Բերված օրինակում ակնհայտ անմեղ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում իր փաստացի կատարածին համասեռ արարքի

⁶⁰Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. հատուկ մաս», էջ 888:

համար, իսկ խնդիրն ավելի ակներև է դառնում, երբ անձը որպես մեղադրյալ է ներգրավվում այնպիսի հանցագործության համար, որն իր բնույթով տարբերվում է իր փաստացի կատարած հանցագործությունից: Օրինակ՝ անձը դիտավորությամբ և խուլիգանական դրդումներով միջին ծանրության վնաս է պատճառում տուժողի առողջությանը՝ չիմանալով, որ վերջինս իշխանության ներկայացուցիչ է: Քննիչն այդ անձին ավելի խիստ պատասխանատվության ենթարկելու նպատակով այդ անձին որպես մեղադրյալ է ներգրավում իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար՝ ուղղակի դիտավորությամբ գիտակցելով, որ մեղադրյալը չի իմացել տուժողի իշխանության ներկայացուցիչ լինելու մասին: Այս օրինակում ևս սխալ կլինի պնդել, թե ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցակազմը բացակայում է զուտ այն հիմնավորմամբ, որ այդ անձը հանցանք, այնուամենայնիվ, կատարել է: Դիտավորությամբ մեկ ուրիշի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու մեջ մեղադրվող անձն իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու առումով անմեղ է, որովհետև նրա դիտավորությամբ ընդգրկված չի եղել այդ հանցագործության հիմնական օբյեկտին՝ կառավարման կարգին վնաս պատճառելը:

Այդուհանդերձ, պետք է նաև համաձայնել նույն հեղինակների այն տեսակետի հետ, որ եթե անձի արարքը որակվել է ավելի մեղմ հողվածով, քան նա կատարել է իրականում, ապա իրոք քննարկվող հանցագործությունն առկա չէ, որովհետև քր. օր.-ի 336-րդ հոդվածն իր տրամաբանական առումով իրականում նպատակ է հետապնդում անձին ապահովագրել ոչ թե ապօրինի արդարացումից, այլ մեղադրանքից:

Պետք է փաստել, որ տվյալ հանցագործության սուբյեկտի՝ քննիչի կամ դատախազի կողմից ցուցաբերված ուղղակի դիտավորության հիմնավորումը գործնականում շատ դժվար է, քանի որ այդ պաշտոնատար անձինք միշտ կարող են իրենց կողմից կայացրած որոշումը հիմնավորել կամ բացատրել տարբեր պատճառաբանություններով, մասնավորապես օրենքի սխալ մեկնաբանմամբ, ապացույցների յուրովի գնահատմամբ և այլն: Հանցագործության շարժառիթները կարող են տարբեր լինել, մասնավորապես խանդը, վրեժը, գործնական աշխատանքում անձի կողմից իր «պրոֆեսիոնալիզմը» ցույց տալը և այլն: Սակայն որպեսզի քննարկվող հանցագործությունը համարվի բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն

հանցագործություն, ապա որպես պարտադիր պայման անհրաժեշտ է, որպեսզի հանցավորի մոտ առկա լինեն շահադիտական դրդումները:

Այն դեպքերում, երբ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում միայն իր իսկ խոստովանական ցուցմունքի հիման վրա, սակայն հետագայում պարզվում է, որ նա իրականում անմեղ է եղել, ապա քննարկվող հանցագործությունն առկա չէ, եթե իհարկե տեղի չի ունեցել օրինակ ցուցմունքներ տալու հարկադրում: Այստեղ առկա կարող է լինել միայն քրեադատավարական ընթացակարգի խախտում, ըստ որի՝ անձի անմեղությունը հիմնավորվում է ապացույցների բավարար համակցության լույսի ներքո⁶¹:

Այս հանցագործության համար քրեական պատասխանատվության են ենթակա ոչ միայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացրած քննիչը, այլև դատախազը կամ քննչական բաժնի պետը, որոնք կամ հենց իրենք են կայացրել այդ որոշումը կամ էլ գիտակցելով անձի ակնհայտ անմեղության մասին իրենց իսկ գրավոր ցուցումով կարգադրել են քննիչին կայացնել այդ որոշումը:

Երբ դատախազի կամ քննիչի կողմից ակնհայտ անմեղ անձի վերաբերյալ կայացվում է նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, այսինքն նրանց կողմից տեղի է ունենում այդ ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկման դեպք, իսկ հետագայում քրեական գործը կարճվում է կամ կայացվում է արդարացման դատավճիռ, ապա, միևնույնն է, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացրած անձի՝ քննիչի կամ դատախազի արարքում առկա են սույն հանցագործության հատկանիշները⁶²:

Միևնույն ժամանակ, եթե քննիչի կամ դատախազի կողմից ակնհայտ անմեղ անձին գործով որպես մեղադրյալ ներգրավման դեպքում դատարանը ևս տվյալ անձին իր մեղադրական դատավճռով ենթարկում է քրեական պատասխանատվության, որը կարող է հետևանք լինել դատարանի կողմից թույլ տրված սխալի կամ ակնհայտ անարդար դատավճռի կայացման, ապա դատարանի կողմից կայացրած տվյալ

⁶¹ Տե՛ս Скосарев В.В., Նշվ. աշխ., էջ 764:

⁶² Տե՛ս Рагога А.И., Уголовное право России. части общая и особенная, 5-е издание. Москва, 2005г. էջ 615:

դատավճռի մասով դատախազն ու քննիչը քննարկվող հանցանքի առումով քրեական պատասխանատվության ենթակա չեն:

Օրենսդիրը տվյալ հանցագործության համար որպես ծանրացուցիչ հանգամանքներ ամրագրել է 336-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում: Նախատեսված ծանրացուցիչ հանգամանքների մասով թերևս մեր մտահոգությունը պետք է հայտնենք 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի վերաբերյալ, այն է՝ տվյալ հանցանքը մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով կատարելը: Այսպես, ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը կարող է զուգորդվել այլ հանցանքների կատարմամբ, օրինակ ցուցմունքներ տալուն հարկադրելով, ապօրինի ձերբակալելով կամ կալանավորելով և այլն: Հաշվի առնելով, որ քննարկվող հանցագործությունը կարող է զուգորդվել նաև քր. օր.-ի 349-րդ հոդվածով նախատեսված հանցագործության՝ ապացույցների կեղծմամբ, ուստի, կարծում ենք, որ այստեղ առաջանում է հակասություն քրեական օրենսդրության արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրագործման հետ կապված, որի համաձայն արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար: Նույն հիմնավորումից ելնելով առաջարկվում է քր. օր.-ի 349-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքը՝ «մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելը», վերացնել, քանի որ ապացույցների արհեստական ստեղծումը կարող է դրսևորվել նաև դրանց կեղծմամբ՝ իրեղեն ապացույցի ձևափոխմամբ, զննության արձանագրության մեջ ջնջում կատարելով և այլն:

ՌԴ քր. օր.-ի 299-րդ հոդվածի 1-ին մասում, ի տարբերություն մեր հայրենական օրենսդրության, նշված հանցագործության օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումներ չեն նախատեսվում, դիսպոզիցիան պարզապես տառացի կրկնում է հոդվածի վերնագիրը, իսկ 2-րդ մասում ամրագրված է միայն մեկ ծանրացուցիչ հանգամանք՝ նույն արարքը, որը կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրելով⁶³: ՌԴ քր. օր.-ի նույն ձևակերպումն է առկա

⁶³Տե՛ս <http://base.garant.ru/10108000/> (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

նաև Ադրբեյջանի քր. օր.-ի 290-րդ հոդվածում⁶⁴ և Ղազախստանի քր. օր.-ի 344-րդ հոդվածում⁶⁵: Ուզբեկստանի քր. օր.-ի 230-րդ հոդվածի դիսպոզիցիան ունի հետևյալ ձևակերպումը՝ հետաքննիչի, քննիչի կամ դատախազի կողմից ակնհայտ անմեղին որպես մեղադրյալ ներգրավելը՝ հանրորեն վտանգավոր արարք կատարելու համար: Հոդվածի 2-րդ մասում կրկին նույն ծանրացուցիչ հանգամանքն է՝ նույն արարքը, որը կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրելով⁶⁶: Ուզբեկստանի օրինակով Տաջիկստանի քր. օր.-ի 348-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի ձևակերպմամբ կրկին խոսքը վերաբերվում է ակնհայտ անմեղ անձին որպես մեղադրյալ ներգրավելուն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով⁶⁷: Այսինքն այդ երկրները ևս քննարկվող հանցանքի բուն կատարումն ու ավարտը տեսնում են ակնհայտ անմեղ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելու մեջ: Բելառուսի քր. օր.-ի 393-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ևս տառացի կրկնում է այդ հոդված համանուն վերնագիրը, իսկ 2-րդ և 3-րդ մասերում նախատեսված են ծանրացուցիչ հանգամանքները, որտեղ նոր հանգամանքներ չկան⁶⁸: Ուկրաինայի քր. օր.-ի 372-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում թվարկված են այդ հանցագործության սուբյեկտները՝ դատախազը, քննիչը և անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար լիազորված օրենքով նախատեսված այլ անձը: Հոդվածի 2-րդ մասում թվարկված են ծանրացուցիչ հանգամանքները՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրելով, մեղադրանքի արհեստական ապացույցների ստեղծումը կամ այլ կեղծիքի կատարումը⁶⁹: Բովանդակային առումով առանձնանում է Էստոնիայի քր. օր.-ի 168-րդ հոդվածը: Այն պատասխանատվություն է սահմանում քննիչի կամ դատախազի կողմից

⁶⁴Տե՛ս http://www.legislationline.org/download/action/download/id/4674/file/Azerbaijan_CC_am2013_ru.pdf (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

⁶⁵Տե՛ս http://www.legislationline.org/download/action/download/id/5155/file/Kazakh_CC_am2014_ru.pdf (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

⁶⁶Տե՛ս http://www.legislationline.org/download/action/download/id/3833/file/Uzbekistan_CC_1994_am_2010_ru.pdf (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

⁶⁷Տե՛ս http://www.legislationline.org/download/action/download/id/5708/file/Tajikistan_CC_am2014_ru.pdf (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

⁶⁸Տե՛ս http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1 (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

⁶⁹Տե՛ս http://www.legislationline.org/download/action/download/id/3814/file/Ukraine_CC_2001_am_2010_ru.pdf (վերջին այցելությունը 12.02.2018թ.):

ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նշված անձանց կողմից մեղադրական արհեստական ապացույցներ ստեղծելու համար:

ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար:

Նշված հանցագործության հատկանիշները բացակայում են, երբ անձը նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանություն կատարելու համար քր. օր.-ով նախատեսված պատասխանատվության մասին:

Հեղինակների մի մասը նշում է, որ հարցաքննվողի անձնային, հոգեբանական առանձնահատկություններից օգտվելով և որպես դրա արդյունք խանդի, զայրույթի կամ այլ զգացողությունների առաջացումով ցուցմունքներ վերցնելու, ինչպես նաև խաբեությամբ ցուցմունքներ վերցնելը, օրինակ կալանքից ազատելու կամ գործը կարճելու խոստումների դեպքերն իրենց մեջ չեն պարունակում քննարկվող հանցագործության հատկանիշները, քանի որ անձը զրկված չի եղել իր ցուցմունքներն իր կամքով տալու հնարավորությունից⁷⁰: Նման դեպքերում անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար՝ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին էական վնաս պատճառելու պարագայում⁷¹: Որոշ հեղինակներ էլ իրենց հերթին որպես հարցաքննվողի վրա ներգործելու թույլատրելի հուզական հնարք նշում են հանցակիցներից որևէ մեկի նկատմամբ հարցաքննվողի ունեցած հակակրանքի օգտագործումը⁷²: Սակայն կարծում ենք, որ դատավարական նման մոտեցումը հակասում է ցուցմունքներ տալու «կամավորության» սկզբունքին, քանի որ, վերջ ի վերջո, պաշտոնատար անձն այդ եղանակներով խաբում, հուզականորեն զրգրում և

⁷⁰Տե՛ս Федоров А.Ю. Коррупция в органах судебной власти в России // Вестник Московского университета МДВ России. 2010. №2, էջեր 148 – 150:

⁷¹Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. հատուկ մաս», էջ 893:

⁷²Տե՛ս Ա.Հ.Բախշինյան «Կրիմինալիստիկա. սխեմաների հավաքածու», Երևան, 2003թ. էջ 128:

մոլորության մեջ է գցում հարցաքննվողին, ինչն այդ ընդհանուր համատեքստում չի կարող նորմալ և օբյեկտիվ համարվել: Առավել ևս, որ այդ եղանակները գործնականում կարող են հանգեցնել ընդհուպ մինչև կեղծ, ոչ օբյեկտիվ ցուցմունքների ստացմանը, որի մասին ցուցմունքներ ստացող պաշտոնատար անձն էլ կարող է չիմանալ:

Պետք է արձանագրել, որ այս հանցագործության առումով տեսականորեն և գործնականորեն երբեմն դժվարություն է առաջանում տալ կամ որոշել այն «եզրագիծը», որը հստակ կտարանջատեր ու կրնդգծեր, թե որտեղ են ավարտվում ցուցմունքներ վերցնելու մարտավարական օրինական եղանակները և որտեղից են սկսվում անօրինական, ոչ թույլատրելի հնարքները՝ առավել ևս, որ քրեագետները ևս այդ կապակցությամբ չունեն մեկ միասնական կարծիք և մոտեցում: Մասնավորապես դա առավել արտահայտիչ է երևում վերը բերված օրինակում, երբ ցուցմունքներ ստանալու համար, թեկուզև օբյեկտիվ ու արդար նպատակով, օգտագործվում են հարցաքննվող անձի հուզական, հոգեբանական առանձնահատկությունները: Սա շատ խոցելի տիրույթ է, որը լի է իրավակիրառողի կողմից տարակարծիք մոտեցումների ցուցաբերման ռիսկերով:

Պետք է նշել, որ քր. օր.-ը համանման հանցագործություն է նախատեսել նաև 340-րդ հոդվածով (սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանության համար կաշառելը կամ հարկադրելը), սակայն տարբերությունը կայանում է սուբյեկտի մեջ, այդ դեպքում սուբյեկտն ընդհանուր է՝ 16 տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:

341-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ծանրացուցիչ հանգամանքները, դրանք են՝ հանցանքը ծաղրուծանակով, խոշտանգմամբ կամ այլ բռնությամբ կատարելը, իսկ 3-րդ մասը վերաբերվում է ծանր հետևանքներ առաջացնելուն:

Վերոշարադրյալը վերաբերվում է ոչ միայն վկային, տուժողին, կասկածյալին, մեղադրյալին և ամբաստանյալին ցուցմունքներ տալուն, այլև փորձագետին կեղծ եզրակացություն տալուն և թարգմանիչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելուն: Այս առիթով պետք է նշել, որ ավելի ճիշտ կլիներ, եթե օրենսդիրը 341-րդ հոդվածի վերնագրի շարադրանքում նշեր նաև կեղծ եզրակացություն տալուն և

սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու հանգամանքը, ինչպես որ բուն հոդվածի դիսպոզիցիայում է այն նշված:

Քննարկվող հանցագործության դիսպոզիցիան որոշակի փոփոխություններով է ամրագրված ՌԴ քր. օր.-ի 302-րդ հոդվածում: Այսպես, վերնագիրը նշված է որպես ցուցմունք տալուն հարկադրելը: Հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը. քննիչի, հետաքննություն կատարող անձի կողմից, ինչպես նաև քննիչի կամ հետաքննություն կատարող անձի իմացությամբ կամ թողտվությամբ այլ անձի կողմից սպառնալիքի գործադրմամբ, շանտաժով կամ այլ անօրինական գործողություններով կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային ցուցմունք տալուն հարկադրելը, կամ փորձագետին, մասնագետին եզրակացություն կամ ցուցմունք տալուն հարկադրելը: Ի տարբերություն հայրենական ձևակերպման՝ հանցակազմի ռուսական տարբերակում դատավորն այլևս տվյալ հանցագործության սուբյեկտ չէ, հետևաբար ամբաստանյալը տուժող չի կարող լինել: Փորձագետի հետ մեկտեղ նշվում է նաև մասնագետին հարկադրելու հանգամանքը, սակայն այստեղ էլ բացակայում է թարգմանիչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու դեպքը: Ռուսական ձևակերպման մեջ, որպես հանցագործության սուբյեկտ, նշվում է նաև այն անձն, ով այդ հարկադրանքը կիրականացնի քննիչի կամ հետաքննություն կատարող անձի իմացությամբ կամ թողտվությամբ: Հոդվածի 2-րդ մասում նշված են ծանրացուցիչ հանգամանքները, դրանք են՝ նույն արարքը, որը կատարվել է բռնությամբ, ծաղրուծանակով կամ խոշտանգմամբ: Ուկրաինայի քր. օր.-ի 373-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հետաքննություն կամ նախաքննություն կատարող անձի կողմից հարցաքննության ընթացքում անօրինական գործողություններով ցուցմունք տալուն հարկադրելու համար: Հոդվածի 2-րդ մասում նշված են ծանրացնող հանգամանքները՝ նույն արարքը, որոնք կատարվել են անձի նկատմամբ ծաղրուծանակ, բռնություն կիրառելով, իսկ թարգմանչին կամ փորձագետին հարկադրելու վերաբերյալ հոդվածում որևէ նշում չկա: Բելառուսի քր. օր.-ի 394-րդ հոդվածում խոշտանգման եղանակը ծաղրուծանակի և բռնություն գործադրելու եղանակներից առանձնացվել և հոդվածի 3-րդ մասում ներկայացվել է որպես առանձնապես ծանրացնող հանգամանք: Առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերված Ուզբեկստանի քր. օր.-ում: Թեպետ ցուցմունք տալուն հարկադրելու վերաբերյալ առանձին հոդված նախատեսված չէ,

սակայն փոխարենը 235-րդ հոդվածն ընդհանուր կերպով քրեորեն պատժելի է համարում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ցուցաբերված անօրինականությունները՝ այդ թվում ցուցմունքներ կորզելու կամ դատավարության մասնակիցների կողմից այլ որևէ գործողություն կատարելու նպատակով: Որոշակի ընդհանրական ձևակերպում է տրված նաև Ադրբեջանի քր. օր.-ի 293-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք դրսևորելու համար: Լատվիայի քր. օր.-ի 294-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մինչդատական քննություն կատարող անձի կողմից հարցաքննության ընթացքում ցուցմունք տալուն հարկադրելու համար՝ առանց նշելու հարցաքննվողի դատավարական կարգավիճակը: Հոդվածը որևէ ծանրացուցիչ հանգամանք չի նախատեսում, իսկ դիսպոզիցիայում նշված են եղանակները՝ բռնության գործադրում, այն գործադրելու սպառնալիք, ծաղրուծանակ կամ այլ եղանակ: Փաստորեն, յուրաքանչյուր եղանակ դիտվում է նույն հարթության մեջ: Նշված հանցագործությանն է վերաբերվում Էստոնիայի քր. օր.-ի 171-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում նախաքննություն կատարող անձի կողմից սպառնալիքի կամ այլ անօրինական գործողություններով ցուցմունք տալուն հարկադրելու համար, իսկ հոդվածի 2-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանքներ, վերաբերվում է հարցաքննվողի հանդեպ բռնություն կամ ծաղրուծանակ կիրառելուն: Տաջիկստանի քր. օր.-ի 354-րդ հոդվածի ձևակերպումը մոտ է հայրենականին, սակայն այն չունի ծանրացուցիչ հանգամանքներ և չի վերաբերվում թարգմանչի կողմից սխալ թարգմանչություն կատարելուն հարկադրելուն:

ՀՀ քր. օր.-ի 349-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից ապացույցներ կեղծելու համար, իսկ 2-րդ մասը՝ հետաքննություն կտարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից քրեական գործով ապացույցներ կեղծելու համար: Որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն հանդիսանում է հոդվածի 2-րդ մասը, իսկ 3-րդ մասը նախատեսում է ծանրացուցիչ հանգամանքները:

Քրեական գործերով ապացույցների կեղծման վտանգավորությունը կայանում է նրանում, որ դրանց առկայության պայմաններում կայացված որոշումների կամ դատավճիռների արդյունքում անմեղ անձինք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության, իսկ հանցանք կատարած անձինք խուսափեն քրեական պատասխանատվությունից: Քրեական դատավարությունում ապացույցները ձևավորվում են հետևյալ երկու բաղկացուցիչ մասերի մեկ ընդհանուր ամբողջությունից՝ ա) փաստական տվյալից, որով հիմնավորվում է հանցագործության դեպքը, անձի մեղավորությունը դրանում կամ հակառակը և այլն, բ) այդ փաստական տվյալի աղբյուրից⁷³:

Իսկ տեսության մեջ ապացույցների կեղծումը բաժանվում է երկու խմբի՝ 1) ինտելեկտուալ կեղծիք, երբ ամբողջովին նոր ապացույց է ստեղծվում՝ այդ թվում արդեն իսկ եղած իրական ապացույցը նոր, կեղծ ապացույցով փոխարինելու նպատակով, 2) նյութական կեղծիք, երբ եղած իրական ապացույցը փոփոխությունների է ենթարկվում⁷⁴: Իսկ կեղծիք կարելի է կատարել տարբեր եղանակներով՝ ջնջումով, քերվածքով, իրեղեն ապացույց հանդիսացող առարկան մեկ այլ առարկայով փոխանակելով և այլն: Հետաքննություն կտարող անձը, քննիչը և դատախազն իրավունք ունեն ինքնուրույն ապացույցներ կցել քրեական գործին, ուստի հողվածի 2-րդ մասով հանցանքն ավարտված է համարվում նրանց կողմից այդ կեղծ ապացույցը գործին կցելու պահից: Նշենք, որ գրականության մեջ կա նաև կարծիք, որ հանցանքն ավարտված է համարվում այդ ապացույցը հենց կեղծելու պահից⁷⁵, սակայն կարծում ենք, որ առաջին տարբերակն առավել ճիշտ է, քանի որ կեղծված ապացույցն առանց գործին կցելու չի կարող վնաս պատճառվել արդարադատության շահերին: Սուբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ, շարժառիթը կամ նպատակը էական չէ, սակայն ակնկալվում է, որ այն կարող է լինել նաև շահադիտական, ինչն էլ տվյալ հանցանքը կդարձնի որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն: Հողվածի 2-րդ մասի սուբյեկտը

⁷³ Տե՛ս Տե՛ս Скосарев В.В., Նշվ. աշխ., էջ 771

⁷⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք. հատուկ մաս», էջ 902:

⁷⁵ Տե՛ս Տե՛ս Скосарев В.В., Նշվ. աշխ., էջ 771:

հատուկ է, որպես այդպիսիք կարող են հանդիսանալ միայն հետաքննություն կտարող անձը, քննիչը, դատախազը կամ պաշտպանը:

Հետևաբար այլ պաշտոնատար անձանց կողմից (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ, դատավոր) կատարված համանման արարքները որակվում են որպես պաշտոնեական կեղծիք, իսկ տուժողի, վկայի կամ մեղադրյալի դեպքում այն որակվում է որպես փաստաթղթի կեղծիք: Ինչպես արդեն նշվեց, հողվածի 3-րդ մասը նախատեսում է ծանրացուցիչ հանգամանքները, դրանք են՝ նույն արարքը, որը կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության դեպքով կամ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ: Այստեղ թերևս անդրադարձ կատարենք ծանր հետևանքներին, որպիսիք կարող են լինել ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը, անձի ինքնասպանությունը, երկար ժամանակով անձին կալանքի տակ պահելը և այլն: Եթե որպես ծանր հետևանք ակնհայտ անմեղ անձը ենթարկվել է քրեական պատասխանատվության կամ անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից, ապա նման դեպքերում արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ, բայց այս դեպքում ևս, ինչպես արդեն բարձրաձայնվել է ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, որպես հանցագործություն, սույն գլխում քննարկելու շրջանակներում, առաջանում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի խախտում, քանի որ ևս մեկ անգամ պետք է արձանագրենք, որ այդ հանցագործությունների (ապացույցների կեղծիքի և ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու) համակցությամբ արարքը որակելու դեպքում անձը նախ քրեական պատասխանատվության է ենթարկվում ապացույցների կեղծման համար և հետո նաև ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու ծանրացուցիչ հանգամանքի՝ մեղադրանքի արհեստական ապացույցների ստեղծման համար, որը կարող է դրսևորվել նաև դրանց կեղծմամբ: Ուստի կրկին պետք է բարձրաձայնել ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու այդ ծանրացուցիչ հանգամանքի վերացման անհրաժեշտության մասին:

Քննարկվող հանցագործությունը գրեթե նույն ձևակերպմամբ է տրված նաև ՌԴ քր. օր.-ի 303-րդ հոդվածում: Տարբերությունը հողվածի 1-ին մասում է, ուր նշված չէ նաև

վարչական դատավարությունը և 3-րդ մասով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքի մեջ է, որտեղ ՌԴ քր.օր.-ի ձևակերպման մեջ նշված չէ մեղքի կոնկրետ տեսակը, այնինչ մեր հայրենական տարբերակում այն նշված է և պահանջում է մեղքի անզգույշ տեսակը: Ռուսական գրականության մեջ այդ առիթով նշվում է, որ ծանր հետևանքների առումով հանցավորի սուբյեկտիվ վերաբերմունքը, որպես կանոն, անուղղակի դիտավորությունն է, թեպետ չի բացառվում նաև, որ այն լինի ուղղակի դիտավորություն⁷⁶: Կարծում ենք, որ այս կապակցությամբ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով մեր հայրենական օրենսդրական ձևակերպումն առավել ճիշտ է: Հոդվածի 4-րդ մասը վերաբերվում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու համար լիազորված անձի կողմից օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների կեղծմանը: Ադրբեջանի քր. օր.-ի 294-րդ հոդվածում նշված հանցագործությունը ՌԴ քր. օր.-ի նույն ձևակերպումն ունի, սակայն բացակայում է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների կեղծմանը վերաբերվող նորմը: Ռուսական նույն ձևակերպումն է առկա նաև Տաջիկստանի քր. օր.-ի 359-րդ հոդվածում, որտեղ, սակայն, հայրենական օրենսդրական ձևակերպման օրինակով ծանր հետևանքների նկատմամբ նշված է մեղքի կոնկրետ ձևը՝ անզգույշությունը և կրկին բացակայում է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների կեղծմանը վերաբերվող նորմը: Բելառուսի քր. օր.-ի 395-րդ հոդվածի ձևակերպումը նույնպես նման է հայրենական ձևակերպմանը՝ բացառությամբ որոշ տարբերությունների: Այսպես, հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում ոչ միայն քաղաքացիական, այլ նաև տնտեսական գործով ապացույցների կեղծիքի համար: Հոդվածի 2-րդ մասի սուբյեկտ է համարվում նաև դատավորը, իսկ 3-րդ մասում, որպես ծանրացուցիչ հանգամանք, նախատեսված է միմիայն ծանր հետևանքների առաջացումը և այն վերաբերվում է միայն հոդվածի 2-րդ մասին: Լատվիայի քր. օր.-ի 289-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում դատավորի կամ մինչդատական քննություն իրականացնող անձանց կողմից ակնհայտ կեղծ ապացույցների ստեղծման կամ ապացույցների քողարկման համար, իսկ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է ծանրացուցիչ հանգամանքը, այն է՝ արարքը, որ կատարվել է

⁷⁶ Ст'а Скокарев В.В., Նշվ. աշխ., էջ 773:

ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով: Ղազախստանի քր. օր.-ի 348-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ոչ միայն քաղաքացիակն և քրեական գործերով, այլև վարչական գործերով, ինչպես նաև օպերատիվ հետախուզական նյութերի կեղծման համար: Ուկրաինայի, Ուզբեկստանի և Էստոնիայի քր. օր.-ում բացակայում է սույն հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը:

ՀՀ քր. օր.-ի 351-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու համար: Սուբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է մեղքի դիտավորյալ ձևով, իսկ շարժառիթը կարող է հանդիսանալ շահադիտական, ինչն էլ տվյալ հանցանքը դարձնում է որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն:

Քննարկվող հանցագործությունը տառացիորեն նույն ձևակերպումն ունի նաև ՌԴ քր. օր.-ի 300-րդ հոդվածում, Ադրբեջանի քր. օր.-ի 291-րդ հոդվածում, Ղազախստանի քր. օր.-ի 345-րդ հոդվածում և Տաջիկստանի քր. օր.-ի 360-րդ հոդվածում: Բելառուսի քր. օր.-ի 399-րդ հոդվածը հայրենական նույն ձևակերպումից բացի 2-րդ մասով նախատեսում է նաև ծանրացուցիչ հանգամանք՝ արարքը որը կատարվել է այնպիսի անձի հանդեպ, ով կասկածվել կամ մեղադրվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ: Ղրղզստանի քր. օր.-ում թեպետ նույնանուն հանցագործություն չկա, սակայն առկա է համանման մեկ այլ հանցագործության ամրագրում. 323-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական գործի հարուցումը ապօրինի մերժելու համար, որի դիսպոզիցիան ունի հետևյալ բովանդակությունը. քննիչի կամ դատախազի կողմից քրեական գործի հարուցման ակնհայտ ապօրինի մերժումը, ինչպես նաև քրեական գործի վարույթի ապօրինի կարճումը, որը վնաս է պատճառել անձի, հասարակության կամ պետության շահերին: Ուկրաինայի, Լատվիայի, Էստոնիայի, Ուզբեկստանի քր. օր.-ում բացակայում է սույն հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը:

« քր. օր.-ի 352-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար:

Դատավճիռը և վճիռն այն ակտերն են, որոնք ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվում են գործն ըստ էության լուծելու համար: 352-րդ հոդվածի իմաստով այլ դատական ակտեր են համարվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատավարական փաստաթղթերը, որոնք էականորեն ազդում են գործի լուծման համար կամ շոշափում են անձի կարևոր իրավունքներն ու ազատությունները, օրինակ խափանման միջոցի ընտրության կամ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացնելու մասին որոշումները: Հանցագործությունը վերաբերվում է նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից կայացվող որոշումներին: Դատական այն ակտերը, որոնք չեն ազդում գործն ըստ էության լուծելու հետ և կազմակերպչական բնույթ են կրում, սույն հանցագործությանը չեն վերաբերվում: Դատավճիռը, որոշումը կամ դատական այլ ակտը համարվում է արդար, եթե այն համապատասխանում է օրենքի պահանջներին, հիմնավորված և օբյեկտիվ է: Ահա հենց այս պայմաններից մեկի բացակայությունն էլ հանգեցնում է անարդար դատական ակտի կայացմանը⁷⁷: Անարդար է համարվում դատական այն ակտը, որը կայացվում է նյութական և դատավարական իրավունքների կոպիտ խախտմամբ: Այդպիսիք են համարվում օրինակ արարքին սխալ իրավաբանական գնահատական տալը, որի արդյունքում անմեղ անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության կամ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, ակնհայտ մեղմ կամ խիստ պատժի նշանակումը և այլն: Սակայն դատավարական ոչ բոլոր նորմերի խախտումներն են հանգեցնում այս հանցագործության առաջացմանը, օրինակ դատական նիստի արձանագրության բացակայությունը չի ազդում գործն ըստ էության լուծելու վրա, հետևաբար չի էլ առաջացնում քր. օր.-ի 352-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը: «Վերաքննիչ կամ «Վճռաբեկ դատարանների կողմից կայացված որոշումները համարվում են անարդար, եթե դրանցով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերն անհիմն թողնվում են

⁷⁷Տե՛ս Скоцаев В.В., Նշվ. աշխ., էջ 774:

անփոփոխ կամ բեկանվում են: Հանցագործությունն ավարտված է համարվում ոչ թե հանցավորի, այսինքն սույն հանցագործության հատուկ սուբյեկտ հանդիսացող դատավորի կողմից այդ ակնհայտ անարդար դատական ակտը ստորագրելու, այլ այն վերջինիս կողմից դատական նիստերի դահլիճում հրապարակելու պահից: Պետք է փաստել, որ դատավորը պետք է ուղղակի դիտավորությամբ գիտակցի, որ իր կողմից կայացված ակտն անարդար է: Հակառակ դեպքում, եթե կայացված անարդար դատական ակտն ուղղակի սխալի արդյունք է, ապա համապատասխան հատկանիշների դեպքում արարքը որակվում է որպես պաշտոնեական անփութություն: Օրենսդիրը հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է դիտում շարժառիթը՝ շահադիտական կամ այլ անձնական դրդումները, ինչպիսիք կարող են լինել խանդը, վրեժը և այլն: Ընդ որում, եթե դատավորը նաև կաշառք է ստացել, ապա արարքը որակվում է համակցությամբ: Այս հանցագործությունը նույնպես համարվում է որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն:

Ի տարբերություն հայրենական ձևակերպմանը՝ ՌԴ քր. օր.-ի 305-րդ հոդվածի դիսպոզիցիայում նշված չէ շարժառիթը, իսկ հոդվածի 2-րդ մասում նշված են ծանրացուցիչ հանգամանքները, դրանք են՝ նույն արարքը, որը կապված է ազատազրկման կամ այլ ծանր հետևանքներ հանգեցնող դատավճռի կայացման հետ: Ուկրաինայի քր. օր.-ի 375-րդ հոդվածի 2-րդ մասով տրված են հետևյալ ծանրացուցիչ հանգամանքները. ծանր հետևանքների առաջացում, շահադիտական դրդումներ կամ անձնական այլ շարժառիթներ: Ծանր հետևանքների առաջացման վերաբերյալ, ի տարբերություն հայրենական ձևակերպման, մեղքի կոնկրետ ձևը նշված չէ, ինչը մեր կարծիքով ճիշտ չէ: Բելառուսի քր. օր.-ի 392-րդ հոդվածի 2-ին մասն ամրագրում է միայն մեկ ծանրացուցիչ հանգամանք՝ ծանր հետևանքների առաջացումը՝ կրկին առանց մեղքի ձևը կոնկրետացնելու: Լատվիայի քր. օր.-ի 291-րդ հոդվածը որոշակիորեն հավաքական պատասխանատվություն է նախատեսում, այն վերաբերվում է ոչ միայն դատավորի կողմից անօրինական դատավճիռ կայացնելուն, այլև մինչդատական քննություն իրականացնող անձի կողմից անօրինական որոշում կայացնելուն: Դիսպոզիցիայում նշված չեն դատական այլ ակտերի մասին, ինչպես նաև չի ամրագրվել անօրինական ակտի կայացման ակնհայտ լինելու հանգամանքը: Հոդվածի 2-րդ մասում նշված են ծանրացուցիչ հանգամանքները՝ նույն արարքը, որը

կատարվել է անձնական նպատակներով կամ վերաբերվում է անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով կամ ապացույցները կեղծելով: Էստոնիայի քր. օր.-ի 169-րդ հոդվածում նշված չէ հանցագործության շարժառիթը և նախատեսված չեն նաև ծանրացուցիչ հանգամանքներ: Ուզբեկստանի քր. օր.-ի 231-րդ հոդվածում նույնպես նշված չէ հանցագործության շարժառիթը, իսկ ծանրացուցիչ հանգամանքներն են մարդու մահը կամ այլ ծանր հետևանքները: Տաջիկստանի քր. օր.-ի 349-րդ հոդվածը նույնաբովանդակ է, որն ունի հետևյալ ծանրացուցիչ հանգամանքները՝ ազատազրկման դատավճռի կայացման, մեղադրանքի արհեստական ապացույցների ստեղծման կամ այլ ծանր հետևանքների առաջացման հետ կապված: Նշված երկրի նույնաբովանդակ ձևակերպումներն են առկա նաև Ադրբեջանի քր. օր.-ի 295-րդ հոդվածում և Ղազախստանի քր. օր.-ի 350-րդ հոդվածում, սակայն ծանրացուցիչ հանգամանքներից բացակայում է մեղադրանքի արհեստական ապացույցների ստեղծումը:

« քր. օր.-ի 353-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատական ակտը դիտավորությամբ չկատարելու համար: Հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (այսուհետ՝ դատական ակտ) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու համար: Քննարկվող հոդվածով պատասխանատվությունն առկա է միայն այն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը չկատարելու դեպքում, որոնցով գործը լուծվում է ըստ էության, օրինակ վարչական գործով որոշումը, քրեական գործով դատավճիռը և այլն: Հետևաբար գործն ըստ էության չլուծող դատական ակտերը (օրինակ՝ վկային բերման ենթարկելու մասին դատարանի որոշումն) ի կատար չածելը չի առաջացնում քր. օր.-ի 353-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը, քանզի դրանով էականորեն չի խախտվում արդարադատությունը: Արարքը կարող է դրսևարվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ, օրինակ պետական մարմնի պաշտոնատար անձը, անտեսելով դատարանի դատավճռով անձին կոնկրետ ժամկետով որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու վերաբերյալ առկա

պահանջը, նրան աշխատանքի է ընդունում այդ պաշտոնում, կամ, ընդհակառակը, կայացված դատավճռով այդ նույն արգելքն անտեսելով չի ազատում տվյալ անձին զբաղեցրած պաշտոնից: Պետք է նշել, որ քննարկվող հանցագործության առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է նախ վերլուծել դատական ակտի բովանդակությունն ու նշանակությունը, այն պետք է լինի օրինական, հիմնավորված, մոտիվացված, պարզ կատարման համար: Դատական ակտում ձևակերպված անորոշ պահանջը կարող է հանգեցնել դրա չիրականացմանը, ինչի պարագայում չի կարող առաջանալ սույն հանցագործությունը՝ անգամ, եթե դատարանի կողմից կրկնակի պահանջ է ներկայացվել այն ի կատար ածելու վերաբերյալ: Հանցագործությունը տևող է, այն սկսվում է դատական ակտում նշված պահանջը չկատարելու պահից: Հանցանքը կատարվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է իր կողմից դատական ակտի պահանջները չկատարելու հանգամանքը, սակայն գնում է այդ քայլին: Այն կարող է արտահայտվել նաև շահադիտական դրդումներով, ինչն առաջացնում է բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն: Հանցագործությունն առկա չէ երեխայի խնամքի կամ անաշխատունակ ծնողի խնամքի նպատակով դատական ակտով սահմանված միջոցների հատկացումից խուսափելու դեպքում, քանի որ այն որակվում է քր. օր.-ի 20-րդ գլխի համապատասխան հոդվածով: Միաժամանակ սույն հանցագործությունն առկա չէ նաև դատապարտյալների կողմից իրենց վերաբերյալ դատական ակտով դրված պահանջը չկատարելու, ինչպես նաև արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելու դեպքում: Այդ արարքները որակվում են որպես արդարադատության դեմ ուղղված այլ հանցագործություններ: Հանցագործության սուբյեկտը հատուկ է, հոդվածի 1-ին մասով այն հանդիսանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձը, ով պարտավոր է կատարել դատական ակտի պահանջը: Հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կազմակերպությունների պաշտոնատար

անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու համար: 2-րդ մասի սուբյեկտ է հանդիսանում ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային և այլ կազմակերպությունների պաշտոնատար անձինք:

ՌԴ քր. օր.-ի 315-րդ հոդվածը սույն հանցագործության վերաբերյալ պատասխանատվություն չի ամրագրում ֆիզիկական անձանց մասով, սակայն, միաժամանակ, պատասխանատվություն է նախատեսում նաև դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար: Ուկրաինայի քր. օր.-ի 382-րդ հոդվածը նույնպես քրեական պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից ինչպես դատական ակտը չկատարելու, այնպես էլ դրա կատարմանը խոչընդոտելու համար: Հոդվածի 2-րդ մասն, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, պատասխանատվություն է նախատեսում նախկինում այս հանցագործության համար դատապարտված անձի կողմից դատական ակտը չկատարելու համար, իսկ 3-րդ մասը վերաբերվում է պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումը չկատարելուն: Բելառուսի քր. օր.-ի 423-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, որոշումը կամ դատական այլ ակտը չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար: Գրեթե նույն ձևակերպումն է առկա նաև Տաջիկստանի քր. օր.-ի 363-րդ հոդվածում: Լատվիայի քր. օր.-ի 296-րդ հոդվածն ընդհանրական և համառոտ ձևակերպմամբ պատասխանատվություն է նախատեսում դատավճիռը կամ դատարանի որոշումը դիտավորյալ չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար: Ուզբեկստանի քր. օր.-ի 232-րդ հոդվածն ունի հետևյալ ձևակերպումը. կոնկրետ գործողությունների կատարման պարտավորություն սահմանող դատական ակտի կատարումից խուսափելը կամ վարչական տույժից հետո դրանց կատարումից ձեռնպահ մնալը կամ դրա կատարմանը խոչընդոտելը: Հոդվածի 2-րդ մասը սահմանում է ծանրացուցիչ հանգամանքը՝ նույն արարքը, որը կատարվել է պաշտոնատար անձի կողմից:

Ղազախստանի քր. օր.-ի 362-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար մեկ տարվա ընթացքում վարչական տույժի ենթարկված անձի կողմից օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, դատական որոշումը կամ դատական այլ ակտը կամ կատարողական ակտը վեց ամսից ավել

տևողությամբ չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար: Հոդվածի 2-րդ մասում նախատեսված են ծանրացուցիչ հանգամանքները՝ նույն արարքը՝ կատարված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից, առևտրային կամ այլ կազմակերպությունների աշխատակիցների կողմից:

Ինչպես արդեն նշվել է սույն պարագրաֆում, որպես արդարադատության դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործություններ են համարվում նաև ՀՀ քր. օր.-ի 332.4 հոդվածի 3-րդ մասով և 342.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքները:

ՀՀ քր. օր.-ի 332.4 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատավորների որակավորման քննության կամ մասնագիտական պատրաստման քննությունների հարցերի գաղտնիությունը խախտելու համար, որի 3-րդ մասում նշված է միակ ծանրացուցիչ հանգամանքը, այն է՝ արարքը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով: Դատավորների որակավորման ստուգման հետ կապված հարցերը կարգավորված են ՀՀ դատական օրենսգրքի 16-րդ գլխով, որն այդ առիթով ամրագրում է սահմանված առանձնահատկություններն ու ընթացակարգերը: Միայն նշված ծանրացուցիչ հանգամանքի կատարմամբ կարող է սույն հանցագործությունը համարվել որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն, երբ պաշտոնատար անձը շահադիտական դրդումներով խախտում է նշված գաղտնիությունը:

ՀՀ քր. օր.-ի 342.1 հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին ապօրինի միջամտելու համար և ունի հետևյալ ձևակերպումը. դատավորների միջև համակարգչային ծրագրի միջոցով իրականացվող գործերի բաշխման գործընթացին միջամտելը՝ բաշխման արդյունքներին վերաբերող տվյալները փոփոխելու նպատակով:

ՀՀ դատական օրենսգրքի 9-րդ գլուխն ամրագրում է դատարաններում գործերի բաշխման ընթացակարգը, ըստ որի՝ դատարանում ստացված գործն անհապաղ մուտքագրվում է Համակարգչային ծրագրում: Մուտքագրված գործերը հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի դատավորների միջև՝ առանց հաշվի առնելու

մուտքագրման հերթականությունը: Նույն ընթացակարգն է սահմանված նաև ՀՀ վերաքննիչ դատարանում գործերի բաշխման կարգի վերաբերյալ: Ընդ որում, եթե գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը համակարգչային ծրագիր են մուտքագրվում և բաշխվում միմյանցից առանձին: Գործերի բաշխման առումով նշված 9-րդ գլուխն ամրագրում է նաև բաշխման առանձնահատկությունները, վերաբաշխման կարգը և այդ առիթով այլ հարցեր: Քր. օր.-ի 342.1 հոդվածի 2-րդ մասն, ի թիվս այլ ծանրացուցիչ հանգամանքների, նախատեսում է նաև հանցանքի կատարումը պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով: Տվյալ պարագայում քննարկվող հանցանքը կարող է համարվել որպես բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործություն, երբ պաշտոնատար անձը շահադիտական դրդումներով միջամտում և խախտում է գործերի բաշխման օրենսդրորեն հաստատված կարգին: Ընդ որում, պաշտոնատար անձի կողմից այդ արարքը շահադիտական դրդումներով կատարելու դեպքում նրա արարքը պետք է որակվի նաև ամրագրված ծանրացուցիչ մյուս հանգամանքով ևս, այն է՝ արարքը, որը կատարվել է շահադիտական դրդումներով:

Այսպիսով, ամփոփելով արդարադատության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունները և դրանց որակման առանձնահատկությունները, առաջարկվում է՝

1) Ցույցերի ժամանակ կամ դատարանի մոտ հավաքված մարդկանց կողմից իրենց կարծիքն արտահայտելը և դատարանից իրենց կարծիքին համապատասխան գործի այդօրինակ ելքով արդյունք ակնկալելը չորակել որպես արդարադատության իրականացմանը խոչընդոտում:

2) Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցանքի պարագայում հանցագործությունն ավարտված պետք է համարել ոչ թե անձին մեղադրանք առաջադրելու, այլ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացնելու պահից:

3) Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցագործությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ անձն ընդհանրապես որևէ

հանցագործություն չի կատարել, այլև այն դեպքում, երբ նրան մեղսագրվում է ոչ թե իր կողմից իրականում կատարված, այլ մեկ ուրիշ՝ ավելի ծանր հանցագործություն:

4) ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքը, այն է՝ տվյալ հանցանքը մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով կատարելը, վերացնել:

5) Ապացույցների կեղծմամբ ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում արարքը որակել համակցությամբ՝ ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածի 1-ին մասով և 349-րդ հոդվածի 2-րդ մասով, եթե առկա չեն այդ հոդվածներով նախատեսված այլ ծանրացուցիչ հանգամանքներ ևս:

6) ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը»:

**ԳԼՈՒԽ 3. ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ԴԻՍՊՈԶԻՑԻԱՅԻՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

§1. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների
կանխարգելման օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների
անհրաժեշտությունը ՀՀ-ում

Բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործություններն այլ կոռուպցիոն հանցագործություններից տարբերվում են դրանք սահմանող նորմերի կիրառման ընթացակարգով, մասնավորապես այն հանգամանքով, որ վարույթն իրականացնող մարմինը համապատասխան դատավարական փաստաթղթերում նշում է ոչ միայն քրեական օրենսգրքի համապատասխան նորմերը, այլև՝ այն նորմատիվ-իրավական ակտերը, որոնց հղում են կատարում տվյալ կոռուպցիոն հանցանքը սահմանող նորմի բլանկետային դիսպոզիցիաները: Սակայն բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների և այլ կոռուպցիոն հանցագործությունների դետերմինացիայի մեխանիզմի, դրանց պատճառական համալիրի, ինչպես նաև ընդհանուր սոցիալական և հատուկ քրեաբանական կանխարգելման միջոցների տեսանկյունից բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունները չունեն որևէ կրիմինալոգիական առանձնահատկություն: Այդ իսկ պատճառով՝ սույն պարագրաֆում մենք կքննարկենք ոչ թե հատկապես բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործությունների, այլ, առհասարակ, կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների անհրաժեշտությունը ՀՀ-ում:

Հայաստանի պատմական տարածքում 11-րդ դարից հետո պետականությունից զրկված Հայաստանը, բնականաբար, չէր կարող ձևավորել արդյունավետ կառավարման ավանդույթներ: Պարսկական, թուրքական և այնուհետև ռուսական կայսրությունների կազմում գտնվող Հայաստանում առավել պետք է արմատավորվեին տիրակալին հաճոյանալու վարքագծի կանոնները, այդ թվում՝ կաշառքի բազմազան

ձևերով, քանզի այդ պայմաններում, այն, ըստ էության, սեփական շահերը պաշտպանելու դյուրին և արդարացված ձև էր: Խորհրդային Հայաստանում կազմավորված պետականությունը, դրան բնորոշ կառավարման ինստիտուտների ձևավորումն իր բոլոր թերություններով հանդերձ Հայաստանի համար պատմական առաջընթաց էր պետականության և կառավարման համակարգերի ձևավորման առումով: Միևնույն ժամանակ, այդ համակարգը ժողովրդավարության գաղափարախոսությունը մատուցում էր իրական ժողովրդավարության հետ անհամատեղելի տոտալիտարիզմի և ավտոկրատիայի համադրությամբ: Համընդհանուր ժողովրդական սեփականությունն իրականում հանդիսանում էր յուրացումների և վատնումների համընդհանուր աղբյուր: Պահանջարկի մշտական անբավարարվածության հետևանքով առկա դեֆիցիտը ձևավորում էր սև շուկա և այդ համակարգի յուրահատուկ ստվերային տնտեսություն, որը բավականաչափ ազդեցիկ մասշտաբային դրսևորումներով, որպես կանոն, գործում էր հենց պետական ձեռնարկությունների ներսում: Վերը նշված գործոնները, խորհրդային ժամանակաշրջանի պետական կառավարման, տնտեսական և այլ ոլորտներում կոռուպցիայի մասին բարձրաձայն խոսելը խստագույն արգելքի (տաբույի) տակ էր դրված: Կաշառակերության առկայությունն այդ տաբուից դուրս էր: Սակայն կոռուպցիան, որպես համակարգին բնորոշ մասշտաբային երևույթ, չէր կարող ընդունվել, քանի որ դա սպառնում էր համայնավարական գաղափարախոսությանն ու համակարգի հիմքերին:

Խորհրդային մտածելակերպի իներցիան խոր ազդեցություն է թողել խորհրդային իրականության մեջ՝ մարդկանց վարքագծի վրա: Հատկապես՝ վնասաբեր այն մտածելակերպը, որ պետական միջոցները հանդիսանում են լրացուցիչ շահույթներ ստանալու՝ բարոյական առումով արդարացված աղբյուր, քանի որ յուրացվում են «ոչ մեկին չպատկանող միջոցները»⁷⁸:

Հայաստանում Խորհրդային Միության տարիներին կառավարման տոտալիտար բնույթը բազմաթիվ սահմանափակումների և արգելքների գոյությունը, բազմաստիճան կառավարման համակարգը, տարատեսակ տնտեսական և կենցաղային խնդիրների

⁷⁸Տե՛ս Астанин В.В. Принципы противодействия коррупции в российском законодательстве // Юридический мир. 2009. №2, էջեր 43–46:

լուծման դեպքում բազմաթիվ ատյաններ անցնելու անհրաժեշտությունը, տարբեր մակարդակներում համաձայնության հասնելը, ավելին, հրապարակայության և պատկան հսկողական մեխանիզմների բացակայությունը ստեղծել էին բարենպաստ միջավայր կոռումպացվածության համար:

Պետականության բացակայության պայմաններում հայ մարդը որոնել է գոյատևման զանազան մեթոդներ և միջոցներ, որոնցից առավել արդյունավետը հանդիսացել է կաշառքը: Այս պարագայում հայերի մոտ արտահայտված կոռուպցիոն դրսևորումները, մի տեսակ, պաշտպանական բնույթ են կրել: Նրանք ստիպված կաշառել են համապատասխան ազգի չինովնիկին՝ գոյատևելու, իր առօրյա կենցաղը և ապրելակերպն ապահովելու և այլ նմանատիպ հարցեր լուծելու համար: Սրանով է պայմանավորված նաև մեր իրականությունում առկա ոչ պետականամետ մտածողությունը: Մեր հասարակության ներկայացուցիչների մի ստվար զանգվածի մոտ սեփական և ընտանեկան շահերը մշտապես գերակա են հասարակական և պետական շահերի նկատմամբ: Նրանց համար առավել կարևոր չափանիշ է ընտանիքի բարեկեցության ապահովումն անկախ պետական կամ հասարակական շահերից:

Ինչպես նշել է պրոֆեսոր Վ.Վ. Լունեևը՝ «...պաշտոնատար անձանց ծախվածության շատ ձևեր, շուկայական հարաբերությունների օգտագործման ընթացքում դուրս եկան դրանց պատկերացման սահմաններից, պաշտոնատար անձինք անցումային շրջանի բովի ներքո ազատվեցին ոչ միայն հասարակական և կուսակցական, այլ նաև պետական իրավական հսկողությունից. նրանց հնարամտությունը, կաշակերությունը և պետական գույքի հափշտակությունները դարձան եկամտի հիմնական և գերակա աղբյուր ժամանակավոր և ոչ կայուն պետական պաշտոնավարման ընթացքում՝ ծնունդ տալով արատավոր գործնական սովորույթների»:⁷⁹

Կոռուպցիայի դեմ պայքար իրականացնելիս հարկ է հաշվի առնել, որ մեր օրերում Հայաստանի կառավարման համակարգի համար, անկախ ենթակայության մակարդակից, բնութագրական են այնպիսի կոռուպցիոն դրսևորումներ, ինչպիսիք են.

⁷⁹Ст'ю Лунеев В. В. Коррупция учтенная и фактическая // Государство и право. 1996. #8, էջեր 83-84:

❖ առևտրային կառույցում, որոնք պետական կամ հանրային ծառայողի հսկողության ներքո են կամ հետաքրքրված են նրա հետ համագործակցությամբ, աշխատանքի փաստացի համատեղումը,

❖ պետական պաշտոնյայի կողմից կոմերցիոն կառույցի ստեղծումն ու կազմակերպումը, որի պարագայում օգտագործվել է իր կարգավիճակը, այդ կառույցների կառավարմանը մասնակցելը, նրանց արտոնյալ պայմանների ապահովումը,

❖ պետական կազմակերպությունների մասնավորեցման գործընթացում ծառայողական դիրքի օգտագործումը՝ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը կամ զգալի բաժնեմասին տիրանալը հենց պաշտոնատար անձի, նրա մերձավորների կամ այլ անհատների կողմից, որոնց հետաքրքրությունների շրջանակում գործում է պաշտոնատար անձը,

❖ առևտրային կազմակերպություններին անձնական կամ այլ շահադիտական դրդումներով ֆինանսների և վարկերի անօրինական տրամադրումը, որոնք նախատեսված են համընդհանուր պահանջների համար,

❖ վարկերի և փոխատվությունների ստացման, արժեթղթերի, անշարժ և այլ գույքի ձեռքբերման համար, իրավական ակտերով չնախատեսված առավելություններ օգտագործելը,

❖ իրեն հատկացված ծառայողական բնակարանի, տրանսպորտային միջոցների և կապի, էլեկտրոնային տեխնիկայի, դրամական միջոցների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գույքի օգտագործումը՝ անձնական կամ խմբային շահերից ելնելով,

❖ ծառայությունից ելնելով՝ թողտվության և հովանավորչության, ինչպես նաև իր պաշտոնեական պարտականությունների կատարման համար կամ դրա հետ կապված գումարի տեսքով պարգևատրումներ, այլ նյութական արժեքներ և ծառայություններ ստանալը, այդ թվում՝ քողարկված ձևով անօրինական հավելավճարների, կոմիսսիոն վճարների, ակնհայտ ուռճացված հոնորարների, հենց պաշտոնատար անձին կամ նրա ընտանիքի անդամներին իբր կատարված աշխատանքների համար վճարումների, գործնական պատրվակով արտասահման ուղևորությունների, արտասահմանում անշարժ գույքի ձեռքբերման, նրանց համար օտարերկրյա բանկերում բանկային

հաշիվներ բացելու, աննախադեպ երկարաժամկետ վարկերի տրամադրման ճանապարհով և այլն⁸⁰:

Գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք հնարավորություն չեն տալիս նախաքննական մարմնին բացահայտելու նման բնույթի հանցագործությունները, օրինակ.

1. կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը,

2. այդ բնույթի հանցագործությունների վերաբերյալ ոչ բավարար տեսական գիտելիքները:

Այս ոլորտի մասնագետների համար հատուկ մասնագիտացած ուսուցման բացակայությունը հանգեցնում է կոռուպցիայի ու փողերի լվացման բնագավառում իրազեկվածության ցածր մակարդակին, ինչպես նաև այս հանցագործությունների դեմ պայքարի անարդյունավետությանը:

3. Անհրաժեշտ հարցումներ են արվում արտերկրի համապատասխան մարմիններին՝ դրսից, մասնավորապես՝ օֆշորային գոտիներից փոխանցված գումարների պատկանելությունը, ձեռքբերման, ծագման աղբյուրները պարզելու համար: Սակայն, որպես կանոն, դրանք մնում են անպատասխան կամ էլ տևական ձգձգումներից հետո պատասխաններն ուղարկվում են ոչ պատշաճ՝ թերի, ինչը հնարավորություն չի տալիս եզրահանգել փոխանցումների հանցավոր բնույթի վերաբերյալ և վերջնական իրավական գնահատական տալ անձի գործողություններին:

4. Առավել դժվարություններ են ծագում նյութերի նախապատրաստման ընթացքում, երբ քրեական գործի հարուցման համար հիմքերը դեռևս բավարար չեն, քանզի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն արգելվում է հաշվեհամարի տիրոջ կամ գործարքների մասին տեղեկություն տրամադրել առանց դատարանի որոշման, որը կարող է վերցվել միայն քրեական գործի հարուցման, կասկածյալի կարգավիճակի կամ առաջադրված մեղադրանքի առկայության պայմաններում:

⁸⁰Տե՛ս Ա. Շ. Ծաղիկյան, Գ. Մ. Սարգսյան «Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը», «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ, «Օրենք և իրականություն» ՍՊԸ տպարան, Երևան, 2010, էջ 125:

Թերևս ճիշտ կլինի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում կատարել լրացում, փոփոխում, որը հնարավորություն կտա իրավապահ մարմիններին ձեռք բերել հաշվեհամարների տերերի և գործարքների մասին տեղեկատվություն նաև մինչ հաշվեհամարի տիրոջը կասկածյալի կարգավիճակ տալը կամ մեղադրանք առաջադրելը:

5. Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հայտնաբերման համար խուզարկություն կատարելիս դարձյալ պահանջվում է դատարանի որոշում: Բացառություններ չեն նախատեսվում նույնիսկ անհապաղ դեպքերում, երբ խուզարկության հապաղման հետևանքով հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները կարող են թաքցվել, իսկ հանցագործը կարող է փախուստի դիմել: Երբեմն կարող է արդյունք չտալ նաև դատարանի արագացված որոշումը:

Նման անհետաձգելի դեպքերում հնարավոր լուծում կարող է լինել խուզարկության իրականացումից հետո դատական հաստատումը (ի դեպ, որի մասին ժամանակին առաջարկել է նաև ԳՐԵԿՈ-ի խումբը):

Նշենք, որ «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում մասնակից պետությունները կարող են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք իրավասու մարմիններին կոռուպցիայի դեմ պայքարում հնարավորություն կտան կիրառել օպերատիվ-հետախուզական հատուկ մեթոդներ:

6. Ապացույցների հավաքման գործընթացում գոյություն ունեցող այդ և այլ խոչընդոտներ հնարավորություն են տալիս հանցագործներին թաքցնել հանցավոր եկամուտները և խուսափել պատասխանատվությունից, ինչը հանգեցնում է կոռուպցիայի դեմ պայքարի ապարդյուն ջանքերի ու նաև անարդյունավետ քննության⁸¹:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գրականության մեջ գոյություն ունի տեսական մոտեցում, ըստ որի հիմնավորվում է նաև կոռուպցիայի դրական ազդեցությունը: Մասնավորապես, այս մոտեցման կողմնակիցների հիմնավորող փաստարկներից է այն, որ կոռուպցիան հնարավորություն է ընձեռում շրջանցել պետական

⁸¹Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիայի սահմանման, դրսևորման առանձնահատկությունների և դրա դեմ պայքարի հիմնական միջոցների մասին», Ա.Միրզոյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 78:

կարգավորման հետևանքով ներմուծված անհարկի սահմանափակումները, և դրանով իսկ կոռուպցիան նպաստում է ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և օգտագործման արդյունավետությանը: Այսպիսով, հանգում են այն եզրակացության, որ կոռուպցիոն մեխանիզմները կարող են օգտակար լինել հասարակության մեծամասնության համար, որով էլ պայմանավորված է կոռուպցիայի համատարած կայունությունը: Հետևապես, կոռուպցիան ունի նաև «օպտիմալ մակարդակ», որը խթանում և ոչ թե խաթարում է առաջընթացը⁸²:

Կոռուպցիայի դեմ պայքարում, ի թիվս այլ գործոնների, կարևոր նշանակություն ունեն այդ երևույթի օրենսդրական և կազմակերպչական բնույթի խնդիրների վեր հանումը⁸³: Նախ անդրադառնանք օրենսդրական որոշ կարգավորումների անհրաժեշտությանը: Ինչպես հայտնի է գիտագործնական անհրաժեշտ հիմնավորումներով ուղեկցվող օրենսդրական ակտերի բացակայությունը պարարտ հող է կոռուպցիոն ռիսկերի համար: Ցանկացած պայքար ցանկացած երևույթի դեմ իրավական պետությունում պետք է իրականացվի հստակ օրենսդրական հիմքերի վրա: Այս տեսանկյունից առաջնահերթ է հակակոռուպցիոն օրենսդրության մշակումն ու ընդունումը, առանց որի նշված պայքարը կդառնա պայքար՝ ուրվականների հետ: Կոռուպցիայի դեմ պայքարը հատկապես մեծ թափ ստացավ 21-րդ դարի սկզբին: Հենց այդ էտապից սկսած՝ կոռուպցիայի դեմ պայքարը, ՀՀ օրենսդրության կոռուպցիոն զինաթափման, վերջինս կոռուպցիոզեն երևույթներից մաքրելու խնդիրը այլևս դադարեց միայն զուտ նպատակ լինելուց: Պրոբլեմն այդուհետ գտնվում էր նաև մասնագետ-փորձագետների ուշադրության կենտրոնում, որի պարագայում կոռուպցիայի դեմ պայքարին հաղորդվեց որակական նոր բնույթ:

⁸²Տե՛ս Քառյան Ա.Վ., «Կոռուպցիա» բացատրական ձեռնարկ, «Գասպրինտ» տպագրատուն, Երևան 2005թ. էջ 22:

⁸³Կոռուպցիայի կանխարգելման կազմակերպչական և իրավական հիմքերի մասին առավել մանրամասն տե՛ս Васильев Ф.П. Вопросы борьбы с коррупцией и ее проблемы // Безопасность бизнеса, 2009, № 4; Возжеников А.В., Малюткин А.Б. Стратегия борьбы с коррупцией: зарубежный опыт // Социология власти. – 2008. № 1. էջեր 90–98; Волков А.Н. Проблемы и перспективы развития законодательного обеспечения противодействия коррупции / А.Н. Волков, О.В. Дамаскин // Современное право. – 2011. № 4. էջեր 46 – 50: Гостева С.Р. Противодействие коррупции – важнейшее условие укрепления национальной безопасности России // Юридический мир. – 2011. № 1. էջեր 12–20; Егорова Н.А. О национальном плане противодействия коррупции // Уголовное право. – 2008. № 6. էջեր 88 – 93:

Հնարավոր է երկու հիմնական ճանապարհ նորմատիվ իրավական ակտերի կոռուպցիոգենության նվազեցման համար: Առաջին ճանապարհը պայմանավորված է այդ ակտերի ընդհանուր որակի կտրուկ բարձրացմամբ, որի պարագայում առյուծի բաժինը, իհարկե, պատկանում է օրինաստեղծ օղակների մասնագիտական որակների բարձրացմանը:

Մյուս ճանապարհը ևս կապված է ակտերի որակի բարձրացման հետ, սակայն այս պարագայում աշխատանքի հիմնական շեշտադրումը պետք է կատարվի ակտերից կամ դրանց նախագծերից կոռուպցիոն ռիսկերի կամ դրանց հնարավոր աղբյուրների վերհանման և վերացման վրա, որը պետք է կրի նպատակամղված, պարբերական և համակարգված բնույթ:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում առաջընթաց պետք է համարել Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 22.10.2009 թվականի N 1205-Ն «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը: Վերը նշված որոշման ընդունման համար հիմք հանդիսացավ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածի 3-րդ մասը⁸⁴:

Կոռուպցիայի կանխարգելման ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման ուղղությամբ ընդունվել են ավելի քան հիսուն օրենքներ և ենթօրենսդրական ակտեր, որոնց հիման վրա պետական տարբեր բնագավառներում կատարվել են համապատասխան փոփոխություններ, և ձևավորվել են նոր կառույցներ ու ստորաբաժանումներ:

Հստակեցվեցին, ամբողջականացվեցին և միջազգային կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցվեցին «պաշտոնատար անձ» հասկացությունը, կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտները, պատժաչափերը, կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների, օգուտների բռնագանձման մեխանիզմները:

⁸⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության 22.10.2009 թվականի N 1205-Ն որոշումը՝ «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին», ՀՀՊՏ 2009.11.04/55(721):

ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածում «պաշտոնատար անձ» հասկացությունը տրված է սահմանափակ մեկնաբանությամբ: Ըստ էության, այդ հասկացությունից դուրս էր մնացել պետական պաշտոնյաների մի զգալի շրջանակ: Այսպես, քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձինք են՝ մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Թվում է, թե օրենսդրական այս բնորոշումը սպառիչ է ու հստակ, սակայն իրականում վերը նշված ձևակերպումները բացառապես անհարկի հարցադրումներ են առաջացնում: Այսպես, չի կարելի է հստակ ու միանշանակ ասել, թե ինչ կարելի է հասկանալ «կազմակերպական-տնօրինչական», «վարչատնտեսական» հասկացությունների տակ: Դրանք խորհրդային իրավական համակարգում հարցադրումներ չեն առաջացրել, որովհետև ԽՍՀՄ Գերագույն դատարանը հանգամանորեն տվել է պարզաբանումներ, որոնք պարտադիր իրավական նշանակություն են ունեցել: Մինչդեռ, նախ, այդ պարզաբանումները այլևս հասկանալի պատճառներով չունեն համարժեք իրավական նշանակություն, իսկ որևէ այլ մարմնի այդպիսի լիազորությամբ օժտելը համահունչ չի լինի մեր պետաիրավական համակարգին:

Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ վերը նշված հասկացությունների մեկնաբանության շուրջ դեռևս չեն ձևավորվել միասնական մոտեցումներ, ինչը խիստ անհանգստացնող է, եթե նկատի ունենանք, որ խոսքը արարքների որակման և կոնկրետ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդրի մասին է: Անհարկի տարամեկնաբանությունների տեղիք տվող եզրույթների առկայությունը վտանգավոր է հենց կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, քանի որ դա ակնհայտ հարմար սողանք է քրեական հետապնդում իրականացնող

պաշտոնյաների և դատավորների համար՝ սուբյեկտիվ գնահատականների միջոցով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Հարց է ծագում. 2003թ. օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված քրեական օրենսգրքում սահմանափակվել է, արդյոք «պաշտոնատար անձ» հասկացության բովանդակությունը: Պատասխանը հետևյալն է. ձևական առումով՝ ոչ, բովանդակային առումով՝ այո: Ինչպիսիք այն է, որ նոր օրենսգրքում հիմք է ընդունվել նախկին խորհրդային քրեական օրենսգրքում տեղ գտած եզրույթը: Սակայն, եթե դա ընդունելի էր հենց խորհրդային իրավական համակարգի տեսանկյունից (պաշտոնատար անձ էր համարվում նաև պետական ձեռնարկությունում վարչական լիազորություններով օժտված անձը), ապա դա բացարձակապես կիրառելի չէր նոր իրավական համակարգում: Ցավոք, օրենսգիրքը մշակելիս հաշվի չի առնվել այն պարզ փաստարկը, որ խորհրդային իրավական համակարգին բնորոշ եզրույթները չեն կարող ընդունելի լինել այնպիսի իրավական համակարգում, որը ձեռնարկատիրության ոլորտում բացառում է իշխանական լիազորություններով օժտված «պաշտոնատար անձի» գաղափարը:

2008թ.-ին քրեական օրենսգրքի լրացումներով նախատեսվեցին նաև երկու նոր հանցակազմեր ևս, այն է՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը (311¹ հոդված) և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը (312¹ հոդված)՝ տարանջատելով կաշառելու ակտիվ և պասիվ տեսակներն ըստ այն չափանիշի, թե դրա սուբյեկտը պաշտոնատար անձն է, թե հանրային ծառայողը: Այդ նոր հանցակազմերում ներառվել են արդեն այն սուբյեկտները, որոնք դուրս էին մնացել «պաշտոնատար անձ» հասկացության շրջանակներից՝ քրեական օրենսգրքի 311-րդ և 312-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի առումով⁸⁵:

Քրեական օրենսգրքի 311¹ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողներ են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով

⁸⁵Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Օրենսդրական բարեփոխումների նշանակությունը կոռուպցիայի դեմ պայքարում», Գ.Դանիելյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 14:

նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում գտնվող անձինք⁸⁶:

Կոռուպցիայի քրեականացման տեսանկյունից առանցքային հարցերից մեկը կոռուպցիոն հանցագործության սուբյեկտի՝ «պետական պաշտոնատար անձ» հասկացության շրջանակների բացահայտումն է: Դրանց շրջանակը, որը տեղ է գտել ՀՀ քր. օր-ում «պաշտոնատար անձ» և «հանրային ծառայող» հասկացությունների բացահայտման ներքո, ընդհանուր առմամբ, համահունչ է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ ենթակետում տրված սահմանմանը⁸⁷ և միջազգային մոտեցումներին՝ չնայած, որ փաստորեն առանձնացվել են նույնական օբյեկտիվ կողմով, բայց տարբեր անվանումներով հանցակազմեր: Պետք է ընդգծել, որ միջազգային փաստաթղթերի առումով «պաշտոնատար անձ» հասկացությունը, ըստ էության ներառում է նաև հանրային ծառայողներին: Ընդ որում, «պաշտոնատար անձ» հասկացության առումով, նշանակություն չունի նաև այն հանգամանքը, թե անձը վճարովի հիմունքներով է զբաղեցնում այդ պաշտոնը, թե՛ ոչ: Քր. օր-ում տեղ գտած բնորոշումները չեն հստակեցնում այս հանգամանքը, ինչն ինքնին կարևոր է⁸⁸:

Տնտեսական կոռուպցիայի կանխարգելման համար մասնավորապես անհրաժեշտ է.

1. անհրաժեշտ է վերացնել ծախսերը հիմնավորող կեղծ փաստաթղթերի ձեռքբերման պահանջարկը, որի հիմնական պատճառներից է ապրանքների ներկրումը ՀՀ կեղծ ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց միջոցով: Նման անձինք (որպես կանոն՝ առանց մշտական բնակության վայրի, հարբեցողությամբ զբաղվող, նախկինում նմանատիպ հանցագործությունների համար դատապարտված անձինք) հավաքագրվում են հատուկ այդ նպատակով և հարկային հաշվետվություններ չեն ներկայացնում, հաշվապահական հաշվառում չեն վարում: Արդյունքում՝ իրական ապրանքատերերի մոտ գոյանում է սովերում մնացած ապրանքի զանգված, որն իրացվում է շուկայում, և դրա մի մասի ձեռքբերումն առանձին դեպքերում անհրաժեշտ

⁸⁶Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 26.05.2011թ., ՀՀՊՏ 2011.06.17/37(840):

⁸⁷Տե՛ս ՄԱԿ-ի 2003թ. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ՀՀՊՏ 2006.11.15/58(513):

⁸⁸Տե՛ս Ա. Շ. Ծաղիկյան, Գ. Մ. Սարգսյան: Նշվ. աշխ., էջ 94:

է լինում փաստաթղթավորել: Ուստի, կեղծ փաստաթղթերի տրամադրման երևույթը հնարավոր չէ իսպառ վերացնել՝ առանց վերոհիշյալ արատավոր երևույթի դեմ գործուն պայքար մղելու: Հետևապես, քանի դեռ հրապարակում առկա է հիշյալ հիմնախնդիրը, շուկայում առանց որևէ խոչընդոտի գործում են այնպիսի վաճառակետեր (շինանյութի տոնավաճառներ և այլն), որտեղ ապրանքը բոլորի համար ակնհայտ կերպով իրացվում է առանց համապատասխան փաստաթղթերի, ապա, մեր կարծիքով, անհրաժեշտ է թեկուզ որոշակի ժամանակահատվածում պարզեցնել ապրանքների ձեռքբերման կարգը, չպահանջել դրանց ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր:

2. Անհրաժեշտ է հստակ կարգավորել ավելացած արժեքի հարկի վճարումների մեխանիզմը, որպեսզի բացառվեն դրանից հետագայում խուսափելու, ներկայումս առկա բազմաթիվ հնարավորությունները: Մասնավորապես, 500.000 ՀՀ դրամը գերազանցող գործարքների դեպքում կարելի է սահմանել գործարքի հաշվապահական ձևակերպմանը զուգահեռ գործարքի կատարման ընթացքում մատակարարի համար ավելացած արժեքի հարկի վճարման պարտադիր պահանջ: Ընդ որում, գործարքը երկու կողմերի համար էլ դիտել օրինակելի ձևակերպված միայն այն պարագայում, երբ հաշիվ-ապրանքագրերին կցվեն ավելացած արժեքի հարկի վճարումը հավաստող փաստաթղթային հիմքեր: Ավելացած արժեքի հարկի վճարումներն անհրաժեշտ է կատարել դրա համար հատուկ նախատեսված բանկային հաշիվների վրա:

3. Օրենսդրորեն սահմանել տնտեսվարող սուբյեկտների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման համար պարտադիր համարվող որոշակի ցենզեր:

ա. Պարտադիր կարգով պահանջել նյութական երաշխիք, որպեսզի տնտեսվարող սուբյեկտն ինչպես պետական գրանցման պահին, այնպես էլ տնտեսավարման ամբողջ ժամանակահատվածում բանկում ունենա որոշակի գումար, լինի որոշակի գին ունեցող անշարժ գույքի սեփականատեր, կամ պետական գրանցումը կատարվի շուկայում որոշակի հեղինակություն վայելող ձեռներեցների, իրավաբանական անձանց ղեկավարների երաշխիք-նամակներով՝ համաձայն որոնց երաշխավոր վողի բացասական գործունեության դեպքում նրանք կրեն նյութական պատասխանատվություն: Կազմակերպությունների (իրավաբանական անձանց) ղեկավարների համար սահմանել անմիջական նյութական պատասխանատվություն՝

հարկային պարտավորությունները չկատարելու համար, ինչը ներկայումս բացակայում է. կատարված բազմամիլիոն հարկային պարտավորություններ ունեցող ընկերություններ որոշ պաշտոնյաների թեթև ձեռքերով դատարանների որոշումներով ճանաչվում են սնանկ, բռնագանձումը տարածվում է ընկերության գույքի նկատմամբ (որը պրակտիկայում, որպես կանոն, բացակայում է), իսկ դրանց ղեկավարները և հիմնադիրները անմիջական գույքային պատասխանատվություն չեն կրում:

բ. Ստեղծել տեղեկատվական համակարգչային բանկ, որում ներառված լինեն այնպիսի տվյալներ, թե այս կամ այն անձի (հիմնադրի) անվամբ կա՞ն արդյոք արդեն իսկ գրանցված ընկերություններ, միևնույն անձը անցնու՞մ է արդյոք որպես անհատ ձեռնարկատեր, հիշյալ անձանց մանրամասն անկետային տվյալները, այդ թվում՝ ինչպես գրանցման, այնպես էլ փաստացի բնակության հասցեները, հեռախոսահամարներ ըր, դատվածությունը, հարազատական կապերը (մինիմում ընտանիքի անդամները): Գրանցման չենթարկել այնպիսի անձանց, երբ նախկինում դատապարտված են եղել հարկային հանցագործության համար, որով, ընդունենք, վերջին 5 տարվա ընթացքում բյուջեի նկատմամբ առկա են դեռևս չկատարված, չմարված պարտավորություններ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միևնույն անձի անվամբ երբեմն միևնույն հարկային տեսչությունում գրանցվել և գործել են մի քանի ընկերություններ, որոնք հետագայում հերթով սնանկ են ճանաչվել, հիմնադիր տնօրենը պարբերաբար այս կամ այն դրվագով ենթարկվել է քրեական պատասխանատվության:

4. Կանոնակարգել, գործուն վերահսկողություն սահմանել այս կամ այն ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի անվամբ բանկերում բացված հաշվեհամարների վրա կատարվող գործառույթների նկատմամբ: Համաձայն գործող կարգի՝ բանկերում որոշակի միջոցառումներ պետք է իրականացվեն հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցների լեգալացման (փողերի լվացման) դեմ պայքարի ուղղությամբ՝ համաձայն որի «արտառոց» գործարքների կատարման դեպքում ահազանգ է ուղղվում ՀՀ կենտրոնական բանկին և համապատասխան ծառայություններին, մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բանկերը կատարվող գործարքներից մատուցած ծառայությունների դիմաց հնարավորինս շատ միջնորդավճարներ ստանալու ակնկալիքով հաճախ ձեռնպահ են մնում

ահազանգումից, ակնհայտ «արտառոց» գործարքները վերջիններիս համապատասխան աշխատակիցների մոտ կասկածի տեղիք չեն տալիս: Կեղծ ձեռնարկատիրությամբ զբաղվող մի շարք ընկերությունների տնօրեններ ակտիվորեն զբաղվում են առանց ապրանքների մատակարարման կեղծ փաստաթղթերի՝ հաշիվ-ապրանքագրերի տրամադրմամբ, դրանցում արտացոլված գումարները փոխանցվում են վերջիններիս հաշվեհամարներին, կանխիկացվում և տրվում են կամ իրական մատակարարներին, կամ հաշիվ-ապրանքագրերում նշված ապրանքի գնորդներին: Արդյունքում՝ պետությանը պատճառվում է հարյուրավոր միլիոնների վնաս, քանի որ կեղծ հաշիվ-ապրանքագրերում արտացոլված ավելացած արժեքի հարկի գումարները պետբյուջե չեն վճարվում: Վերոհիշյալ արատավոր երևույթի դեմ պայքարելու համար որպես կանխարգելիչ միջոց կարող է ծառայել այն հանգամանքը, որ, ընդունենք, 5.000.000 ՀՀ դրամը գերազանցող «արտառոց» գործարքների դեպքում բանկն ահազանգի ոչ միայն ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան ծառայություններին, այլև համապատասխան հարկային տեսչությանը⁸⁹:

Պետք է արձանագրել, որ ցանկացած օրենք կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել կոռուպցիայի համար, քանզի այն սահմանում է առանձին անձանց կամ նրանց խմբերի համար վարքագծի դրսևորման որոշակի չափորոշիչներ՝ այդ անձանց դնելով որոշակի ոչ ձեռնատու վիճակում, որն այդ խմբին կամ մարդուն դարձնում է պոտենցիալ կոռուպցիայի աղբյուր⁹⁰:

Իրավունքի նորմերի պահանջները կարող են ուռճացվել իրավակիրառման ընթացքում, որի պատճառ կարող են հանդիսանալ պրոցեսուալ նորմերի կամ իրավակիրառ մարմինների իրավական կարգավիճակը սահմանող նորմերի անկատարությունը, որի պարագայում մեծամասամբ տեղի է ունենում իրավակիրառման խաչաձևում, երբ «հատվում են» տարբեր իրավակիրառների հսկողա-վերահսկողական գործառույթները: Լիազորությունների հատումը, որպես կանոն, բերում է ստուգումների քանակային ավելացման, որն իր հերթին հանգեցնում է

⁸⁹Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիայի սահմանման, դրսևորման առանձնահատկությունների և դրա դեմ պայքարի հիմնական միջոցների մասին», Ա.Միրզոյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 78:

⁹⁰Տե՛ս McMullan A theory of corruption // The sociological review Vol. 9 1961, էջ.196. Edward Shils, Political Development in the New States /The Hague 1962/, էջ385:

ավելի շատ «պայմանավորվածության» վրա հիմնված հարաբերությունների՝ կոռումպացված չինովնիկների և հնարավոր իրավախախտների միջև: Այս պարագայում, իհարկե, խոսքը վերաբերում է օրենքով թույլատրելի լիազորությունների բազմությանը, որոնք իրականացվում են միևնույն օղակների նկատմամբ ստուգումների ձևաչափով, այսինքն՝ օրենքում գոյություն ունեցող բյուրոկրատական վերահսկողական բազմաշերտ մեխանիզմներին: Իրավունքի նորմերի ուռճացված պահանջները կարող են բխել նաև իրավական դաշտի կազմակերպչական անճշտություններից: Այսինքն՝ կոռուպցիոզեն են ոչ միայն իրավունքի նորմերը այլ՝ դրանց համասեռ ամբողջությունը, այսինքն՝ օրենսդրության ոլորտը ընդհանրապես: Հատկապես հիմնախնդիրը աղետալի չափերի է հասնում վարչական օրենսդրության ոլորտում: Վարչական օրենսդրությունը, մանավորապես, վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրությունը, բաղկացած է դեռևս 1985 թվականին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված և այսօր վերանվանված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքից, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ այլ օրենսդրական ակտերից, ԽՍՀՄ մինիստրների հորհրդի (այսուհետ՝ ՀՀ կառավարության) որոշումներից: Այլ խոսքերով, վարչական իրավունքի նորմերը կարող են լինել ցանկացած օրենքում և ամրագրված նույնիսկ ենթաօրենսդրական ակտերում: Այս ամենի արդյունքում վարչական պատասխանատվության ինստիտուտի շուրջ ծավալվող հարաբերությունները կարգավորվում են հսկայական ծավալի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջոցով: Այս հանգամանքը նաև գիտական շրջանակներում ստիպում է խորհել վարչական իրավախախտումների վերաբերյալ մեկ միասնական դաշտ ստեղծելու մասին⁹¹:

Վարչական պատասխանատվություն սահմանող ակտերի քանակը Հայաստանի Հանրապետությունում մոտավորապես անցնում է չորս տասնյակը, իսկ ահա ՌԴ-ում դրանց քանակը անհամեմատ մեծ է՝ մոտավորապես 200:

Պետք է հրաժարվել անմեղության կանխավարկածի չափազանցված մեկնաբանություններից, երբ այդ հաստատության գործունեությունը ընդլայնվում է քրեաիրավական և քրեադատավարական իրավահարաբերություններից դուրս:

⁹¹St'u Сорокин В.Д. О двух тенденциях разрушающих ценность института административной ответственности // Правоведение 1999 №1. էջ 47:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության ծրագրում» արձանագրված է, որ կաշառակիրության մեջ մեղադրվող քաղաքական գործիչը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունն այդ հանցանքի մեջ, ապացուցելու պարտականությունը դրված է հետաքննչական և նախաքննության մարմինների վրա: Իսկ քաղաքական գործիչը, որը ստանում է ամսական 300.000-ից 600.000 դրամը չգերացանցող գումար (աշխատավարձ) և ունի հարյուր հազարավոր դոլար արժեք ունեցող սեփական ամառանոց, պետք է ապացուցել դրա օրինական լինելու աղբյուրները: Եթե նա դա չի անում, ապա նրան չի կարելի մեղադրել հանցագործության մեջ (քանի որ գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը), բայց նվազագույնը նա պետք է հեռացվի պետական ծառայությունից (այդ տիպի հարաբերության վրա չի կարող ներգործել անմեղության կանխավարկածի սկզբունքը): Դրանից ողջամիտ շեղումը հնարավոր է և խիստ անհրաժեշտ, հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի կարևորությունը աշխատանքային, ֆինանսական, հարկային, մաքսային և այլ օրենսդրական նորմերի ընդունման ոլորտում⁹²:

Նպատակահարմար է քննարկման առարկա դարձնել հիրավի խոցելի օրենսդրական դրույթները և ինստիտուտները: Համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգելու այն եզրակացության, որ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող օրենսդրությունում հիմնախնդիրները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

ա) Ներկայումս իրավական ակտերի պետական փորձաքննությունը, լինելով խիստ կարևոր լծակ, դեռևս ունակ չէ ապահովել դրանց լիարժեքությունը: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր իրավական ակտի վերաբերյալ ամբողջական գնահատական կարող է տրվել միայն այն դեպքում, երբ առկա են հստակ պատասխաններ, նվազագույնը հետևյալ հարցերի առնչությամբ՝ չի՞ բովանդակում, արդյոք, այն կոռուպցիոն ռիսկեր, պաշտոնեական չարաշահումներ թույլ տալու սողանցքներ, ինչպիսի ներազդեցություն այն կարող է ունենալ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական ոլորտների վրա և

⁹²Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն, «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության» Ծրագիր, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ.:

այլն: Վերջին հաշվով, իրավական ակտը կարող է արտաքուստ համապատասխանել Սահմանադրությանը, միջազգային վավերացված պայմանագրերին, սակայն լինել խիստ ժամանակավրեպ, առաջացնել սոցիալական լուրջ դժգոհություններ և այլն:

բ) Հարկ է հնարավորինս վերանայել այն իրավական նորմերը, որոնք ակնհայտ գերատեսչական շահերի յուրովի ընկալմամբ են թելադրված: Կարծում եմ, գերատեսչական շահը, առանձին վերցրած, բնավ բացասական երևույթ չէ, սակայն, երբ այն հակադրվում է հանրային կամ այլ գերատեսչությունների, առավել ևս՝ անհատի իրավունքներին ու օրինական շահերին, ապա դա խիստ վտանգավոր է: Ցավոք, ներկայումս դեռևս իրեն զգացնել է տալիս հանրահայտ սկզբունքները յուրովի մեկնաբանելու եղանակով դրանց բուն էությունը խեղաթյուրելու և կոռուպցիոն նպատակներ հետապնդելու միտումը: Օրինակ, դա նախկինում դրսևորվում էր դատական իշխանության անկախության սկզբունքի առումով:

գ) Իրավապահ մարմինների կարգավիճակը նպատակահարմար է սահմանել այնպես, որպեսզի վերջիններս օժտված լինեն բացառապես այնպիսի իրավական լծակներով, որոնք համաչափ կլինեն վերջիններիս առջև դրված խնդիրներին. ինչպես անհարկի սահմանափակ լիազորությունները, այնպես էլ՝ անհիմն լայն իրավական հնարավորությունները հղի են չարաշահումներ թույլ տալու վտանգով: Խնդիրն այն է, որ սահմանափակ լիազորությունների դեպքում իրավապահ մարմնի աշխատակիցը «հարկադրված է» լինում իրեն «վերագրել» իր տեսանկյունից անհրաժեշտ լիազորություններ, իսկ դրանց «ավելցուկի» դեպքում՝ կամա, թե ակամա խախտում է անձանց իրավունքները (նկատի ունենք այն, որ անհիմն համարվում է հենց այն լիազորությունը, որը սահմանվել է առանց անձանց իրավունքների և օրինական շահերի համաչափ շրջանակը և պաշտպանության անհրաժեշտությունը հաշվի առնելու):

դ) Լիազորություն սահմանող յուրաքանչյուր իրավական դրույթ պետք է ներառի այնպիսի ընթացակարգեր, որոնք վերահսկելի կդարձնեն այդ լիազորության իրականացումը: Ասվածը չի նշանակում, թե դրանք պարտադիր պետք է վերահսկվեն, այլ՝ պարզապես անհրաժեշտ է ամրագրել այնպիսի ընթացակարգեր, որոնք հիմնավոր կասկածի կամ այլ համարժեք հիմքերի առկայության դեպքում հնարավորություն են տալիս հստակ պարզելու, թե ինչպես է իրականացվել այս կամ այն լիազորությունը,

կոնկրետ ինչ չափանիշների հիման վրա է կայացվել, օրինակ վարչական ակտը և այլն⁹³:

Ընդունվող օրենքների նախագծերում հավանական կոռուպցիոն ռիսկերի հայնտաբերման և բացառման գործում անչափ կարևոր նշանակություն կարող է ունենալ օրենսդրական նախագծերի պարտադիր հակակոռուպցիոն փորձաքննության ներմուծումը: Հակակոռուպցիոն փորձաքննությունները հանդիսանում են կրիմինալոգիական փորձաքննության տեսակ⁹⁴: Վերջիններիս ներդրման խնդիրը լայնորեն քննարկվում է վերջին ժամանակաշրջանի գիտական հետազոտություններում⁹⁵: Կրիմինալոգիական փորձաքննությունը բնորոշվում է որպես օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի նախագծերի հետազոտություն, որը մասնագետ-քրեաբանների կողմից կատարվում է հանցավորության, այն պայմանավորող գործընթացների, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի վիճակի վրա այդ նախագծերի ազդեցության դիրքերից⁹⁶:

⁹³Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիայի դեմ պայքարը իրավական բարեփոխումների համատեքստում», Գ.Դանիելյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 131:

⁹⁴Իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության օբյեկտի մասին առավել մանրամասն տե՛ս Егупов А.В. К вопросу о правовых экспертизах по делам коррупционной направленности // Эксперт-криминалист, 2010, № 1; Лысков А. Явление коррупции–меры государства: правовые и политико-этические аспекты // Законность. 2008. № 9. էջեր 2–8; Малько А.В., Коновалов И.Н. и др. Предложения по совершенствованию антикоррупционного законодательства РФ // Правовая политика и правовая жизнь. 2006. №4, էջեր 178–182; Стороженко И.В. Антикоррупционный мониторинг организации экономического сотрудничества и развития: публично-правовой аспект организации противодействия криминальным формам коррупции // Административное и муниципальное право, 2010, № 6; Хатаева М.А. Проведение оценки нормативных правовых актов на коррупциогенность // Журнал российского права, 2008, № 12:

⁹⁵Տե՛ս Бажанов О.И. Научные основы концептуальных решений в области борьбы с преступностью // Вестник Белорусского информационного центра „Верховенство закона,, Минск, 1998, էջեր 46-53, Грищук В.К. Некоторые вопросы разграничения претуплений и административных проступков // Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. М., 2005, էջ 145, Звечаровский И. О концепции развития уголовного законодательства России // Уголовное право, 2005, N3, էջ 33, Десять лет уголовному кодексу Российской Федерации: достоинства и недостатки (Научно-практическая конференция) // Государство и право, 2006, N11, էջ 108, Кострова М. Уголовный кодекс Российской Федерации-пять лет спустя: проблемы и перспективы совершенствования норм уголовного законодательства // Уголовное право, 2003, N3, էջ 32, Криминология: Учебник для вузов / Под общ. ред. А.И.Долговой, 3-е изд., перераб. и доп. М., 2007, էջեր 446-448:

⁹⁶Տե՛ս Разделы проекта Федерального закона о криминологической экспертизе // Преступность и правовое регулирование борьбы с ней. Под. ред. А.И.Долговой, М., 1996, էջեր 390-393:

Գտնում ենք, որ նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննությունը (վերլուծությունը) պետք է ընթանա հետևյալ հիմնական կանոնների պահպանմամբ.

- նորմատիվ իրավական ակտերի և դրանց նախագծերի փորձաքննության արդյունավետությունը պայմանավորված է փորձաքննության համակարգվածությամբ, հուսալիությամբ և արդյունքների ամբողջական ստուգմամբ,

- յուրաքանչյուր նորմատիվ-իրավական ակտի հակակոռուպցիոն փորձաքննությունը և նրա արդյունքների շարադրումը պետք է իրականացնել միատեսակ՝ տիպիկ կոռուպցիոն գործոնների միատեսակ գնահատման չափանիշերով,

- յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ պետք է վերլուծվի յուրաքանչյուր նորմի հնարավոր կոռուպցիոն գործոնների գնահատման համատեքստում,

- յուրաքանչյուր կոռուպցիոն գործոն պետք է գնահատվի նորմերից յուրաքանչյուրում «արձագանք» գտնելու համատեքստում,

- կոռուպցիոն գործոնները և դրսևորումները պետք է հայտնաբերվեն, և դրանց վերաբերությամբ անհրաժեշտ է ձեռք առնել համարժեք մոտեցումներ անկախ այն հանգամանքից, դրանք նորմատիվ իրավական ակտերում հայտնվել են դիտավորյալ, թե իրավաստեղծ ոչ պրոֆեսիոնալ գործունեության արդյունք են,

- փորձաքննության ընթացքում բացահայտված կոռուպցիոն նախադրյալներ պարունակող նորմերի մասին համապատասխան նշումներ պետք է կատարվեն փորձաքննության արդյունքների մասին արձանագրությունում:

Նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքներն արձանագրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա.

- ակտում կամ ակտի նախագծում տիպիկ կոռուպցիոն գործոնների և նախադրյալների առկայության կամ բացակայության մասին հիմնավորում,

- այն հոդվածների, գլուխների, բաժինների արձանագրում, որոնցում հայտնաբերվել են կոռուպցիոն գործոններ,

- կոռուպցիոն գործոններ պարունակող հոդվածների տեքստի ամբողջական ամրագրում,

- կոռուպցիոն գործոնների ազդեցության գնահատման մասին արդյունքների ամրագրում,

- փաստաթղթում, որտեղ արտացոլվել են հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքները, անհրաժեշտ է ներառել նաև համապատասխան առաջարկություններ՝ նորմի կամ նորմի բարեփոխման կապակցությամբ:

Նորմատիվ իրավական ակտերի կոռուպցիոնության փորձաքննության ձևերի տակ հասկանում են.

- հակակոռուպցիոն փորձաքննություն, որն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կազմման ժամանակ,

- հակակոռուպցիոն փորձաքննություն, որն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական (իրավաբանական) փորձաքննության ընթացքում,

- գործող նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն:

Որպես ինքնուրույն հակակոռուպցիոն փորձաքննության տեսակ կարելի է համարել նաև հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների նկատմամբ իրականացվող փորձաքննությունը: Խոսքը այս պարագայում գնում է այն մեխանիզմի մասին, որը հնարավորություն կտա պարզել հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքները, ինչպես նաև առաջնային փորձաքննության օբյեկտիվության աստիճանը:

Հակակոռուպցիոն փորձաքննությունն իրականացվում է հատուկ կամ ներքին գերատեսչական մասնագետների կողմից: Հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնելու համար հնարավոր է նաև հատուկ մասնագետներից բաղկացած հանձնաժողովի ստեղծում⁹⁷:

Անգլիական օրենսդրության ամենայնօրինակ խնդիրն ապացուցման խնդիրն է. անգլիական իրավունքում կան հատուկ կատեգորիայի գործեր, որոնցով ապացուցման բեռն ընկած է պաշտպանության կողմի վրա: Հենց այդպիսի բացառություն է սահմանված «Կոռուպցիայի կանխարգելման մասին» 1916թ.-ի օրենքում, որտեղ

⁹⁷Տե՛ս Մ.Հ.Մուրադյան, Պետությունը և կոռուպցիան, սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները, ուսումնական ձեռնարկ, Երևան 2012թ. Էջ 113:

օրենսդիրը նշում է, թե ինչպես է գործում տվյալ բացառությունը, և գործն այն ժամանակ է համարվում ապացուցված, երբ մեղադրյալը չի կարողանում ապացուցել ստացված գումարների, ծառայությունների և այլնի՝ կոռուպցիայի հետ կապի բացակայությունը:

Այժմ քննարկենք կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ կազմակերպչական բնույթի որոշ խնդիրներ: Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակով գործող կոռուպցիայի կանխարգելման հստակ սահմանված գործառույթներով օժտված օղակների գլխավոր նպատակներից է հանդիսանում կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ կազմակերպչական միջոցների ձևավորումը և կատարելագործումը:

Կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպչական միջոցառումները կյանքի կոչելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա դրսևորման ձևերը, մասնավորապես պետական գործառույթների իրականացման համար լիազորված անձանց կամ նրանց հավասարեցված անձանց կողմից այն կարող է մասնավորապես արտահայտվել հետևյալ կերպ.

1. պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների գործերին միջամտելով՝ օգտագործելով իր կարգավիճակը և դրա հետ կապված հեղինակությունը, եթե դա չի մտնում իր իրավասության շրջանակների մեջ և օրենքով հիմնավորված չէ,

2. իր անձնական և իր մերձավոր հարազատների շահերին վերաբերող հարցերի լուծման ժամանակ իր կարգավիճակի օգտագործմամբ,

3. որոշումների նախապատրաստման և ընդունման ժամանակ անօրինական կերպով ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից որևէ մեկին նախապատվություն տալով,

4. այն պետական մարմինների կազմակերպությունների գործերում՝ որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի վստահված անձ մասնակցելով, որտեղ նրանք գտնվում են ծառայության մեջ, կամ որոնք գտնվում են իրենց ենթակայության, վերահսկողության տակ կամ հաշվետու են իրենց,

5. ձեռներեցության պետական կարգավորման և վերահսկողության լիազորություններն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց փոխանցմամբ, որոնք իրականացնում են այդ գործունեությունը:

6. ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ իրենց փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մասին տեղեկություններն այդ անձանց ոչ ժամանակին կամ ոչ լրիվ հասցնելով,

7. իրավական ակտերով նախատեսված տեղեկությունները կամ տվյալները ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրման մերժմամբ, կամ դրանց միտումնավոր ոչ ժամանակին կամ էլ կիսատ, անստույգ տրամադրմամբ,

8. ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից՝ օրենքով չնախատեսված տեղեկություններ պահանջելով,

9. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական և այլ նյութական պաշարները օրենքով սահմանված կարգով գրանցված թեկնածուներին և հասարակական միավորումների նախընտրական հիմնադրամներին տրամադրելով,

10. ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դիմումների՝ օրենքով սահմանված կարգով քննարկման և իրենց իրավասությունների շրջանակներում գտնվող հարցերի լուծման կարգի խախտմամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի տարբեր տարածաշրջաններում կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպչական բնույթի խնդիրները ունեն հետևյալ դասակարգումն ու նկարագիրը.

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում նաև իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրենց զբաղեցրած պաշտոնների ոչ լիարժեք ըմբռնումը և իրավասու լինելը, որն իր հերթին պայմանավորված է ոչ համաչափ և արդյունավետ կադրային քաղաքականությամբ: Գաղտնիք չէ, որ անհամաչափ կադրային քաղաքականության արատավոր դրսևորումներից է այն համատարած երևույթը, որ համեմատաբար լավագույն կադրերին պաշտոնի բարձրացման գործընթացի շրջանակներում տեղափոխում են հանրապետական նշանակության մարմիններ, իսկ նրանց փոխարինելու են գալիս տեսական և գործնական աշխատանքի ոչ բավարար փորձ ունեցող, իսկ շատ դեպքերում նաև ուսանողական աթոռին նոր հրաժեշտ տված կադրեր, որոնք բավարար աշխատանքի փորձ և պրոֆեսիոնալիզմ ձեռք բերելու համար դեռևս երկար ճանապարհ ունեն անցնելու: Նշված երևույթն ակնառու է հատկապես իրավապահ մարմիններում, իսկ առավել հաճախ՝ ոստիկանության համակարգում: Առավել

զավեշտական է, երբ նման կադրերը նշանակվում են ղեկավար պաշտոնների: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ պաշտոնի նշանակված ոչ փորձառու, տեսական և գործնական աշխատանքի բավարար փորձ չունեցող պաշտոնատար անձը ոչ միայն լիարժեք չի պատկերացնում իր զբաղեցրած պաշտոնի դերն ու պատասխանատվությունը, այլ նաև պաշտոնակից համապատասխան փոռձառու կադրերի բացակայության պատճառով անհրաժեշտ կողմնորոշում չի ստանում իր պրոֆեսիոնալ մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Արդյունքում նրանց մոտ ձևավորվում է զբաղեցրած պաշտոնի ժամանակավոր զբաղեցման և դրա հետ մեկտեղ դրա լծակների չարամտորեն օգտագործման պատրանք, որն էլ իր հերթին կոռուպցիոն դրսևորումների պայմաններից է: Ասվածի էությունը կայանում է նրանում, որ մեր կարծիքով, տարածաշրջանային մակարդակով, հատկապես իրավապահ մարմիններում կադրային սերնդափոխությունը, որն, ի դեպ, անխուսափելի և բնական գործընթաց է, պետք է կատարվի աստիճանական կարգով.

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում նաև իրավապահ մարմինների, պաշտոնատար անձանց խիստ տեղայնացված և սերտաճած լինելը տեղի ազգաբնակչության, այդ թվում նաև հանցավոր տարրերի հետ՝ սոցիալտնտեսական, գործնական, գործարարական ընդհանուր շահերի շրջանակներում: Նշված երևույթն ինքստինքյան ոչ միայն իրական կաշկանդվածության մթնոլորտ է ստեղծում և խոշընդոտ հանդիսանում կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում, այլև նպաստում և ծնում է կոռուպցիոն երևույթների բազմաթիվ դրսևորումներ և վտանգավոր սերտաճումներ՝ կոռուպցիոն հանցագործություններին տալով կազմակերպված բնույթ:

Ակնհայտ է, որ հիշյալ երևույթների առաջացման հիմնական պատճառը համատարած անպատժելիության զգացումն է, որը պաշտոնատար անձանց մոտ հանցավոր ինքնավստահության պատրանք ստեղծելով, կոռուպցիոն երևույթների՝ կաշառք ստանալու և տալու, պաշտոնեական դիրքը չարաշահելու, իշխանազանցության, հովանավորչության և այլ նմանատիպ դրսևորումներով անձնական բարեկեցության ապահովումը դարձրել է սովորույթ և բնականոն վիճակ: Եթե սրան ավելացնենք նաև օրենքի ոչ միատեսակ և կամայական կիրառելիությունն ու թողտվությունը, պարզ կդառնա իրերի իրական վիճակը: Տվյալ դեպքում

տարածաշրջանային գործոնն էական դեր է խաղում, որի հաղթահարման ուղիներից է պետական մարմինների, այդ թվում նաև ղեկավար անձնակազմի պաշտոնների հնարավորինս համալրումը նաև տվյալ տարածաշրջանի հետ ծագումաբանական կապ չունեցող անձանցով:

3. Ընդհանրապես հանցավոր և մասնավորապես կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ իրավապահ մարմիններին ահազանգելու և հաղորդուններ ներկայացնելու հարցում հասարակության կաշկանդվածությունը, որն էլ իր հերթին անվստահության դրսևորման արդյունք է: Գաղտնիք չէ, որ հասարակության անդամների մեծ մասը հանցագործությունների և հատկապես կոռուպցիոն հանցագործությունների մասին իրավապահ մարմիններին դիմում է միայն այն դեպքում, երբ սպառվել են «ծանոթ-բարեկամ» կապերի օգտագործմամբ ոլորապտույտ տարբեր ճանապարհներով պաշտոնատար անձանց վրա ներգործելու հնարավոր ապօրինի միջոցները: Մինչդեռ, անհրաժեշտ է ի սկզբանե փոխադարձ վստահության մթնոլորտ ստեղծել հասարակության մեջ, որն էլ իր հերթին հնարավոր է իրականացնել իրավապահ մարմինների կողմից՝ օրենքի շրջանակներում համարժեք գնահատականներ ու ընթացք տալով հանցագործությունների վերաբերյալ գրավոր, նույնիսկ անանուն հաղորդումներին, կամ օրենքով նախատեսված լիազորությունների իրականաց ման ընթացքում ստացված բանավոր տեղեկություններին՝ դրա համար օգտագործելով օրենքով տրված բոլոր հնարավոր լծակները: Միաժամանակ դրանով անհրաժեշտ է վերացնել հասարակական մտածելակերպում ձևավորված օրենքի անհամաչափ կիրառման և անպատժելիության պատրանքը:

4. Կոռուպցիոն հանցագործությունների դրսևորման հիմնական պատճառներից պետք է համարել նաև վերահսկողական լիազորություններով օժտված պետական մարմինների անտարբերությունն ու պասիվությունը՝ օրենքով դրանց վերապահված լիազորությունների իրականացման հարցում: Նորից պետք է անդրադառնամ իրավապահ մարմիններին, քանզի կոռուպցիան հանցավոր դրսևորումների շղթա է և դրա դեմ պայքարելու հիմնական պարտականությունը կրում են իրավապահ մարմինները: Տվյալ դեպքում նորից խոսում են ինչպես կաշկանդվածության և սերտաճվածության, այնպես էլ ծառայողական լիազորություններին չտիրապետելու

գործոնները: Մինչդեռ, իրավապահ մարմինները կոռուպցիոն դրսևորումների բացահայտման գործում ունեն առաջնային դերակատարում:

5. Կոռուպցիոն հանցագործությունների առաջացման և տարածման պատճառ պետք է համարել նաև հասարակության շրջանում պետական մարմինների, հատկապես իրավապահ մարմինների կողմից տարվող բարոյա-հոգեբանական և դաստիարակչական աշխատանքների ոչ բավարար մակարդակը: Հարցի կարևորությունը կայանում է նրանում, որ նշվածը այն կարևոր լծակն է, որի շնորհիվ կարելի է վերականգնել հասարակության մեջ ձևավորված անվստահության մթնոլորտը իրավապահ մարմինների նկատմամբ:⁹⁸

Գրականության մեջ գոյություն ունի համակարգային կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպչական բնույթի չորս հիմնական տարբերակված մոտեցումներ: Առաջին տարբերակն առաջարկում է բարեփոխել պետական կառավարման համակարգը: Այն առավել բարդ է և չունի պատրաստի պատասխաններ: Իշխանությունների կողմից պահանջվում է քաղաքական կամքի դրսևորում՝ բարեփոխումները հետևողականորեն իրականացնելու համար:

Երկրորդ տարբերակը նոր իշխանության եկած լիդերների կողմից պետական ծառայության համակարգի վերևից ներքև վերակառուցումն է: Այս սցենարը հաջողությամբ իրականացվել է Ուգանդայում, որտեղ իշխանության արձատական փոփոխությունն իրականացվեց նոր քաղաքական ղեկավարության կողմից: Այս սցենարի մեջ է նաև Վրաստանի բարեփոխումների տարբերակը՝ նախագահ Սահակաշվիլու գլխավորությամբ:

Երրորդ տարբերակը դա պարտադրված իշխանափոխությունն էրկրի նախկին ղեկավարների ազատազրկմամբ (Բանգլադեշ) կամ մահապատժով (Գանա): Պատմական փորձը վկայում է, որ այս տարբերակը կարող է լինել հաջողված, այնպես էլ անարդյունք:

Չորրորդ տարբերակը «անկլավի» կամ «ազնվության կղզյակի» հայեցակարգն է, որը փորձարկվել է Էկվադորում: Գաղափարախոսությունը կայանում է նրանում, որ

⁹⁸Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիայի առաջացման պատճառները և բացահայտման առանձնահատկությունները» Կ.Շահբազյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 56:

պետական ծառայության առանձին օղակներ սահամանազատվում են պետական ամբողջ համակարգից, որպեսզի կոռուպցիայի դեմ պայքարը իրականացվի առանձին օղակում և հաջողված փորձը այնուհետև տարածվի ամբողջ համակարգի վրա⁹⁹:

Կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրները սերտորեն առնչվում են նաև զանգվածային լրատվության հետ: Մեր երկրում հիմնականում այն մտայնությունն է տիրում, ըստ որի զանգվածային լրատվության միջոցները բացառապես հանդիսանում են կոռուպցիայի դեմ պայքարի լծակ, որ վերջիններս իրենց ունեցած բոլոր հնարավորություններն օգտագործում են կոռուպցիոն երևույթները բացահայտելու և դրանք խարանելու համար: Սակայն գործնական վերլուծությունները, թերևս, վկայում են այն մասին, որ չափազանց քաղաքականացված մամուլը ոչ միայն ի վիճակի չէ նպաստելու կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությանը, այլև հաճախ ունի ճիշտ հակառակ դերակատում:

Մեր իրականությունում եզակի չեն այն դեպքերը, երբ մամուլում միտումնավոր խեղաթյուրվում են քաղաքական ուժերի փոխհարաբերության տեսանկյունից ոչ ընդունելի պաշտոնատար անձի կամ քաղաքական գործչի վերաբերյալ փաստերը և էթիկայի տարրական կանոնների անտեսմամբ փորձ է արվում վերջիններիս ներկայացնել բացառապես բացասական երանգներով:

Թափանցիկությունը հակակոռուպցիոն ռազմավարությունների մեծ մասի անկյունաքարն է:

Թափանցիկության սահմանման շուրջ չկա կոնսենսուս. առավել հաճախ այն բնութագրում է, թե որքանով են կառավարությունները, ընկերությունները, կազմակերպություններն ու անհատները բացահայտում տեղեկատվությունը, կանոնները, ծրագրերը, գործընթացներն ու գործողությունները¹⁰⁰:

Երբեմն հարց է առաջանում. ինչու ունենալով միմյանց լրացնող հմտություններ ու շահեր, մարդու իրավունքների պաշտպանության և հակակոռուպցիոն տարատեսակ կազմակերպություններն ավելի կանոնավոր կերպով չեն համագործակցում: Որոշ չափով դրա պատճառն այն է, որ հակակոռուպցիոն կազմակերպությունները պետք է աշխատեն կառավարությունների հետ և լինեն ավելի «պաշտոնեական», մինչդեռ

⁹⁹Տե՛ս Քառյան Ա. Վ.: Նշվ. աշխ., էջ 32:

¹⁰⁰Տե՛ս Transparency international, The Anti-Corruption Plain Language Guide, 2009, էջ 44:

մարդու իրավունքների կազմակերպություններն ունեն հակադրվող կառույցների համբավ: պատճառներից է նաև այն, որ հակակոռուպցիոն շատ մասնագետներ օտար և վերացական են համարում մարդու իրավունքների ձևակերպումներն ու հասկացությունները և կարծում են, թե «մարդու իրավունքների մոտեցումները» ոչ միշտ են հանգեցնում գործնական լուծումների: Ծանրակշիռ պատճառներ կան այս երկու շարժումները միմյանց ավելի մերձեցնելու համար. համագործակցությունը, այդուհանդերձ, կողմերից կպահանջի հաղթահարել բառապաշարի և գործնական աշխատանքի տարբերությունները:

Առանձին հարց է այն, որ հակակոռուպցիոն գործիչներն առիթ են ունեցել պնդելու, թե մարդու իրավունքների սկզբունքները խոչընդոտում են հակակոռուպցիոն օրենքների կատարմանը, իսկ մարդու իրավունքների պաշտպանները երբեմն պնդում են, թե որոշակի հակակոռուպցիոն գործողություններ խախտում են մարդու իրավունքների սկզբունքները: Այս «լարումներն» արտացոլում են այն մշտառկա մտահոգությունը, որ բնութագրական է օրենքի կատարման և մարդու իրավունքների միջև: Իրականում մտահոգությունների շատ նեղ շրջանակն է վերաբերում կոռուպցիային. դրանց հիմնական մասն առնչվում է հետազոտության և հետաքննության ընթացակարգերին¹⁰¹:

Կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպչական միջոցառումների համատեքստում պետք է հաշվի առնել մի հանգամանք, որ հասարակական կարծիքն իր մեջ պարունակում է նաև մի բացասական ընկալման դրսևորում, մեր գիտակցության մեջ կոռուպցիան խթանող ամենօրյա որոշակի գործողությունները, մասնավորապես առողջապահական, կրթական և այլ հանրային հաստատությունների աշխատակիցներին անհարկի վճարումները կոռուպցիա չեն համարվում և անգամ արդարացվում են՝ կապված այդ կատեգորիայի աշխատողների ցածր վարձատրության հետ: Այդ մասին են վկայում մասնավորապես «Հայ ժողովրդական ֆորում» հասարակական կազմակերպության կողմից տնային տնտեսությունները սպասարկող հանրային ծառայությունների վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական

¹⁰¹Տե՛ս «Մարդու իրավունքների ինտեգրումը հակակոռուպցիոն օրակարգ, մարտահրավերները, հնարավորություններն ու կարողությունները» Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ, «Անտարես» հրատարակչատուն, Երևան 2011թ., էջ 85:

հետազոտության արդյունքները: Ըստ դրանց՝ պոլիկլինիկա, հիվանդանոց և շտապ օգնություն դիմած հարցվածների, համապատասխանաբար, 43.2, 47.0, 44.4 տոկոսը գտնում են, որ տրված ոչ պաշտոնական վճարները չի կարելի կաշառք համարել¹⁰²:

Կոռուպցիայի դեմ հանդուրժողականությունն այս պարագայում թույլ է տալիս սկսել զիջումներ և երևույթը կոծկելու հնարավորություն է ընձեռում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, քննության, բացահայտման, այդ բնույթի գործերի նկատմամբ հսկողության, ինչպես նաև կոռուպցիայի հետևանքով տուժված անձանց իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործառույթներ են իրականացնում պետական տարբեր մարմիններ՝ օրենքով իրենց «հատկացված» լիազորությունների շրջանակներում:

Պետական հակակոռուպցիոն ծրագրի իրագործման կազմակերպչական կարևորագույն միջոցներից է Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման, քննության և բացահայտման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով կառուցվածքային հատուկ ստորաբաժանում, որպես առանձին պետական մարմին, ստեղծելու գաղափարի իրագործումը: Այն կարող է անվանվել նախարարություն, կոմիտե կամ գործակալություն և ունենա իր ներքին կառուցվածքային ստորաբաժանումները (գլխավոր վարչություն, վարչություն, բաժին, բաժանմունք):

Գտնում ենք, որ նշված մարմնի ստեղծումը ներկա իրավիճակի հրամայականով է պայմանավորված և ծայրահեղ անհրաժեշտություն է: Այն կարող է հանդիսանալ կոռուպցիայի դեմ պայքարի պետական ծրագրի իրականացման գործադիր մարմին: Նրա նշանակությունը և դերն ավելի մեծ է, քան այդ կապակցությամբ եղած պատկերացումները: Առաջին հերթին, այդ մարմինը կոռուպցիայի կանխարգելման քաղաքականությունը մշակող, երկրի պետական կառավարման բոլոր ոլորտներում կոռումպացվածության աստիճանի, պատճառների և պայմանների վերաբերյալ հավաքած տվյալների վերլուծության հիման վրա հակակոռուպցիոն կոնկրետ միջոցառումներ կազմող, գործող օրենքներում և օրենսդրական ակտերում առկա,

¹⁰²Տե՛ս Քառյան Ա. Վ.: Նշվ. աշխ., էջ 19:

պետական ծառայողների չարաշահումները հնարավոր դարձնող հակադրությունների վերացման ուղիները որոշող մարմին պետք է լինի:

Ինդիքը կայանում է նրանում, որ քանի որ կոռուպցիան դառնում է ավելի ու ավելի կատարելագործված, ապա իրավապահ դասական մարմինները կոռուպցիայի հետ կապված բարդ գործերի հայտնաբերման ու քննման համար դառնում են անընդունակ: Ավելին, իրականության մեջ, որտեղ կոռուպցիան փթթում է, իրավական հարկադրանքի սովորական միջոցներն իրենք էլ հիմնովին կոռումպացվում են, արդյունքում նրանց կիրառման արդյունավետությունը շատ ցածր է: Նույնիսկ այն դեպքում, երբ կոռումպացվածության աստիճանի բարձրացումը Հայաստանում վերջին տասնամյակներում անզեն աչքի համար ակնհայտ է, կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման դեպքերի քանակը նույն ժամանակամիջոցում լուրջ փոփոխությունների չի ենթարկվել:

Գործնականում տարբեր հեղինակների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի հետ կապված տրվել են տարատեսակ առաջարկներ, օրինակ առաջարկվել է տարածքներում ստեղծել հակակոռուպցիոն խորհուրդներ և դրանց կազմում ընդգրկել տեղական կառավարման, դատախազության, իրավապահ, հարկային, ինչպես նաև ստուգման գործառույթներ ունեցող տարածքային կառույցների ներկայացուցիչներին: Այս առաջարկը հիմնավորվել է նրանով, որ ժողովրդավարության ապահովման ուղիներից մեկն էլ հնարավորինս մեծ շրջանակ ունեցող հարցերի լուծումը, կամ գոնե քննարկումը տեղական ինքնակառավարման կառույցներին և տարածքային մարմիններին վերապահելն է և նման աշխատառճը նպաստում է կոռուպցիոն երևույթների կանխարգելմանը: Մեկ այլ առաջարկ էլ վերաբերվում է ոստիկանության տարածքային բաժիններում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմամբ և քննությամբ զբաղվող հատուկ մասնագիտացված աշխատակիցներ կամ խմբեր առանձնացնելուն¹⁰³:

¹⁰³Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության մեթոդիկայի մի քանի հիմնախնդիրների մասին», Գ.Խաչիկյան, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., էջ 173:

Ի հարկե մեր երկրում գործող տարբեր իրավապահ մարմիններ, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում են նաև գործառույթներ կոռուպցիայի հետ կապված, սակայն այդ գործառույթներն ընդամենը մի մասնիկն են կազմում այդ մարմինների տարաբնույթ գործառույթների համակարգում, ինչն օբյեկտիվորեն թույլ չի տալիս լիարժեքորեն ձեռնամուխ լինել հասարակական այդ չարիքի՝ կոռուպցիայի հիմնախնդիրների լուծմանն իր ամբողջ ծավալով:

Այդ ամենը կարող է իրականացնել միայն զուտ դրա համար ստեղծված պետական կարգավիճակ ունեցող հատուկ մարմինը՝ օրենքով սահմանված լիազորությունների հստակ շրջանակներում՝ աշխատանքային խիստ ռեժիմով և գործելակերպով: Հակակոռուպցիոն այդ մարմինը պետք է հայտնի լինի հասարակությանը և պետք է ապահովվի քաղաքացիների ազատ մուտքը դեպի այդ մարմին՝ ամեն մի դեպքի մասին հաղորդում տրամադրելու համար, որոնք կարող են դիտարկվել որպես իրավախախտում: Այս մարմնի աշխատակիցները կզբաղվեն բացառապես կոռուպցիայի դեմ պայքարով, ինչի արդյունքում ձեռք կբերեն համապատասխան խորը մասնագիտացում և պատասխանատվություն կկրեն միայն հենց այդ ոլորտի համար: Ստեղծվելիք կառույցը կունենա լայն լիազորություններ պետական ցանկացած այլ մարմնի հետ փոխհարաբերությունում և կկարողանա առավել անկաշկանդ իրականացնել իր գործունեությունը: Եվ, վերջապես, նոր ստեղծվելիք կառույցում կարող են սահմանվել այնպիսի արտոնություններ (անկախության բարձր աստիճան, բարձր աշխատավարձ, գործունեության գաղտնիություն և այլն), որոնք զերծ կպահեն աշխատակիցներին կոռուպցիոն բնույթի իրավախախտումներից: Այլ կերպ ասած, խոսքը վերաբերվում է կոռուպցիայի դեմ պայքարի մի ունիվերսալ մարմնի մասին, որը կտարբերվի այլ մարմիններից ոչ թե «կոսմետիկական զանազան շղարշներով», այլ առանցքային գեր նպատակով:

Նշված մարմնի ֆունկցիոնալ պարտականությունների մեջ կարող են մտնել հետևյալ լիազորությունները.

1. պետական կառավարման բոլոր ճյուղերի կոռումպացվածության մասին տեղեկությունների հավաքումը և վերլուծումը, դրանք ծնող պատճառների ուսումնասիրումը,

2. նորմատիվ ակտերի փորձաքննության անցկացումը նրանց կոռուպցիայի դրսևորման պայմանները բացառելու նկատառումներով,

3. քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցության կազմակերպումը, հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների հետ գործողությունների հետ միասնացումը,

4. աշխատանքը զանգվածային լրատվության և բնակչության հետ, կոռուպցիայից տուժվածների իրավական ծառայության ստեղծում՝ մշտապես գործող «տաք գծերի» ստեղծմամբ,

5. գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերին աջակցության ցուցաբերումը և վերահսկողության իրականացումը,

6. կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ բողոքների ընդունումը, քննարկումը և ընթացք տալը, կոռուպցիայի հակազդմանն ուղղված միջոցառումների մասին խորհրդատվությունը քաղաքացիներին և կազմակերպություններին,

7. կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի վերաբերյալ գործերով նախաքննության կատարումը,

8. արտասահմանյան պետությունների նմանօրինակ գործունեությամբ զբաղվող գերատեսչությունների հետ արդյունավետ երկկողմ, տարածաշրջանային ու միջազգային հարաբերությունների ստեղծում և պահպանում:

9. կոռուպցիայի սանձահարման հիմնախնդիրների մասին հատուկ և ուսումնաճանաչողական գրականության մշակում ու հրատարակում,

10. կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի իրականացման ընթացքի մասին հասարակությանը իրազեկելու համար պարբերաբար տեղեկատվության հրապարակումը¹⁰⁴:

Ահա խնդիրների այն ոչ լրիվ ցանկը, որոնց իրականացումը կարող է դրվել կոռուպցիայի անզուսպ աճի կանխմանն ուղղված մարմնի վրա:

Մի շարք հեղինակներ թերահավատորեն են մոտենում մեր կողմից մատնանշված այդ պետական հատուկ մարմնի ստեղծման գաղափարին: Այդ հեղինակներն բերում են

¹⁰⁴Տե՛ս Ա.Շ. Ծաղիկյան «Կոռուպցիա: Պատճառները, հետևանքները», «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2002թ., էջ 58:

խիստ իրարամերժ և հակասական հիմնավորումներ և իրենց մտահոգությունը հայտնում են հետևյալ նկատառումներից ելնելով.

ա) Նկարագրված բնույթի կառույցներ արդեն իսկ կան և եթե դրանց գործունեությունում, այնուամենայնիվ, առկա են լուրջ թերացումներ, ապա ելքը ոչ թե ճիշտ այդպիսի մեկ այլ խոցելի կառույց ստեղծելն է, այլ խորքային ու հիմնարար պատճառների բացահայտումն ու համակարգված վերացումը:

Մենք գտնում ենք, որ եթե այս կամ այն իրավապահ մարմինն, ի թիվս այլ գործառույթների, հավասարապես իրականացնում է նաև գործառույթ կոռուպցիայի դեմ պայքարի հետ կապված, ապա այդ պայքարի առումով ինչպե՞ս կարող է տվյալ մարմինը գործել այնպիսի արդյունավետությամբ, ինչպիսին որ կարող է լինել հենց միայն այդ նպատակով ստեղծված մարմինը: ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» դրույթների առավել ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ միջազգային այդ փաստաթղթում հիմնական շեշտադրումը կատարվում է պետության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կողմից քննարկվող հիմնախնդրի վերաբերությամբ միասնական քաղաքական կամքի դրսևորման անհրաժեշտության վրա: Քաղաքական կամքը առաջին հերթին պետք է արտահայտվի նորաստեղծ ոլորտում հակակոռուպցիոն մեխանիզմներ ստեղծելով: Համաձայն կոնվենցիայի նորմատիվ դրույթների՝ պետությունները, հենվելով ներքին իրավական սկզբունքների վրա, պետք է ստեղծեն մարմիններ, որոնք կիրականացնեն կոռուպցիայի նախազգուշացում, վերահսկողություն և համարժեք քաղաքականության համակարգում: Բացի այդ, պետությունը պետք է իրավական անհրաժեշտ մեխանիզմներով ապահովի այդ մարմինների գործունեության ինքնուրույնությունը:

բ) կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ մարմինների ստեղծման գաղափարով հիմնականում տարվել են զարգացող երկրները, մինչդեռ, որևէ զարգացած երկրում ավանդաբար ձևավորված ու գործող պետական իրավապահ մարմիններից այդ գործառույթների իրականացումը չի վերցվել:

Փաստորեն, մեր առաջարկին ընդդիմադիր հեղինակները նախ խոստովանում են, որ իրոք կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ մարմինների ստեղծման գաղափարով անգամ տարվել են զարգացող երկրները, իսկ հետո նշում, որ ավանդաբար ձևավորված ու գործող պետական իրավապահ մարմիններից այդ գործառույթների

իրականացումը չի վերցվել: Այդ առումով առաջանում է բնական մի հարց. տվյալ դեպքում որքանո՞վ է արդարացված նոր, հատուկ մարմնի ստեղծումը, եթե դրա կողմից իրականացվելիք միակ գործառույթը զուգահեռաբար պետք է իրականացվի նաև իրավապահ մի շարք այլ մարմինների կողմից ևս:

գ) Նոր կառույցի ձևավորումը կարող է հանգեցնել անհամարժեք եզրահանգումների, մասնավորապես կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը թելադրված է հենց նոր կառույցի ձևավորմամբ:

Այս տեսակետի հետ մենք ևս համաձայն չենք, քանի որ նպատակը հստակ է՝ զանազան գործառույթներ իրականացնող տարբեր իրավապահ մարմիններից պարզապես «անջատվում է» կոռուպցիայի դեմ պայքարի գործառույթը, այն օրենքով տրվում է կոնկրետ մեկ մարմնի իրավասությանը, որն այլ որևէ տեսակի գործառույթներից «ազատ լինելու» պարագայում իր ամբողջ ներուժով պետք է պայքարի այդ բացասական երևույթի դեմ:

դ) Նոր կառույցի ստեղծումը հանգեցնելու է բացասական հետևանքների. երբ արդեն իսկ գործող մարմինների լիազորությունները կտրուկ սահմանափակվում են, դրանք այլ՝ առավել հուսալի կառույցի վերապահելու պատճառաբանությամբ, ապա դա առաջացնում է անհարկի տիպի բարոյահոգեբանական մթնոլորտ: Արդեն իսկ գործող իրավապահ մարմնի աշխատակցի մոտ ձևավորվում է անլիարժեքության բարդույթ, վերջինս հստակ պատկերացնում է, որ իրեն անհամեմատ ցածր են վճարում, որովհետև առկա է անթաքույց կասկած իր գործունեության հուսալիության առնչությամբ:

Մեր երկրի պետական տարբեր մարմինների գործառույթների և լիազորությունների ծավալների, դրանց բնույթի և քանակի փոփոխությունները միշտ էլ վերանայվել են հասարակական կյանքի ժամանակի օբյեկտիվ թելադրանքի հունի ուժով, ինչն ուղղակի անխուսափելի իրողություն է: Օրինակ տարիներ առաջ նախկին Ներքին գործերի նախարարությունը վերածվեց Ոստիկանության, որից առանձնացվեց օրինակ քրեակատարողական հիմնարկների գործունեության ապահովման և հսկողության գործառույթը և այն օրենքով փոխանցվեց Արդարադատության նախարարությանը, իսկ հետագայում էլ ոստիկանությունից 2014թ.-ին առանձնացվեց նախաքննություն

իրականացնելու գործառույթը և այն փոխանցվեց հատուկ այդ նպատակի համար ստեղծված Քննչական կոմիտեին: Այդ նույն տրամաբանությամբ հարց է առաջանում. արդյո՞ք այդ կառուցվածքային փոփոխությունների ժամանակ չի եղել նշված այդ «անհարկի տիպի բարոյահոգեբանական մթնոլորտը» և «անլիարժեքության բարդույթը»: Կամ, 2007թ.-ին ստեղծվեց ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, որին վերապահված է ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված ենթակայությամբ հանցագործություններով նախաքննության կատարումը: ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչը և դեռևս մինչև 2014թ.-ը ոստիկանության կառուցվածքում գործող քննչական կառույցի քննիչը ՀՀ քր. դատ. օր.-ի տեսանկյունից հավասարազոր պաշտոնատար անձինք են հանդիսացել, սակայն բոլորին է հայտնի, թե ինչպիսի գեր ծայրահեղ անհամաչափություն կար այդ երկու կառույցների քննիչների աշխատավարձերի չափերի միջև՝ մինչև անգամ կրկնակի, եռակի տարբերությամբ, բայց նրանք նույն քննիչն էին դատավարության իմաստով, որոնք թեպետ քննում էին ենթակայությամբ տարբեր, սակայն, միևնույնն է, հանցագործության վերաբերյալ գործեր: Խոսելով պետական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմամբ պայմանավորված փոփոխությունների մասին, հարկ է նշել նաև վերջին շրջանում կատարված փոփոխությունները: Օրինակ 2014թ.-ին Տարածքային կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարությունները միավորվեցին մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակահարմարությունից ելնելով, իսկ 2016թ.-ին այդ նախարարությունները կրկին առանձնացվեցին այդ նույն պատճառաբանությամբ: Նույն ընթացակարգերը տեղի ունեցան Ֆինանսների նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի պարագայում: Այս ամենը ևս մեկ անգամ փաստում է այն իրողությունը, որ ժամանակի պահանջարկի թելադրանքով պետական ապարատի տարբեր մարմինների՝ այդ թվում իրավապահ, թե կառուցվածքային և թե ֆունկցիոնալ փոփոխությունները միանգամայն անխուսափելի են: Ուստի կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով մեր կողմից առաջարկվող հատուկ պետական մարմնի ստեղծման համար ընդամենը քաղաքական կամք է հարկավոր:

ե) Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այսօր գործեր են քննվում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը իրավապահ մարմինների համակարգում համեմատաբար երիտասարդ կառույց է. կազմավորվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը նույն թվականի նոյեմբերի 30-ին վավերացրել է ՀՀ Նախագահը:

Հատուկ քննչական ծառայության գործունեությունը նպատակաուղղված է ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն իրականացնելուն:

Սակայն, այնուամենայնիվ, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման գործում Հատուկ քննչական ծառայության դերը սահմանափակ է, քանզի այն, որպես քննչական մարմին, իրականացնում է միայն նախաքննություն և չունի ինչպես օպերատիվ-հետախուզական գործառույթների իրականացման լիազորություններ, այնպես էլ գործառույթների այն ամբողջական իրավասությունը, որն առաջարկվում է մեր կողմից ստեղծվելիք հատուկ մարմնի գործունեության կապակցությամբ: Ուստի առաջարկվում է շարունակել կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը և նորաստեղծ Հատուկ քննչական ծառայության հիմքի վրա ստեղծել առաջարկվող կոռուպցիայի դեմ պայքարի, այսպես կոչված, ունիվերսալ մարմինը, այդ կառույցին՝ Հատուկ քննչական ծառայությանն, օրենսդրորեն վերապահել այն լիազորություններն ու գործառույթները, որոնք առաջարկվում են մեր կողմից:

զ/ Ստեղծվելիք նոր կառույցը համալրվելու է մյուս իրավապահ կամ այլ մարմինների առավել փորձառու և հուսալի կազմից, ինչը ևս հանգեցնելու է այդ իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետության նվազեցմանը¹⁰⁵:

¹⁰⁵Տե՛ս ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Կոռուպցիայի դեմ պայքարը իրավական բարեփոխումների համատեքստում», Գ. Դանիելյան, «Ֆենոմեն» իրատարակչություն, Երևան 2009թ., էջ 131:

Դե իսկ տվյալ մտահոգության հետ կապված հարցի լուծումը, կարծում ենք, պետք է փնտրել ոչ թե այսօր մեր պետության համար ահագնացող չափերի հասած վտանգի դեմ պայքարելու նպատակով կառուցվածքային անհրաժեշտ բարեփոխումը կանխելու և խոչընդոտելու մեջ, այլ պետք է փնտրել սոցիալական, կրթական, գաղափարական ու բարոյահոգեբանական մի շարք համալիր միջոցառումների կենսագործման մեջ:

Սակայն պետք չէ ստեղծվի այնպիսի տպավորություն, որ առաջարկվող մարմինը կարող է դուրս գալ վերահսկելիության շրջանակներից: Օրենսդրական ամրագրմամբ հարկավոր է կարևորել և երաշխիքներ ստեղծել առ այն, որ կոռուպցիայի դեմ պայքարի մարմինն տրվող լիազորությունները պետք է համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային նորմերին, և որ այդ մարմինն ինքը գործի օրենքի սահմաններում, հրապարակայնորեն և հաշվետու լինի երկրի օրենսդիր մարմին: Նշված մարմինն իշխանական կառուցվածքների կողմից որպես ճնշման գործիք օգտագործելը բացառելու նպատակով այդ մարմնի կառուցվածքում անհրաժեշտ է մտցնել մի շարք հակակշիռներ և զսպումներ, ղեկավարության նշանակումը և ազատումը, աշխատակիցների նյութական դրության բարելավումը, հասարակության հսկողությունը նրանց գործունեության նկատմամբ, պաշտոնյայի միջոցների, ծախսերի, եկամուտների վերահսկողությունը:

Կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ կդառնա միայն այն դեպքում, երբ այն լինի մշտական, համալիր և կտարվի պետության և հասարակության ամբողջական ուժով: Անհրաժեշտ է և՛ նախագահի, և՛ կառավարության, և՛ պատգամավորների, և՛ դատավորների, և՛ իրավապահ մարմինների ղեկավարության դրսևորած քաղաքական կամքը:

Կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ հաղթանակն անհնարին է սոցիալական պասիվության ախտով վարակված հասարակությունում: Սոցիալական այդ չարիքի հակաթույնը պետք է հասունանա մեր սրտերում և մտքերում: Չէ՞ որ ամեն ինչ սկսվում է յուրաքանչյուր կոնկրետ անհատից, նրա կաշառք չտալու ցանկությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում և բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրված, կանխարգելման խնդրում օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների համատեքստում կարևորում և առաջարկում ենք.

1. «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում կատարել լրացում, փոփոխում, որը հնարավորություն կտա իրավապահ մարմիններին ձեռք բերել հաշվեհամարների տերերի և գործարքների մասին տեղեկատվություն նաև մինչև հաշվեհամարի տիրոջ կողմից կասկածյալ դառնալը կամ մինչև մեղադրանք առաջադրելը:

2. Անհապաղ դեպքերում, երբ խուզարկության հապաղման հետևանքով հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները կարող են թաքցվել, իսկ հանցագործը կարող է փախուստի դիմել, անգամ երբ կարող է արդյունք չտալ նաև դատարանի արագացված որոշումը, բնակարանի խուզարկությունը կատարել նաև առանց դատարանի որոշման: Այս դրույթի հետ կապված սույն ատենախոսության 2-րդ գլխում մանրամասն տրված է ինչպես խնդրի վերաբերյալ սահմանադրական բարեփոխումից սկսած իրավական կարգավորման անհրաժեշտությունը, այնպես էլ անհետաձգելի դեպքերում առանց դատարանի որոշման բնակարանի խուզարկության դատավարական ու գործնական ընթացակարգը: Ի դեպ, նման անհետաձգելի դեպքերում խուզարկության իրականացումից հետո դատական հաստատման մասին ժամանակին առաջարկել է նաև ԳՐԵԿՈ-ի խումբը: Բացի այդ, կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում մասնակից պետությունները կարող են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք իրավասու մարմիններին կոռուպցիայի դեմ պայքարում հնարավորություն կտան կիրառել օպերատիվ-հետախուզական հատուկ մեթոդներ:

3. Կարգավորել առանձին ոլորտներում հավասարազոր տարբեր մարմինների կողմից իրականացվող տարաբնույթ տեսչական հսկողա-վերահսկողական և ստուգումների մեխանիզմը: Օրենսդրորեն բացառել ներկայումս օրենքով թույլատրելի լիազորությունների կրկնությունը և գոյություն ունեցող բյուրոկրատական վերահսկողական բազմաշերտ մեխանիզմների հնարավորությունը:

4. Վարչական պատասխանատվության ինստիտուտի շուրջ ծավալվող հարաբերությունները կարգավորելու, վարչական պատասխանատվության վերաբերյալ մեր իրավական դաշտում առկա բազմազանությունը կրճատելու և կոռուպցիոն հնարավոր դրսևորումները հնարավորինս կանխելու նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել սահմանափակելու կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավական դաշտը կոդիֆիկացնելու առումներով:

5. Պետական հակակոռուպցիոն ծրագրի իրագործման կազմակերպչական կարևորագույն միջոցներից է Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման, քննության և բացահայտման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու նպատակով կառուցվածքային հատուկ ստորաբաժանում, որպես առանձին պետական մարմին, ստեղծելու գաղափարի իրագործումը: Այդ իմաստով նորաստեղծ Հատուկ քննչական ծառայության հիմքի վրա անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի, այսպես կոչված, ունիվերսալ մարմին, այդ կառույցին՝ Հատուկ քննչական ծառայությանն, օրենսդրորեն վերապահել այն լիազորություններն ու գործառույթները, որոնք առաջարկվում են մեր կողմից:

§2. Բլանկետային դիսպոզիցիայով կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման խնդրում միջազգային համագործակցության դերը և նշանակությունը

Կոռուպցիան, որը լուրջան էր մատնված մինչև վաղ 1990-ականները, այսօր համաշխարհային ուշադրության կենտրոնում է և ճանաչվել է որպես խոշորագույն խոչընդոտներից մեկը համամարդկային զարգացման ճանապարհին: Ուժի մեջ են մտել հակակոռուպցիոն օրենքներ, բանակցվել ու վավերացվել են միջազգային պայմանագրեր, ստեղծվում են հակակոռուպցիոն նոր մարմիններ: Աշխարհով մեկ քաղաքացիները հրապարակայնորեն բողոքում են կոռուպցիայի դեմ: Կոռուպցիոն գործողությունները երբեմն վեր հանվում ու հետաքննվում են, որոշ դեպքերում էլ պատասխանատուները պատժվում են:

Կան շոշափելի ձեռքբերումներ: Այդուհանդերձ, կոռուպցիան ծաղկում է բազմաթիվ միջավայրերում՝ ի վնաս միլիոնավոր մարդկանց:

Կոռուպցիան առաջացել է պետության ծննդի հետ և տարբեր աստիճանի ինտենսիվությամբ վարակել աշխարհի բոլոր երկրների պետական ապարատները: Վերջին տասնամյակներում այն ձեռք է բերում ավելի ու ավելի վտանգավոր բնույթ, արագորեն աճում են նրա տարածվածության ծավալները: Ստեղծված իրավիճակը հարուցում է միջազգային հանրության տագնապը, որը փորձեր է ձեռնարկում գտնելու համարժեք արգելակող նորմեր: Այդ ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվում է ինչպես ոչ կառավարական, այնպես էլ միջկառավարական

մակարդակով: Կոռուպցիայի դեմ պայքարում պետությունների համագործակցության հիմնական ուղղություններն են կոռուպցիայի ակտերի կանխագուշակման և կանխարգելման ազգային փորձի փոխանակումը և ինչպես հանձնարարական, այնպես էլ պարտադիր բնույթի միջազգային համապատասխան նորմերի մշակումը: Քննարկվող ոլորտում միջազգային առաջին փաստաթղթերից է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած թիվ 3514 բանաձևը, որում դատապարտվում են կոռուպցիայի բոլոր ձևերը և կոչ է արվում պետությունների կառավարություններին՝ իրենց ազգային իրավասության շրջանակներում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները նմանատիպ կոռուպցիայի կանխարգելումը և օրինախախտողներին պատժելու համար¹⁰⁶:

Կատարելով որոշակի պատմական անդրադարձ՝ նշենք, որ 1990-ականների ընթացքում հակակոռուպցիոն շարժման ձևավորման վրա ազդել են մի քանի գործոններ: Սառը պատերազմի ավարտին հետևած աշխարհաքաղաքական տեղաշարժերը փոխեցին միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային քաղաքականության ուղղությունները, ԱՄՆ-ում, օրինակ, կոռուպցիայի վերաբերյալ դաշնային օրենքի (US Foreign Corrupt Practices Act)¹⁰⁷ ընդունումից հետո ամերիկյան ընկերությունները սկսեցին ճնշում գործադրել, որպեսզի գլոբալ գործողություններ ծավալվեն կոռուպցիայի դեմ, և օգնություն տրամադրող միջազգային կազմակերպությունները «արդյունավետ կառավարման» նոր օրակարգերում իրենց ուշադրությունն ուղղեցին ինստիտուցիոնալ կառավարմանը և ինտեգրված հակակոռուպցիոն ծրագրերին:

Միջազգային հակակոռուպցիոն շարժմանն այսօր մասնակցում են ՄԱԿ-ը և այլ բազմակողմ գործակալություններ, երկկողմ զարգացման ասոցիացիաներ, անկախ հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատվածի ասոցիացիաներ, հետազոտական կենտրոններ և գիտական հաստատություններ: Բազմաթիվ հակակոռուպցիոն կազմակերպություններ՝ Հոնգ Կոնգի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովից ու Հոնդուրասի Ազգային հակակոռուպցիոն խորհրդից մինչև Եմենի լրագրողներն ընդդեմ կոռուպցիայի ու Կոլումբիայում Օսակայի

¹⁰⁶Ընդունվել է 15.07.1975թ.-ին:

¹⁰⁷Տե՛ս <https://www.justice.gov/criminal-fraud/foreign-corrupt-practices-act> (վերջին այցելության ամսաթիվը 12.02.2018թ.):

երիտասարդությունն ընդդեմ կոռուպցիայի կազմակերպությունները, հարյուրավոր այլ կազմակերպություններ¹⁰⁸: Քաղաքացիական հասարակությունում «Թրանսփարենսի հնթերնեշնլ»-ը (ԹԻ) ամենաազդեցիկ գլոբալ հակակոռուպցիոն դերակատարներից է: ԹԻ-ին ստեղծում է կոռուպցիայի դեմ պայքարի կառույցների միջազգային ցանց, իսկ նրա ազգային կառույցների ցանցն ավելի քան 90 երկրներում իրականացնում է «գլխիվայր» գործունեություն, որին սատարում են կառավարություններ, մասնավոր հատվածն ու քաղաքացիական հասարակությունը ներառող բազմատեսակ կոալիցիաներ¹⁰⁹:

Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային մի շարք ակտերին միանալը կարևորագույն գործոն է հանդիսացել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման և օրենսդրական դաշտի կատարելագործման խնդրում:

Ի դեպ, այս հանգամանքը, կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափորոշիչներին տեղեկացված ու ներգրավված լինելու առումով, մեր համար խիստ կարևորություն ունի, քանի որ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, միջազգային կառույցներին չանդամակցող պետությունների համար խիստ դժվարություններ են ստեղծվում հակակոռուպցիոն ճիշտ քաղաքականություն իրականացնելու գործում:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը ներազգային և միջազգային համագործակցության մակարդակով իր վրա վերցրել է կոռուպցիային հակազդման բավականին լուրջ պարտավորություններ:

¹⁰⁸Տե՛ս «Մարդու իրավունքների ինտեգրումը հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն ու կարողությունները» Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ, «Անտարես» հրատարակչատուն, Երևան, 2011թ. էջ xii:

¹⁰⁹Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության ուղղությունների մասին առավել մանրամասն տե՛ս Գуриева Э.Г. Международные конвенции по борьбе с коррупцией и антикоррупционное законодательство РФ // “Черные дыры” в российском законодательстве. – 2007. № 6, էջեր 124–128; Есаян А.К. Правовое регулирование противодействия коррупции в государствах – членах евразийских организаций // Юридический мир. – 2009. №6, էջեր 21 – 26; Есаян А.К. Меры по борьбе с коррупцией в государствах – членах СНГ, ЕврАзЭС, ШОС // Российская юстиция. – 2009. №6, էջեր 57–59; Карпович О.Г Анализ современных международных подходов к борьбе с коррупцией // Международное публичное и частное право. – 2008. №3, էջեր 38–44; Кобец П.Н. Международный опыт предупреждения и пресечения коррупции в государственном аппарате и возможности его использования в отечественной законодательной практике // Международное публичное и частное право. – 2008. №5, էջեր 42–46:

Ըստ էության, իրավական և կազմակերպչական տեսանկյունից միջազգային ունիվերսալ և տարածաշրջանային փաստաթղթերի պահանջների զգալի մասը իրենց ամրագրումն են ստացել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն օրենսդրությունում: Այս ամենը ենթադրում է ավելի սերտ միջազգային համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարում, որը միանշանակ չի կարող իրականացվել առանց միջազգային իրավական չափորոշիչների մշակման և կատարելագործման:

Ազգային անվտանգության ոլորտում պետությունների քաղաքականությունը ենթադրում է առաջին հերթին կազմակերպված հանցագործության դեմ պայքարի կազմակերպում, որի իրականացման կարևորագույն տարրը օրենսդրության կատարելագործումն է՝ հասցնելով այն ընդունված միջազգային ստանդարտներին:

Օրենսդրության կատարելագործման ամենակարևոր խնդիրներից մեկը օպտիմալ և համակարգված իմպլեմենտացիոն քաղաքականության իրականացումն է, որի արդյունավետությունից է էապես կախված պետության վարկը միջազգային ասպարեզում: Միջազգային նորմատիվ ստանդարտների ներդրումը Հայաստանի Հանրապետությունում գտնվում է կայացման փուլում: Հատկապես դա վերաբերվում է հակակոռուպցիոն չափորոշիչներին:

Արդեն 7-8 տարի Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ազգային հակակոռուպցիոն օրենսդրության ձևավորման գործընթացը ուղղորդվում է գլոբալ, գաղափարային դրույթների և համակարգային հակակոռուպցիոն չափորոշիչների ձևավորման տրամաբանությամբ, որոնք արարվել են եվրոհանրույթի կողմից:

Կոռուպցիայի դեմ միջազգայնորեն համագործակցված պայքար վարելու ուղենիշում կարևորվում է մարդու իրավունքներին վերաբերվող որոշակի չափորոշիչների պահպանումը.

Մարդու իրավունքների միջազգային օրենսդրության շրջանակներում մշակվել են հատուկ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող հատուկ չափորոշիչներ.

Հասանելիություն - ենթադրում է, որ հանրային ծառայությունները որակի ու քանակի առումով պետք է համապատասխանեն տվյալ համայնքի կարիքներին:

Մատչելիություն - այս չափորոշիչը պահանջում է, որ ծառայությունները բաշխվեն ու մատուցվեն ամբողջ համայնքին՝ առանց խտրականության և մատչելի լինեն (նկատի է առնվում ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև տեղեկատվության մատչելիությունը):

Ընդունելիություն - այս սկզբունքը պահանջում է, որ ծառայությունները հարգեն տեղի արժեքները և մշակույթը ու ձևով և բովանդակությամբ ընդունելի լինել տվյալ համայնքի համար:

Հարմարվողականություն - ենթադրում է, որ ծառայությունները պետք է հարմարեցվեն տարբեր սոցիալական և մշակութային խմբերին պատկանող համայնքներին ու անհատներին, ինչպես նաև՝ փոփոխվող տեղական ու ազգային միջավայրին:

Կոռուպցիան ազդում է այս չափորոշիչներից յուրաքանչյուրի վրա, բայց կոռուպցիայի տարբեր տեսակները տարբեր կերպ են ազդում չափորոշիչներից յուրաքանչյուրի վրա, տարբեր են նաև յուրաքանչյուր չափորոշիչի տարրերը¹¹⁰:

Կոռուպցիայի դեմ պայքարին են նվիրված բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթեր, որոնք հիմք են տալիս հաստատելու, որ ներկայումս միջազգային մակարդակով կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարին ուղղված հզոր կոնվենցիոն մեխանիզմ գոյություն ունի: Անհրաժեշտ է նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարի խնդրում օրենսդրական դաշտի կատարելագործման և արդյունավետ աշխատանքների կազմակերպման գործում կարևորագույն գործոն էր ԱՊՀ, Եվրոպայի Խորհրդի և ՄԱԿ-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության միացումը մի շարք միջազգային ակտերի:

Այսպես.

2004թ. հունվարին Հայաստանը անդամակցել Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ԿԴՊՊԽ (GRECO)): ԿԴՊՊԽ-ի գնահատման առաջին և երկրորդ փուլի զեկույցն ընդունվել է դեռևս 2006թ. մարտին: Զեկույցը նախանշել է 24 առաջարկություններ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա

¹¹⁰Ավելի մանրամասն բացատրության համար տե՛ս Կոռուպցիան և մարդու իրավունքները. կապի հաստատումը, Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ (ՄԻՔՄԽ), «Անտարես» հրատարակչատուն, Երևան 2009թ., էջ 41:

իրավիճակի բարելավմանը: ԿԴՊՊԽ-ի առաջարկությունների մեծամասնությունը կանխարգելիչ և բացահայտող բնույթի են և հիմնականում (24 առաջարկությունից՝ 20-ը) նպատակաուղղված են օրենքների և ընթացակարգերի ընդունմանն ու բարելավմանը: ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը հաստատել է ԿԴՊՊԽ-ի առաջարկությունների կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը: ԿԴՊՊԽ-ի առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ դեռևս 2008թ.-ի զեկույցը փաստել է, որ տրված 24 առաջարկություններից 12-ը համարվել են ամբողջությամբ կատարված, 9-ը՝ մասնակի կատարված և միայն 3-ը չկատարված¹¹¹:

1996 թվականին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն ընդունեց կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագիր, որի շրջանակներում նախապատրաստվեցին և ընդունվեցին երկու առանձին միջազգային փաստաթղթեր, որոնք կանխորոշելու էին կոռուպցիայի դեմ ինչպես միջազգային, այնպես էլ ներազգային պայքարի հիմնական ուղենիշները: Այդ փաստաթղթերն են՝ «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան» (ընդունվել է 27.01.1999 թ.-ին) և «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան» (ընդունվել է 04.11.1999 թ.-ին): Ստրասբուրգում ընդունված Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան տարածաշրջանային (ռեգիոնալ) մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական բնույթի միջազգային կանոնների հաստատման առաջին փորձն էր:

Հայաստանը 2004թ. հունիսի 8-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել 2006թ.-ի մայիսի 1-ին, իսկ 2004թ. դեկտեմբերի 8-ին վավերացրել է Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2005 թ.-ի մայիսի 1-ին:

Կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ և տարածաշրջանային փաստաթղթերի շարքը կարող են լրացնել այնպիսի ակտեր, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի կողմից ընդունված «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին»

¹¹¹ Տե՛ս Ս. Շ. Ծաղիկյան, Գ. Մ. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 117:

կոնվենցիան (2000թ.) և «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» (2002թ.):¹¹² Վերջինս Հայաստանը վավերացրել է 2006թ. հոկտեմբերի 23-ին: Այն բացառապես կարևոր նշանակություն ունի, քանի որ, ըստ էության, կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում մի շարք նորամուծություններ կատարեց, մասնավորապես՝ ակտիվների վերադարձման վերաբերյալ նորմերի սահմանումը, դրա իրականացման և տեխնիկական օգնության մեխանիզմների մասին դրույթների նախատեսումը և այլն:

Որպես ԵԱՀԿ անդամ-պետություն, Հայաստանի Հանրապետությունը դեռևս 2001թ. մայիսի 11-ին միացավ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վաճման, հայտնաբերման, առգրավման և բռնագրավման մասին», 1999թ. նոյեմբերի 8-ի Ստրասբուրգյան կոնվենցիային: Հետագայում, մասնակցելով 2002թ. հունիսի 24-ից 25-ը Անկարայում տեղի ունեցած ԱՄՆ Պետական Դեպարտամենտի կողմից կազմակերպված տարածաշրջանային համաժողովին՝ նվիրված ահաբեկչության և փողերի վաճման դեմ պայքարին, Հայաստանի Հանրապետությունը փողերի վաճման դեմ պայքարի ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ստացավ:

Նշած գործընթացն ապահովելու և ոլորտը կարգավորող իրավական դաշտ ստեղծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ ստեղծվեց իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ միջգերատեսչական հանձնաժողով: Արդյունքում, 2004թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որին զուգահեռ համապատասխան փոփոխություններ են կատարվել մի շարք օրենքներում, այդ թվում՝ ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և վարչական իրավախախտումներ ըմբռնող ՀՀ օրենսգրքերում:

Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը

¹¹² Ст'а Доктрина государственной политики противодействия коррупции и теневой экономике в Российской Федерации (макет-проект). Под общей редакцией С.С. Сулакшина Монография — М.: Научный эксперт, 2009. էջեր 118-121:

միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ.:

Ուշադրության է արժանի նաև եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում եվրոպական միության և Հայաստանի կողմից 2006թ.-ին վավերացրած գործողությունների ծրագիրը¹¹³, որում կոռուպցիայի դեմ պայքարը դիտվել է Հայաստանի համար որպես գերակա ոլորտ:

2005թ. ստորագրված ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվել է ակտիվորեն մասնակցել ԳՐԵԿՈ-ի գործունեությանն ու իրականացնել ԳՐԵԿՈ-ի առաջարկությունները, իրականացնել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը, ներդնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի կանխարգելման և հետապնդման հստակ և թափանցիկ հաշվետվողականության մեխանիզմ, բարելավել իրազեկումը կոռուպցիայի վերաբերյալ՝ պետական պաշտոնյաների ուսուցման և վերապատրաստման միջոցով:

ԱՊՀ անդամ-պետությունների լայնամասշտաբ ինտեգրումը համաշխարհային տնտեսություն, այդ թվում՝ միջազգային ֆինանսավարկային ինստիտուտներ, քաղաքական և սոցիալ-տնտեսական դրական առաջընթացի հետ զուգընթաց հանգեցրեց նախկինում միմյանցից մասնատված կոռուպցիոն կառույցների համախմբմանը, նոր կոռուպցիոն ծրագրերի մշակմանը և որպես հետևանք՝ կոռուպցիայի հասարակական վտանգավորության աճի բարձրացմանը:

ԱՊՀ շրջանակներում կոռուպցիայի դեմ պայքարի իրավական ապահովմանը մեծ ուշադրություն է դարձվում: Հակակոռուպցիոն ուղղվածություն ունեն մի շարք ԱՊՀ մոդելային օրենսդրական ակտեր, մասնավորապես՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» ԱՊՀ մոդելային օրենքը, «Հակակոռուպցիոն քաղաքականության մասին օրենսդրության հիմքերը» ԱՊՀ մոդելային օրենքը¹¹⁴ և այլն:

«Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» ԱՊՀ մոդելային օրենքն ընդունվել է 1999 թվականի ապրիլի 3-ին՝ ԱՊՀ մասնակից-պետությունների Միջխորհրդարանական

¹¹³Տե՛ս <http://eu.mfa.am/hy/armenia-eu/> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ.):

¹¹⁴Տե՛ս <http://pravo.kulichki.com/megd2007/bz00/dcm00989.htm> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ.):

Ասամբլեայի 13-րդ համընդհանուր նիստի N13-4 որոշմամբ: Նշված օրենքը նոր խմբագրությամբ և անվանմամբ՝ «Կոռուպցիայի հակազդման մասին», ընդունվել է ԱՊՀ մասնակից-պետությունների Միջխորհրդարանական Ասամբլեայի 31-րդ համընդհանուր նիստի 2008 թվականի նոյեմբերի 28-ի N31-20 որոշմամբ¹¹⁵:

ԱՊՀ հակակոռուպցիոն մոդելային հաջորդ ստանդարտը «Հակակոռուպցիոն քաղաքականության մասին օրենսդրության հիմքերը» ԱՊՀ մոդելային օրենքն է, որն ընդունվել է 2003 թվականի նոյեմբերի 15-ին ԱՊՀ մասնակից-պետությունների Միջխորհրդարանական Ասամբլեայի 22-րդ համընդհանուր նիստի N22-15 որոշմամբ:

Ազգային հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման հիմնախնդիր արդիականությունը պայմանավորված է հայ հասարակությանը ժամանակակից առաջադիմական մեխանիզմներում տեսնելու իշխանական օղակների պատրաստակամությամբ և ցանկությամբ: Այդ կարևորագույն նպատակի կայացման ճանապարհին կարևոր է համարվում միջազգային չափանիշների իմպլեմենտացիան:

Կոռուպցիայի դեմ պայքարի գլոբալ, միջազգային համագործակցությունն ապահովելու և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է համակարգչային ծրագրի վրա հիմնված ստեղծել հակակոռուպցիոն հարցերով միջազգային ինտերնետային կայք, որի միջոցով հնարավոր կլինի մուտք գործել տարբեր երկրների հակակոռուպցիոն մարմինների էլեկտրոնային հասցեներ և որով հնարավորություն կընձեռնվի համընդհանուր կերպով տեղեկացված լինել կոռուպցիայի և դրա դեմ պայքարի վերաբերյալ համաշխարհային ողջ շարժին՝ թե՛ կատարված գործնական քայլերի արդյունքների և թե՛ իրավական, օրենսդրական դրույթների ուսումնասիրման տեսանկյունից: Սա, մեր կարծիքով, հնարավորություն կտա անմասն չմնալ հասարակական այդ չարիքի դեմ պայքարի առումով միջազգային տեղաշարժերի դինամիկայի տեղեկացվածությունից: Միաժամանակ այդ նույն նպատակով առաջարկվում է սկիզբ դնել մասնագիտացված հատուկ ժողովածուի կամ ամսագրի պարբերական, սերիական հրատարակությանը՝ կոռուպցիոն երևույթների տարբեր դրսևորումների, վիճահարույց հարցերի, ինչպես նաև հասարակության տարբեր ներկայացուցիչներին հուզող պարզաբանումներով և մեկնաբանություններով:

¹¹⁵ Տե՛ս <http://docs.cntd.ru/document/902157722> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ.):

Եվ, ընդհանրապես, քննարկվող հիմնախնդրի համատեքստում կարևոր ենք համարում միջազգային փորձի ուսումնասիրումը՝ խնդիր դնելով շեշտադրումը կատարել այն պետությունների վրա, որոնցում կոռուպցիոգեն երևույթների գոյության տրամաբանությունը մոտ է ՀՀ-ում առկա իրավիճակներին: Այդ տեսանկյունից արժեքավոր է ՌԴ առաջավոր փորձի ուսումնասիրումը:

ՌԴ փորձագիտական շրջանակներում 21-րդ դարի սկզբից արդեն ծագեց այն գաղափարը, որ համակարգային կոռուպցիայի պարագայում, որը բնութագրական է ՌԴ-ին, ինչի փաստը չի կարելի հերքել նաև ՀՀ-ում, չի կարելի կոռուպցիայի դեմ պայքարն իրականացնել միայն նորմատիվ իրավական ակտերի ընդհանուր որակի բարձրացման ձևաչափով: Կոռուպցիայի դեմ համառուսական պայքարի շրջանակներում ստեղծվեց այսպես կոչված «Ինդեմ» ֆոնդը, Տնտեսագիտության բարձրագույն դպրոցը, ՌԴ կառավարությանն առընթեր օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտը և այլն:

Նույն էտապում ՌԴ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կողմից մշակվեց «Օրենսդրական ակտերի կոռուպցիոգենության առաջնային վերլուծության մարտավարական գրքույկը», որը նախատեսված էր՝ աջակցելու փորձագետ-մասնագետներին՝ այդ հակասոցիալական երևույթի դեմ համակարգված պայքարում¹¹⁶:

2006-2007թթ. հիշյալ փաստաթղթի կիրառման արդյունքում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի հիման վրա ստեղծվեց նոր «Նորմատիվ իրավական ակտերի կոռուպցիոգենության առաջնային վերլուծության մեթոդական ցուցումները»¹¹⁷:

Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը միացել է միջազգային մի շարք համաձայնագրերի ու պայմանագրերի, որոնց ուժով կարգավորվում են քննչական մարմինների միջազգային-իրավական հարաբերությունները այլ պետությունների քննչական և իրավապահ այլ մարմինների հետ: Գործնական նշանակություն ունեն ԱՊՀ երկրների հետ 22.01.1993թ.-ի կոնվենցիան, Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին Եվրոպական կոնվենցիան, Հանձնման մասին Եվրոպական

¹¹⁶Տե՛ս Красов М.А. Талапина Э.В. Тихамиров Ю.А. Головшинский К.И. Южанов В.Н. Анализ коррупционности законодательства: Памятка эксперту по первичному анализу коррупционности законодательного акта / Под редакции В.Н. Южанова М., Статут, 2004. Տես նաև ՌԴ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պաշտոնական կայքում՝ www.csf.ru:

¹¹⁷Տե՛ս Талапина Э.В. Южанов В.Н. Методика первичного анализа /экспертизы/ коррупционности нормативных правовых актов / Под редакции В.Н. Южанова М.: Центр стратег. разраб.; Статут, 2007:

կոնվենցիան, Քրեական գործելով վարույթ ների փոխանցման մասին Եվրոպական կոնվենցիան և այլ կոնվենցիաներ: Դրանց ուժով են քննչական մարմինները կարողանում այլ պետություններից ստանալ որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, նրանց կատարած կասկածելի գործարքներին, բանկային հաշիվներին, փոխանցումներին, ապրանքաշրջանառության և այլնի վերաբերյալ տեղեկություններ:

Հայաստանը, առայժմ դեռ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների լեգալացման դեմ պայքարի հարուստ փորձ չունի, սակայն որոշակի դժվարություններ են ծագում, որոնք առնչվում են փոխադարձ իրավական օգնություն ցուցաբերելու հարցումներին՝ կապված փողերի լվացմանը հակազդելու առանձին քննչական գործողությունների և այլ միջոցառումների իրականացման հետ:

Մեր կարծիքով դա նախ և առաջ պայմանավորված է սուբյեկտիվ գործոնով, որովհետև նման գործողությունները կատարվում են տվյալ երկրի բիզնեսմենների նկատմամբ:

Երկրորդ. փոխադարձ իրավական օգնության մասին հարցումները մերժվում են այն պատճառով, որ դրանք համարվում են հարկային հարցերի կամ տվյալ երկրի ֆինանսական հաստատությունների հետ կապված, այն հիմքով որ ներպետական օրենսդրությունը պահանջում է բանկային գաղտնիքի պաշտպանություն կամ խորհրդապահություն:

Եվ երրորդ. որոշ երկրների Քրեական օրենսգրքերի փողերի լվացման համար պատասխանատվություն նախատեսող համապատասխան հոդվածների դիսպոզիցիաներում կան առանձին տարբերություններ, ինչը որոշակի դժվարություններ է ստեղծում կապված հարցումների կատարման հետ:

Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցությունն ընդամենը օժանդակ դեր է կատարում երկրների ներսում տեղի ունեցող պայքարի համար, սակայն խելամիտ չէր լինի չօգտագործել միջազգային համագործակցության մեջ ակտիվ դեր խաղալու դեպքում Հայաստանի համար բացվող հնարավորությունները:

Հավելենք նաև, որ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 9-ը սահմանվել է որպես միջազգային հակակոռուպցիոն օր:

Ամփոփելով վերոգրյալը՝ կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում և բլանկետային դիսպոզիցիաներով, կանխարգելման խնդրում միջազգային

համագործակցության արդյունավետության ցուցանիշի բարձրացմանը նպաստելու նպատակով առաջարկում ենք.

1. խորապես ուսումնասիրել կոռուպցիայի դեմ պայքարի համաշխարհային փորձը, Հայաստանի և այլ պետությունների տարածքում հանցակցությամբ կատարվող կոռուպցիոն հանցագործությունների քննության, բացահայտման և կանխարգելման առավել արդյունավետ արդյունքներ գրանցելու նպատակով համագործակցել միջազգային մարմինների ու կազմակերպությունների հետ՝ ընդհուպ մինչև միջազգային երկկողմ ու բազմակողմ իրավական ակտերի ուժով ապահովել տարբեր երկրների իրավապահ մարմինների կողմից կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ համատեղ քննություն:

2. Օրենսդրության կատարելագործման նպատակով իրականացնել օպտիմալ և համակարգված իմպլեմենտացիոն քաղաքականություն, որի արդյունավետությունից է էապես կախված պետության վարկը միջազգային ասպարեզում: Բացի այդ, հայրենական օրենսդրության համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին նաև թույլ կտա մեր օրենսդրությունը մոտեցնել և ներդաշնակ դարձնել արտասահմանյան երկրների օրենսդրությանը, ինչը նվազագույնի կհասցնի համագործակցության խոչընդոտները:

3. Կոռուպցիայի դեմ պայքարի գլոբալ, միջազգային համագործակցությունն ապահովելու և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է համակարգչային ծրագրի վրա հիմնված ստեղծել հակակոռուպցիոն հարցերով միջազգային ինտերնետային կայք, որի միջոցով հնարավոր կլինի մուտք գործել տարբեր երկրների հակակոռուպցիոն մարմինների էլեկտրոնային հասցեներ և որով հնարավորություն կընձեռնվի համընդհանուր կերպով տեղեկացված լինել կոռուպցիայի և դրա դեմ պայքարի վերաբերյալ համաշխարհային ողջ շարժին:

4. Քննարկվող հիմնախնդրի համատեքստում անհրաժեշտ է միջազգային փորձի ուսումնասիրումը՝ խնդիր դնելով շեշտադրումը կատարել այն պետությունների վրա, որոնցում կոռուպցիոզեն երևույթների գոյության տրամաբանությունը մոտ է ՀՀ-ում առկա իրավիճակներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության կատարման արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. ՀՀ քր. օր.-ի 1-ին հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք կատարել փոփոխություն և այն ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա»:

2. Քրեական պատասխանատվության ոլորտի փոփոխման տեսանկյունից՝ ընդլայնման կամ սահմանափակման իմաստով, գործադիր իշխանության կողմից անմիջականորեն ազդեցությունը բացառելու նպատակով նպատակահարմար ենք համարում ուժը կորցրած ճանաչել ՀՀ քր. օր.-ի բլանկետային նորմերով վկայակոչված ենթաօրենսդրական ակտերը և դրանք ընդունել օրենքի տեսքով:

3. ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի հունվարի 19-ի թիվ 3 հրամանով կոռուպցիոն հանցագործությունների հաստատված ցանկն անհրաժեշտ է ևս մեկ անգամ լրամշակել՝ դրանում ընդգրկելով նաև ներքոշարադրյալ հանցագործությունները.

ա. Անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը (148-րդ հոդված),

բ. Ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը (152-րդ հոդվածի 2-րդ մաս):

4. ՀՀ քր. օր.-ի 187-րդ և 190-րդ հոդվածներում կիրառելի չեն քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում տրված պաշտոնատար անձի հասկացությունը, քանզի այդ հոդվածում իմպերատիվ կերպով նշված է, որ սահմանված պաշտոնատար անձի հասկացությունը վերաբերվում է միայն 29-րդ գլխին (պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ), և քանի որ քրեական օրենքը անալոգիայով կիրառելն արգելվում է, ուստի առաջարկվում է տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով լրացնել նշված օրենսդրական բացը և քր. օր.-ի 308-րդ հոդվածի 3-րդ մասում 29-րդ գլխից բացի ավելացնել նաև 187-րդ և 190-րդ հոդվածները:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված խրախուսական նորմում վերացնել «բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում» բառերը, իսկ «քրեական հետապնդման մարմիններին» բառերը փոխարինել «ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին» բառերով: Նույն խրախուսական նորմում վերանայել օրենսդրի կողմից նախանշված պարտադիր ու միաժամանակյա պահանջվող պայմանները՝ հետևյալ ձևակերպմամբ.

«5. Առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, այդ մասին կամովին հայտնել է ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ աջակցել է հանցագործությունը բացահայտելուն կամ տեղի է ունեցել կաշառքի շորթում:»:

6. ՀՀ քր. օր.-ի 214-րդ հոդվածի դիսպոզիցիայում նյութական վնասի պատճառման մասով սահմանել այդ վնասի նվազագույն և առավելագույն չափերը:

7. Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված բլանկետային դիսպոզիցիաներով կոռուպցիոն հանցագործություններում փոփոխություն մտցնել դիսպոզիցիայի մասով: Առաջարկվում է որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ դարձնել անձի կողմից այդ արարքի համար վերջին մեկ տարվա ընթացքում մեկ անգամ վարչական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև Բելառուսի քրեական օրենսգրքի 32 հոդվածի օրինակով վարչական և կարգապահական պրեյուդիցիան ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում:

8. Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հանցագործությունն, ըստ մեզ, առկա է ոչ միայն այն դեպքում, երբ անձն ընդհանրապես որևէ հանցագործություն չի կատարել, այլև այն դեպքում, երբ նրան մեղսագրվում է ոչ թե իր կողմից իրականում կատարված, այլ մեկ ուրիշ՝ ավելի ծանր հանցագործություն:

Քրեական իրավունքի տեսության մեջ տարածված է այն կարծիքը, որ այն դեպքում, երբ անձին մեղսագրվում է ոչ թե իր կողմից իրականում կատարված, այլ մեկ ուրիշ՝ ավելի ծանր հանցագործություն, ապա ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածով նախատեսված

հանցագործությունն առկա չէ, քանի որ, ի վերջո, անձը կատարել է հանցանք և նա չի համարվում ակնհայտ անմեղ անձ: Այնինչ, ՀՀ քր. օր.-ի 336-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առկայությունը փաստելու համար ամեն անգամ անհրաժեշտ է արարքը վերլուծել կոնկրետ և առարկայական: Նման պարագայում հարկ է արձանագրել, որ չնայած անձն այնուամենայնիվ կատարել է հանցանք, սակայն, միևնույնն է, իրեն մեղսագրված և իրականում իր կողմից չգործած ավելի ծանր հանցագործության կապակցությամբ նա համարվում է ակնհայտ անմեղ անձ, եթե իհարկե մեղսագրող համապատասխան պաշտոնատար անձը գիտակցել է այդ ամենն ու դրսևորել դիտավորություն:

Օգտագործված գրականության ցանկ
Իրավական ակտեր և պաշտոնական փաստաթղթեր

1. ՀՀ սահմանադրություն (Ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեներով, ՀՀՊՏ2005.12.05 (Հատուկ թողարկում)):
2. ՄԱԿ-ի 2003թ. «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ՀՀՊՏ 2006.11.15/58 (513) (հղում 51, էջ 77, հղում 87, էջ 136):
3. Եվրոպայի Խորհրդի 1999թ. հունվարի 27-ի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի Կոնվենցիա, ՀՀ ՊՏ 2004.06.30/34 (333) (հղում 50, էջ 76):
4. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 18.04.2003թ., ՀՀ ՊՏ N 25 /260/:
5. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 26.05.2011թ., ՀՀՊՏ 2011.06.17/37(840) (հղում 86, էջ 136):
6. Հայաստանի Հանրապետության Կառավարության 22.10.2009 թվականի N 1205-Ն որոշումը՝ «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին», ՀՀՊՏ 2009.11.04/55(721) (հղում 84, էջ 133):
7. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագիրը՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՀՀՊՏ 2007.02.15/11(535) (հղում 1, էջ 3):
8. ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը ԼԴ/0286/01/09 գործի վերաբերյալ (հղում 30, էջ 39):
9. ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը ԳԴ1/0013/01/11 գործի վերաբերյալ (հղում 33, էջ 42):
10. ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը ԵԷԴ/0008/15/13 գործի վերաբերյալ (հղում 31, էջ 40):

Մասնագիտական գրականություն

11. Բախշինյան Ա. Հ., Ալեքսանյան Բ. Զ., Մարգարյան Ս. Ա., «Կրիմինալիստիկա. սխեմաների հավաքածու», ՀՀ ոստիկանության ակադեմիա, Երևան, 2003թ., 228 էջ (հղում 72, էջ 110):

12. Գրիգորյան Մ. Վ., «Քրեական իրավունք, ընդհանուր մաս» ուսումնական ձեռնարկ, «Հրազդան» հրատարակչություն, Երևան 2003թ., 648 էջ (հղում 2, էջ 12):

13. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երեւան, 1974թ. հատոր 3, 293 էջ (հղում 55, էջ 82):

14. Ծաղիկյան Ա. Շ., «Կոռուպցիա: Պատճառները, հետևանքները», «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2002թ., 174 էջ (հղում 104, էջ 156):

15. Ծաղիկյան Ա.Շ., «Հակակոռուպցիոն ռազմավարությունը քրեակատարողական համակարգում», ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, Երևան 2012թ., 461 էջ (հղում 23, էջ 30):

16. Ծաղիկյան Ա.Շ., Սարգսյան Գ.Մ., «Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը», «ՀՀ դատախազության դպրոց» ՊՈԱԿ, «Օրենք և իրականություն» ՍՊԸ տպարան, Երևան, 2010, 271 էջ (հղում 80, էջ 130, հղում 88, էջ 136, հղում 111, էջ 168):

17. Կոռուպցիան և մարդու իրավունքները. կապի հաստատումը, Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ (ՄԻՔՄԽ), «Անտարես» հրատարակչատուն, Երևան 2009թ., 41 էջ (հղում 110, էջ 167):

18. «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս», ԵՊՀ հրատարակչություն, Երևան – 2007, 544 էջ (հղում 43, էջ 53):

19. «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս», ԵՊՀ հրատարակչություն, Երևան - 2012, 1040 էջ (հղում 38, էջ 51, հղում 56, էջ 100, հղում 59, էջ 104, հղում 60, էջ 105, հղում 71, էջ 110, հղում 74, էջ 114):

20. ՀՀ գլխավոր դատախազություն. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները, «Ֆենոմեն» հրատարակչություն, Երևան 2009թ., 232 էջ (հղում 81, էջ 131, հղում 85, էջ 135, հղում 89, էջ 139, հղում 92, էջ 141, հղում 93, էջ 143, հղում 98, էջ 150, հղում 103, էջ 154, հղում 105, էջ 160):

21. «Մարդու իրավունքների ինտեգրումը հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն ու կարողությունները» Մարդու

իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ, «Անտարես» հրատարակչատուն, Երևան 2011թ. 128 էջ (հղում 101, էջ 152, հղում 108, էջ 165):

22. Մուրադյան Մ. Հ., «Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները», ուսումնական ձեռնարկ, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, հեղինակային հրատարակություն, Երևան 2012թ., 124 էջ (հղում 97, էջ 145):

23. Քառյան Ա.Վ., «Կոռուպցիա» բացատրական ձեռնարկ, «Գասպրինտ» տպագրատուն, Երևան 2005թ. 108 էջ (հղում 82, էջ 132, հղում 99, էջ 151, հղում 102, էջ 153):

24. Авакьян С .А. Выборы и коррупция // Российские выборы в контексте международных избирательных стандартов: Материалы международной конференции / Под ред. А.В. Иванченко, А.Е. Любарева. – Аспект Пресс М, 2006 (հղում 45, էջ 62):

25. Андрианов В. Д. Коррупция как глобальная проблема: История и современность: Монография. – Москва: Экономика, 2011. 301 էջ (հղում 19, էջ 29):

26. Ванцев В. А. Коррупционная преступность: Монография / Под ред. В.Е. Эминова. – Москва, 2002. 67էջ (հղում 19, էջ 29):

27. Габузян А. А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, 143 էջ (հղում 28, էջ 32):

28. Гаухман Л. Д. Квалификация преступлений: закон, теория, практика / 2-е изд., перераб. и доп. - М.: Центр ЮрИнфоР, 2003 г., 448էջ (հղում 34, էջ 43):

29. Гаухман Л. Д., Максимов С.С. Уголовное право России: Общая часть, 2-е изд., стер. М.: Омега-Л, 2008 г. 334 էջ (հղում 5, էջ 14):

30. Долговая А. И. Криминология: Учебник для юридических вузов, Инфра-М-НОРМА, М., 1997 г., 784 էջ (հղում 20, էջ 29):

31. Долговая А. И. Криминология: Учебник для вузов /3-е изд., перераб. и доп. М., 2007, 448 էջ (հղում 95, էջ 143):

32. Долговая А. И. Разделы проекта Федерального закона о криминологической экспертизе // Преступность и правовое регулирование борьбы с ней, М., 1996, 393 էջ (հղում 96, էջ 143):

33. Дурманов Н. Д. Советский уголовный закон. М., 1967г., 208 էջ (հղում 13, էջ 24):
34. Ибрагимов М. А., Ображиев К.В. Нормативные акты иных отраслей права как источники уголовного права. Ставрополь, 2005г., 96 էջ (հղում 13, էջ 24):
35. Игнатова А. Н., Красикова Ю. А. Уголовное право России: Общая часть, М.: Издательство НОРМА, БЕК, 1999 (հղում 32, էջ 41):
36. Иногамова-Хегай Л. В. Квалификация преступлений при конкуренции уголовно-правовых и иных норм права // Уголовное право: стратегия развития в XXI веке. М., 2004. 128 էջ (հղում 10, էջ 20):
37. Красов М. А. Талапина Э.В. Тихамиров Ю.А. Головшинский К.И. Южанов В. Н. Анализ коррупционности законодательства: Памятка эксперту по первичному анализу коррупционности законодательного акта / Под редакции В. Н. Южанова М., Статут, 2004 (հղում 116, էջ 172):
38. Коробеев А. И. Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, 116 էջ (հղում 36, էջ 47):
39. Кузнецова Н. Ф. Избранные труды. М.: Изд-во «Юридический центр Пресс» 2003г., 834 էջ (հղում 6, էջ 14):
40. Крылова Н. Е., Серебренникова А.В. Уголовное право зарубежных стран (Англии, США, Франции, Германии). Изд. 2-е, перераб. и доп. Учебное пособие. — М.: Издательство "Зерцало", 1998 г., 208 էջ (հղում 9, էջ 19):
41. Наумов А. В. Российское уголовное право: Курс лекций. Общая часть. М., 2004 г., Т. 1., 3-е изд., 496 էջ (հղում 12, էջ 20):
42. Ображиев К. В. Формальные (юридические) источники российского уголовного права. М., 2010г., 216 էջ (հղում 14, էջ 24):
43. Пикуров Н. Н. Квалификация преступлений со смешанной противоправностью. Волгоград, 1987, 48 էջ (հղում 11, էջ 20):
44. Рарога А. И.. Уголовное право России. части общая и особенная, 5-е издание. Москва 2005г. 615էջ (հղում 62, էջ 107):
45. Скосарев В. В. Комментарий к уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной

практики. Москва, 2004г. 764էջ (հղում 58, էջ 101, հղում 61, էջ 107, հղումներ 73 և 75, էջ 114, հղում 76, էջ 116, հղում 77, էջ 118):

46. Сулакшина С. С. Доктрина государственной политики противодействия коррупции и теневой экономике в Российской Федерации (макет-проект). Монография — М.: Научный эксперт, 2009 г., 304 էջ (հղում 112, էջ 169):

47. Талапина Э. В. Южаков В.Н. Методика первичного анализа /экспертизы/ коррупциогенности нормативных правовых актов / Под редакции В.Н. Южакова М.: Центр стратег. разраб.; Статут, 2007 г., 96 էջ (հղում 117, էջ 172):

48. Edward Shils, Political Development in the New States /The Hague 1962/, 385 էջ (հղում 90, էջ 139):

49. Transparency international, The Anti-Corruption Plain Language Guide, 2009, 44էջ (հղում 100, էջ 151):

Գիտական հոդվածներ

50. Агаев Г. А., Зорина Е.А. Научные взгляды о структуре уголовно-правовой нормы //Вестник Санкт-Петербургского университета Государственной противопожарной службы МЧС России, № 2 2012 г, 152 էջ (հղում 4, էջ 13, հղում 7, էջ 16):

51. Алакшина И. С. Гражданско-правовые аспекты противодействия коррупции // Безопасность бизнеса, 2009, № 2 (հղում 24, էջ 31):

52. Александров С. Г. Развитие уголовного законодательства о коррупции // Российский следователь, 2007, № 20 (հղում 19, էջ 29):

53. Алексеев Г. В. К вопросу об уточнении понятия “коррупция” в российском законодательстве / Г.В. Алексеев, Г.Н. Морозов // Власть. 2011. № 5, 136էջ (հղում 19, էջ 29):

54. Ананьева А. В. Основные экономико-правовые методы защиты от коррупции в целях укрепления экономической безопасности России // “Черные дыры” в российском законодательстве. – 2008. - № 6, 88էջ (հղում 49, էջ 75):

55. Артемьев А. Б. Динамика нормативного регулирования борьбы с коррупцией в РФ // Право и государство: теория и практика. - 2011. № 7, 116էջ (հղում 8, էջ 16):

56. Астанин В. В. Борьба с коррупцией в контексте принципа равенства граждан перед законом // Российский юридический журнал. – 2008. – № 2, 156–162 (стр. 40, стр. 52):

57. Астанин В. В. Комиссии по соблюдению требований к служебному поведению государственных гражданских служащих и урегулированию конфликта интересов анализ и оценка предмета деятельности и коррупциогенных рисков участия экспертов в их работе // Российская юстиция, 2009, № 2 (стр. 24, стр. 31):

58. Астанин В. В. Принципы противодействия коррупции в российском законодательстве // Юридический мир. – 2009. № 2, 46–52 (стр. 78, стр. 127):

59. Бажанов О. И. Научные основы концептуальных решений в области борьбы с преступностью // Вестник Белорусского информационного центра "Верховенство закона" Минск, 1998, 53–60 (стр. 95, стр. 143):

60. Барсукова С. Ю. Коррупция: научные дебаты и российская действительность // Общественные науки и современность. – 2008. № 5, 47–52 (стр. 19, стр. 29):

61. Васильев Ф. П. Вопросы борьбы с коррупцией и ее проблемы // Безопасность бизнеса, 2009, № 4 (стр. 83, стр. 132):

62. Винницкий А. В. Противодействие коррупции в сфере управления публичной собственностью // Законность, 2009, № 6 (стр. 24, стр. 31):

63. Возжеников А. В., Малюткин А.Б. Стратегия борьбы с коррупцией: зарубежный опыт // Социология власти. – 2008. №1, 98–105 (стр. 83, стр. 132):

64. Волков А. Н. Проблемы и перспективы развития законодательного обеспечения противодействия коррупции / А.Н. Волков, О.В. Дамаскин // Современное право. – 2011, №4, 50–57 (стр. 83, стр. 132):

65. Гаухман Л. Д. Нужна правовая экспертиза по уголовным делам//Законность, 2000, № 4, 22–29 (стр. 37, стр. 48):

66. Гончаренко Г. С. Коррупционный подкуп в системе государственно-служебных отношений // Юрист-правовед. – 2007. № 1, 19–26 (стр. 49, стр. 75):

67. Гостева С. Р. Противодействие коррупции – важнейшее условие укрепления национальной безопасности России // Юридический мир. – 2011. №1, 20–27 (стр. 83, стр. 132):

68. Грищук В. К. Некоторые вопросы разграничения претуплений и административных проступков // Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. М., 2005, 145 էջ (հղում 95, էջ 143):

69. Гуриева Э. Г. Международные конвенции по борьбе с коррупцией и антикоррупционное законодательство РФ // "Черные дыры" в российском законодательстве. – 2007 - № 6, 128 էջ (հղում 109, էջ 165):

70. Десять лет уголовному кодексу Российской Федерации: достоинства и недостатки (Научно-практическая конференция) // Государство и право, 2006, №11, 108 էջ (հղում 95, էջ 143):

71. Джонстон М. Поиск определений: качество политической жизни и проблема коррупции // Междунар. журн. социальных наук. - Париж, М., 1997. № 16, 24 էջ (հղում 25, էջ 31):

72. Егорова Н. А. О национальном плане противодействия коррупции // Уголовное право. – 2008. № 6, 93 էջ (հղում 83, էջ 132):

73. Егупов А. В. К вопросу о правовых экспертизах по делам коррупционной направленности // Эксперт-криминалист, 2010, № 1 (հղում 94, էջ 144):

74. Еделев А. Л. Коррупция как системная угроза стабильности и экономической безопасности Российской Федерации // Миграционное право, 2009, № 2 (հղում 24, էջ 31):

75. Есян А. К. Меры по борьбе с коррупцией в государствах – членах СНГ, ЕврАзЭС, ШОС // Российская юстиция. – 2009. №6, 59 էջ (հղում 109, էջ 165):

76. Есян А. К. Правовое регулирование противодействия коррупции в государствах – членах евразийских организаций // Юридический мир. – 2009. №6, 26 էջ (հղում 109, էջ 165):

77. Звечаровский И. О концепции развития уголовного законодательства России // Уголовное право, 2005, № 3, 33 էջ (հղում 95, էջ 143):

78. Карпович О.Г. Анализ современных международных подходов к борьбе с коррупцией // Международное публичное и частное право. – 2008. №3, 44 էջ (հղում 109, էջ 165):

79. Клейнер В. Антикоррупционная стратегия бизнеса в России // Вопросы экономики. – 2011. №4, 46тг (ηηιι 24, тг 31):

80. Кобец П. Н. Международный опыт предупреждения и пресечения коррупции в государственном аппарате и возможности его использования в отечественной законодательной практике // Международное публичное и частное право. – 2008. №5. 46тг (ηηιι 109, тг 165):

81. Кондрат Е. Н. Основные способы легализации (отмывания) преступных доходов, полученных в результате совершения преступлений // Вестник Академии экономической безопасности МВД России. – 2010. №10, 69тг (ηηιι 48, тг 73):

82. Кострова М. Уголовный кодекс Российской Федерации-пять лет спустя: проблемы и перспективы совершенствования норм уголовного законодательства // Уголовное право, 2003, №3, 32тг (ηηιι 95 тг 143):

83. Кузнецова Н. Ф. Коррупция в системе уголовных преступлений // Вестник Московского университета. Серия 11. Право. 1993. № 1. Изд-во Моск. ун-та, 21тг (ηηιι 21, тг 30):

84. Лебедев И. А. Актуальные вопросы противодействия коррупции в деятельности хозяйствующего субъекта // Безопасность бизнеса, 2009, № 1 (ηηιι 48, тг 73):

85. Лысков А. Явление коррупции – меры государства: правовые и политико-этические аспекты // Законность. – 2008. № 9, 8тг (ηηιι 94 тг 143):

86. Лунеев В. В. Коррупция, учтенная и фактическая // Государство и право. Российская академия наук, Институт Государство и право, 1996 г., № 8., 156тг (ηηιι 22, тг 30, ηηιι 79, тг 128):

87. Малько А. В., Коновалов И.Н. и др. Предложения по совершенствованию антикоррупционного законодательства РФ // Правовая политика и правовая жизнь. – 2006. № 4, 182тг (ηηιι 94, тг 143):

88. Михайлов Л. В. Борьба с коррупцией в США (80-е годы). // Вопросы истории. - 1994. - № 5, 149тг (ηηιι 26, тг 32):

89. Наумов А. В. Нормы иных отраслей права как источник уголовного права // Законность. 2002. № 7, 39тг (ηηιι 13, тг 24, ηηιι 17, тг 26):

90. Пикуров Н. И. К вопросу о границах системы уголовного права // Системность в уголовном праве: Материалы II Российского конгресса уголовного права, состоявшегося 31 мая - 1 июня 2007 г. М., 2007. 318էջ (հղում 16, էջ 26):

91. Пименов Н. А. Коррупция и легализация – звенья одной цепи // Безопасность бизнеса, 2009, № 1 (հղում 48, էջ 73):

92. Политическая коррупция в России (материалы круглого стола) // Государство и право. 2003. №3, 105էջ (հղում 27, էջ 32):

93. Скутин А. Ф. Судебная реформа и проблемы коррупции в судах // Российское правосудие. 2008. №10, 85էջ (հղում 57, էջ 101):

94. Сорокин В. Д. О двух тенденциях разрушающих ценность института административной ответственности // Правоведение. - М.: Изд-во С.-Петербург. ун-та, 1999, № 1. 47էջ (հղում 91, էջ 140):

95. Стороженко И. В. Антикоррупционный мониторинг организации экономического сотрудничества и развития: публично-правовой аспект организации противодействия криминальным формам коррупции // Административное и муниципальное право, 2010, № 6 (հղում 94, էջ 143):

96. Талан М. В. Преступления в сфере экономической деятельности, совершаемые должностными лицами, как проявление коррупции // Законы России: опыт, анализ, практика, 2009, № 12 (հղում 47, էջ 72):

97. Федоров А. Ю. Коррупция в органах судебной власти в России // Вестник Московского университета МДВ России. 2010. №2, 150էջ (հղում 70, էջ 110):

98. Хатаева М. А. Проведение оценки нормативных правовых актов на коррупциогенность // Журнал российского права, 2008, № 12 (հղում 94, էջ 143):

99. McMullan, A theory of corruption // The sociological review Vol. 9 1961, 196էջ (հղում 90, էջ 139):

Սեղմագրեր, ատենախոսություններ

100. Абрамовская О. Р. Противодействие коррупционной преступности в органах государственной власти и местного самоуправления (криминологический аспект): Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук:

Спец 12.00.08 / Челябинский юридический институт МВД России. – Челябинск, 2011.
26 էջ (հղում 57, էջ 101):

101. Денисова А. В. Выявление и преодоление расхождений положений УК РФ и предписаний уголовно-правового характера, содержащихся в федеральных законах иной отраслевой принадлежности: Дис....канд. юрид. наук. Самара, 2004 г., 216 էջ (հղում 15, էջ 25):

102. Илюк Е. В. Законодательная техника построения диспозиции статьи уголовного закона. Автореф. дис. канд. юр. наук, 1989, 16 էջ (հղում 35, էջ 47):

103. Пикуров Н. И. Квалификация преступлений при бланкетной форме диспозиции уголовного закона (с конкретизацией запрета в административном праве): Дис. ... канд. юрид. наук. М., 1982 г., 197 էջ (հղում 13, էջ 24):

104. Яницкий Ю. А. Соотношение преступлений и административных правонарушений, посягающих на общественную безопасность и общественный порядок: теория, законодательство, практика: Автореф. дис....канд. юрид. наук. Красноярск, 2009 г., 27 էջ (հղում 18, էջ 26):

Համացանցային կայքեր

105. <http://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/> (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ., հղում 41, էջ 52):

106. http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1 (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ., հղում 42, էջ 53, հղում 54, էջ 80):

107. http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_0871859725811_..._.pdf: (վերջին այցելության ամսաթիվ 12.02.2018թ., հղում 44, էջ 54):

108. <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=1243424> (վերջին այցելություն 12.02.2018թ., հղում 53, էջ 80):

109. http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1 (վերջին այցելություն 12.02.2018թ., հղում 68, էջ 109):

110. http://www.legislationline.org/download/action/download/id/4674/file/Azerbaijan_CC_am2013_ru.pdf (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 64, էջ 108):

111. http://www.legislationline.org/download/action/download/id/5155/file/Kazakh_CC_am2014_ru.pdf (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 65, էջ 108):

112. http://www.legislationline.org/download/action/download/id/3833/file/Uzbekistan_CC_1994_am_2010_ru.pdf (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 66, էջ 109):
113. <http://base.garant.ru/10108000/> (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 39, էջ 51, հղում 52, էջ 79, հղում 63, էջ 108):
114. http://www.legislationline.org/download/action/download/id/5708/file/Tajikistan_C_C_am2014_ru.pdf (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 67, էջ 109):
115. http://etalonline.by/?type=text®num=HK9900275#load_text_none_1 (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 68, էջ 109):
116. http://www.legislationline.org/download/action/download/id/3814/file/Ukraine_CC_2001_am_2010_ru.pdf (վերջին այցելություն՝ 12.02.2018թ., հղում 69, էջ 109):
117. <http://www.moj.am/legal/view/article/703> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ., հղում 29, էջ 39):
118. <https://www.justice.gov/criminal-fraud/foreign-corrupt-practices-act> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ., հղում 107, էջ 164):
119. <http://eu.mfa.am/hy/armenia-eu/> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ., հղում 113, էջ 170):
120. <http://pravo.kulichki.com/megd2007/bz00/dcm00989.htm> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ., հղում 114, էջ 170):
121. <http://docs.cntd.ru/document/902157722> (վերջին այցելության ամսաթիվ՝ 12.02.2018թ., հղում 115, էջ 171):